

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Հարգելի՛ ընթերցող,
«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության վեց տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:



Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 12.000-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 5.700-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱԲ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than four dozen programs during the six years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 12.000, and the number of authors of materials - 5.700.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» (ОМУСА) в течение своей семилетней деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 12.000, а количество авторов материалов - 5.700.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



«ԱՐՑԱԽ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏՐԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍՏԵՐԱՆ



«HI-AM»
ԲԵՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԳԻՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH



НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(12), 2022



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(12), 2022

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ
№ 1(12), 2022

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրոյթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:
«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The journal «**Scientific Artsakh**» is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The journal «**Scientific Artsakh**» is posted on www.elibrary.ru website.

Журнал «**Научный Арцах**» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).
Журнал «**Научный Арцах**» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2022

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ
ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Ածորուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱԼԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գայանե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ԶԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈՒ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԼՆՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱՎՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ամիր ՉԱԲՐԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ելու Յորք, ԱՄՆ**)

Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր (**Ելուրեքերգ, Գերմանիա**)

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Քրիստինա դը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Լոնդոն, Մեծ Բրիտանիա**)

Գարիկ ԶԵՈՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(12), 2022, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2022,
320 էջ:

*«Գիտական Արցախ» պարբերականի 2022 թ. 1-ին (12-րդ) համարի
տպագրությանն աջակցել է «Hi-Am» բարեգործական հիմնադրամը:*

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the Journal «Scientific Artsakh».

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D. in Philology, Associate Professor

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Amit CHHABRA, Doctor of Law, Professor (**New York, USA**)

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (**Lviv, Ukraine**)

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor

Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) (**Nuremberg, Germany**)

Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor

Christian de VARTAVAN, Doctor of History (**London, Great Britain**)

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor

Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor

Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor

Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (**Geneva, Switzerland**)

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 1(12), 2022, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2022, 320 pages.

The publication of the 1st (12th) 2022 Journal «Scientific Artsakh» was supported by «Hi-Am» Charity Foundation.

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор

Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук (Лондон, Великобритания)

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор

Ирина ГАЮК, доктор культурологии, доцент (Львов, Украина)

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор

Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)

Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук (Нюрнберг, Германия)

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Рубен САФРАСЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор

Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор (Нью-Йорк, США)

Научный Арцах, № 1(12), 2022, Ереван, Издательство «АРЦАХ», 2022, 320 страниц.

Публикация 1(12) номера 2022 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии благотворительного фонда «Hi-Am».

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ  **CONTENTS**  **СОДЕРЖАНИЕ**

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Ավետիք Չարությունյան. Սահմանադրությունների ընդունման 1500-ամյա պատմությունն Արցախում (հայերեն).....	10
Avetik Harutyunyan. 1500-Year History of the Adoption of Constitutions in Artsakh (in Armenian)	
Аветик Арутюнян. 1500-летняя история принятия конституций в Арцахе (на армянском)	
Վահե Թորոսյան. Սոքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի առանձին բաղադրիչները և հավաքական էությունը (հայերեն).....	27
Vahe Torosyan. Individual Components and Collective Essence of the Right to Freedom of Thought, Conscience and Religion (in Armenian)	
Вале Торосян. Отдельные компоненты и обобщенная сущность права на свободу мысли, совести и религии (на армянском)	
Նորայր Ավագյան. Լիցենզավորումը՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթ (Արցախի Հանրապետության օրենսդրության գիտագործնական վերլուծություն) (ռուսերեն).....	35
Norayr Avagyan. Licensing as a Separate Type of Administrative Procedure (Legislation of Artsakh Republic Scientific-Practical Analysis) (in Russian)	
Норайр Авагян. Лицензирование как отдельный вид административного производства (научно-практический анализ законодательства Республики Арцах) (на русском)	

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Գևորգ Ստեփանյան. Հայերի էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI-XX դդ.) (մաս 3) (հայերեն).....	45
Gevorg Stepanyan. The Stages of Implementation of the Policy of Ethnic Cleansing and Genocide of Armenians in the Eastern Ciscaucasus (11th-20th cc.) (Part III) (in Armenian)	
Геворг Степанян. Этапы осуществления этнических чисток армян и геноцидальной политики в Восточном Закавказье (XI-XX вв.) (часть III) (на армянском)	
Նաիրա Համբարձումյան. Կ. Պոլսի մշակութային, բարեգործական և պարզասիրաց ընկերությունների և միությունների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում XIX դարի երկրորդ կեսին (հայերեն).....	61
Naira Hambardzumyan. The Role of Cultural, Charitable and Simplicity Companies and Unions in the Process of Women's Emancipation in the Second Half of the 19 th Century in Constantinople (in Armenian)	
Наира Амбарцумян. Роль культурных, благотворительных организаций и союзов милосердия в процессе женской эмансипации во второй половине 19 века в Константинополе (на армянском)	

**ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ,
ETHNOGRAPHY AND FOLKLORE,
ЭТНОГРАФИЯ И ФОЛЬКЛОР**

Թամար Հայրապետյան, Գոհար Մելիքյան. Գորգագործության թեման ռուսալեզու մատենաշարում (СМОМПК) տպագրված Արցախի հեքիաթներում (ռուսերեն).....71

Tamar Hayrapetyan, Gohar Melikyan. The Theme of Carpet Weaving in Artsakh Tales from the «Collection of Materials for Describing Places and Tribes of the Caucasus» (in Russian)

Тамар Айрапетян, Гоар Меликян. Тема ткачества ковров в арцахских сказках, напечатанных в СМОМПК (Сборник материалов для описания местностей и племен Кавказа) (на русском)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Արմեն Ներսիսյան. Հայկական քաղաքակրթության հայտը նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում (հայերեն).....81

Armen Nersisyan. Application of Armenian Civilization in the Process of Establishing a New World Order (in Armenian)

Армен Нерсисян. Заявка армянской цивилизации в процессе утверждения нового миропорядка (на армянском)

Էդգար Զալանթարյան, Անի Ներսիսյան. Սոցիալական քաղաքականության հարցի շուրջ. ՀՀ և ԳԴՀ օրինակը (հայերեն).....89

Edgar Kalantaryan, Ani Nersisyan. On the Issue of Social Policy: the Example of the Republic of Armenia and the Federal Republic of Germany (in Armenian)

Эдгар Калантарян, Ани Нерсисян. К вопросу о социальной политике: пример РА и ФРГ (на армянском)

Մարիամ Թոփակյան. Ղարաբաղյան հիմնախնդիրը Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների համատեքստում (հայերեն).....102

Mariam Topakyan. Nagorno-Karabakh Conflict in the Context of France-Turkey Relations (in Armenian)

Мариам Топакян. Нагорно-Карабахский конфликт в контексте франко-турецких отношений (на армянском)

Ռաֆիկ Խաչատրյան. Թուրքիայի պետական քաղաքականությունը Կիպրոսում կղզու հյուսիսի օկուպացիայից հետո (1974-1983 թթ.) (անգլերեն).....115

Rafik Khachatryan. Turkey’s State Policy on Cyprus after the Occupation of the North of the Island (1974-1983) (in English)

Рафик Хачатрян. Государственная политика Турции на Кипре после оккупации северной части острова (1974-1983 гг.) (на английском)

Տիգրան Մուղնեցյան. Ընտրական համակարգի ազդեցությունը կուսակցական համակարգի վրա և կառավարման ձևից կախված ընտրական համակարգի վարքագիծը (անգլերեն).....128

Tigran Mughnetsyan. On the Discussion about the Effect of Electoral System on Party System and its Performance Regarding the Governance System (in English)

Тигран Мугнецян. О воздействии избирательной системы на партийную систему и ее зависимость от формы правления (на английском)

- Նուշիկ Պետրոսյան.** Գերմանիայի քաղաքականությունը Անդրկովկասում անկախ հանրապետությունների հռչակման նախօրեին (հայերեն).....135
- Nushik Petrosyan.** German Policy on the Eve of the Declaration of Independent Republics in the Transcaucasus (in Armenian)
- Нушик Петросян.** Политика Германии в Закавказье накануне провозглашения независимых республик (на армянском)

ԼԵՇՉԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

- Լուսիկ Յովակիմյան.** Անգլերենի ուսուցման ժամանակակից համատեքստը բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում (հայերեն).....146
- Lusik Hovakimyan.** Modern Context of Teaching English in Non-Linguistic Faculties at Higher Education Institutions (in Armenian)
- Лусик Овакимян.** Современный контекст обучения английскому языку на неязыковых факультетах в вузе (на армянском)
- Գոհար Սկրտչյան.** Ռուս-հայերեն բժշկական տերմինների կազմության եղանակների մասին (ռուսերեն).....156
- Gohar Mkrtchyan.** On Some Ways of Formation of Russian-Armenian Medical Terms (in Russian)
- Гоар Мкртчян.** О способах образования русско-армянских медицинских терминов (на русском)

- Էլյա Դավթյան.** Ժամանակակից քաղաքական հանդուրժողականության մշակութային հայեցակետերը Ամերիկայում, Ֆրանսիայում և Հայաստանում (անգլերեն).....163
- Elya Davtyan.** Cultural Aspects of Contemporary Political Tolerance in United States, France and Armenia (in English)
- Эля Давтян.** Культурные аспекты современной политической толерантности в Америке, Франции и Армении (на английском)

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

- Աննա Սկրտչյան.** Հայ հրապարակախոսների արցախյան շեշտադրումները և դրանց դրսևորումները հայաստանյան մամուլում (1988-1991 թթ.) (հայերեն).....175
- Anna Mkrtchyan.** Accents on Artsakh of Armenian Publicists and their Presentation in the Armenian Press (1988-1991) (in Armenian)
- Анна Мкртчян.** Арцахские акценты армянских публицистов и их проявления в армянской прессе (1988-1991 гг.) (на армянском)

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

- Մերի Յովհաննիսյան.** Մտագրոհը՝ որպես փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցման մեթոդ (հայերեն).....187
- Meri Hovhannisyanyan.** Brainstorming as Method of Interactive Learning (in Armenian)
- Мери Оганнисян.** Мозговой штурм как метод интерактивного обучения (на армянском)

- Գագիկ Ավետիսյան.** Արցախի Հանրապետության պատմամշակութային կոթողների ուսումնասիրումը «Զրույցներ արվեստի մասին» թեմատիկ դասընթացների շրջանակում (հայերեն).....196
- Gagik Avetisyan.** The Study of Historical and Cultural Monuments of the Republic of Artsakh in the Framework of Thematic Courses «Conversations about Art» (in Armenian)
- Гагик Аветисян.** Изучение историко-культурных памятников Республики Арцах в рамках тематических курсов «Беседы об искусстве» (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Հայկ Սարգսյան, Ռուբեն Գևորգյան, Կարինե Մինասյան. Թվայնացումը, Էլեկտրոնային կառավարման համակարգերը և ինստիտուտների փոխակերպումը (հայերեն).....205

Hayk Sargsyan, Ruben Gevorgyan, Karine Minasyan. Digitalization, E-Governance and Institutional Transformation (in Armenian)

Гайк Саргсян, Рубен Геворгян, Карине Минасян. Цифровизация, электронное правительство и институциональная трансформация (на армянском)

Ասոմ Սարգարյան, Էմիլ Գրիգորյան. Նորարարական գործունեության հարկային խթանման միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետությունում դրա տեղայնացման հնարավորությունները (հայերեն).....222

Atom Margaryan, Emil Grigoryan. International Experience of tax Promotion of Innovation Activities and the Opportunities for its Localization in the Republic of Armenia (in Armenian)

Атом Маргарян, Эмил Григорян. Международный опыт налогового продвижения инновационной деятельности и возможности его локализации в Республике Армения (на армянском)

Արփենիկ Սուրադյան, Կամո Դավթյան. Կապիտալի ներհոսքի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա (հայերեն).....239

Arpenik Muradyan, Kamoo Davtyan. Capital Inflow Influence on the Economic Growth of the Republic of Armenia (in Armenian)

Арпеник Мурадян, Камо Давтян. Влияние притока капитала на экономический рост Республики Армения (на армянском)

Լուսինե Ծալեցյան. Գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների դասակարգման հատկանիշները և դրա գնահատման չափանիշների կատարելագործման մոտեցումները (հայերեն).....251

Lusine Tspnetsyan. Competitiveness of Agriculture Features of the Classification of Determining Factors and Approaches to Improving the Criteria for its Assessment (in Armenian)

Лусине Цпнецян. Конкурентоспособность сельского хозяйства, особенности классификации определяющих факторов и подходы к совершенствованию критериев его оценки (на армянском)

Մհեր Շահինյան. ՀՀ արդյունաբերության արտադրողականության գործոնների վերլուծություն (հայերեն).....271

Mher Shahinyan. Analysis of RA Industry Productivity Factors (in Armenian)

Мгер Шагинян. Анализ факторов производительности промышленности Республики Армения (на армянском)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Գյուլնարա Դանիելյան. Երջանկության տնտեսագիտություն. գործոններ՝ ավանդական տնտեսագիտությունից անդին (անգլերեն).....287

Gyulnara Danielyan. The Economics of Happiness: Factors beyond the Traditional Economy (in English)

Гюльнара Даниелян. Экономика счастья: факторы, выходящие за рамки традиционной экономики (на английском)

- Լուսինե Հովհաննիսյան.** Պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման ոլորտում առկա որոշ հիմնախնդիրներ քրեական դատավարությունում (հայերեն).....294
- Lusine Hovhannisyán.** On Some Issues of Full Realization of the Right to Defense in Criminal Procedure (in Armenian)
- Лусине Оганесян.** О некоторых вопросах полной реализации права на защиту в уголовном процессе (на армянском)

ՓՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, РЕЦЕНЗИИ, REVIEWS

- Арзуманян Ашот Мартиросович.** «Тайна булата», «Советакан грех», 1976г., 536 с. (на русском).....303
- Лусине Мовсисян.** «Армяно-азербайджанский разговорник», Ереван, 2022, 64 с. (на русском).....311

- «ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները**313
- The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»**315
- Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»**.....316

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ



**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ
1500-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ* 1**

ՐՏԴ 342.4

DOI: 10.52063/25792652-2022.1.12-10

ԱՎԵՏԻԶ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ,
«Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
ԼՂՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար (2016 թ.),
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
avetiq.hh@gmail.com

Հոդվածի նպատակն է ներկայացնել Արցախի Հանրապետության Սահմանադրությունների և դրանց պատմական նախատիպերի ընդունման 1500-ամյա պատմությունը: Հետազոտությունն արդիական է նրանով, որ դարաբաղա-ադրբեջանական հակամարտության դեռևս չլուծված պայմաններում անհրաժեշտ է հայ և օտարերկրյա մասնագետներին ներկայացնել Արցախի՝ նաև պետաիրավական առումով հայկական լինելու անվիճարկելի փաստը:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ արխիվային փաստաթղթերի և գիտական նյութերի հիման վրա ուսումնասիրել V դարից մինչև մեր օրերն Արցախում ընդունված Սահմանադրությունների և դրանց նախատիպերի պատմությունը: Հետազոտության ընթացքում օգտագործված մի շարք փաստաթղթեր առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի և պատմահամեմատական մեթոդները:

Հետազոտության շրջանակներում կատարված հիմնական եզրահանգումն այն է, որ թե՛ 1500 տարի առաջ, թե՛ հիմա արցախցիները սովոր են ինչպես հասարակական, այնպես էլ պետության հետ հարաբերությունները կառուցել համընդունելի կանոնների կամ նորմերի հիման վրա. եթե մեկուկես հազարամյակ առաջ այն ուներ կանոնական բնույթ, ապա մեր օրերում այն հիմնականում իրավական նորմերով է կարգավորվում:

Հնայած այն հանգամանքին, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին անկախ պետության հռչակմամբ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2022 թ., գրախոսվել՝ 23.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

1 Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ SCS20-009 գիտական թեմայի շրջանակներում:

դեմ պատերազմ սկսեց, և երկիրը կանգնած էր գոյաբանական լուրջ խնդիրների առաջ, այնուհանդերձ քայլեր են ձեռնարկվել Սահմանադրության մշակման աշխատանքներ սկսելու ուղղությամբ:

Ինչպես 2006 թ., այնպես էլ 2017 թ. Արցախի Հանրապետության Սահմանադրությունն աչքի են ընկնում արժեքանական ծանրաբեռնվածությամբ, որը կարող է պարարտ հիմք հանդիսանալ երկրում սահմանադրականության զարգացման գործում: Սրան զուգահեռ պետք է արձանագրել, որ Սահմանադրության փաստացի առկայությունն ինքնին դեռևս որևէ հարց չի լուծում, քանի դեռ օրենսդրությունն ամբողջապես չի համապատասխանում Սահմանադրությանը, սահմանադրական արժեքները չեն կազմում օրենսդրության միջուկը, իսկ իրավակիրառական պրակտիկան հիմնված չէ Սահմանադրության և դրա արժեքային համակարգի հաշվառմամբ ստեղծված օրենսդրության անշեղ կատարման վրա:

Հիմնաբառեր՝ Վաչագան Բարեպաշտ, Աղվեն, Կանոնական սահմանադրություն, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, սահմանադրական հանձնաժողով, Սահմանադրություն, սահմանադրական հանրաքվե:

Ներածություն

Կյանքում լայնորեն կիրառվող իրավական եզրույթներից մեկը *սահմանադրությունն* է, որն անանց արժեք է թե՛ պետության, թե՛ հասարակության և թե՛ անձի համար: Մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ են սահմանադրության վերաբերյալ բնորոշումները, և բոլորի հիմքում ընկած է հետևյալ գաղափարը՝ սահման դնել, սահմանել, բնորոշել անհատի իրավունքները, հասարակության իրավունքները և պետության ու կառավարության պատասխանատվությունը սեփական ժողովրդի հանդեպ:

«Սահմանադրություն» հասկացությունը լատիներենում (*constitutio*) նշանակում է «հիմնել», «սահմանել»: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» «սահմանադրում» կամ «սահմանադրություն» չէ:

Նոր հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության չափազանց ուշագրավ մեկնաբանություն է ներկայացնում՝ «որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին», ինչը, ըստ պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի, ենթադրում է՝

1. դա որոշում է, վճիռ, «օրինադրութիւն»,

2. այն ունի սահմանային նշանակություն. իրենից այն կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող,

3. «տեսչութիւն վերին» արտահայտությունը, փոխյուրացնելով նման «որոշման» սահմանային ու գերակա բնույթը, հատուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ տրված» արժեքների առկայությունը (Հարությունյան Գ. 24-25):

«Սահմանադրություն» երևույթի մասին մեր մտորումները հիմք են տալիս այն բնորոշելու հետևյալ կերպ. «սահմանադրությունը հստակ արժեհամակարգի վրա խարսխված, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված իրավաքաղաքական փաստաթուղթ է, որի ընդունման նպատակն է կարգավորել հասարակական հարաբերությունները, երաշխավորել մարդու՝ որպես բարձրագույն արժեքի բնականոն կենսագործունեությունը և զարգացումը հասարակությունում, այդ նպատակով ստեղծել բարենպաստ մթնոլորտ, պաշտպանել նրա իրավունքներն ու ազատությունները, սահմանել պետության կառուցվածքն ու գործառնությունը» (Հարությունյան Ա., *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության*

Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները 49-50):

Վաչագան Բարեպաշտի Կանոնական Սահմանադրությունը

Հայոց աշխարհը, մասնավորապես նրա արցախյան հատվածը, իրավամբ ու առանց չափազանցության, կարելի է համարել սահմանադրության համաշխարհային օրրաններից մեկը: Մեզանից ավելի քան մեկուկես հազարամյակ առաջ՝ 488 թ. մայիսի 20-ին, Մեծ Հայքի Արցախ նահանգի թագավոր Վաչագան Բարեպաշտի կողմից Աղվեն ամառանոցում հրավիրված ժողովի ընթացքում ընդունվել է 21 կանոններից բաղկացած Կանոնական Սահմանադրությունը, որը մինչև այսօր պահպանվող հայերեն հնագույն օրենքների ժողովածուն է:

Այդ կանոնները կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնք ավարտվում են եզրափակիչ կանոնով:

Վաչագան Բարեպաշտը և նրա գումարած եկեղեցական ժողովի մյուս մասնակիցներն առավելագույն հետևողականություն են ցուցաբերել բոլոր տեսակի վիճահարույց խնդիրների («բազում հակառակությունք լինելին...») լուծումներն ընդգրկելու գործում: Այս կանոնները կարգավորում են, իհարկե, նախևառաջ **հարկային խնդիրները**. ինչ և ինչպես պետք է մուծեն հասանելիքն աշխարհիկ տարբեր խավերը հոգևորականներին («ընծայ», «հոգևոյնմասն», «պտուղ», «հաս», «տասանորդ»), իսկ վերջիններս՝ իրենց ավագներին: Հաջորդ խնդիրը **հոգևորականների տարբեր խմբերի**, ինչպես նաև նրանց և աշխարհիկ ավատատերերի զանազան խմբերի միջև իրավասությունների հստակ սահմանազատումն է բոլոր ոլորտներում: Կանոններում լուծված են մի շարք **քրեական խնդիրներ** («Քրիստոնեայ մարդ, որ կռուի եւ արիւն հեղու...»), **ամուսնական իրավունքի հարցեր**: Ի վերջո, հատուկ սահմանված են **պատիժները** հեթանոսական սովորույթներով շարժվողների համար («զգէտս հարցանէ...», «այնք, որ կոծ դենն»), որոշ դեպքերում էլ՝ **բարոյագիտական կանոններ** («Եթէ աշխարհական ոք յերիցու կամ ի սարկաւազի վերայ բամբասանս դնիցէ...») և անգամ **բարեգործության նորմեր** («անաշխարհիկն զհոգեցատուրն յեկեղեցին տարցէ») (Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծայքերում 123):

Հատկանշական է, որ այն մշակվել և ընդունվել է ժամանակի աշխարհիկ ու հոգևոր իշխանության ներկայացուցիչների լայն ընդգրկմամբ, իսկ ընդունվելուց հետո բոլորը երդում են տվել հավատարիմ լինել սահմանադրությանը, ստորագրել են դրա համար և կնքել իրենց մատանիներով: Իսկ վերջում արդեն առավել լիարժեք դարձնելու համար այն կնքվել է թագավորի մատանիով:

Ուշագրավ է, որ հենց այդ ժամանակ է հայ իրականության մեջ առաջին անգամ գործածվել «սահմանադրություն» բառը, որն էլ նպաստել է թե՛ Արցախում և թե՛ ընդհանրապես Հայաստանում սահմանադրական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը:

Եթե Վաչագան Բարեպաշտի Կանոնական Սահմանադրությունը դեռևս V դարում հայոց մեջ ձևավորել ու ամրապնդել է սահմանադրորեն ապրելու գաղափարը, ապա մեկուկես հազարամյակ անց գրեթե նույն տարածքում Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակմանը հաջորդող քայլերը ևս վկայում են, որ հայ ժողովրդին ներհատուկ է սահմանադրության տառին ու ոգուն համապատասխան ապրելու հատկանիշը:

Ինչպես Կիմ Ղահրամանյանն է նշում, «1500 տարի շարունակ այդ Սահմանադրությունն ուղղակիորեն, թե անուղղակիորեն ծառայում է այդ հողի վրա իրավական գիտակցության ձևավորմանը, իրավակարգի ամրապնդմանը և որպես

այդ ամենի գլխավոր նպատակ՝ դարավոր հայ հողի պաշտպանությունը: Հայ իրավագիտական մտքի 1500-ամյա հուշարձանն այսօր էլ շարունակում է ծառայել այդ հողի բնիկ տերերին» (Վաչագան Բարեպաշտ թագավորի սահմանադրությունը 65-66):

Վաչագան Բարեպաշտից հետո՝ մինչև XX դարը, Արցախի տարածքում բնակվող հայերի կողմից որևէ սահմանադրություն, որը գործել է ընդունվելուց հետո, հայտնի չէ¹, և այդ մեկուկես հազարամյակն ավելի շատ կարելի է բնորոշել որպես օտար զավթիչների կողմից Արցախը տիրելու ու լծի տակ պահելու ժամանակաշրջան, որին արցախահայությունը մշտապես պատասխանել է դիմադրությամբ, ազատագրական շարժումներով, նաև ինքնիշխանության տարրեր ունեցող կազմավորումների միջոցով:

Ադրբեջանի կողմից Արցախին «շնորհված» Սահմանադրությունը

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ունենալու հարցը բազմիցս քննարկվել է Խորհրդային Ադրբեջանի կուսակցական և պետական մարմիններում: Վերջնական արդյունքում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը 1924 թ. հուլիսի 1-ին ստեղծեց հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի մասին կանոնադրություն մշակելու համար: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց Խորհրդային Ադրբեջանի ներքին գործերի ժողկոմ և Արտակարգ հանձնաժողովի նախագահ Մ. Բաղիրովը, անդամներ՝ Թ. Ալիևը և մարզի գործադիր իշխանության ղեկավար Ա. Ղարաբյոզյանը: Հանձնաժողովի կողմից մշակված «Ինքնավար մարզի Սահմանադրության նախագիծ» փաստաթուղթը քննարկվեց Ադրբեջանի ԿԿ նախագահության 03.07.1924 թ. նիստում և արժանացավ հավանության: Միաժամանակ առաջարկվեց Ադրբեջանի կենտգործկոմի նախագահությանը Սահմանադրության նախագիծը շտապ բերել «խորհրդային տեսքի» ու հրապարակել թուրքերեն, հայերեն ու ռուսերեն: Սահմանադրությունը հայերեն և արաբատառ թուրքերեն առաջին անգամ հրապարակվեց Բաքվում հայերեն լույս տեսնող Ադրկոմկուսի ԿԿ օրգան «Կոմունիստ» թերթի 1924 թ. հուլիսի 6-ի համարում («Կոմունիստ» թերթ 2): Նույն օրը Բաքվում ռուսերեն լույս տեսնող «Բակինսկի ռաբոչի» թերթը շնորհավորեց Ղարաբաղի գյուղացիությանը «հուլիսի 6-ի» կապակցությամբ: Սահմանադրությունը «խորհրդային Ղարաբաղ» թերթում արտատպվեց 1924 թ. հուլիսի 24-ի համարում:

Սահմանադրությունը կազմված է նախաբանից (պրեամբուլա) և 4 բաժնից՝ 1. Ընդհանուր հիմունքներ, 2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը, 3. Կենտրոնական իշխանության կազմակերպումը, 4. Իշխանության կազմակերպումը տեղերում:

Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրեց իր 1924 թ. նոյեմբերի 26-ի համարում, որտեղ այդ փաստաթուղթը կոչվում էր ոչ թե «Սահմանադրություն», այլ «Կանոնադրություն», իսկ «Ինքնավար շրջան» հասկացությունը փոխարինվել էր «Ինքնավար մարզ» հասկացությամբ: Չնայած դրան՝ մարզի ղեկավարներն իրենց որոշումներում և գրագրություններում կիրառում էին «Սահմանադրություն» եզրույթը (Հովսեփյան 183-187):

¹ Գանձակում ծնված հայ մտածող-գիտնական և օրենսդիր Մխիթար Գոշը 1184 թ. գրեց իր հայտնի «Դատաստանագիրք» աշխատությունը, որը հայերի մեջ ձեռք բերեց հիմնական օրենսդրական ակտի նշանակություն և տարածվեց Հայաստանի սահմաններից դուրս՝ այն գաղութներում, որտեղ հայ համայնքը ձեռք էր բերել ներքին ինքնավարության իրավունք: Սուղանում այսօր էլ՝ հայ համայնքի անդամների քաղաքացիական գործեր լսելիս, պետական դատարանը կիրառում է «Գիրք Դատաստանին»:

**ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՀՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԵՏԱՌԻԹՅՈՒՆ**

**1991 թ. Նոյեմբերի 28-ի Ժողպատգամավորների խորհրդի և
1992 թ. Գերագույն խորհրդի որոշումները**

Ինչպես հայտնի է, հայկական երկրորդ հանրապետությունն իր անկախությունը հռչակել է 1991 թ. սեպտեմբերի 2-ին՝ Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունելով «ԼՂՀ հռչակման մասին» հռչակագիր:

Ժողպատգամավորների ընդունած որոշման վերաբերյալ Ժողովրդի կարծիքը բացահայտելու և դրա միջոցով որոշմանը բարձրագույն իրավաբանական ուժ հաղորդելու նպատակով 1991 թ. դեկտեմբերի 10-ին կայացել է անկախության հանրաքվե, որին դրված էր հետևյալ հարցը. «Համաձայն ե՞ք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձևն ուրիշ պետությունների ու ընկերակցությունների հետ» (ԼՂՀ պետական արխիվ (ՊԱ), ֆոնդ 1, ցանկ 2, կապ 28, պայմանական միավոր 331, թերթ 65): ԼՂՀ անկախության հանրաքվեի մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 99,89 %-ը, կողմ է արտահայտվել ԼՂՀ անկախությանը, ինչի «արդյունքում Ժողովրդի միաձայն քվեի միջոցով իրավաբանորեն հաստատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետության կառուցման հայեցակարգը, այսինքն՝ այդ պետաիրավական ակտը բավարար հիմք է հանդիսացել անկախ պետականություն հիմնադրելու համար» (Հարությունյան Ա., 1991 թվականի դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեի դերն Արցախի Հանրապետության կազմավորման գործընթացում 107-120):

Այս երկու կարևոր իրադարձությունների միջակայքում տեղի են ունեցել սահմանադրության ընդունմանն առնչվող գործընթացներ, որոնց մասին գրեթե գիտական անդրադարձներ չկան: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին խոսվում էր դեռևս Հանրապետության հռչակման առաջին օրերին: Այսպես, ԼՂՀ Ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմը 1991 թ. Նոյեմբերի 28-ին տեղի ունեցած 17-րդ, Նիստի ժամանակ ընդունեց թիվ 4/146 որոշումը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական օրենքի՝ ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի կազմավորման մասին» (ԼՂՀ ՊԱ, ֆոնդ 1, ցանկ 2, կապ 28, պայմանական միավոր 330, թերթ 10-11): Հանձնաժողովը կազմված էր 14 անդամներից, որը նախագահում էր ԼՂՀ գործկոմի նախագահ Լեռնարդ Պետրոսյանը: Որոշման 2-դ կետի համաձայն՝ հանձնաժողովը մեկամսյա ժամկետում՝ մինչև դեկտեմբերի 28-ը, Ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմի քննարկմանը պետք է ներկայացներ ԼՂՀ հիմնական օրենքի նախագիծը:

Հաջորդիվ ԼՂՀ Գերագույն խորհուրդը 1992 թ. հունիսի 5-ին ընդունեց թիվ Ն-0045ա-1 որոշումը՝ «ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողով ստեղծելու մասին» (ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը): Որոշման համաձայն՝ հանձնաժողովը կազմված էր 25¹ հոգուց, որի նախագահ էր նշանակվել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, իսկ տեղակալ՝ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Բորիս Առուշանյանը: Հանձնաժողովին հանձնարարվել էր 3-օրյա ժամկետում անցկացնել իր առաջին

¹ Չնայած որոշման մեջ նշված է, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 25 հոգուց, սակայն կցված ցուցակում 24-ն են, ներառյալ նախագահը:

նիստը և նախատեսել առաջին ընթերցմամբ ընդունելու համար Սահմանադրության բաժինների նախապատրաստման ու մշակման կոնկրետ ժամկետները:

Վերոհիշյալ երկու որոշումներն այդպես էլ կյանքի չեն կոչվել, քանի որ նորահռչակ ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ագրեսիայի պատճառով երկրի ռազմաքաղաքական դեկավարության ուշադրության վեկտորը սևեռված էր պետության անվտանգության ու ազգաբնակչության խաղաղ գոյակցության հարցերին:

1992 թ. հունվարի 6-ի «Պետական անկախության մասին» հռչակագրի ընդունումից հետո՝ հունվարի 8-ին, ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքը, որը կարելի է համարել ԼՂՀ Սահմանադրության նախատիպը:

Սահմանադրական հանձնաժողովների ստեղծումը 1996-2004 թթ.

Արցախյան գոյամարտի ավարտից և 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև կրակի և ռազմական գործողությունների դադարեցման մասին անժամկետ համաձայնագրի ստորագրումից հետո ընկած ժամանակաշրջանում Սահմանադրության մշակման աշխատանքների ընթացքավորմանն ուղղված առաջին քայլը «Սահմանադրական հանձնաժողով ստեղծելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 1996 թ. ապրիլի 9-ի թիվ Ն-0096-1 որոշումն էր: Հանձնաժողովի նախագահը ԼՂՀ նախագահ Ռոբերտ Զոչարյանն էր, տեղակալը՝ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմայանը, իսկ 16 անդամները ներկայացնում էին երկրի պետական իշխանության մարմիններն ու գիտական հաստատությունները: Այս որոշումը որևէ դրական տեղաշարժ չգրանցեց երկրի Հիմնական օրենքի ընդունման գործում:

ԼՂՀ անվտանգության խորհրդի քարտուղար Սլավա Ավանեսյանը 1998 թ. օգոստոսի 12-ի թիվ 3-02/3 գրությամբ Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանին է ներկայացրել Անվտանգության խորհրդի նիստում հաստատված ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի մոտավոր կազմը, ինչին հաջորդել է ԼՂՀ Ազգային ժողովի նախագահության 1998 թ. սեպտեմբերի 4-ի թիվ Ն. Խ.-0070-1 որոշումը, ըստ որի՝ *«հավանություն տալ ԼՂՀ անվտանգության խորհրդի նիստի հավանությանն արժանացած ԼՂՀ սահմանադրական հանձնաժողովի կազմին և ներկայացնել Ազգային ժողովի հաստատմանը»:*

Ազգային ժողովի նախագահության որոշմանը հաջորդել է ԼՂՀ Ազգային ժողովի 1998 թ. սեպտեմբերի 19-ի թիվ Ն. 0334-1 որոշումը, ըստ որի՝ ստեղծվել է Սահմանադրական հանձնաժողով՝ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի նախագահությամբ, երեք տեղակալներով և ինը անդամներով:

Այս որոշման ընդունումը ևս գործնական որևէ արդյունք չտվեց, և 2002 թ. տեղի ունեցած նախագահական ընտրությունների ընթացքում ու դրանից հետո ակտիվացան սահմանադրություն ընդունելու վերաբերյալ քննարկումները: Դրա արդյունքում ընդունվեց «Սահմանադրական հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի թիվ Ն-0439-3 (14.04.2004 թ.) որոշումը, որում մասնավորապես նշված էր. *«Հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի վերջին ընտրությունների և կառավարության կազմում կատարված փոփոխությունների հետևանքով Ազգային ժողովի 1998 թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ ստեղծված սահմանադրական հանձնաժողովի շուրջ 70 տոկոսը, ըստ պաշտոնների անվանացանկի, ենթարկվել է ռոտացիայի, անհնարին է դարձել շարունակել Հիմնական օրենքի մշակման գործընթացը»:* Համաձայն որոշման՝ հանձնաժողովի նախագահի պարտականությունները ստանձնել է ԼՂՀ նախագահ

Արկադի Ղուկասյանը, տեղակալներին՝ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահը և վարչապետը՝ 10 անդամների ներգրավմամբ:

ԼՂՀ ԱԺ 2005 թ. ճակատագրական որոշումը

«ԼՂՀ Սահմանադրության նախագծի մշակման պետական հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2005 թ. դեկտեմբերի 21-ի թիվ Ն-0085-4 որոշումը ճակատագրական եղավ երկրի Հիմնական օրենքի ընդունման գործում: Որոշման առաջին կետով հաստատվել է հանձնաժողովի կազմը՝ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի նախագահությամբ, երկու տեղակալներով և տասը անդամներով, իսկ երկրորդ կետով ուժը կորցրած է ճանաչվել ԼՂՀ Ազգային ժողովի 2004 թ. ապրիլի 14-ի որոշումը:

Սահմանադրության մշակողների առջև դրված էր բարդ ու պատասխանատու խնդիր. այն պետք է համահունչ լիներ աշխարհում ընթացող սահմանադրական զարգացումներին, ժողովրդավարական սահմանադրություններին ներկայացվող պահանջներին, և, իհարկե, պետք է հաշվի առնվեին երկրի անվտանգության ու անկախության ամրապնդման խնդրով պայմանավորված առանձնահատկությունները: Սահմանադրության առաջնային խնդիրներն էին ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական պետության հաստատումն ու համապատասխան կառուցակարգերի սահմանումը (Թովմասյան 255):

2006 թ. ակտիվորեն ընթացել են ԼՂՀ Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքները, որի շրջանակներում կայացել են հանդիպումներ շահագրգիռ կազմակերպությունների ու մասնագետների հետ: Այս տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում արձանագրել Սահմանադրության ընդունման նախօրեին երկրի Հիմնական օրենքի նախագծի առնչությամբ տեղի ունեցած քննարկումների կարևորությունն ու քաղաքացիների կողմից Սահմանադրության ընկալունակության աստիճանի բարձրացմանն ուղղված քայլերը: Քննարկումներին իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել ինչպես քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիները՝ վերջիններիս հետ հանդիպումների ձևաչափով: Ի դեպ, 2006թ. սեպտեմբերի 29-ին ԼՂՀ Ազգային ժողովում տեղի ունեցած խորհրդարանի գլխադասային պետաիրավական հարցերի և պաշտպանության, անվտանգության և օրինապահականության մշտական հանձնաժողովների՝ ԼՂՀ Սահմանադրության նախագծի շուրջ հերթական քննարկումներին իրավիրված էին Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք Սահմանադրության նախագծի վերաբերյալ առաջարկություններով հանդես գալու հնարավորություն են ունեցել: Այստեղից հետևում է, որ քաղաքացիների կողմից ԼՂՀ Սահմանադրության՝ որպես արժեքի ընկալման առաջին հնարավորությունն ընձեռվել է հենց Սահմանադրության նախագծի քննարկման, իսկ այնուհետև՝ նաև քարոզչության ժամանակ (Հարությունյան Ա. *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները* 36-62):

ԼՂՀ Ազգային ժողովի՝ 2006 թ. հոկտեմբերի 4-ին կայացած նիստում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի լիազոր ներկայացուցիչը ներկայացրել է ԼՂՀ Սահմանադրության նախագիծը: Ազգային ժողովն իր Ն-0188-4 (06.10.2006 թ.) որոշմամբ ԼՂՀ Սահմանադրության նախագիծն ընդունել է առաջին ընթերցմամբ:

Հատկանշական է, որ ԼՂՀ Սահմանադրության նախագծի՝ ԼՂՀ Ազգային ժողովի 06.10.2006 թ. լիազումար նիստում առաջին ընթերցմամբ ընդունումից հետո հանրապետական «Ազատ Արցախ» թերթի թիվ 122 (1937) (12.10.2006 թ.) հատուկ թողարկման մեջ տպագրվել է Ազգային ժողովի դիմումը, որում ակնկալվում էր

քաղաքացիների ակտիվ ու շահագրգիռ մասնակցությունը երկրի Հիմնական օրենքի նախագծի հանրային քննարկմանը: Քաղաքացիներն իրենց նկատառումները, դիտողություններն ու առաջարկությունները կարող էին ուղարկել ԼՂՀ օրենսդիր մարմին կամ ԼՂՀ Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքային խմբին: Դիմումի տեքստը պարբերաբար հեռարձակվում էր Արցախի հանրային հեռուստատեսությամբ:

Քաղաքացիների կողմից Սահմանադրության մասին հստակ և միանշանակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է, որ հնարավորինս իրական արժեքը ներկայացվի նրանց, Սահմանադրությունն առավել հասու դարձվի, մոտեցվի քաղաքացիներին: Այս նպատակի իրագործման հիմքերը ԼՂՀ-ում դրվել են դեռևս Սահմանադրության ընդունման նախօրեին, իսկ ավելի ստույգ՝ 2006 թ. նոյեմբերի 15-ին, երբ սույն տողերի հեղինակի կողմից առաջարկություն է ներկայացվել ԼՂՀ Ազգային ժողովի նախագահին՝ նախքան ԼՂՀ Սահմանադրության ընդունումը բացատրական, քարոզչական աշխատանքներ տանելու Հանրապետության առավել խիտ բնակեցված բնակավայրերում, որի նպատակը ազգաբնակչության հետ անմիջական հանդիպումների, շփումների միջոցով երկրի Հիմնական օրենքի առավել կարևոր դրույթներին մեկնաբանություն տալն ու նրանց առաջադրած հարցերին պատասխանելն էր: Ինչպես ինքնին Սահմանադրությունն էր նոր երևույթ ԼՂՀ քաղաքացիների կյանքում, այնպես էլ այդպիսի հանդիպումները, որոնք, կարելի է ասել, նոր տիպի մշակույթ ձևավորելու հիմքեր դրեցին Հանրապետությունում: Նման ծրագրի իրականացման հիմնական իմաստն այն էր, որ Հիմնական օրենքն ընկալված, գիտակցված և իմաստավորված ընդունվի քաղաքացիների կողմից: Ընդ որում, հիշյալ քարոզչությունը լայնորեն լուսաբանվել է ինչպես Արցախի հանրային հեռուստատեսությամբ¹, այնպես էլ Հանրապետությունում հրատարակվող մի շարք թերթերի միջոցով²: Սահմանադրության քարոզարշավն իրականացվել է դեկտեմբերի 3-8-ն ընկած ժամանակահատվածում:

2006 թ. նոյեմբերի 1-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ ընդունվել է ԼՂՀ Սահմանադրության նախագիծը, ինչից հետո նույն օրվա Ն-0196-4 որոշմամբ Ազգային ժողովը համաձայնություն է տվել ԼՂՀ Նախագահի ներկայացրած ԼՂՀ Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելուն:

Դեկավարվելով «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով ԼՂՀ Ազգային ժողովի 2006 թ. նոյեմբերի 1-ի որոշումը՝ ԼՂՀ Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելուն համաձայնություն տալու մասին՝ ԼՂՀ Նախագահ Արկարի Դուկասյանի 2006 թ. նոյեմբերի 3-ի ՆՀ-83 հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության նախագծի հանրաքվեն նշանակվեց 2006 թ. դեկտեմբերի 10-ին:

2006 թ. դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը և ԼՂՀ 1991 թ. Անկախության հանրաքվեի անցկացման 15-ամյակի օրը, տեղի ունեցավ ԼՂՀ Սահմանադրության հանրաքվեն: ԼՂՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից հաստատված հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ժամանակացույցի ու միջոցառումների ծրագրի համաձայն՝ կազմավորվեցին հանրաքվեի 22 ընտրատարածքային և 277 տեղամասային ընտրական հանձնաժողովներ, իսկ մեկ տեղամաս՝ Երևան քաղաքում (ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչությունում): Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը հաստատեց ԼՂՀ Սահմանադրության նախագծի

¹ Այս մասին տե՛ս Արցախի հանրային հեռուստատեսության 03-09.12.2006 թ. հաղորդումները:

² Մասնավորապես տե՛ս ԼՂՀ-ում հրատարակվող «Ազատ Արցախ», «Ապառաժ», «Ակունք», «Հայրենիք», «Հայկի Սերունդ» թերթերի 2006 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համարները:

**ընդունման հանրաքվեի դրված հարցը՝ «Համաձայն եք, որ հանրաքվեի դրված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության Նախագիծն
ընդունվի որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Սահմանադրություն»:**

Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը կազմել է 90,077, որից գրանցված և քվեաթերթիկ ստացած քվեարկողների թիվը՝ 78,389 կամ 87,02 %: ԼՂՀ Սահմանադրության ընդունման հարցով հանրաքվեի արդյունքների վերաբերյալ ամփոփ արձանագրության տվյալների համաձայն՝ ԼՂՀ Սահմանադրության Նախագիծն կողմ քվեարկեց քվեարկության մասնակիցների 98,58 %-ը: Հանրաքվեի Նախապատրաստման և անցկացման ընթացքին հետևել են 90-ից ավելի միջազգային դիտորդներ ու լրագրողներ, որոնք ներկայացնում էին 15 երկրի 30 կազմակերպություն: Հանրաքվեի ընթացքին հետևել է նաև 131 տեղական դիտորդ, և լուսաբանել է 40 լրագրող («Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք»):

«Արցախի Հանրապետության տոների և հիշատակ օրերի մասին» ԱՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դեկտեմբերի 10-ը ոչ աշխատանքային է և նշվում է որպես Սահմանադրության օր:

Քանի որ յուրաքանչյուր երկիր որդեգրում է սահմանադրական արժեքանության իր դոկտրինան, ուստի ԼՂՀ Սահմանադրության արժեհամակարգի հետ կապված՝ պետք է նկատել, որ այն արժեքների մեծ մասը, որոնք ամրագրված են ԼՂՀ Սահմանադրության մեջ, երկրի ու ժողովրդի կյանքում արմատավորվել են դեռևս Արցախյան շարժման ու ԼՂՀ կազմավորման տարիներին, մասնավորապես՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունված «ԼՂՀ հռչակման մասին», 1992 թ. հունվարի 6-ին ընդունված «ԼՂՀ պետական անկախության մասին» հռչակագրերում, դրանից հետո ընդունված սահմանադրական օրենքներում և մոտ 15 տարվա «փորձաշրջան» անցնելուց հետո իրենց «հանգրվանն» են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ, ինչը վկայում է ոչ միայն դրանց անհրաժեշտության ու կենսունակության, այլև այն մասին, որ այդ արժեքները փոխառված են ոչ թե միջազգային հիմնարար փաստաթղթերից, այլ երկրների սահմանադրություններից ու տարիների ընթացքում դարձել են մարդկանց կենսակերպի անբաժանելի մասն ու իրավակարգավորիչ տարրը:

Սահմանադրության ուշ ընդունման հետ կապված՝ կարելի է կատարել հետևյալ նկատառումները. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չզնաց ԽՍՀՄ-ից անկախացած մի շարք երկրների ճանապարհով, այսինքն՝ անկախացումից անմիջապես հետո սահմանադրություն ընդունելով, այլ տարիների ընթացքում ներքին օրենսդրությամբ կարգավորեց հասարակական հարաբերություններն ու պետության կառուցվածքը, որից հետո պահի հասունացմամբ համաժողովրդական հանրաքվեով ընդունեց Հիմնական օրենքը: Գոյություն ունի նաև այն տեսակետը, ըստ որի՝ ԼՂՀ անկախությունից հետո մինչև 2006 թվականը սահմանադրություն չէր ընդունվում այն պատճառով, որ դրանով իսկ չխանգարվեր բանակցային գործընթացը: Նման տեսակետին ընդհանրապես համաձայն չենք, քանի որ, Նախ, Սահմանադրության ընդունումն Արցախյան հիմնախնդրի բանակցային գործընթացին ոչնչով չի կարող խանգարել, քանի որ այն հիմնարար ձևով կարգավորում է հասարակական հարաբերությունները, երկրորդ, եթե այդպես լիներ, ապա 2006 թ. Սահմանադրության ընդունումից կարճ ժամանակ հետո այդպիսի ենթադրյալ բացասական հետևանքը պետք է զգացվեր:

**2016 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

**Քաղաքական ուժերի 22.02.2016 թ. գրությունը և
ԱՀՆ նախագահի 21.03.2016 թ. հրամանագիրը**

2016 թ. փետրվարի 22-ին ԼՂՀ Ազգային ժողովի 5 քաղաքական կուսակցություններ և արտախորհրդարանական 3 քաղաքական ուժեր սահմանադրական բարեփոխումների գործընթաց սկսելու նպատակով դիմել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին՝ առաջարկելով ստեղծել մասնագիտական հանձնաժողով:

Ելնելով իրավունքի գերակայության և ժողովրդաիշխանության սկզբունքների իրացման կառուցակարգերը բարելավելու, իշխանության ճյուղերի լիազորությունների հավասարակշռումը կատարելագործելու, հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից ու հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների ու արտախորհրդարանական մի շարք քաղաքական ուժերի առաջարկը՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի **2016 թ. մարտի 21-ի** ՆՀ-19-Ն հրամանագրով ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահ է նշանակվել Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, անդամներ՝ պետական իշխանության տարբեր մարմինների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ (թվով 10), իսկ քարտուղար՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ Ավետիք Հարությունյանը:

Հանձնաժողովին հանձնարարվել է **մինչև 2016 թ. մայիսի 1-ը** ԼՂՀ նախագահին ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, իսկ նախագահի կողմից սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տրվելուց հետո՝ **մինչև 2016 թ. սեպտեմբերի 10-ը**՝ մշակել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների նախագիծը:

Ադրբեջանը սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ձևավորումից, նրա կազմի հետ հանդիպումից և հանձնաժողովի առաջին նիստի հրավիրումից օրեր անց՝ ապրիլի 2-ի առավոտյան, հարձակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վրա, և ռազմական գործողությունները տևել են 4 օր ու ավարտվել ապրիլի 5-ին: Այս օբյեկտիվ հանգամանքով պայմանավորված՝ մասնագիտական հանձնաժողովի աշխատանքները վերսկսվել են մայիսին, բայց ոչ նախկին տրամադրվածությամբ, քանի որ 1994 թ. զինադադարից հետո մարդիկ սովորել էին ապրել թեկուզ հարաբերական, սակայն խաղաղության պայմաններում:

Ամիսներ տևած աշխատանքից և հանրային քննարկումների փուլն անցնելուց հետո՝ **2016 թ. հուլիսի 30-ին**, ԼՂՀ նախագահին է ներկայացվել ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը¹, **2016 թ. օգոստոսի 16-ին**՝ հրապարակվել, իսկ **2016 թ. նոյեմբերի 20-ին** նոր Սահմանադրության նախագիծը

¹ Հայեցակարգը բաղկացած էր հինգ մասից՝ **1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, 2. Կառավարման համակարգը, 3. Դատական իշխանությունը, 4. Տեղական ինքնակառավարումը, 5. Հանրաքվեն,** <http://www.nankr.am/hy/1827>, 03.03.2022:

ներկայացվել է Հանրապետության նախագահին, որը հավանության արժանանալուց հետո՝ դեկտեմբերի 15-ին, ուղարկվել է Ազգային ժողով:

2017 թ. հունվարի 17-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում ընդունվել է որոշում՝ համաձայնություն տալ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հունվարի 19-ին ստորագրել է հրամանագիր՝ «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու մասին»: Համաձայն հրամանագրի՝ հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի նախաձեռնությանը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից տրված համաձայնությունը՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեն նշանակվել է **2017 թ. փետրվարի 20-ին** (Հրամանագիր՝ «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու մասին»):

Արցախի Հանրապետության 2-րդ՝ Նոր Սահմանադրությունն ընդունվել է 2017 թ. փետրվարի 20-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Ըստ Արցախի Հանրապետության ԿԸՀ հրապարակած արդյունքների՝ 103,793 ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներից հանրաքվեին մասնակցել է 79,428 քաղաքացի, որը կազմում է ընդհանուր թվի 76,44 %-ը: Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը կազմել է 69,540 կամ ընդհանուր քվեարկածների 87,6 %-ը (Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք):

Կառուցվածքային իմաստով Արցախի Հանրապետության 2017 թ. Սահմանադրությունը բաղկացած է նախաբանից, 12 գլխից և 175 հոդվածից: Համեմատության համար նշենք, որ 2006 թ. Սահմանադրությունը ևս բաղկացած էր 12 գլխից և պարունակում էր 142 հոդված: Երկու Սահմանադրությունների գլուխների համեմատության պարագայում կունենանք հետևյալ պատկերը. 2006 թ. Սահմանադրության 2-րդ գլուխը՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները», վերանվանվել է «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», «Գլուխ 6. Դատարանները»՝ «Գլուխ 6. Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը», «Գլուխ 9. Վերահսկիչ պալատը»՝ «Գլուխ 10. Հաշվեքննիչ պալատը»: «Կառավարություն» անվանմամբ գլուխ ամրագրված չէ, որը պայմանավորված է կառավարման նախագահական մոդելով, իսկ համապատասխան հոդվածները տեղ են գտել Հանրապետության նախագահին նվիրված 4-րդ գլխում, դրան զուգահեռ ավելացել է Նոր գլուխ՝ «Գլուխ 3. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները»:

Արցախի Հանրապետության Նոր Սահմանադրության գործողության ժամկետների վերաբերյալ որոշ դիտարկումներ անենք:

Սահմանադրության 1-3-րդ և 12-րդ գլուխներն ուժի մեջ են մտել **2017 թ. մարտի 10-ին**, 4-11-րդ գլուխները, բացառությամբ 93-րդ հոդվածի 11-րդ կետի և 96-րդ հոդվածի, **2017 թ. սեպտեմբերի 7-ին**, 93-րդ հոդվածի 11-րդ կետը և 96-րդ հոդվածը՝ **2020 թ. սեպտեմբերի 7-ին**: Գործող օրենսդրության՝ Սահմանադրությանը համապատասխանեցման համար վերջնաժամկետ էր սահմանվել մինչև **2020 թ. մարտի 10-ը**: Նկատենք, որ 2006 թ. Սահմանադրության 104-րդ հոդվածը (վարչատարածքային բաժանման վերանայում) կարող է գործել մինչև **2022 թ. մարտի 10-ը**, որից հետո լիովին ուժի մեջ կմտնի 2017 թ. Սահմանադրությունը:

Դեռևս 2016 թ. տպագրված մենագրության (Հարությունյան Ա., *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման*

հիմնախնդիրները 50-62) մեջ անդրադարձել ենք 2006 թ. Սահմանադրության մեջ առկա մի շարք հիմնախնդիրների, մասնավորապես՝ «մարդը որպես բարձրագույն արժեք» ձևակերպումը նախաբանից հիմնական տեքստ տեղափոխելուն, ժողովրդին հանրաքվեի նախաձեռնության իրավունքի վերապահմանը, իրավունքի գերակայության սկզբունքի կառուցակարգերի կատարելագործմանը, կառավարման կիսանախագահական մոդելից հրաժարմանը՝ հոգուտ նախագահականի, նաև զսպումների ու հակակշիռների գործունե համակարգի ներդրմանը, որոնք իրենց լուծումն են գտել նոր Սահմանադրության մեջ:

Այսպես, համեմատելով 2006 թ. Սահմանադրության հետ՝ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ընդունված Արցախի Հանրապետության նոր Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները կարելի է ներկայացնել ըստ որոշ գլուխներում դրանց արտացոլվածության հանգամանքի.

1. «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում ավելացել են նոր ձևակերպումներ ու հոդվածներ, օրինակ՝ հոդված 3-ում նշված է, որ «Արցախի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է»: Հոդված 6-ում և 2-րդ գլխում հստակեցված են իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրմանն ու գործողությանը առնչվող հարցերը:

2. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները» գլխում ավելացել են նոր իրավունքներ, որոնք նպատակ են հետապնդում նաև ապահովելու մարդու՝ որպես բարձրագույն արժեքի կենսագործունեությունը հասարակությունում: Այս գլխում հստակորեն սահմանազատվել են դասական հիմնական իրավունքներն ու պետության քաղաքականության հիմնական նպատակները:

Արցախի Հանրապետության 2017 թ. Սահմանադրությունը, մասնավորապես, առաջին անգամ ամրագրում է այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են՝ մարմնական պատիժների արգելքը (հոդված 26), կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 30), պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը (հոդված 31), անձնական տվյալների պաշտպանությունը (հոդված 34), երեխայի իրավունքները (հոդված 37), պատշաճ վարչարարության (հոդված 50), տեղեկություններ ստանալու (հոդված 51), քաղաքական ապաստանի իրավունքները (հոդված 54), արտաքսման արգելքը (հոդված 55, մաս 1), պետության կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը (հոդված 62), մեղքի սկզբունքը և պատժի նշանակման ժամանակ համաչափության սկզբունքը (հոդված 71):

3. Փոխվել է կառավարման մոդելը՝ կիսանախագահականից անցում կատարելով նախագահականի, ինչը հանգեցրել է նաև զսպումների և հակակշիռների կառուցակարգի կատարելագործման, որի դեպքում գործադիր իշխանությունը ղեկավարում է երկրի նախագահը՝ դրանով իսկ իրավական ու քաղաքական պատասխանատվություն կրելով խորհրդարանի առջև: Համաձայն Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասին՝ կառավարությունն արդեն հանդես է գալիս որպես հանրապետության նախագահի լիազորությունների իրականացմանն աջակցող գործադիր իշխանության կոլեգիալ մարմին:

4. Հաջորդ գլուխներում, որոնք վերաբերում են դատարաններին, դատախազությանը, տեղական ինքնակառավարմանը, մարդու իրավունքների պաշտպանին ու հաշվեքննիչ պալատին, ևս կատարվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք նպատակ են հետապնդում կատարելագործելու նշված սահմանադրական մարմինների գործունեությունն ու հստակեցնելու լիազորությունների շրջանակը:

5. 11-րդ գլխի 162-րդ հոդվածում առաջին անգամ ամրագրվել է այնպիսի դրույթ, ըստ որի՝ Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն նաև ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն 10

տոկոսը, դրանից գատ՝ 122-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է, որ «ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն երկուսուկես տոկոսն ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք»: Նման դրույթների ամրագրումը, թերևս, Արցախի Հանրապետության Սահմանադրության արժեքանական համակարգի առանցքը կազմող ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման կարևոր տարրն է, որն իր արտացոլումն է գտնելու նաև օրենսդրության մեջ (Аргументы 137-139):

Սահմանադրական բարեփոխումներ՝ քաղաքացիական նախաձեռնությամբ

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված՝ 2019 թ. ձևավորվել է սահմանադրական փոփոխությունների նախաձեռնող խումբ, որի նպատակն էր փոփոխություն կատարել Արցախի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, այն է՝ նախագահին և Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներում կատարել փոփոխություն, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ևս կարող է առաջարկվել վերոնշյալ պաշտոններում և մասնակցել ընտրություններին, ինչպես նաև կրճատել նստակեցության ցենզը՝ հանրապետության նախագահի համար սահմանված 10 և պատգամավորի համար սահմանված 5 տարին դարձնելով 3 տարի:

Հիշյալ նախագծին բացասական եզրակացություն է տվել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմը, պետաիրավական հարցերի մշտական գլխադասային հանձնաժողովը և ՀՀ-ից որոշ իրավաբան-գիտնականներ:

Ի դեպ, ԼՂՀ 2006 թ. Սահմանադրության ընդունումից ի վեր առաջին անգամ էր, երբ քաղաքացիները Սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու հնարավորություն են ստանում, քանի որ մինչ 2017 թ. Սահմանադրության ընդունումը ժողովուրդը հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ չէր (Հարությունյան Ա., *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները* 98-122):

Նշենք, որ նշված նախաձեռնությունը դրական արդյունք չի ունեցել, և Սահմանադրության մեջ որևէ փոփոխություն չի կատարվել:

Եզրահանգումներ

Ամփոփելով Արցախում սահմանադրությունների ընդունման մեկուկես հազարամյա պատմության հիշարժան դրվագները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները:

- Թե՛ 1500 տարի առաջ, թե՛ հիմա արցախցիները սովոր են ինչպես հասարակական, այնպես էլ պետության հետ հարաբերությունները կառուցել համընդունելի կանոնների կամ նորմերի հիման վրա. եթե մեկուկես հազարամյա առաջ այն ուներ կանոնական բնույթ, ապա մեր օրերում այն հիմնականում իրավական նորմերով է կարգավորվում:

- Չնայած այն հանգամանքին, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին անկախ պետության հռչակմամբ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ պատերազմ սկսեց, և երկիրը կանգնած էր գոյաբանական լուրջ խնդիրների առաջ, այնուհանդերձ քայլեր են ձեռնարկվել Սահմանադրության մշակման աշխատանքներ սկսելու ուղղությամբ:

- 2006 թ.՝ Սահմանադրության ընդունումից առաջ, երիտասարդների կողմից իրականացվել է իրազեկման քարոզարշավ, և ներկայացվել են Սահմանադրության Եուրոյունը, բովանդակությունը և նշանակությունը՝ դրանով իսկ նպաստելով քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

• ԼՂՀ 2006 թ. Սահմանադրության ընդունումը ևս մեկ անգամ ապացուցեց, որ հայկական երկրորդ հանրապետության կայացվածությունը փաստ է և չունի այլընտրանք:

• Հատկանշական է, որ առաջին Սահմանադրությունը, չնայած ունեցած արժեքանական համակարգին, իր կենսունակությունը պահպանել է ընդամենը 10 տարի, որում առկա մի շարք բացերը, կիսալուծումներն ու մարտահրավերները հիմք են հանդիսացել սահմանադրական բարեփոխումների գործընթաց սկսելու համար:

• ԼՂՀ առաջին Սահմանադրության ընդունումից 10 տարի անց ընդունվեց Նոր Հիմնական օրենք, որում, մի կողմից, փորձ է արվել շտկելու Նախորդ Սահմանադրության թերությունները, մյուս կողմից՝ սահմանելու Նոր նշանոկ իրավական ու ժողովրդավարական պետության կառուցման նպատակով:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ ինչպես 2006 թ., այնպես էլ 2017 թ. Արցախի Հանրապետության Սահմանադրությունն աչքի է ընկնում արժեքանական ծանրաբեռնվածությամբ, որը կարող է պարարտ հիմք հանդիսանալ երկրում սահմանադրականության զարգացման գործում: Սրան զուգահեռ պետք է արձանագրել, որ Սահմանադրության փաստացի առկայությունն ինքնին դեռևս որևէ հարց չի լուծում, քանի դեռ օրենսդրությունն ամբողջապես չի համապատասխանում Սահմանադրությանը, սահմանադրական արժեքները չեն կազմում օրենսդրության միջուկը, իսկ իրավակիրառական պրակտիկան հիմնված չէ Սահմանադրության և դրա արժեքային համակարգի հաշվառմամբ ստեղծված օրենսդրության անշեղ կատարման վրա:

Օգտագործված գրականություն

1. Թովմասյան, Հրայր. *Կառավարման կիսանախագահական ձևը Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական մոդել և իրականություն)*. իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման առենախոսություն, Երևան, 2017:

2. Հարությունյան, Ավետիք. *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները*. «Անտարես» հրատ., Երևան, 2016:

3. Հարությունյան, Գագիկ. *Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները*. «Նժար» հրատ., Երևան, 2016:

4. Հովսեփյան, Վլադիմիր. *Իրավունքը և արդարադատությունն Արցախում*. «Դիզակ պյուն» հրատ., Ստեփանակերտ, 2016:

5. *Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծայրերում*. խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Ա. Մովսիսյան, Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Մելքոնյան. Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Էջմիածին, 2020:

6. *Վաչագան Բարեպաշտ թագավորի սահմանադրությունը. Արցախից Արցախ*. կազմող՝ Արմեն Դավթյան, «Կետ» հրատ., Երևան, 2017:

7. Հարությունյան, Ավետիք. 1991 թվականի դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեի դերն Արցախի Հանրապետության կազմավորման գործընթացում. «Գիտական Արցախ», № 3(10), «ԱՐՑԱԽ» հրատ., 2021, էջ 107-120, DOI: 10.52063/25792652-2021.3-107:

8. Арутюнян, Аветик. «Аксиологические особенности новой Конституции Республики Арцах». *Ученые записки юридического факультета*, Выпуск 46-47(56-57), 2017, с. 137-139.

9. ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

10. ԼՂՀ պետական արխիվ (ՊԱ), ֆոնդ 1, ցանկ 2, կապ 28, պայմանական միավոր 330, թերթ 10-11:

11. ---. Ֆոնդ 1, ցանկ 2, կապ 28, պայմանական միավոր 331, թերթ 65:

12. «Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք». www.cec.nkr.am. վերջին այցը՝ 03.03.2022:

13. Արցախի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու մասին». 19.01.2017, <http://president.nkr.am/am/news/lawsOrders/3456/>. վերջին այցը՝ 01.11.2021 թ.:

14. «Կոմունիստ» թերթ. 1924 թ. հուլիսի 6, թիվ 145 (924), Բաքու:

WORKS CITED

1. Harutyunyan, Avetik. *Ler'nayin Gharabaghi (Arcaxi) Hanrapetut'yan Sahmanadrut'yan arjhebanakan ar'and'nahatkut'yunnery' ev sahmanadrakanut'yan hetaga zargacman himnaxdirnery'*. Antares hrat., Yerevan. [*Value peculiarities of the Constitution of Nagorno Karabakh (Artsakh) Republic and problems of further development of constitutionalism*. Antares edition, Yerevan] 2016. (In Armenian)

2. Harutyunyan, Gagik. *Sahmanadrakan mshakuyt'. patmut'yan dasery' ev jhamanaki martahravernery'*. Njhar hrat., Yerevan. [*Constitutional culture. The lessons of history and time challenges*. Njar edition, Yerevan] 2016. (In Armenian)

3. Hovsepyan, Vladimir. *Iravunqy' ev ardaradatut'yunn Arcaxum*. Dizak plyus hrat., Step'anakert. [*Law and justice in Artsakh*. Dizak plus edition, Stepanakert] 2016. (In Armenian)

4. *Sahmanadrakan mshakuyt'i arjhebanakan akunqneri' hay jhoghovrdi hazaramya taregrut'yan c'alqerum*. xmbagirner՝ G. Harutyunyan, A. Movsisyan, T. Ararat qahana Poghosyan, S. Melqonyan. Mayr At'or՝ Surb E'jmiac'ni hratarakchut'yun, E'jmiac'in. [*Axiological origins of constitutional culture in the folds of the millennial chronicle of the Armenian people*. editors: G. Harutyunyan, A. Movsisyan, Ter Ararat Priest Poghosyan, S. Melkonyan, Mother See of Holy Etchmiadzin edition, Etchmiadzin] 2020. (In Armenian)

5. Tovmasyan, Hrayr. *Kar'avarman kisanaxagahakan d'evy' Hayastani Hanrapetut'yunum (sahmanadrakan model ev irakanut'yun)*. iravabanakan gitut'yunneri doktori gitakan astitwani haycman atenaxosut'yun, Yerevan. [*Semi-Presidential Form of Government in the Republic of Armenia (Constitutional Article and Reality)*. Dissertation for the degree of Doctor of Laws, Yerevan] 2017. (In Armenian)

6. *Vachagan Barepasht t'agavori sahmanadrut'yuny'*. Arcaxic Arcax. kazmogh՝ Armen Davt'yun, Ket hrat., Yerevan. [*The constitution of the king Vachagan The Pious. From Artsakh to Artsakh*. compiled by Atmen Davtyan, Ket edition, Yerevan] 2017. (In Armenian)

7. Harutyunyan, Avetik. "Aksiologicheskie osobennosti novej Konstitucii Respubliki Arcax". *Uchenye zapiski juridicheskogo fakul'teta*, Vypusk 46-47(56-57), s. 137-139. ["Axiological features of the new Constitution of the Republic of Artsakh". *Journal "Scientific Notes of the Faculty of Law*, Edition 46-47(56-57), pp. 137-139] 2017. (In Russian)

8. Harutyunyan, Avetik. «1991 t'vakani dektemberi 10-i ankaxut'yan hanraqvei dern Arcaxi Hanrapetut'yan kazmavorman gorc'ynt'acum». *Gitakan Arcax*, № 3(10), «ARCAX hrat., e'j 107-120. ["The role of the independence referendum of December 10, 1991 in the formation of the Republic of Artsakh". *Scientific Artsakh*, № 3(10), ARTSAXH edition, pp. 107-120] 2021. (In Armenian)

9. LGH Azgayin jhoghovi y'nt'acic arxiv'. [The current archive of the NKR National Assembly]. (In Armenian)

10. LGhH petakan arxiv (PA), fond 1, cank 2, kap 28, paymanakan miavor 330, t'ert' 10-11. [NKR state archive (SA), fund 1, list 2, contact 28, conditional unit 330, paper 10-11]. (In Armenian)

11. ---. fond 1, cank 2, kap 28, paymanakan miavor 331, t'ert' 65. [NKR SA, fund 1, list 2, contact 28, conditional unit 331, paper 65]. (In Armenian)

12. «Arcaxi Hanrapetut'yan kentronakan y'ntrakan hand'najhoghovi pashtonakan kayq». www.cecncr.am. Verjin aycy` 03.03.2022. [“Republic of Artsakh, Central electoral commission, Official Website”. Accessed: 03.02.2022]. (In Armenian)

13. Arcaxi Hanrapetut'yan Naxagah. «*Hramanagir Arcaxi Hanrapetut'yan Sahmanadrut'yan naxagic'y' hanraqvei dnelu masin*». 19.01.2017, <http://president.nkr.am/am/news/lawsOrders/3456/>. Verjin aycy` 01.11.2021t'.. [President of the Artsakh Republic. “*Decree on putting the new Artsakh Republic Constitution project on a referendum*”. 19.01.2017. Accessed: 01.11.2021]. (In Armenian)

14. «Komunist» t'ert', 1924t'. hulisi 6, t'iv 145 (924), Baqu. [“Communist” newspaper. 1924 July 6, no. 145 (924), Baku]. (In Armenian)

1500-YEAR HISTORY OF THE ADOPTION OF CONSTITUTIONS IN ARTSAKH

AVETIK HARUTYUNYAN

*Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Founder-Chairman;*

*«Artsakh» Research Institute, Director;
Journal «Scientific Artsakh», Editor-in-Chief;
Commission on Constitutional Reforms under the
President of the NKR (2016), Secretary;
Ph.D. in Law, Associate Professor,
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

The purpose of the article is to present the 1500-year history of the adoption of the Constitutions of the Republic of Artsakh and their historical prototypes. The study is relevant because in the still unresolved conditions of the Karabakh-Azerbaijani conflict, it is necessary to present to Armenian and foreign specialists the indisputable fact that Artsakh is also Armenian in state and legal terms.

To achieve this goal, the following task was set: to study the history of constitutions and their prototypes adopted in Artsakh from the 5th century to the present day on the basis of archival documents and scientific materials.

Analysis, synthesis, induction, deduction and historical-comparative methods were used in the course of the study. A number of documents used in the course of the study are introduced into scientific circulation for the first time.

The main conclusion made within the framework of the study is that both 1500 years ago and now the people of Artsakh used to build relations with both society and the state on the basis of generally accepted rules or norms; if a millennium and a half ago they were canonical in nature, today these relations are mainly regulated by legal norms.

Despite the fact that on September 2, 1991, with the proclamation of an independent state, Azerbaijan launched a war against the Nagorno-Karabakh Republic, and the country was facing serious ontological problems, nevertheless, steps were taken to begin work on drafting the Constitution.

Both in 2006 and in 2017, the Constitution of the Republic of Artsakh stands out with a value load, which can become a productive basis for the development of constitutionalism in the country. At the same time, it should be stated that the actual existence of the Constitution does not solve any issue yet, since the legislation does not

fully comply with the Constitution, constitutional values do not form the core of legislation, and law enforcement practice is not based on strict enforcement of legislation created considering the Constitution and its system of values.

Keywords: *Vachagan the Pious, Agwen, Canonical Constitution, Republic of Nagorno-Karabakh (Artsakh), Constitutional Commission, Constitution, Constitutional Referendum.*

1500-ЛЕТНЯЯ ИСТОРИЯ ПРИНЯТИЯ КОНСТИТУЦИЙ В АРЦАХЕ

АВЕТИК АРУТЮНЯН

*учредитель и председатель Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
директор Научно-исследовательского института «Арцах»,
главный редактор журнала «Научный Арцах»,
секретарь Комиссии по конституционной реформе при Президенте НКР (2016),
кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах*

Цель статьи – представить 1500-летнюю историю принятия Конституций Республики Арцах и их исторических моделей. Актуальность исследования состоит в том, что в неурегулированных до сих пор условиях карабахско-азербайджанского конфликта необходимо представить армянским и зарубежным специалистам неоспоримый факт, что Арцах в государственно-правовом отношении также является частью Армении. Для достижения цели мы поставили следующие задачи: на основе архивных документов и научных материалов изучить историю Конституций и их исторических образцов, принятых в Арцахе с V века до наших дней.

В ходе исследования использовались историко-сравнительные метод, а также анализа, синтеза, индукции и дедукции. Ряд документов, использованных в ходе исследования, впервые вводится в научный оборот.

Главный вывод, сделанный в рамках исследования, состоит в том, что, как и 1500 лет назад, так и сейчас арцахцам свойственно строить отношения и с обществом, и с государством на основе правил или норм; сегодня эти правила и нормы в основном регулируются законом.

Несмотря на то, что с момента провозглашения независимости 2 сентября 1991 года Азербайджан начал войну против Нагорно-Карабахской Республики и страна находилась перед серьезнейшей проблемой выживания и существования, предпринимались шаги по подготовке Конституции республики.

Конституции, принятые в 2006 и 2017 годах, отличаются содержательностью и полнотой, что может стать плодотворной почвой для развития конституционности в стране. В то же время следует отметить, что наличие Конституции так таковой не является решением вопроса, поскольку законодательство еще не соответствует Конституции, конституционные ценности не составляют ядро законодательства, а юридическая практика не основывается на неукоснительном выполнении законодательства, созданного Конституцией с учетом системы ее ценностей.

Ключевые слова: *Вачаган Барепашт, Агвен, каноническая конституция, Нагорно-Карабахская Республика (Арцах), конституционная комиссия, конституция, конституционный референдум.*

ՄՏԹԻ, ԽՂԾԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԹԻ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ*

ՀՏԴ 34(091)

DOI: 10.52063/25792652-2022.1.12-27

ՎԱՅԵ ԹՈՐՈՍՅԱԼ

Եվրոպական համալսարանի իրավաբան,
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vaxinak91@mail.ru

Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել «մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք» հասկացությունը՝ վերլուծելով դրա առանձին բաղադրիչները և հավաքական էությունը:

Հետազոտության նպատակից բխեցրել ենք հետևյալ խնդիրները՝ վեր հանել մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի բաղադրիչները՝ առանձին դիտարկելով նախ մտքի ազատության, ապա՝ խղճի ազատության, այնուհետև՝ նաև կրոնի ազատության իրավունքները, որից հետո փորձել ենք քննել ու բացահայտել մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հավաքական իմաստն ու բովանդակությունը:

Հետազոտության մեջ կիրառվել են դիալեկտիկական մատերիալիզմի, անալիզի և սինթեզի, պատմական և տրամաբանական, ինդուկցիայի և դեդուկցիայի, ինչպես նաև համակարգային մեթոդները:

Հետազոտության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, բաղկացած լինելով առանձին բաղադրատարրերից, միաժամանակ օժտված է հավաքական բովանդակությամբ, որի պատճառով էլ մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերում, որպես, կանոն հանդես է գալիս միասնական բովանդակությամբ: Սովորաբար սահմանափակման է ենթակա մարդու արտաքին ազատությունը, որն առավելապես հայտնի է որպես «forum externum», իսկ բացառիկ դեպքերում միջազգային իրավունքը նախատեսում է նաև մարդու ներքին ազատության (forum internum) սահմանափակման հնարավորություն:

Հիմնաբառեր՝ մտքի ազատություն, խղճի ազատություն, կրոնի ազատություն, իրավունքներ, ազատություններ, նախադեպ, կրոն:

Ներածություն

Աշխարհիկ պետության գաղափարական միջուկը կազմող մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունքը պատմականորեն ձևավորված արժեք է, և այսօր դժվար է պատկերացնել անձի ինքնորոշումն առանց այդ իրավունքի կենսագործման: **Թեև նորօրյա իրողությունների պայմաններում յուրաքանչյուր ազատություն դյուրությամբ կարող է վերածվել սանձարձակ անազատության, բայց փաստ է, որ մարդկությունը առանց այդ իրավունքների երաշխավորման չի կարող ապահովել իր խաղաղ**

* Հոդվածը ներկայացվել է 22.02.2022 թ., գրախոսվել՝ 14.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

գոյությունը: Թերևս սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ թե՛ միջազգային և թե՛ ազգային իրավունքում մարդու հիմնարար իրավունքներից մեկը ձևակերպված է որպես մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք, որը տեղ է գտել այնպիսի իրավական փաստաթղթերում, ինչպիսին է ԶՅ Սահմանադրությունը (հոդված 41), «խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԶԶ օրենքը, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (հոդված 18), «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (հոդված 18), «Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագիրը» (հոդված 1), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան» (հոդված 9), Զելսինկյան եզրափակիչ ակտը (1-ին գլխի 7-րդ կետ), Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթը (11-րդ կետ), Մարդկային չափանիշի խորհրդատու Վի՛ Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը (9.4-րդ կետ) և այլն:

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի առանձին բաղադրատարրերի էությունն ու նշանակությունը

Որպես ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, բարդ ու բազմիմաստ հասկացությունների համակարգ է և տարաբովանդակ մեկնաբանությունների առիթ է հանդիսացել: Ընդ որում, «ազատություն», «միտք», «դավանանք» և «խիղճ» հասկացությունները դիտարկվել են որպես սերտորեն փոխկապակցված և երկուստեք պայմանավորված (Սայադյան 13): Տվյալ համադրության մեջ «ազատություն» հասկացությունը հիմնական տարր է դիտարկվում ոչ միայն դավանած կրոնի ընտրության, այլև առհասարակ կրոնական պատկերացումների բացակայության դեպքում: Ելնելով այն ձևաչափից, որ «միտքը», «խիղճը», «կրոնը» առանձին հասկացություններ են, ուստի ենթադրվում է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի սեփական իրավական բովանդակությունը:

Այսպես, **մտքի ազատությունը** արտաքին աշխարհի նկատմամբ մարդու անհատական վերաբերմունքն է, որը կարող է ուրիշներից գաղտնի մնալ մարդու սեփականությունը (Բաղդասարյան 60): Միտքը հոգու բնական կողմի գործող գործությունն է (Ստեփանյան 182):

Մտածողության արդյունք հանդիսացող միտքը անհատի հոգևոր ինքնուրույնության հենքն է, որի շնորհիվ ճանաչելի են դառնում շրջապատող աշխարհի երևույթները: Միտքը ձևավորում է մարդու հոգեմտավոր կառույցը, կազմում ներքին ազատության էությունն ու ուղղորդում դատողությունների, պատկերացումների, կարծիքների, համոզմունքների ողջ համալիրի բովանդակությունը: Միտքը գիտակցական և վերգիտակցական մակարդակում ամփոփված լինելու ուժով անձեռնմխելի է, անվերահսկելի և հետևաբար չի կարող իրավական կարգավորման առարկա հանդիսանալ, քանի դեռ որևէ եղանակով արտաքին ձև չի ստացել:

Որպես փիլիսոփայական և իրավական երևույթ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես **խղճի ազատությունը**: Այն ենթադրում է սեփական կամքի համաձայն բնական վարվելու հնարավորություն և ազատություն (Այվազյան 125-130): Խիղճը սեփական արարքների և գործողությունների բարոյական սահմանագիծն է, դրանց արձագանքելու ու

գնահատական տալու ներքին ցուցիչը: Արդիականացված աստվածակենտրոնության դիրքերից պրոֆեսոր Յ. Ստեփանյանը խղճին վերագրում է օրենսդրի, օրենքի պահապանի, դատավորի, պատժողի կամ պարզևողի հատկանիշներ՝ նշելով. «Աստծու կամքին համապատասխան գործելու դեպքում խիղճը մարդու հոգուն պարզևում է մխիթարություն և բավականության զգացում, իսկ չհամապատասխանելու դեպքում պատժում է հոգու տվայտանքներով ու տառապանքներով, որոնք հայտնի են որպես խղճի խայթ» (Ստեփանյան 350):

խղճի ազատությունը՝ որպես անհատի հոգևոր ինքնության հիմնարար պայման, արժեքային համակարգ է՝ որդեգրելու և սեփական պատկերացումների ու բարոյական ընկալման դիրքերից դրանք բնութագրելու, ինչպես նաև համոզմունքներ ունենալու, դրանք փոխելու կամ առհասարակ որևէ համոզմունք չունենալու իրավունք: Ընդ որում, պարտադիր չէ, որ այդ համոզմունքները լինեն միայն կրոնական, դրանք կարող են լինել նաև քաղաքական, մշակութային, բարոյական և այլն: Հատկանշական է, որ Եվրոպական կոնվենցիայով պաշտպանվում են ոչ բոլոր համոզմունքները, այլ միայն այնպիսիք, որոնք ունեն որոշակի լրջության, հետևողականության և կարևորության բավարար աստիճան:

Սահմանադրական իրավունքում խղճի ազատությունը սովորաբար ընկալվում է մարդու վերաբերմունքը կրոնի ինստիտուտին: Բանն այն է, որ պատմության կտրվածքով մարդու աշխարհըմբռնումը մեծապես կախված է եղել նրա կրոնական հայացքներից. դրանով են չափվել գիտությունը, մշակույթը, արվեստը և առհասարակ կյանքի բոլոր բնագավառները, ինչ էլ իր հերթին սահմանափակել է խղճի ազատության լայն բովանդակությունը՝ այն նույնացնելով կրոնի ազատության հետ: Սակայն այսօր ճիշտ չէ խղճի ազատությունը մեկնաբանել որպես ընտրություն աշխարհի կրոնական համայնապատկերի ու աթեիստական դիրքորոշման միջև: Օրինակ՝ **պացիֆիզմը**՝ որպես ոչ կրոնական և ոչ աթեիստական համոզմունք, պաշտպանության ենթակա է խղճի ազատության իրավունքի ներքո (Arrowsmith v. United Kingdom 12.10.1978): Նկատենք նաև, որ «խիղճը» ՀՀ Սահմանադրական իրավունքում հիշատակվում է նաև ԱԺ պատգամավորի ներկայացուցչական մանդատի առկայությունը ընդգծելու առումով, ըստ որի՝ պատգամավորը առաջնորդվում է իր *խղճով ու համոզմունքներով*: Սա նշանակում է, որ ընտրողների հավանությանը արժանանալուց հետո իր խոստումների իրականացումը թողնված է պատգամավորի խղճին:

Ինչ վերաբերում է **կրոնի ազատությունը**, այն իրավունք է՝ դավանելու կրոն, հետևելու կրոնական կարգադրագրերին, կատարելու պաշտամունքային ծիսակատարություններ, բացահայտորեն տեղեկացնելու այլոց սեփական կրոնական համոզմունքների կամ որևէ դավանանքի պատկանելության մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), «Կոկինակիս ընդդեմ Հունաստանի» գործով կայացրած դիրքորոշմամբ մտքի, խղճի, կրոնի ազատությունը համարելով ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը, արձանագրել է, որ այդ իրավունքի կարևորագույն բաղադրիչը նախևառաջ **կրոնական համոզմունքն** է, որը լայն հաշվով ձևավորում է անհատի աշխարհայացքը՝ միաժամանակ ընդգծելով, որ խղճի ազատության իրավունքը գնահատելի արժեք է նաև աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների, ինչպես նաև ոչ հավատացյալների կամ անտարբերների համար (Kokkinakis v. Greece

25.05.1993): Պետք է նշել, որ թե՛ պետությունները և թե՛ միջազգային կառույցները իրավական ակտերում ձեռնպահ են մտնում տալ **«կրոն»** եզրույթի սահմանում՝ թերևս պայմանավորված կրոնի խրթին ու մանվածապատ բովանդակությամբ: Սա, անշուշտ, իրավական որոշակիության առումով խնդիրներ է առաջացնում, քանի որ, եթե հանրահայտ կրոնները անվիճելիորեն դիտարկվում են «կրոնի» հասկացության ներքո, ապա նոր ուղղությունների ու հոսանքների կրոնական բաղադրիչի հստակեցումը այնքան էլ միանշանակ չէ: Օրինակ՝ մասոնականությունը ակնհայտորեն բովանդակում է կրոնափիլիսոփայական ուսմունքի լուրջ տարրեր, բայց արդյո՞ք այն կարող ենք համարել կրոն՝ դժվար է ասել:

Այսպիսով, եթե մարդը սկզբում իրականացնում է մտքի ազատությունը՝ որպես ի բնե տրված անօտարելի իրավունք, ապա խղճի ազատությունը այդ ամենն անում է՝ կրոնական, աթեիստական կամ ցանկացած այլ աշխարհայացք ընդունելով կամ չընդունելով, որից հետո միայն կարող է հաջորդել կրոնի ընտրությունը: **Յետևաբար մտքի ազատությունն իր էությունը ավելի վերացական է և լայն, քան խղճի ազատությունը, իսկ վերջինս՝ առավել տարածական, քան կրոնի ազատության բովանդակությունը:** Պարզելով այս բաղադրիչներից յուրաքանչյուրի առանձին իմաստը՝ փորձենք բացահայտել նրանց միասնական էությունը:

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի հավաքական էությունը

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը իր հավաքական իմաստով երաշխավորում է յուրաքանչյուրի **ներքին ազատությունը (forum internum)** (Parker 93-95)՝ ունենալու մտքեր ու համոզմունքներ կամ փոխելու դրանք: Ընդ որում, ներքին ազատությունը, որպես կանոն, չի կարող սահմանափակվել: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվում է միայն մտքի, խղճի և կրոնի **ազատության արտահայտման** սահմանափակում, այլ ոչ թե համոզմունքներ ունենալու և փոխելու ներքին ազատության: Այս ներանձնային ազատությունը նկատի ունենալով՝ հայ ակնաավոր կրոնական գործիչ և իրավաբան Ն. Մելիք-Թանգյանը նշում էր, որ **«հաւատքը խղճի գործ է, խիղճը պատասխանատու է իւր եւ Աստուծոյ առաջ, խիղճը կանոնների մէջ ամփոփելի չի կարելի»** (Մելիք Թանգեան 10): Եթե մեր Սահմանադրությամբ ներքին ազատությունը բացարձակ իրավունք է և չի կարող որևէ կերպ սահմանափակվել (ՍԴ ՍԴՈ-1506 որոշում 18.02.2020), ապա նույնը չի կարելի ասել միջազգային հանրաճանաչ փաստաթղթերի մասին, որտեղ սահմանափակումը, ըստ էության, տարածվում է նաև նշված իրավունքի ներքին ոլորտի նկատմամբ:

Ներքին ազատությունը սերտորեն կապված է **մասնավոր կյանքի անձեռնմխելիության** հետ, որը մարդու անձնական կյանքի այն կողմն է, որ նա չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա անձնական կյանքի գաղտնիությունն է, որը կարող է արտահայտվել նաև կրոնական համոզմունքում: Ասվածի վառ վկայությունն է եկեղեցական խոստովանության գաղտնիության ճանաչումը Հայաստանի Հանրապետության կողմից, ըստ որի՝ արգելվում է Հայ առաքելական եկեղեցու հոգևորական-խոստովանահորը որպես վկա հարցաքննել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ (ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Հոդ. 359):

Ներքին ազատության խնդրի առնչությամբ պետք է ասել, որ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը հակված է կրոնական կամ այլ համոզմունքները բացահայտելու պարտադրանքը համարել ոչ իրավաչափ, հատկապես, երբ խոսքը պաշտոնեական լիազորությունների ստանձնման արարողությունների ժամանակ կրոնական տեքստ հնչեցնելու մասին է: Կրոնական ինքնությունը ներկայացնելու պահանջը անթույլատրելի է նաև այն դեպքում, երբ դա կատարվում է, դիցուք, նույնականացման քարտում դավանանքի մասին տող սահմանելու միջոցով: Անգամ այդ տողը ազատ թողնելու հնարավորությունը չի կարող արդարացված համարվել, քանի որ կարող է բացասական ընկալում առաջ բերել մեծամասնությունից տարբերվող դավանանք ունեցող անհատների նկատմամբ: Ներքին ազատության նկատմամբ միջամտությունը արդարացվում է պետության և հասարակության շահերի պաշպանության նպատակով, ինչպես, օրինակ, մարդահամարի անցկացման ժամանակ կրոնական համոզմունքների մասին տվյալների ներկայացումը: Այդ պահանջը իրավաչափ է համարվում նաև այն դեպքերում, երբ դա կարող է այս կամ այն կերպ բարելավվել անձի իրավական կարգավիճակը: Օրինակ՝ անձի՝ կրոնական համոզմունքների հիմքով պարտադիր գինվորական ծառայությունից ազատվելու համար վերջինս պարտավոր է ոչ միայն բացահայտել իր համոզմունքները, այլև հիմնավորել դրանում իր անկեղծությունը: Բնական է, որ այստեղ խոսք չի կարող լինել պարտադրանքի մասին, քանզի անձն ինքն է նախաձեռնում օգտվելու այլընտրանքային ծառայությունից, հետևաբար ինքն էլ պարտավոր է հավաստել դրա ճշմարտացիությունը:

Ներքին ազատությունը, մտքեր և համոզմունքներ ունենալուց բացի, ներառում է նաև դրանք փոխելու ազատությունը: **Դավանափոխության իրավունքը՝ (proselytism)** որպես միջազգային իրավունքի փաստաթղթերով ամրագրված սկզբունք, ներպետական իրավունքում տեղ է գտել միայն Սահմանադրության 2005 թ. փոփոխություններից հետո: Կրոնն ու համոզմունքները փոխելու ցանկությունը անձի մոտ կարող է առաջանալ ինչպես սեփական ներքին համոզման, այնպես էլ արտաքին անմիջական ազդեցության հետևանքով: Վերջինս իր հերթին կարող է լինել իրավաչափ, այսինքն՝ համարվել պատշաճ քարոզչության արդյունք և, մյուս կողմից, որակվել ոչ իրավաչափ՝ իրականացվելով մարդկանց նյութական ու հոգևոր վիճակը օգտագործելով, սոցիալական կախվածության մեջ դնելով և այլն: Ոչ իրավաչափ դավանափոխությունը, որը հայրենական իրավունքում առավել հայտնի է **«հոգեորություն»** եզրույթով, չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակարգում (Kokkinakis v. Greece 25.05.1993):

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արժեքանական նշանակությունը ոչ միայն սեփական գիտակցության մեջ այն կրելու ու փոխելու, այլ նաև միայնակ և այլոց հետ համատեղ ու հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով **արտահայտելու ազատության** մեջ է (ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)) (**forum externum**): Ավելորդ չէ նշել, որ այս իրավունքը վերապահված է յուրաքանչյուրին՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Իսկ այլոց հետ կրոն դավանելու իրավունքը ենթադրում է հնարավորություն՝ ստեղծելու կրոնական միավորումներ: Արտահայտման ազատությունը արդեն հիշատակված ներքին ազատության պես չունի ամփոփվածություն և գաղտնի մնալու հատկություն, ինչն ավելի ակնառու է դարձնում ուրիշների իրավունքների խախտման հավանականությունը, հետևաբար

արտահայտման ազատության սահմանափակման շրջանակներին տրվում է առավել մեծ կարևորություն:

Եզրակացություն

Ընդհանրացնելով մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարգավորումների վերլուծության արդյունքները՝ կարող ենք ասել, որ մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը, իր ներքին կառուցվածքային բաղադրիչների ինքնավարության հետ մեկտեղ, օժտված է հավաքական բովանդակությամբ՝ որպես անհատի ներքին ու արտաքին ազատություն: Թեև ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է միայն մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտման, այսինքն՝ միայն արտաքին ազատության (*forum externum*) սահմանափակումը, այնուհանդերձ միջազգային իրավական փորձից պարզ է դառնում, որ ներքին ազատությունը (*forum internum*) բացառիկ դեպքերում ևս կարող է սահմանափակվել: Ընդ որում, սահմանափակումը կարող է տեղի ունենալ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Օգտագործված գրականություն

1. Այվազյան, Վարդան. *Մարդու իրավունքներ և ազատություններ*. Ուս. ձեռնարկ, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2007:
2. Բաղդասարյան, Արթուր. *117 հարց ու պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին*. ՀՀ իրավագետների և քաղաքագետների միություն, Երևան, 1995:
3. Մելիք Թանգեան, Ներսես. *Հայոց եկեղեցական իրաւունքը*. Ա գիրք, հրատ.՝ Թ.Հ.Թ. Զրիստոնեական դաստիարակութեան բաժանմունքի, Թեհրան, 2005:
4. Սայադյան, Վահե. *Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում*. ատենախոսություն, ԺԲ.00.02, Երևան, 2015:
5. Ստեփանյան, Յովհաննես. *Իրավունքի փիլիսոփայություն*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016:
6. Parker, Todd. "The Freedom to Manifest Religious Belief: An Analysis of the Necessity Clauses of the ICCPR and the ECHR". *17 Duke Journal of Comparative & International Law*, Vol. 17, iss.1, pp. 91-130.
7. *ՍԴ ՍԴՈ-1506 որոշում*. 18.02.2020:
8. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենք. 22.02.2007, ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Յոդ. 359:
9. ՀՀ Սահմանադրություն. 2015 (փոփոխություններով):
10. *Case of Arrowsmith v. United Kingdom*. App. no. 7050/75, 12.10.1978.
11. *Case of Kokkinakis v. Greece*. App. no. 14307/88, 25.05.1993.

WORKS CITED

1. Ayvazyan, Vartan. *Mardu iravunqner ev azatut'yunner*. usumnakan d'zer'nark, Tigran Mets hrat., Erevan. [*Human Rights and Freedoms*. textbook, Tigran Mets Edition, Yerevan] 2007. (In Armenian)
2. Baghdasaryan, Arthur. *117 harts u pataskhan HH nor Sahmanadrut'yan masin*. HH iravagetneri ev qaghaqagetneri miut'yun, Erevan. [*117 Questions and Answers Concerning Armenian Constitution*. Armenian Union Of Jurists And Politicians, Yerevan] 1995. (In Armenian)
3. Meliq T'angean, Nerses. *Hayoc ekeghetsakan irawunqy'*. A girq. hrat.` T'.H.T'. Kristoneakan Dastiarakut'ean Bajhanmunqi, Tehran. [*Armenian Ecclesiastical Law*. A book. Department of Christian Education T.H.T., Tehran] 2005. (In Armenian)
4. Sayadyan, Vahe. *Kronakan kazmakerput'yunneri sahmanadriravakan kargavitchaki himnakhndirneri Hayastani Hanrapetut'yunum*. atenakhosut'yun, JhB.00.02, Erevan. [*Issues of Constitutional Status of Religious Organizations, Republic of Armenia*. dissertation, 00.02, Yerevan] 2015. (In Armenian)
5. Step'anyan, Hovhannes. *Iravunqi p'ilisop'ayut'yun*. HH GAA Gitut'yun hrat., Erevan. [*Philosophy of Law*. Republic of Armenia. National Academy of Sciences, Science Edition, Yerevan] 2016. (In Armenian)
6. Parker, Todd. "The Freedom to Manifest Religious Belief: An Analysis of the Necessity Clauses of the ICCPR and the ECHR". *17 Duke Journal of Comparative ev International Law*, Vol. 17, iss.1, pp. 91-130.
7. «Hayastani Hanrapetut'yan ev Hayastanyayts ar'aqelakan surb ekeghetsu haraberut'yunneri masin» o'renq. 22.02. 2007. [*"Law on Relations between the Republic of Armenia and the Armenian Apostolic Church"*. 22.02.2007]. (In Armenian)
8. *HH Sahmanadrut'yun*. (popokhutyunnerov). [*Constitution of the Republic of Armenia*. (With changes)] 2015. (In Armenian)
9. *Case of Arrusmith v. United Kingdom*. App. no. 7050/75, 12.10.1978.
10. *Case of Kokkinakis v. Greece*. App. no. 14307/88, 25.05.1993.
11. *SD SDO-1506 voroshum*. 18.02.2020. [*Decision of the RA Constitutional Court*. 18.02.2020]. (In Armenian)

INDIVIDUAL COMPONENTS AND COLLECTIVE ESSENCE OF THE RIGHT TO FREEDOM OF THOUGHT, CONSCIENCE AND RELIGION**VAHE TOROSYAN**

*European University of Armenia, Lawyer;
Faculty of Law, Ph.D in Law, Lecturer;
Yerevan, the Republic of Armenia*

The main purpose of the article is to reveal the concept of the right to freedom of thought, conscience, religion, analyzing its individual components and the collective essence.

The purpose of the study is to identify the components of the right to freedom of thought, conscience and religion, considering first the freedom of thought, then the freedom of conscience, and then the right to freedom of religion, after which we tried to examine and discover the collective meaning of the right to freedom of thought, conscience and religion.

In the research dialectical materialism, analysis-synthesis, historical-logical, induction-deduction, as well as systemic methods were used.

As a result of the research, we came to the conclusion that the right to freedom of thought, conscience and religion, being composed of separate components, is at the same time endowed with a collective content, which is why it usually has a common content in human rights documents. As a rule, the external freedom of a person is subject to restriction, which is more commonly known as *forum externum*, and in exceptional cases, international law also provides for the possibility of restriction of internal freedom (*forum internum*).

Keywords: *Freedom of thought, freedom of conscience, freedom of religion, rights, freedoms, case, religion.*

ОТДЕЛЬНЫЕ КОМПОНЕНТЫ И ОБОБЩЕННАЯ СУЩНОСТЬ ПРАВА НА СВОБОДУ МЫСЛИ, СОВЕСТИ И РЕЛИГИИ

ВАԳԵ ԵՐՈՍՅԱՆ

*юрист Европейского университета Армении,
преподаватель юридического факультета,
кандидат юридических наук
г. Ереван, Республика Армения*

Основная цель статьи – раскрыть понятие права на свободу мысли, совести, религии, проанализировать его отдельные составляющие и обобщенную сущность.

Целью исследования явилось выявить компоненты права на свободу мысли, совести и религии, учитывая сначала свободу мысли, затем свободу совести, а затем – право на свободу религии; далее мы попытались исследовать и раскрыть обобщенный смысл и содержание права на свободу мысли, совести и религии.

В исследовании использованы методы диалектического материализма, анализа/синтеза, историко-логический, индукционно-дедуктивный, а также системный методы.

В результате исследования мы пришли к выводу о том, что право на свободу мысли, совести и религии, состоящее из отдельных компонентов, в то же время имеет общее содержание, поэтому обычно получает обобщенное содержание в документах по правам человека. Как правило, внешняя свобода человека подлежит ограничению, которое более известно как *forum externum*, а в исключительных случаях международное право предусматривает и возможность ограничения внутренней свободы (*forum internum*).

Ключевые слова: *свобода мысли, свобода совести, свобода религии, права, свобода, прецедент, религия.*

ЛИЦЕНЗИРОВАНИЕ КАК ОТДЕЛЬНЫЙ ВИД АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА (НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРЦАХ) *

УДК 342.9:347.77.043

DOI: 10.52063/25792652-2022.1.12-35

ORCID: 0000-0002-1968-8074

Web of Science ResearcherID: AAE-5670-2022

НОРАЙР АВАГЯН

аспирант кафедры конституционного права
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

n.avagyan@mplaw.am

Лицензирование как совокупность общественных отношений включает как административно-правовые, так и гражданско-правовые отношения, чем объясняется сложность ее правового регулирования.

Целью данной статьи является изучить правовые основы предоставления лицензий в Республике Арцах и особенности осуществления администрирования в этой сфере. Обратившись к данному вопросу и вытекающим отсюда проблемам, которые на практике приводят к серьезным трудностям, автор выдвинул такие подходы их решения, которые могут усовершенствовать законодательство Республики Арцах, а также способствовать формированию единой судебной практики.

Исследование проведено на основе юридически-сравнительно-аналитического метода, в основе которого лежат научные положения, выдвинутые юристами, международные и внутригосударственные правовые источники, а также правоприменительная практика.

В результате исследования автор пришел к выводу о том, что лицензирование – это отдельная или функциональная административная процедура, и в процессе лицензирования лицензирующие органы обязаны следовать не только непосредственным принципам лицензирования, но и основополагающим принципам администрирования, а действующие правовые нормы соответствуют нормам отдельного вида административного производства, поскольку лицензирование имеет конкретную правомерную цель, регулируется отдельным законодательным актом, в нем нет грубых отклонений, не соответствующих основополагающим принципам администрирования и придающих лицам неблагоприятный статус.

* Հոդվածը ներկայացվել է 19.02.2022 թ., գրախոսվել՝ 20.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Ключевые слова: лицензирование, лицензия, административное производство, административный акт, особенности административного производства, отдельный вид административного производства, функциональное административное производство, стандарты отдельного вида административного производства.

Введение

Для нормального развития общества одной из важнейших задач государства является эффективное управление экономикой. Государство обязано стимулировать предпринимательство и занятость населения, улучшать бизнес-среду и условия труда и т.д.¹. Необходимость эффективной реализации указанных задач и целей обуславливает наличие определенных правовых механизмов, посредством которых государство приобретает реальную возможность прогнозируемого воздействия на данные общественные отношения.

Лицензирование – один из самых эффективных способов воздействия государства на экономику. Лицензирование является одним из способов управления экономической деятельностью и осуществления государственного контроля над ней (Արցախի Հանրապետության 128). Оно осуществляется с целью обеспечения защиты прав потребителей, содействия урегулированию развивающихся рыночных отношений, повышения качества товаров и услуг, осуществления контроля за жизнью, здоровьем, имуществом лиц, интересами государства и общества, видами деятельности, чреватые наибольшей угрозой охране природы, культурного наследия (Статья 5 Закона НКР «О лицензировании»).

Положительным является то, что законодательством закреплены цели, в реализации которых в Республике Арцах внедрен процесс лицензирования, поскольку, как отмечают российские юристы, в первую очередь, нужно понять и ответить на вопрос, какую цель преследует административная процедура, которая должна регулироваться общественной властью (Малявина 93). Следовательно, можно констатировать, что указанные цели обусловили необходимость процесса лицензирования как эффективной структуры в правовом порядке Республики Арцах.

Заметки о лицензировании как отдельном виде административного производства

Лицензирование как правовое явление, в первую очередь, можно охарактеризовать как самостоятельный институт административного права. Оно, как совокупность административно-правовых норм, регулирует отдельную группу общественных отношений, которые, в целом, касаются установления видов деятельности, подлежащих лицензированию, и процесса лицензирования. Лицензирование считается частью более широкой разрешительной системы (Субанова 29). Относительно лицензирования существуют также доктринальные подходы к тому, что оно является гражданско-правовым институтом (Горина 76-78; Садреев и Павлова 38). Однако аргументы, свидетельствующие о том, что лицензирование является институтом административного права, более

¹ Основные цели политики Республики Арцах в экономической, социальной и культурной сферах закреплены в статье 85 Конституции, см. электронную ссылку: <http://president.nkr.am/media/documents/constitution/Constitution2017.pdf>

убедительны, в частности, положения о том, что во время лицензирования государство:

- 1) выступает в роли определяющего видов деятельности, подлежащих лицензированию,
- 2) осуществляет процесс лицензирования,
- 3) решает вопросы применения принуждения в сфере лицензирования (Сирунян 79).

В доктринальных источниках лицензирование представляется также как административно-правовой режим (Елюбаев 362; Спектор 22), а в некоторых случаях и как административно-правовой метод (Уңқршқұл 130).

Однако необходимо сделать ключевую оговорку: лицензирование само по себе не может рассматриваться полностью как гражданско-правовой или административно-правовой институт. При определении конкретного института лицензирования сперва необходимо проанализировать уже закрепленные за ним правовые основы, поскольку в одном случае он может быть полностью административно-правовым, а в другом – гражданско-правовым. В частности, о смешанной системе можно говорить в том случае, когда лицензионные правила устанавливает орган общественной власти, а процесс выдачи лицензии осуществляется посредством конкурсов, типичных для гражданско-правовых институтов. Мы считаем, что во всех случаях, когда система управления экономикой еще недостаточно устойчива, за исключением коррупционных рисков, целесообразнее вводить смешанную систему.

Однако в этом случае, для предотвращения возможных негативных последствий, крайне необходимо, чтобы установление условий конкурса и оценка результатов осуществлялись с исключением коррупционных рисков, в противном случае мы будем иметь будто бы более надежную правовую систему, между тем, на практике она всего лишь превратится в скрытую коррупционную процедуру.

Проблема в том, что организатор конкурса, имея правовую возможность выдвигать условия, к сожалению, может злоупотреблять своим положением и выдвигать такие условия, которые могут быть исключительно выгодны для компании, указанной им, и т.д. Так или иначе, государство, оценивая ряд экономических и других социальных факторов, а также исходя из целей обеспечения защиты прав потребителей, содействия урегулированию развивающихся рыночных отношений, повышения качества товаров, услуг, защиты интересов лиц, государства и общества, определяет те виды деятельности, которые подлежат лицензированию.

Виды деятельности, подлежащие лицензированию в Республике Арцах, предусмотрены статьей 43 Закона НКР «О лицензировании», а видами деятельности, не предусмотренными в данной статье, физические или юридические лица имеют право заниматься без ограничений, если занятие данным видом деятельности не запрещено или не ограничено законом.

Из этого следует отметить, что лицензирование — это предоставление правомочным органом права заниматься определенным видом деятельности, предусмотренным законом.

В Республике Арцах лица могут заниматься таким видом деятельности исключительно на основании лицензирования, а до лицензирования занятие данным видом деятельности рассматривается как правонарушение.

В связи с этим отмечается, что лицензирование является не столько разрешительным, сколько запретительным фактором правового регулирования, поскольку лица без соответствующей лицензии не имеют права заниматься указанными видами деятельности (Сагиндыкова 98).

Государство, определив, какие виды экономической деятельности подлежат лицензированию, посредством своих компетентных органов осуществляет лицензирование, которое является процессом, связанным с выдачей лицензий, продлением срока их действия, переоформлением, приостановлением и прекращением действия, как определено в статье 3 Закона НКР «О лицензировании». Таким образом, можно констатировать, что в результате правового процесса лицензирования лицам выдается лицензия, продлевается срок лицензии, переоформляется лицензия, приостанавливается действие лицензии или прекращается ее действие. При этом статья 3 Закона НКР «О лицензировании» устанавливает также понятие лицензии, согласно которому лицензия является официальным разрешением, подтверждающим право заниматься видом деятельности, подлежащей лицензированию, а также официальным документом, подтверждающим это право, а лицензирующие органы — это государственные органы, которые в установленном законом порядке осуществляют лицензирование.

Анализируя указанные правовые регулирования, можно выделить следующие признаки лицензирования как правового процесса:

- 1) лицензирование осуществляют государственные органы,
- 2) лицензирование осуществляется в специальном порядке, установленном законом,
- 3) лицензирование завершается установлением, изменением или прекращением права для лиц.

Таким образом, лицензирование является важнейшим институтом административного права, который предусмотрен для осуществления государственного регулирования в некоторых финансово-экономических сферах.

Административный и правовой характер деятельности данного вида определяется тем, что лицензирование — это административная процедура, обладающая всеми признаками процессуальной деятельности:

- 1) имеет государственно-властный характер,
- 2) регулируется нормами административного права,
- 3) сопровождается принятием процессуальных документов (актов),
- 4) завершается принятием конкретного решения по делу,
- 5) включает в себя дальнейший контроль за осуществлением лицензированной деятельности и применение средств воздействия (Беккалиева и Рудаметкина 21).

Несмотря на то, что статья 2 Закона НКР «О лицензировании» в правовых актах, регулирующих лицензионные отношения, не указывает закон НКР «Об основах администрирования и административном производстве», в любом случае, признаки процесса лицензирования позволяют считать лицензирование отдельным видом административного производства, особенности которого установлены законом НКР «О лицензировании».

Из вышесказанного следует, что лицензионные отношения в Республике Арцах регулируются также законом НКР «Об основах администрирования и административном производстве».

Таким образом, лицензирование является административным производством отдельных видов, а лицензия — административным актом. Однако системный анализ норм закона НКР «О лицензировании» позволяет констатировать, что процесс лицензирования направлен не только на выдачу лицензии, но и на изменение, приостановление или прекращение лицензии.

Иными словами, отдельным видом административного производства является не только процесс лицензирования, завершающийся выдачей лицензии, но и процессы, осуществленные лицензирующим органом, направленные на

переоформление лицензии, продление срока лицензии, приостановление или прекращение действия лицензии. Фактически, в связи с определенными социально-экономическими и финансовыми факторами, которые получили правовое закрепление в качестве целей лицензирования, в Республике Арцах внедрено отдельное административное производство.

Следовательно, при осуществлении администрирования как в любой сфере, так и в сфере лицензирования, административные органы Республики Арцах обязаны следовать основополагающим принципам администрирования и административного производства, как требование зафиксировано в резолюции № 77 (31) «О защите личности в отношении актов административных органов», принятой Комитетом министров Совета Европы 28 сентября 1977 года.

Последний поручает государствам-членам направлять свои национальные правовые системы в сфере администрирования на некоторые основополагающие принципы, среди которых права на получение административного акта, содержащего отметку о прослушивании лица, доступности информации, юридической помощи и представителе, обоснованных и оспариваемых мерах (Патерило 53).

В качестве отдельного вида административного производства нормы, регулирующие процесс лицензирования, должны предусматривать эффективные структуры и процедуры для гарантирования права надлежащего администрирования лиц. Это означает, что, в первую очередь, в процессе лицензирования лица должны обладать такими правами и нужно возложить на них такие обязанности, которые не придадут лицам менее благоприятный статус, чем определено законом НКР «Об основах администрирования и административном производстве». В свою очередь, лицензирующие органы при осуществлении процесса лицензирования должны быть ограничены такими основополагающими принципами, как запрет на злоупотребление формальными требованиями, ограничение дискреционных полномочий, запрет на произвол, соразмерность администрирования, принцип максимума, презумпция достоверности, экономичность. То есть, правовые нормы, регулирующие процесс лицензирования, должны быть выбраны по таким критериям, чтобы обеспечить необходимые пропорции и гармонию между ними и основополагающими принципами администрирования (Դա՛նիհի՛յա՛ն 59).

Также необходимо отметить, что процесс лицензирования, как отдельный вид административного производства, регулируется не только вышеупомянутыми принципами, но и вытекающими из них и дополняющими их руководящими положениями, в частности, в статье 4 Закона НКР «О лицензировании» установлено, что к принципам лицензирования относятся :

- 1) защита прав, законных интересов, нравов и здоровья лиц, обеспечение обороны и безопасности государства,
- 2) обеспечение единой политики в области экономической деятельности и установление перечня видов деятельности, подлежащих единому лицензированию, на территории Нагорно-Карабахской Республики,
- 3) определение единого порядка и принципов лицензирования,
- 4) публичность лицензирования,
- 5) обеспечение законности процесса лицензирования,
- 6) упрощение процесса лицензирования и обеспечение прозрачности,
- 7) установление единых критериев и видов ответственности за нарушение лицензированными лицами требований деятельности, подлежащих лицензированию.

Заклучение

Следует отметить, что в контексте указанных критериев, а также принципа конституционной пропорциональности ключевое значение имеет вопрос, какой конкретный вид экономической деятельности может быть признан подлежащим лицензированию. Несомненно, в процессе лицензирования органы общественной власти осуществляют такую деятельность, которая может быть охарактеризована как оказание услуг, а это означает, что обосновано также взимание государственной пошлины за такую услугу. Однако неприемлемо, когда сам процесс лицензирования преимущественно рассматривается как дополнительный источник пополнения государственного бюджета, в результате чего не только неоправданно расширяется круг подлежащих лицензированию видов хозяйственной деятельности, но и для отдельных прибыльных видов (например, для производства спиртных напитков) устанавливаются необоснованно высокие государственные пошлины. В конечном счете, такая политика не имеет ничего общего с представленными выше нами принципами, закрепленными в законодательстве. Более того, подобная экономическая политика создает ненужные препятствия для реализации конституционного принципа либерализации экономики с одной стороны, с другой стороны, это приводит к недопустимому раздуванию аппарата Общественной власти, поскольку обслуживание широких кругов искусственно созданного администрирования возможно только в случае раздутых штатов и подразделений.

С точки зрения научных основ управления считаем неприемлемым, когда отдельные виды экономической деятельности (например, аудиторская деятельность) формально исключается из списка видов деятельности, подлежащих лицензированию, но опять же фиксируются схожие, причем более непредсказуемые и непрофессиональные структуры контроля, теперь уже со стороны общественных организаций.

Наш подход заключается в том, что в каждом случае правомерной может считаться только такая инициатива, которая полностью соответствует вышеуказанным принципам и правовым основаниям, кроме того, может способствовать внедрению более разумных механизмов государственного вмешательства. В конечном счете, следует признать исходной точкой то обстоятельство, что любое государственное вмешательство само по себе не является благоприятным и положительным явлением, оно может считаться таковым исключительно при строгом соблюдении необходимых политико-правовых основ.

В этой связи считаем необходимым отметить, что в таких государствах, как Республика Арцах, оказавшихся в политико-правовом кризисе, когда в любой момент против нее может начаться геноцидальная война, в отношении некоторых видов деятельности, которые подлежат лицензированию, а специальные разрешения могут исключаться, и для таких видов деятельности государством будут установлены иные методы контроля.

Ряд объективных реалий, очевидно, обосновывают некоторые действия, касающиеся сферы безопасности в Республике Арцах. Такие, например, как производство оружия, взрывчатых веществ или взрывных устройств исключаются из ряда деятельности, подлежащей лицензированию, при условии, что компетентным органом в области обороны будут внедрены надлежащие контрольные структуры в отношении данной деятельности; либо возникает необходимость упрощения процесса лицензирования.

Для стимулирования заинтересованности хозяйствующих субъектов в занятии указанными видами деятельности государством могут применяться и другие поощрительные меры, например, освобождение от государственной пошлины по лицензированию, снижение налогов и т.д..

Подводя итоги, мы приходим к выводу о том, что лицензирование как правовой процесс имеет следующие признаки: лицензирование осуществляется государственными органами; лицензирование осуществляется в специальном порядке, установленном законом; лицензирование завершается установлением, изменением или прекращением права для лиц, учитывая внешнее воздействие лицензирующего органа посредством лицензирования; оно является отдельным видом или функционирующим административным производством; в процессе лицензирования лицензирующие органы обязаны следовать не только непосредственным принципам лицензирования, но и основополагающим принципам администрирования; в случае организации процесса лицензирования лицензирующими органами в соответствии с нашими соображениями можно будет констатировать, что регулирования процесса лицензирования в Республике Арцах соответствует стандартам административного производства отдельных видов, поскольку лицензирование имеет конкретно сформулированную правомерную цель. Для этого внедрена правовая система, и данный процесс регулируется законодательным актом, в котором нет грубых отклонений, не соответствующих основополагающим принципам администрирования и придающих лицам неблагоприятный статус.

Использованная литература

1. Елюбаев, Жумагельды. *Теоретические и методологические проблемы правового регулирования недропользования, отечественный опыт и зарубежная практика*. учеб.-метод. пособие, Науч. консультант, Москва, 2017.
2. Спектор, Екатерина. *Правовые иллюзии и реалии Федерального закона о лицензировании отдельных видов деятельности*. № 7, Законодательство и экономика, Москва, 2011.
3. Субанова, Наталья. *Разрешительные полномочия органов исполнительной власти в Российской Федерации*. Юриспруденция, Москва, 2012.
4. Դևիդյան, Գևորգ. «Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում». ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, գլխ. խմբ. Գ. Ղազիսյան, ԵՊՀ հրատ., 2018:
5. Մուրադյան, Սամվել. «Թույլտվությունը և լիցենզավորումը որպես տնտեսության վրա ներգործության կարևոր կառավարման մեթոդներ». ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, գլխ. խմբ. Գ. Ղազիսյան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 124-134:
6. Горина, Анна. “Недра и ресурсы недр как объекты гражданских прав”. *Молодой ученый*, № 36, 2020, стр 76-78.
7. Малявина, Наталья. “Административные процедуры в зарубежных странах”. *Вестник ЧелГУ*, № 22, 2008, стр. 93-100, <https://cyberleninka.ru/article/n/administrativnye-protsedury-v-zarubezhnyh-stranah>.
8. Рудаметкина, Наталья и Наталья Беккалиева. “Лицензирование как административно-правовой институт экономической деятельности”. *Научный Журнал Globus*, Экономика И Юриспруденция, Сборник Научных Публикаций, 2019, стр. 20-23, <https://cyberleninka.ru/article/n/litsenzirovanie-kak-administrativno-pravovoy-institut-ekonomicheskoy-deyatelnosti/viewer>.

9. Патерило, Ирина. “Процедурные требования к административным актам по законодательству Европейского Союза”. *Национальный юридический журнал*, № 2, 2015, стр. 53-55.

10. Сагиндыкова, Алма. “К вопросу о юридической природе института лицензирования негосударственной (частной) охранной и негосударственной (частной) сыскной деятельности”. *Бизнес, Менеджмент и Право*. № 1, 2014, стр. 95-99.

11. Садреев, Артур и Галина Павлова. “Правовое обеспечение лицензирования недропользования”. *Государственное и муниципальное управление*, Челябинский государственный университет, 2020, стр. 37-41.

12. Արցախի Հանրապետության Սահմանադրություն. <http://president.nkr.am/media/documents/constitution/Constitution2017.pdf>. հասանելի է 06.03.21:

13. *Resolution (77) 31 on the protection of the individual in relation to the acts of administrative authorities (Adopted by the Committee of Ministers on 28 September 1977, at the 275th meeting of the Ministers' Deputies)*. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016804dec56.

WORKS CITED

1. Eljubaev, Zhumagel'dy. *Teoreticheskie i metodologicheskie problemy pravovogo regulirovaniya nedropol'zovaniya, otechestvennyj opyt i zarubezhnaja praktika*. ucheb.-metod. posobie, Nauch. konsul'tant, Moskva. [*Theoretical and methodological problems of legal regulation of subsoil use, domestic experience and foreign practice*. study-method. Benefit, Scientific consultant, Moscow] 2017. (In Russian)

2. Spektor, Ekaterina. *Pravovye illjuzii i realii Federal'nogo zakona «O licenzirovanii otdel'nyh vidov dejatel'nosti»*. № 7, Zakonodatel'stvo i jekonomika, Moskva. [*Legal illusions and realities of the Federal Law "On licensing certain types of activities"*. № 7, Legislation and economics, Moscow] 2011. (In Russian)

3. Subanova, Natal'ja. *Razreshitel'nye polnomochija organov ispolnitel'noj vlasti v Rossijskoj Federacii*. Jurisprudencija, Moskva. [*Permissive powers of executive authorities in the Russian Federation*. Jurisprudence, Moscow] 2012. (In Russian)

4. Danielyan, Gevorg. «Varchararut'yan ar'and'znahatkut'yunnery' azgayin anvtangut'yan volortum». *EPH iravagitut'yan fakulteti profesoradasakhosakan kazmi gitajhoghovi nyut'eri zhoghovac'u*, EPH; glkh. xmb.` G. S. Ghazinyan, EPH hrat.. [*Peculiarities of administration in the field of national security*]. Proceedings of the conference of the teaching staff of YSU Faculty of Law, YSU, Ch.-Editor: G. Ghazinyan, YSU Edition] 2018. (In Armenian)

5. Gorina, Anna. “Nedra i resursy nedr kak obekty grazhdanskih prav”. *Molodoj uchenyj*, № 36, str. 76-78. [“Subsoil resources as objects of civil rights”. *Young scientist*, № 36, pp. 76-78] 2020. (In Russian)

6. Maljavina, Natal'ja. “Administrativnye procedury v zarubezhnyh stranakh”. *Vestnik ChelGU*, № 22, str. 93-100, <https://cyberleninka.ru/article/n/administrativnye-protsedury-v-zarubezhnyh-stranah>. [“Administrative procedures in foreign countries”. *Bulletin of ChelSU*, № 22, pp. 93-100] 2008. (In Russian)

7. Mowradyan, Samvel. «T'owyltvowt'yowny' ev licenzavorowmy' orpes intesowt'yan vra nergorc'owt'yan karevor kar'avarman met'odner». *EPH iravagitowt'yan fakowlteti profesoradasaxosakan kazmi gitajhoghovi nyowt'eri jhoghovac'ow*, EPH, Glx. xmb.` G. S. Ghazinyan, EPH hrat.. [“The permission and licencing as the important methods of the influence on economic of Republic of Armenia”. *Proceedings of the conference of the teaching staff of YSU Faculty of Law*, YSU, Ch.-Editor: G. S. Ghazinyan, YSU Edition] 2016. (In Armenian)

8. Paterilo, Irina. "Procedurnye trebovaniya k administrativnym aktam po zakonodatel'stvu Evropejskogo Sojuza". *Nacional'nyj juridicheskij zhurnal*, № 2, str. 53-55. ["Procedural requirements for administrative acts under European Union law". *National Law Journal*, № 2, pp. 53-55] 2015. (In Russian)

9. Rudametkina, Natal'ja I Natal'ja Bekkalieva. "Licenzirovaniye kak administrativno-pravovoy institut jekonomicheskoy dejatel'nosti". *Nauchnyj Zhurnal Globus*, Jekonomika I Jurisprudencija, Sbornik Nauchnyh Publikacij, str. 20-23, <https://cyberleninka.ru/article/n/litsenzirovaniye-kak-administrativno-pravovoy-institut-ekonomicheskoy-deyatelnosti/viewer>. ["Licensing as an administrative legal institute of economic activity". *Scientific Journal "Globus"*, Economics And Law, Collection Of Scientific Publications, pp. 20-23] 2019. (In Russian)

10. Sadreev, Artur i Galina Pavlova. "Pravovoe obespechenie licenzirovaniya nedropol'zovaniya". *Gosudarstvennoe i municipal'noe upravlenie*. Cheljabinskij gosudarstvennyj universitet, str. 37-41. ["Legal support of subsoil use licensing". *State and municipal administration*, Chelyabinsk State University, pp. 37-41] 2020. (In Russian)

11. Sagindykova, Alma. "K voprosu o juridicheskoy prirode instituta licenzirovaniya negosudarstvennoj (chastnoj) ohrannoij i negosudarstvennoj (chastnoj) sysknoj dejatel'nosti". *Biznes, Menedzhment i Pravo*, № 1, str. 95-99. ["To the question of the legal nature of the institution of licensing non-state (private) security and non-state (private) detective activities". *Business, Management and Law*, № 1, pp. 95-99] 2014. (In Russian)

12. Artsakhi Hanrapetut'yan sahmanadrut'yun, <http://president.nkr.am/media/documents/constitution/Constitution2017.pdf>. hasaneli e 06.03.2021. [*Constitution of the Republic of Artsakh*. Accessed: 06.03.2021]. (In Armenian)

13. *Resolution (77) 31 on the protection of the individual in relation to the acts of administrative authorities (Adopted by the Committee of Ministers on 28 September 1977, at the 275th meeting of the Ministers' Deputies)*. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016804dec56.

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒԻՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ (ԱՐՑԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ՆՈՐԱՅՐ ԱՎԱԳՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Լիցենզավորումը՝ որպես հասարակական հարաբերությունների ամբողջություն, ներառում է թե՛ քաղաքացիաիրավական, թե՛ վարչաիրավական հարաբերություններ, ինչով պայմանավորված՝ ենթադրվում է դրա իրավակարգավորման բարդությունը:

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում հետազոտելու Արցախի Հանրապետությունում լիցենզիայի հատկացման իրավական հիմքերը և այդ ոլորտում վարչարարության իրականացման առանձնահատկությունները:

Անդրադարձ կատարելով վերը նշված և դրանից բխող հարցադրումներին, որոնք գործնականում հանգեցնում են լրջագույն խնդիրների՝ հոդվածում առաջ են քաշվել այնպիսի մոտեցումներ, որոնք կարող են կատարելագործել Արցախի Հանրապետության օրենսդրությունը, ինչպես նաև նպաստել միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը:

Յոդվածը շարադրվել է իրավահամեմատական-վերլուծական մեթոդով, որի առարկան կազմել են իրավաբան-գիտնականների առաջ քաշած գիտական կարծիքները, միջազգային և ներպետական իրավական աղբյուրները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկան:

Յետազոտության արդյունքներով հանգել ենք այն հետևություններին, որ լիցենզավորումը առանձին տեսակի կամ գործառնութավորված վարչական վարույթ է, և լիցենզավորման գործընթացում լիցենզավորող մարմինները պարտավոր են հետևել ոչ միայն լիցենզավորման անմիջական, այլ նաև վարչարարության հիմնարար սկզբունքներին, իսկ առկա իրավակարգավորումները համապատասխանում են առանձին տեսակի վարչական վարույթի չափորոշիչներին, քանի որ լիցենզավորումն ունի կոնկրետ ձևակերպված իրավաչափ նպատակ, կարգավորվում է առանձին օրենսդրական ակտով, որում առկա չեն վարչարարության հիմնարար սկզբունքներին անհամապատասխան և անձանց անբարենպաստ կարգավիճակ հաղորդող կոպիտ շեղումներ:

Յիմնաբառեր` լիցենզավորում, լիցենզիա, վարչական վարույթ, վարչական ակտ, վարչական վարույթի առանձնահատկություններ, առանձին տեսակի վարչական վարույթ, գործառնութավորված վարչական վարույթ, առանձին տեսակի վարչական վարույթի չափորոշիչներ:

LICENSING AS A SEPARATE TYPE OF ADMINISTRATIVE PROCEDURE (LEGISLATION OF ARTSAKH REPUBLIC SCIENTIFIC-PRACTICAL ANALYSIS)

NORAYR AVAGYAN

*Yerevan State University,
Chair of Constitutional Law, Ph.D Student,
Yerevan, the Republic of Armenia*

Licensing, an integrity of public relations, includes both civil and administrative legal relations, in connection with which the complexity of its legal regulation is assumed.

This article aims to examine the legal basis for granting a license in the Republic of Artsakh and the specifics of administration in this area.

Referring to the above mentioned /arising from it/ issues, which in practice lead to the serious problems, the author put forward such approaches that can improve the legislation of the Republic of Artsakh, as well as contribute to the formation of a unified judicial practice.

The article was presented in a legal comparative-analytical method, the subject of which was the scientific opinions of lawyers-scientists, international and domestic legal sources, as well as legal practice.

According to the results of the study, the author came to the conclusion that licensing is a separate type or functioning administrative proceeding, and in the licensing process licensing authorities are obliged to follow not only the direct principles of licensing, but also the basic principles of administration, and the existing legal regulations correspond to the criteria of administrative proceedings of a specific type, since licensing has a specific legal purpose, is regulated by a separate legislative act, there are no gross deviations that do not comply with the basic principles of administration and give an unfavorable status to persons.

Keywords: *Licensing, license, administrative proceedings, Administrative act, specifics of administrative proceedings, a separate type of administrative proceedings, functioning administrative proceedings, criteria for a separate type of administrative proceedings.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

**ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XІ-XХ ԴԴ.)
(ՄԱՍ 3)*¹**

ՀՏԴ 94 (479.25); 343.412

DOI: 10.52063/25792652-2022.1.12-45

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և
Սփյուռքի պատմության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sasun-07@mail.ru

Հոդվածի նպատակն է տարաբնույթ սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, թեմային առնչվող գրականություն) հենքի վրա ներկայացնել XІ-XХ դարերի ընթացքում Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից մինչև Ապազերոն թերակղզի ընկած տարածքում տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված Էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության պատճառներն ու իրագործման փուլերը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով:

Փաստերի համադրմամբ տրվում է հիմնահարցի պատմության հետևյալ փուլայնացումը. Արևելյան Այսրկովկասում տեղաբնիկ հայերի Էթնիկ զտումներն ու կոտորածները տակավին իրականացվել են XІ-XVІІІ դարերում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվում էր այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների արշավանքների և տիրապետության տակ (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թեմուր, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղեր և դզբաշների արշավանքներ, դրանց հաջորդած թուրք-պարսկական պատերազմներ, սուննի լեզգիներ, Նադիր շահի ու Աղա Մուհամմադ խանի արշավանքներ): Դրա հետևանքով հայ բնակչության մի որոշ մասը բռնատեղափոխվեց և լքեց հայրենի տարածքները կամ հարկադրաբար ընդունեց նվաճողների մահմեդական դավանանքը: Էթնիկ զտումների ու կոտորածների հաջորդ փուլը հայ-թաթարական ընդհարումների շրջանն էր (1905-1906 թթ.): Հետագայում ցեղասպանական քաղաքականությունը պետական մակարդակով է իրականացվել՝ արդեն արհեստածին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական (1918-1920 թթ.) և

* Հոդվածը ներկայացվել է 16.03.2022թ., գրախոսվել՝ 22.03.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022թ.:

¹ Հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 21T-6A163 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

վերջում՝ Ադրբեջանի խորհրդային վարչակարգերի ժամանակաշրջաններում (1920-1990 թթ.):

Յոդվածում հիմնավորված է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը էթնիկ գտումների ու ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը: Հետևաբար այդ քաղաքականությունը պետք է որակել որպես հայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Պատմագիտական գրականության մեջ թեև խնդրո առարկա հարցի վերաբերյալ անդրադարձները բազմաթիվ են, սակայն առանձին քննության առարկա չի դարձել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, հայերի էթնիկ գտումների ու ցեղասպանական քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը:

Հիմնաբառեր՝ Արևելյան Այսրկովկաս, Բաքվի նահանգ, Կուրի ձախափյակ, համաթուրքականություն, էթնիկ գտումներ, այլատյացություն, ցեղասպանություն, բռնազաղթ:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ (1918-1920 թթ.): 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Օսմանյան կայսրությունը, օգտվելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակից, Այսրկովկասում ուժեղացրեց համաթուրքական (պանթուրքիզմ) և համախլամական քարոզչությունը (Կովկասում համաթուրքականության քարոզչության մասին մանրամասն տե՛ս Сваранц, Александр. *Пантюркизм в геостратегии Турции на Кавказе*): Հեղափոխությունից հետո բազմաթիվ թուրք Եմիսարներ Կովկասի մահմեդականների շրջանում նման քարոզչություն էին իրականացնում, որպեսզի հնարավոր առիթի դեպքում կովկասյան թաթարներին պատրաստեն քաղաքական ակտիվ պայքարի: Այլ կերպ ասած՝ Կովկասը վերածվել էր համաթուրքական և համախլամական գաղափարախոսության կենտրոնի, որտեղ համախմբվել էին գրեթե բոլոր հակառուսական ուժերը (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 1, գ. 29, թ. 3; գ. 26, թ. 21; ֆ. 4049, ց. 1, գ. 2, թ. 4; Յակոբեան 15): Փաստերը վկայում են, որ Բաքվի նահանգում համաթուրքականության քարոզչության արմատավորման համար երիտթուրքերի «Իթթիհադ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը դեռևս 1913 թ. Բաքու, Գյոքչա, Ադղաշ, Նուխի և Զյուրդամիր քաղաքներում ստեղծել էր կուսակցական տեղական կոմիտեներ (Սարգսյան 106; Փաշայան 23-24):

Այսրկովկասում և մասնավորապես Բաքվում երիտթուրքերի հենարանն իթթիհադականների ազդեցությամբ 1911 թ. հոկտեմբերին ստեղծված «Մուսավաթ» («Հավասարություն»)՝ «թյուրքացում, իսլամացում, արդիականացում» (Necəfov 29-38) նշանաբանով առաջնորդվող կուսակցությունն էր (Саркисов 204; Ավետիսյան, «Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը» 43-64), որի ղեկավարն ու գլխավոր գաղափարախոսը 1913 թվականից հայտնի համաթուրքական գործիչ Մամեդ Եմին Ռասուլզադեն էր (Дубинский-Мухадзе 207): Համախլամականության և համաթուրքականության ոճրագործ գաղափարախոսությամբ սնված «Մուսավաթը» երիտթուրքերի թելադրանքով տենդորեն նախապատրաստում էր դեպի Կովկաս թուրքերի առաջխաղացումն արագացնելու գործը (Երիտթուրքերի ու Մուսավաթի համագործակցության մասին մանրամասն տե՛ս Ավետիսյան, *Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը* 43-64): Հայերի նկատմամբ թշնամանք սերմանելու հարցում, «Մուսավաթից» բացի, իրենց բացասական դերակատարությունն ունեցան նաև «Իթթիհադ վե թերաքքի»

կողմից ուղղորդվող կովկասյան թաթարների շրջանում գործող այլ կուսակցություններն ու կազմակերպությունները («Ապակենտրոնացման թյուրքական կուսակցություն») («Ֆեդերալիստներ»), «Իթթիհադ»¹ («Միություն»: Նախագահ՝ Կարա բեկ Կարաբեկով (Կնյազյան 8-9):

«Մուսավաթ» և «Իթթիհադ» կուսակցությունների վարած հակահայ քաղաքականության պատճառով Բաքվի նահանգի կովկասյան թաթարների վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ արմատապես փոխվեց: Իրադարձությունների նման զարգացման պարագայում դժվար չէ կռահել, թե ինչ էր սպասվելու նահանգի հայությանը: Որոշեգրելով հայերի նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականությունը՝ վերոնշյալ կուսակցությունների ներքին քաղաքականության անկյունաքարն էր դարձել հակահայկականությունը: Մուսավաթականները սկզբում քողարկված և ապա առավել բացահայտ ցինիկությամբ ամենուր սկսեցին թաթար խավարամիտ ամբոխին գրգռել հայերի դեմ: Լեոյի դիպուկ բնորոշմամբ ««Մուսավաթը»՝ իբրև երիտթուրքերի աշակերտ, լցած էր ռազմատենչ իմպերիալիզմով ամբողջ Կուկասի վերաբերմամբ եւ մասնաւոր կատաղի թշնամութիւն ուներ հայերի դեմ» (Լեո 669):

Առաջին աշխարհամարտի սկզբից Բաքվի նահանգի հայ երիտասարդության՝ զանգվածաբար բանակ գորակոչվելու պատճառով գյուղերում մնացել էին հիմնականում կանայք, ծերեր ու երեխաներ: Հայտնի է, որ ցարական կառավարությունը կովկասյան թաթարներին՝ ի որպես անբարեհույս տարր, չգորակոչեց գործող բանակ (Ավետիսյան, *Հայկական հարցը 1918 թ.* 157): Կովկասյան թաթարները, օգտվելով այդ հանգամանքից, ոգեշնչված թուրք էմիսարների հակահայ կոչերով, ավազակախմբեր կազմելով, սկսեցին հարձակումներ գործել, սպանել ու կողոպտել Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխիի, Արեշի, ինչպես նաև սահմանակից Բաքվի նահանգի Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների անպաշտպան մնացած հայկական գյուղերի անգն բնակչությանը: Թաթարական գյուղերի հրոսակախմբերը շուրջլայներ էին կազմակերպում և առանց սեռի ու տարիքի խտրականության սպանում ճանապարհորդ հայերին («Кавказское слово», 1918, 13 марта, № 57, Тифлис):

Տազնապալից էր իրավիճակը հատկապես Բաքու–Թիֆլիս երկաթգծում: Թաթարական լյտիացած ավազակախմբերը Սպանդար և Սուլեյման Էֆենդիների գլխավորությամբ Զյուրդամիր, Հաջիկաբուլ, Ուջար, Մյուսիսի և Աղստաֆա կայարաններում գնացքները բաց էին թողնում իրենց սեփական հայեցողությամբ, հաճախ կանգնեցնում էին դրանք և անարգել սպանում ու կողոպտում հայ ուղևորներին (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 223, ց. 1, գ. 58, թ. 2, 4-5; Գրիգորեանց, *Հաջիքարուլի սարսափներից*): Բաքու–Թիֆլիս երկաթգծի վերոհիշյալ կայարաններում տազնապ ներշնչող իրադարձությունների, մասնավորապես հայերի սպանությունների առիթով «Չանգ» լրագիրը փաստում էր, որ այն «Մուսավաթի» և «Իթթիհադի» կողմից նախօրոք ծրագրված և իրականացված քաղաքականություն էր: Թերթի «Դժոխային հորեր» առաջնորդողում տեղեկացվում էր, որ «Աղբբեշանի հանրապետութեան սահմաններում Ելիզավետիսո գիւղից ոչ հեռու (Աղստաֆա կայարանի մօտ), երևան են հանւած մօտ 20-ի չափ հորեր, որոնք լիքն են մարդկային դիակներով: Պարզուր է, որ գնացքներից հանւած մարդիկ, համարեա թէ բացառապէս հայեր, թալանւելուց յետոյ կենդանի նետուում են այդ հորերը» («Դժոխային հորեր»): Միայն Ուջար և Մյուսիսի կայարանների միջև ընկած տարածքում գնացքներում սպանվեց շուրջ 100 հայ (Մայիլեան, Գաւառի

¹ «Իթթիհադ» կուսակցությունը ստեղծվել է Բաքվի «Մահմեդականները Ռուսաստանում» և Գանձակի «Իսլամի միություն» կազմակերպությունների միավորմամբ: Կուսակցությունն առաջ էր քաշում Ռուսաստանի մահմեդականների շրջանում շարիաթի ներդրման գաղափարը: «Իթթիհադի» կարգախոսներից էր՝ «Մեզ պետք չէ այլ կուսակցություն՝ իսլամից բացի» (Swietochowski 88-89; Փաշայան 24): Գործել է մինչև 1920 թ. հոկտեմբերը («Խորհրդային Հայաստան», 1921 թ. նոյեմբերի 1, № 210, Երևան):

կեանք): Շամախու գավառում Զյուրղամիր և Աղսու կայարաններում, թաթար արյունարբու ոճրագործների հարձակումների հետևանքով ճանապարհներին, հատկապես գիշերները, հայկական գյուղերի մոտակայքում սպանվեց 63 հայ (Շամախեցի 6), որոնց մեջ մեծ թիվ էին կազմում գավառի Զարքանջ, Սաղիան, Զալախան, Ղաջար, Գյուրջաշեն և Մատրասա հայկական գյուղերի բնակիչները: Հակահայ գործողությունները դեկավարում էր «Մուսավաթի» և «Իթթիհադի» ուղղորդմամբ Գանձակում իր գործունեությունը սկսած «Մահմեդական հասարակական կոմիտեն» (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, g. 2, q. 94, թ. 96):

Կովկասյան թաթարների վայրագությունները տարածվեցին նաև ռազմաճակատից տուն վերադարձող ռուս զինվորների վրա: Այսպես, զենք ձեռք բերելու, իրենց գնդերը զինելու և թուրքերի առաջխաղացումն արագացնելու նպատակով Անդրկովկասյան կոմիտեի մահմեդական անդամների (Ֆաթալի-խան Խոյսկի, Ալասկյար-բեկ Խասամեդով, Խուդադատ-բեկ Մելիք Ալսանով), ինչպես նաև «Մուսավաթի» ու «Մուսուլմանական հասարակական կազմակերպությունների խորհրդի» գործադիր կոմիտեի (Ա. Չիաթխանով, Շ. Ռուստամբեկով, Ա. Սաֆիքյուրդսկի, Խ. Ռաֆիբեկով, Ն. Ուսուբբեկով, Ա. Խասամեդով, գևդ. Էֆենդին, ռոտմիստր Ուլուբին) ուղղորդմամբ «Վայրի դիվիզիայի» զինվորները, նրանց միացած կովկասյան թաթար հրոսակախմբերը 1918 թ. հունվարի 9-13-ը հարձակվում են տուն վերադարձող ռուսական զորամասերի վրա և Գանձակից ոչ հեռու գտնվող Շամախու կայարանում կոտորում ավելի քան 2000 ռուս զինվոր՝ խլելով նրանց զենքն ու զինամթերքը (Շահումյան 113-114; Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 223, g. 1, q. 117, թ. 2; Շեֆ 1927):

«Մուսավաթի» հաջորդ քայլը երիտթուրքերի «Իթթիհադ վե թերաքքը» («Միություն և Առաջադիմություն») կուսակցության ուղղորդմամբ իշխանությունը բռնազավթելու նպատակով Բաքվում հաստատված խորհրդային օրինական իշխանության դեմ 1918 թ. մարտի վերջերին բարձրացրած խռովությունն էր: Այսպես, Բաքվում 1917 թ. նոյեմբերի 2-ին (15) հաստատված (Շահումյան 28-30; Արզումանյան 433) խորհրդային իշխանությունը «Մուսավաթի» կողմից ընդունվեց մեծ դժկամությամբ (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, g. 2, q. 94, թ. 103): Նշենք, որ իշխանությունը բռնազավթելու գաղափարը երիտթուրքերի և «Մուսավաթի»՝ համաթուրքական խնամքով մշակված ծրագրերի մի մասն էր միայն կազմում: «Մուսավաթի» առաջնահերթ նպատակն էր անդրալթայան տափաստաններից խուժած թյուրք-օղուզական քոչվոր ցեղերի համար Արևելյան Այսրկովկասը «հայրենիք» դարձնելու միտումով Բաքվում տապալել խորհրդային իշխանությունը, գրավել քաղաքը և այն հռչակել որպես ապագայում ստեղծվելիք արհեստածին «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության» (Միսնյան 305; Ավետիսյան, *Հայկական հարցը 1918 թ.*) մայրաքաղաք: Ըստ Էուլթյան՝ մուսավաթականների կողմից Բաքվի գրավման դեպքում այն վերածվելու էր կովկասյան մահմեդականների՝ հակառուսական-հակահայկական ահաբեկչական պայքարի օջախի և կյանքի էր կոչվելու համաթյուրքական գաղափարախոսությունը: Ակներև է, որ այդ ծրագիրը պետք է իրականացվեր արևելահայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով, ուստի «Մուսավաթը» հետևում էր իթթիհադականների քաղաքական ուղղությանը՝ Կովկասի մահմեդականների մեջ քարոզելով համաթյուրքականության և համախլամականության գաղափարներ: Ըստ Էուլթյան՝ 1905-1906 թթ. թաթար-հայկական ընդհարումներից հետո երկրորդ փորձն էր ձեռնարկվում հայկական ջարդեր կազմակերպելու համար, մասնավորապես մեխանիզմների ընտրության, ճշգրտման, մշակման և կիրառման առումով: Վավերագրերը վկայում են, որ այդ օրերին սարդիչ գործողություններ կազմակերպելու, հայ և ռուս բնակչության դեմ ոճրագործություններ իրականացնելու գործում իր ակտիվ դերակատարությունն է ունեցել հատկապես Ղարաբաղի խանության հիմնադիր, քոչվոր ջլանշիր ցեղի սարըջալլու ճյուղի ցեղապետ, հայատյաց Փանահ Ալի խանի շառավիղ (Պեհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ պ. Միսաք Թորլաքեանի դատավարությունը անգլ. զինուորական ատենանիս առջեւ), Բաքվի հայերի 1918 թ. սեպտեմբերյան եղեռնագործության գլխավոր կազմա-

կերպիչներից մեկը՝ Բեիբուբ խան-Ջիվանշիրը¹, Դավիթ Անանուու բնորոշմամբ՝ «ծպտեալ պանխլամխոը» (Անանուն Բագուի շիրիմները (I); Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54):

Ստեղծված իրավիճակում Բաքվի Հայոց ազգային խորհուրդը (Նախագահ՝ ՀՀԴ անդամ Աբրահամ Գյուլխանդանյան) և ՀՀԴ Բաքվի Ոսկանապատի Կ.Կ.-ն անտարբեր չէին կարող լինել հայությանը սպառնացող վտանգի նկատմամբ: Ընդամին, հաշվի առնելով հայերի նկատմամբ «Մուսավաթի» բացահայտ թշնամական վերաբերմունքը, կանխազգայով, որ նրա հրահրմամբ կիրագործվեին հայերի նոր կոտորածներ՝ Հայոց ազգային խորհուրդը Գերագույն զինվորական մարմնի (Պաշտպանության հայկական շտաբ) հետ ձեռք առավ ինքնապաշտպանական միջոցներ (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 12-13): Շտաբը, որը ղեկավարում էին գեներալներ Իվան Բադրամյանը և Հակոբ Բագրատունին (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 2, գ. 105, թ. 3; ֆ. 275, ց. 6, գ. 2, թ. 43), փոխգնդապետ Հարությունյանին նշանակեց Բաքվի պաշտպանության պետ, շտաբի պետն էր շտաբս-կապիտան Սարգիս Մուսայեյանը (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 13-14; տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1441, ց. 1, գ. 20, թ. 2):

Չնայած Բաքվի Հայոց ազգային խորհրդի խաղաղասիրական ջանքերին ու զգուշացումներին՝ «Մուսավաթի» նեցուկը կազմող «Վայրի դիվիզիայի» շուրջ 25.000-անոց զորամիավորումը նրանց միացած շրջակա գյուղերից հավաքված մեծ թվով թաթար հրոսակախմբեր նախահարձակ եղան և գրոհեցին Բաքվի դեմ: Սակայն «Մուսավաթի»-ի ռազմական հեղաշրջման ճանապարհով Բաքվում իշխանությունը բոլշևիկներից զավթելու փորձը նպատակին չհասավ: Եռօրյա մարտերում (մարտի 18-ին (31)-20-ապրիլի 2)՝ խորհրդային իշխանությունը Բաքվի Հայոց ազգային խորհրդի և ՀՀԴ Բաքվի «Ոսկանապատի» ԿԿ-ի զինական ուժերի մեծագույն աջակցությամբ դուրս եկավ լիակատար հաղթանակով, իսկ մուսավաթականների պարագլուխները խուճապահար փախան Գանձակ, Ղուբա, Լենքորան և այլուր (Ստեփանյան, *Բաքու քաղաքի հայության պատմությունը* 341-359; Մելիքյան, *Պայքար Բաքվի համար*):

Բաքվում մուսավաթականների սանձազերծած խռովությունը և հակահայ սահմանադրություններն այդքանով չավարտվեցին: Հակաիշխանական խռովության ջախջախումից հետո մուսավաթական գործիչները, անցնելով գավառներ, խառնակիչ գործողությունների ծրագրով իրենց վրեժը հանում էին կովկասյան թաթար խաժամուժին քրիստոնյա, մասնավորապես հայ և ռուս բնակչության դեմ հրահրումներով ու սպանություններով: Այլ կերպ ասած՝ խռովության ճնշումից հետո վրեժխնդրությունը դարձավ նահանգի հայահոծ գավառների հայ բնակչության կոտորածներն արդարացնելու միջոց (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 105):

Պարտություն կրելով Բաքվում՝ «Մուսավաթը» տենդորեն նախապատրաստվեց հակահայ հետագա ոճրագործությունների կազմակերպմանը, որն ուղեկցվեց Օսմանյան բանակի՝ Այսրկովկաս արշավանքով: Թուրքական զորախմբերի՝ 1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի մարտերում ունեցած անհաջողություններից և Ղարաբաղի սայի (այժմ՝ Վանաձոր) գրավումից հետո նրա հիմնական խմբավորումը համաթուրքական դրոշով արշավեց Բաքու: Այդ արշավանքով Օսմանյան կայսրությունը ձգտում էր տիրանալ Բաքվի նավթին, ապա՝ անցնել Հյուսիսային Կովկաս, այնուհետև՝ Կենտրոնական Ասիա, որով պետք է իրականացվեր «Մեծ Թուրանի» ստեղծման երազանքը (Խատիսեան 86): Բաքվի դեմ արշավանքով երիտթուրքերը, ձեռնամուխ լինելով համաթուրքական գաղափարախոսության գլխավոր

¹ Բ. Ջիվանշիրը 1907 թվականից եղել է «Կովկասյան համամուսուլմանական «Դիֆայի»» կազմակերպության անդամ, 1918 թ. հուլիսի 17-ից՝ Ադրբեջանի ներքին գործոց նախարար, որն այդ նպատակով կազմել էր թաթարական զինված հրոսակախմբեր (Lucifer; Նիւթեր, փաստեր եւ յուշեր հայկական ողբերգութիւնից):

տեսաբաններից Չիյա Գոյբալիի առաջադրած համաթյուրքականության դոկտրինի¹ երկրորդ փուլի՝ համաօղուզական պետության² ծրագրի կենսագործմանը (Зареванд 92), դրա շրջանակում մշակել էին նաև մի հայտնի չափով ռազմաքաղաքական հայեցակարգ. Արևելյան Այսրկովկասի նվաճման գուզահեռ արհեստածին «Ադրբեջան» հորջորջումով «Արևելակովկասյան մուսուլմանական» կազմավորման ստեղծումը, որի հիմքի վրա Օսմանյան կայսրության կազմում պետք է կենսագործվեր Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում «Մեծ Ադրբեջան» նոր պետության ստեղծումը: Այն պետք է կամրջեր թուրքական պետությունը Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ³: Եվ այդ ծրագիրը պետք է իրականացվեր արևելահայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով:

Արհեստածին «Ադրբեջան» կազմավորման ստեղծման առաջին քայլը Թիֆլիսում թուրքերի ճշման տակ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, երիտթուրքերի և «Մուսավաթի» համաթյուրքական մշակված ծրագրով Կուրի ձախափնյակում մերձկասպյան տարածքում երբևէ գոյություն չունեցած արհեստածին «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության» հռչակումն էր⁴, որը Պարսկաստանի հյուսիսարևմտյան պատմական Ատրոպատենե-Ատրպատական Ադարբայ-

¹ Չիյա Գոյբալիի գաղափարախոսության պատմաբանասիրական բազմակողմանի քննության մասին տե՛ս Սաֆարյան, «Չիյա Գոյբալիի և «Թյուրքականության հիմունքները»:

² Օսմանյան կայսրության կազմում ստեղծվելիք համաօղուզական պետությունը պետք է ընդգրկեր Թուրքիան, Արևելյան Այսրկովկասը, Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներն ու պարսկական վաղեմի նահանգ Ազարբայջանը (Ատրպատական) (Խուրշուդյան 34):

³ Թուրք-մուսավաթականները ծրագրել էին բռնազավթումների քաղաքականությամբ, այսպես կոչված, «Մեծ Ադրբեջանի» մեջ ընդգրկել Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները, Երևանի նահանգի հարավային մասը, Վրաստանից՝ Թիֆլիսի նահանգի հարավային մասը և Դաղստանի հարավային մասի որոշ հատվածներ: Այսպիսով՝ Հայաստանից փորձ էր արվում խլելու բովանդակ Արցախն ու Չանգեզուրը, Երևանի նահանգից՝ Նախիջևանն ու Շաքուրը, Երևանի և Էջմիածնի գավառները և Մասիսի ստորոտներով ամբողջ Սուրմալուն՝ մինչև Կարսի նահանգը: Այլ կերպ ասած՝ Հայաստանից գավաթելու էր 50.520 քառ. կմ տարածք (Ռուբեն 183-184): Էնվեր փաշայի և «Կովկասի միավորված լեռնականների միության» ղեկավարներից Թափա (Աբդուլ Մեջիդ) Չերմուկի կազմած քարտեզի հիման վրա «Մեծ Ադրբեջան» պետության ընդհանուր տարածքը պետք է կազմեր 140.000 քառ. կմ (Փ. Ժ. Լա Շրեն 41-42): «Մեծ Ադրբեջանի» քարտեզը ժամանակին տպագրվել է թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումից հետո՝ 1918 թ. սեպտեմբերի 22-ին, Ստամբուլում լույս տեսնող կառավարական «Ենի գյուն» («Նոր օր») պաշտոնաթերթում: Համաթյուրքականության ոգով կազմված այս քարտեզում, փոխելով Այսրկովկասի Էթնոժողովրդագրական պատկերը, Հայաստանն իսպառ բացակայում է, իսկ հայ բնակչության տեղաբաշխումը ներկայացված էր միայն մի քանի կղզյակների տեսքով: Հակառակ դրան՝ «Մեծ Ադրբեջանը» պատկերված է որպես Կովկասի լայնատարած մի պետություն («Հորիզոն», 1918թ. հոկտեմբերի 30, № 222, Թիֆլիս; Խուրիյան 37-38): «Մեծ Ադրբեջանի» մեկ այլ քարտեզ հրատարակվել է ԱՂՀ ինսամատարարության նախարարության կողմից 1920 թ. հրատարակված «Адресь-календарь Азербайджанской Республики на 1920-й г., на тюркским и русским языкам (1-ой год издания), под редакцией А. И. Ставровского, Баку, 1920»-ում (տարեգրքի վերջում առդիր): Հայաստանի պատմական տարածքների հաշվին «Մեծ Ադրբեջանի» ստեղծման առաջին քայլերից էր քեմալա-բոլշևիկյան դաշինքի պայմաններում 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով և նույն թվականի հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի անօրեն որոշմամբ ի բնե հայկական Նախիջևանն ու Արցախը Ադր. ԽՍՀ-ին բռնակցելը:

⁴ Այն, որ Այսրկովկասի քաղաքական քարտեզում տեղ փնտրող նորագոյացությունը հայտնի էր նաև «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն» անունով, փաստում է 1918 թ. հունիսի 15-ին ռազմական գործիչ, օբեր-լեյտենանտ Չերիբերտ ֆոն Լարիշի՝ Բեռլին հղած զեկուցագիրը, որում ասվում էր. «Թուրքերը բացահայտորեն ցանկանում են Հյուսիսային Կովկասը, ներառյալ Դաղստանը միացնել Արևելակովկասյան մուսուլմանական Հանրապետությանը, որն այստեղ կոչում են Ադրբեջան» (Ավետիսյան, *Հայկական հարցը 1918 թ.* 285):

գան (նոր պարսկերեն)-Ազարբայջան (արաբերեն) նահանգի անունով թյուրքական տարբերակով հորջորջվեց «Ազերբայջան»¹:

Թուրքական արշավանքը Բաքու և հայերի կոտորածները

Բաքվի պաշտպանությունը, որն առանձնահատուկ տեղ է գրավում Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների մեջ, ուներ վճռորոշ նշանակություն ոչ միայն Գանձակ-Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների հայության,

¹ Արևելյան Այսրկովկասում երբևէ գոյություն չի ունեցել «Ադրբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: Բանասեր, պատմաբան, պրոֆ. Արտ. Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ «Ատրբեջան եւ ատրբեջանցի անունով երկիր ու ժողովուրդ գոյութիւն չունէին պատերազմից (իմա՝ Առաջին աշխարհամարտից – Գ. Ս.) առաջ: ...Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն «Արեւելեան Անդրկովկաս», «Բագուի, Գանձակի նահանգներ» եւ այլն՝ փոխարինելով նույնանուն խանութիւններին՝ պարսկական տիրապետութեան տակ: Այդ երկրամասի մեծամասնութիւնը կազմող ցեղն էլ հին վիճակագրութիւններում թաթար եւ կամ պարզապէս մահմեդական յորջորջումով էր յայտնի» (Աբեղյան 135): 1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը (Նախագահ՝ Մ. Է. Ռասուլզադէ) երիտթուրքերի մտահղացմամբ և օժանդակությամբ մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց նոր «պետության» ստեղծումը՝ նպատակ ունենալով նույն անվան միջոցով հավակնել Պարսկաստանի հյուսիսարևմտյան վաղեմի նահանգ Ազարբայջանին (Ատրպատական), այն թյուրքացված տարբերակով հորջորջվեց «Ազերբայջանի Դեմոկրատական Հանրապետություն» (Swietochowski 129): Արիեստաժին «Ադրբեջան» կազմավորումն ինքնին սպառնալից էր նշանակում Պարսկաստանի տարածքային ամբողջականության համար: Այդ անվան կիրառումը հետապնդում էր հետևյալ հեռահար նպատակը՝ տարածքային հավակնություններով նորաստեղծ կազմավորմանը բռնակցել նաև Պարսկական Ազարբայջան (Ատրպատական) նահանգը և իրականացնել «Մեծ Ադրբեջանի» ստեղծման համաթյուրքական ծրագիրը: Ականավոր պատմաբան-արևելագետ, ակադեմիկոս Վասիլի Բարթոլոյը 1924 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ադրբեջանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում մերձկասպյան մարզերի և Աղվանքի ընդհանուր պատմության մասին կարդացած 5-րդ դասախոսության մեջ այս առիթով նշել է. «Ադրբեջան տերմինը ընտրվել է այն պատճառով, որ, երբ հաստատվեց Ադրբեջանի Հանրապետությունը, ենթադրվում էր, թե պարսկական և այդ Ադրբեջանը կկազմեն մեկ ամբողջություն... այս հիմքի վրա ընդունվեց Ադրբեջան անվանումը...» (Бартольд 703). Հենց այս պատճառով էլ պարսից կառավարությունը 1918 թ. օգոստոսի 28-ին Ստամբուլում պարսկական դեսպանատան միջոցով բողոքի նոտա է ներկայացրել Օսմանյան կառավարության արտաքին գործոց նախարարությանը, որում ասվում էր. «Արտաքին գործերի հարգելի նախարարություն. ռուս-օսմանյան հաշտության պայմանագրի արդյունքում Կովկասում տեղի է ունենում «Ազարբայջան» անունով պետության ձևավորումը: Հաշվի առնելով, որ Թավրիզ կենտրոնով Պարսկաստան պետության սահմաններում կա նման անունով նահանգ, և որ պատմության մեջ երբեք չի եղել նման անունով պետություն, Պարսկաստանն ապշած է և անհրաժեշտություն է տեսնում վերանայելու այս որոշումը» (<https://www.live24.am/66443>. Մուտք՝ 10.22.2020:

Արիեստաժին այդ կազմավորումն իր հուշերում առավել ցայտուն է բնութագրել 1918 թ. աշնանից հակաբոլշևիկյան Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Անտոն Դենիկինը. «Ադրբեջանական Հանրապետությունում ամեն ինչ արիեստական էր, «ոչ իսկական»՝ սկսած անվանումից, որը վերցված էր Պարսկաստանի մի նահանգից, արիեստական տարածք, որն ընդգրկում էր Լեզգիական Չաքաթայան, Բաքվի և Ելիզավետպոլի հայ-թաթարական նահանգները և ռուսական Մուղանը, ու միավորված թուրքական քաղաքականությամբ՝ որպես պանթուրքիզմի հենակետ Կովկասում... Արիեստական պետականություն, քանի որ ժողովուրդների մեծ վերաբնակեցման ճանապարհին ընկած այդ հողերում միշտ բնակվում էին միմյանց հաջորդող նվաճողների բազմազան մշակույթների ներգործությանը ենթարկված մանր ցեղեր...: Վերջապես, արիեստական էր պահվում նաև արբեջանական կառավարությունը՝ սկզբնապես Նուրի փաշայի կամքով, այնուհետև՝ գեներալ Թոմսոնի, հետագայում՝ ուղղակի ինտրոյակով» (Деникинъ 164): (Մանրամասն տե՛ս Էնսեթոլլահ Ռեզա; Ասատրյան և Գևորգյան 1990; Galichian 2010):

այլև նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի համար: Նրա կազմակերպիչներից մեկը՝ գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին, իրավա-ցիորեն նկատել է. «Բաքվի ինքնապաշտպանությունը հատկապես բացառիկ է հայության գոյության համար: Ինձ համար այլևս պարզ էր, որ գրավելով Բաքուն (հայի համար իրենց բոլոր հետևանքներով)՝ թուրքերը հետևողականորեն կանդ-րադառնան բնաջնջումից զերծ մնացած հայկական վերջին շրջաններին՝ Ղարաբաղին և Երևանին, որ կնշանակեր մեր ժողովրդի ֆիզիկական կործանում, լրիվ վերացում...» (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 49, 53): Ուս-տի երիտթուրքերը բացեիբաց հայտարարում էին, թե «Հայաստանի խնդրի վերջ-նական լուծումը կախած է Բագուից, երբ կը գրավենք Բագուն, կը լուծենք եւ Հա-յաստանի հարցը...» (Գիլխանդանեան 27): Այդ իսկ պատճառով էլ Բաքվի Հայոց ազգային խորհուրդն ու ՀՀԴ Բաքվի Ոսկանապատի Կ.Կոմիտեն հրաժարվեցին կա-տարել Հայաստանի Հանրապետությանը պարտադրված Բաթումի պայմանագրի (1918 թ. հունիսի 4) 11-րդ հոդվածի պարտավորությունը, որով «Բաքու քաղաքից անհապաղ դուրս պետք է բերվեին հայկական բոլոր զորամասերը»՝ Բաքվի Կոմունայի պաշտպանների հիմնական կորիզը (Վրացեան 337; Ահարոնեան 111):

Այն իրողությունը, որ Բաքվի դեմ արշավանքով երիտթուրք-մուսավաթականների կողմից նախօրոք ծրագրված էր Բաքվի քրիստոնյա ազգաբնակչության և հատկապես հայերի ջարդը, վկայում է Գանձակից մուսավաթական Ադրբեջանի ներքին գործոց նա-խարար Բեհբուդ խան-Ջիվանշիրի՝ 1918 թ. հուլիսի վերջերին «Մուսավաթի» Բաքվի կոմիտեին հղած գաղտնի նամակը, որում, մասնավորապես, ասվում էր. «...Երբ քաղա-քը գրավենք, պիտի զատենք հայ մտաւորականները եւ պիտի ջարդենք բոլոր հայերը» (Պեհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը): Հարկավ, այս փաստով ցուցահանվում է մուսավաթականների՝ հայասպան անսքող քաղաքականու-թյունը: Հետևաբար նամակում հայ մտավորականության ոչնչացման սպառնալիքի առկայությունը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու այն իրողությունը, որ Բաքվում հայերի ցեղասպանությունը կազմակերպվել և իրականացվել է երիտթուրքերի ոճրա-գործ նույն օրինակով՝ այնպես, ինչպես Արևմտահայերի ցեղասպանության ժամանակ ոչնչացվում էր հայ մտավորականությանը: Հարկ է նշել, որ Բաքվի նահանգի հայերի կոտորածների քաղաքականությունը նախապես ծրագրված էր երիտթուրքական և մուսավաթական կառավարությունների կողմից, որը խարսխված էր Օսմանյան կայս-րության ցեղասպան քաղաքականության վրա: Առկա են բազմաթիվ հեռագրեր, հրա-հանգներ, առանձին կարգադրություններ՝ առաքված մուսավաթական կառավարու-թյան կողմից, որոնք լիովին բացահայտում են հայերի կոտորածների առնչությամբ նա-խօրոք կազմված ծրագրերը: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Բաքվի հայե-րի սեպտեմբերյան կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մեկին՝ Բ. խան-Ջի-վանշիրին վնասագերծող հայ վրիժառու Միսաք Թորլաքեանի՝ Կ.Պոլսում 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի սկզբներին անգլիական ռազմական դատարանի (նախա-գահ՝ մայոր Ֆրիսբի)¹ կողմից անցկացված դատավարության ժամանակ Բաքվի 1918 թ. հերոսամարտի մասնակից, ՀՀԴ անդամ Գրիգոր Ամիրյանը հրապարակեց կոտո-րածներից առաջ Բ. խան Ջիվանշիրի կողմից Նուխիի, Արեշի, Շամախու և Բաքվի քաղաքապետերին տրված ծածկագիր-հեռագիրը: Այստեղ հանցավոր կերպով հրա-հանգվում էր. «Սրբազան պատերազմ մըն է այս, մղուած՝ միացնելու համար բոլոր թուրք ցեղերը: Այս ի կատար ածելու համար անհրաժեշտ է, որ նախ հայ ցեղը բնա-ջնջուի: Հայերը խոչընդոտ կը հանդիսանան մեր քաղաքական ճամբուն վրայ, որ ուղ-ղած է դէպի Հնդկաստան: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակներու վրայէն անցնելով մեր նպատակներուն հասնելու համար: Մի՛ ինայեք ոչ ոքի եւ հավատարմօ-

¹ Կ.Պոլսում կայացած դատավարության ժամանակ անգլիական պատերազմական ատյանը Մ. Թորլաքեանին ճանաչել է մեղավոր, սակայն ազատ է արձակել «մտախանգար-ման» պատճառով (Վարժապետեան 123-130; Թորլաքեան 524-525):

րեն կատարեցէք ձեզի տրուած հրահանգները» (Պեհպուտ խան ճիվանչիի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Չինուորական ատենանիս առջեւ 141-142; ԱԼՕ 84-85):

Բաքվի դէմ թուրքական արշավանքի ընթացքում հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման և բռնի տեղահանման հանցավոր քաղաքականությունն ընթանում էր երկրամասի ողջ տարածքով մեկ՝ ներառելով ինչպէս Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Կուրի ձախսափնայակում գտնվող Նուխիի և Արեշի հայահոծ գավառները, այնպէս էլ Բաքվի նահանգի Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի¹, որի հետևանքով զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45; ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45; ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 46; ֆ. 27, ց. 1, գ. 338, թ. 59; Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը* էջ 23-28):

Օգտագործված գրականություն

1. Ահարոնեան, Գերսամ. *Մեծ երազի ճամբուն վրայ... (ակնարկ հայկական հարցի պատմության վրայ)*. Լոս Անճելըս, 1986:
2. Ասատրյան, Գառնիկ և Նիկոլայ Գևորգյան. *Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը*. Երևան, 1990:
3. Ավետիսյան, Հրանտ. *Հայկական հարցը 1918թ.*. Երևան, 1997:
4. ԱԼՕ. *Միսաք Թորլաքեան (Յեղափոխական ալպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեն)*. Դ շարք, թիւ 1-4, Պէյրուֆ, 1970:
5. Արզումանյան, Սակիչ. *Ստեփան Շահումյան*. Երևան, 1978:
6. Գիւլխանդանեան, Աբրահամ. *Բագուն Հայաստանի անկախութեան եւ նորա պահպանման տեսակետից (Մայիս 28. 1918-1938 քսանամեակ)*. Փարիզ, 1938:
7. Էնաեթովահ, Ռեզա. *Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա)*. Երևան, 1994:
8. Թոռլաքեան, Միսաք. *Օրերուս հետ*. Գ հրատ., Պէյրուֆ, 2001:
9. Լեո. *Անցյալից. Հուշեր, թղթեր, դատումներ*. Թիֆլիս, 1925:
10. Խատիսեան, Ալեքսանդր. *Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը*. Բէյրուֆ, 1968:
11. Խուրշուդյան, Լենորուշ. *Հայկական հարցը (բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը)*. Երևան, 1995:
12. Կնյազյան, Դավիթ. *Ադրբեջանական Ղեմուրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ.*. Երևան, 2008:
13. Մելիքյան, Վահան. *Պայքար Բաքվի համար*. Երևան, 2008:
14. Յակոբեան, Յովհաննես. *Թիւրքիա Գերման ճանկերուն մէջ*. Թիֆլիս, 1918:
15. Շահումյան, Ստեփան. *ԵԼԺ (1917 հոկտեմբեր-1918 մայիս)*. հ. 4, Երևան, 1978:
16. Շամախեցի (Բարդամյան, Հարություն). *Թրքասիրութի՛նս, թԷ՛ թրքամուրութի՛նս: Ընդդիմախօսական Եղիշէ ա.-ք. Գեղամեանի «Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը գրքի առթիւ»*. Թիֆլիս, 1920:
17. *Պեհպուտ խան ճիվանչիի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Չինուորական ատենանիս առջեւ*. Աթէնք, 1936:
18. Ռուբէն. *Հայ յեղափոխականի մը յիշատակները*. հ. Է, Թեհրան, 1982:
19. Սարգսյան, Երվանդ. *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1918 թ.*. Երևան, 1964:

¹ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքվի գավառում (ներառյալ Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասը) հայ բնակչության թիվը 77.198 էր, Շամախիի գավառում՝ 22.350, Գյոքչայի գավառում՝ 17.20713, Ղուբայի գավառում՝ 14.713, Նուխիի գավառում՝ 17.751, Արեշի գավառում՝ 19.161 (Кавказский календарь 179, 181, 183, 185, 191, 195):

20. Սաֆարյան, Ալեքսանդր. *Հիյա Գոյթալիը և «Թյուրքականության հիմունքները*. Երևան, 2012:
21. Սիմոնյան, Հրաչիկ. *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*. Երևան, 1990:
22. Ստեփանյան, Գևորգ. *Բարու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)*. Երևան, 2011:
23. Վրացեան, Սիմոն. *Կեանքի ուղիներով (Դէպքեր, դէմքեր, ապրումներ)*. հ. 2, Պէյրուս, 1967:
24. Փաշայան, Արարս. *Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան*. Երևան, 2014:
25. Galichian, Ruden. *The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, Revised and Expanded Edition)*. London/Yerevan, 2010.
26. Swietochowski, Tadeusz. *Russian Azerbaijan, 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community*. Cambridge, 1985.
27. *Адресь-календарь Азербайджанской Республики на 1920-й г., на тюркским и рускомъ языкахъ (1-ой год издания)*. под редакцией А. И. Ставровского, Баку, 1920.
28. Бартольд, Василий. *Место прикаспийских областей в истории мусульманского мира*. Сочинение, т. II, ч. I, Москва, 1963.
29. Деникинъ, Антон. *Очерки русской смуты, т. 4. Вооруженныя силы Юга России*. Берлинъ, 1925.
30. Дубинский-Мухадзе, Илья. *Шаумян*. Москва, 1968.
31. Зареванд (Налбандян, Завен). *Турция и пантюранизм*. Париж, 1930.
32. Сваранц, Александр. *Пантюркизм в геостратегии Турции на Кавказе*. Москва, 2002.
33. Семен, Сеф. *Правда о Шамхоре 7-12 января 1918 г., По неизданным архивным материалам Музея Революции ССР Грузии*. Акц. О-во Заккнига, Тифлис, 1927.
34. Ավետիսյան, Հրանտ. «Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918 թ.»։ «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1991, էջ 43-64:
35. Խուղիկյան, Գևորգ. «Մի ուշագրավ քարտեզ»։ *Երևանի համալսարան*, № 3, 1989, էջ 37-38:
36. Ստեփանյան, Գևորգ. «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.»։ *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր*, հ. 5, 2002, էջ 23-28:
37. Վարժապետեան, Գաբրիել. «Միսաք Թորլաքեանի դատաւարութիւնը Պոլսոյ մէջ 1921-ին»։ *Ամենուկ Տարեգիրքը*, խմբ.՝ Գեորգեան Կարո, Թ տարի, Պէյրուս, 1962, էջ 123-130:
38. Саркисов, Ерванд. "Борьба народов Закавказья против турецких оккупантов в 1918 году". *Արևելագիտական ժողովածու*, № 1, 1960, стр. 190-242:
39. Nəcəfov, Etibar. "Azərbaycan Milli Azadlıq Hərəkatının Xüsusiyyətləri". *Elmi Jurnal Azərbaycan Bu Gün və Sabah*, № 5, 2007, s. 29-38.
40. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 27, ց. 1, գ. 338, թ. 59:
41. --- ֆ. 223, ց. 1, գ. 58, թ. 2, 4-5:
42. --- ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45, գ. 117, թ. 2:
43. --- ֆ. 275, ց. 6, գ. 2, թ. 43:
44. --- ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45, 46:
45. --- ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54:
46. --- ֆ. 1267, ց. 1, գ. 29, թ. 3, գ. 26, թ. 21:
47. --- ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 12-14, 49, 53, 96, 103, 105:
48. --- ֆ. 1267, ց. 2, գ. 105, թ. 3:

49. --- Ֆ. 1441, ց. 1, գ. 20, թ. 2:

50. --- Ֆ. 4049, ց. 1, գ. 2, թ. 4:

51. Արեղեան, Արտաշես. «Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ)». *Հայրենիք*, 2 տարի, 1928թ. մայիս, № 7 (67), Բոստոն, էջ 132-144:

52. Գրիգորեանց, Սարգիս. «Հաջիքարուլի սարսափներից». *Մեր-օրեր*, 1918թ. դեկտեմբերի 5-23, № 1, Բազու:

53. Դավիթ Անանուն. «Բագուի շիրիմները (I)». *Սշակ*, 1919թ. մարտի 29, № 69, Թիֆլիս:

54. «Դժոխային հորեր». *Չանգ*, 1918թ. դեկտեմբերի 5, № 76, Երևան:

55. «Հորիզոն». 1918թ. հոկտեմբերի 30, № 222, Թիֆլիս:

56. «Պեհալուտ խան ճիվանշիրի սպանիչ պ. Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգլ. զինուորական աստեանիս առջեւ». *Ճակատամարտ*, 1921թ. սեպտեմբերի 29, № 872, Կ. Պոլիս:

57. Lucifer, B.. «Նիւթեր, փաստեր եւ յուշեր հայկական ողբերգութիւնից». *Մեր-օրեր*, 1918թ. դեկտեմբերի 5-23, № 1, Բազու:

58. «Кавказское слово». 1918, 13 марта, № 57, Тифлис.

59. «Իրանի 1918 թ. բողոք-սամակը՝ Կովկասում «Աղբրեջան» անվամբ կեղծ պետություն ստեղծելու կապակցությամբ. ՓԱՍՏԱԹՈՒԴԹ». *Live 24*, <https://www.live24.am/66443>. Մուտք՝ 10.22.2020:

WORKS CITED

1. *Adres#-kalendar' Azerbajdzhanskoj Respubliki na 1920-j g., na tjurkskim' i russkom' jazykah' (1-oj god izdanija)*. pod redakciej A. I. Stavrovskogo, Baku. [Address-calendar of the Republic of Azerbaijan for 1920, in Turkish and Russian languages (1st year of publication). edited by A. I. Stavrovsky, Baku] 1920. (In Russian)
2. Aharonean, Gersam. *Met's erazi twambun vray... (aknark haykakan hartsı patmut'ean vray)*. Los Anjele's. [On the Road to a Big Dream... (Overview of the History of the Armenian Question). Los Angeles] 1986. (In Armenian)
3. Arzumanyan, Makich. *Stepan Shahumyan*, Erevan. [Stepan Shahumyan. Yerevan] 1978. (In Armenian)
4. Asatryan, Gar'nik ev Nikolay Gevorgyan. *Adrbejan. yuratsman skzbunqy' ev iranakan ashkharhy'*. Erevan. [Azerbaijan. The Principle of Appropriation and the Iranian World. Yerevan] 1990. (In Armenian)
5. Avetisyan, Hrant. *Haykakan hartsy' 1918 t'.* Erevan. [Armenian Issue in 1918. Yerevan] 1997. (In Armenian)
6. Awo'. *Misaq T'orlaqean (Yeghap'okhakan alpom: Azatagrakan payqarı yushamatean)*. D sharq, t'iw 1-4, Pe'yurut'. [Misak Torlakian (Revolutionary album. Commemorative Book of the Liberation Struggle). 4 series, No. 1-4, Beirut] 1970. (In Armenian)
7. Bartol'd, Vasili. *Mesto prikaspijskih oblastej v istorii musul'manskogo mira*. Sochinenie, t. II, ch. I, Moskva. [The place of the Caspian regions in the history of the Muslim world. Composition, vol. II, p. I, Moscow] 1963. (In Russian)
8. Denikin#, Anton. *Ocherki russkoj smuty, t. 4. Vooruzhennyja sily Juga Rosii*. Berlin. [Essays on Russian Troubles, v. 4. Armed Forces of the South of Russia. Berlin] 1925. (In Russian)
9. Dubinskij-Muhadze, Il'ja. *Shaumjan*. Moskva. [Shahumyan. Moscow] 1968. (In Russian)
10. E'naet'ollah, R'e'za. *Azarbayjan ew Ar'an (Kovkasean Albania)*. Erevan. [Azerbaijan and Aran (Caucasian Albania). Yerevan] 1994. (In Armenian)

11. Galichian, Ruden. *The Invention of History. Azerbaijan, Armenia and the Shu-casing of Imagination (Second, Revised and Expanded Edition)*. London/Yerevan, 2010.
12. Giulkhandanean, Abraham. *Bagun Hayastani ankakhut'ean ew nora pahpanman tesake'tits (Mayis 28. 1918-1938 qsanameak)*. Pariz. [Baku from the Perspective of Armenia's Independence and Preservation (May 28, 1918-1938). Paris] 1938. (In Armenian)
13. Khatisean, Aleqsandr. *Hayastani Hanrapetut'ean t'sagumn u zargatsumy'. Be'yurut'. [Origin and development of the Republic of Armenia. Beirut] 1968. (In Armenian)*
14. Kourshudyán, Lendrush. *Haykakan hartsy (bovandakutyuny, tsagumy, patmutyan himnakan pulery)*. Erevan. [Armenian Issue (Content, Origin, Main Stages of History). Yerevan] 1995. (In Armenian)
15. Knyazyan, Davit'. *Adrbejanakan Demokratakan Hanrapetut'yan kovkasyan qaghaqakanut'yuny' 1918-1920 t't'.* Erevan. [The Caucasian Politics of the Democratic Republic of Azerbaijan in 1918-1920. Yerevan] 2008. (In Armenian)
16. Leo. *Antsyalyts. Husher, t'ght'er, datumner*. T'iflis. [From the Past. Memories, Papers, Judgments. Tiflis] 1925. (In Armenian)
17. Meliqyan, Vahan. *Payqar Baqvi hamar*. Erevan. [Struggle for Baku. Yerevan] 2008. (In Armenian)
18. P'ashayan, Araqs. *Islamn Adrbejanum. antsyaly' ev nerkan*. Erevan. [Islam in Azerbaijan: Past and Present. Yerevan] 2014. (In Armenian)
19. *Pe'hput xan Jivanshiri spanich Misaq T'orlaqeani datavarut'iwny' ang. Zinworakan ateanin ar'jew. At'e'nq.* [The trial of Jivanshir's assassin Mr. Misak Torlakian in front of the British military court. Athens] 1936. (In Armenian)
20. R'ube'n. *Hay yeghap'oxakani my' yishatakneri'*. h. E', T'e'hran. [Memoirs of an Armenian Revolutionary. Vol. 7, Tehran] 1982. (In Armenian)
21. Safaryan, Alegsandr. *Ziya Goyqalpy ev «Tyurqakanutyan himunqneri'»*. Erevan. [Ziya Goykalp and "Fundamentals of Turkism". Yerevan] 2012. (In Armenian)
22. Sargsyan, Ervand. *T'urqian ev nra nvatchoghakan qaghaqakanut'yuny' Andrkovkasum 1918t'.* Erevan. [Turkey and its Conquest Policy in Transcaucasia in 1918. Yerevan] 1964. (In Armenian)
23. Semen, Sef. *Prawda o Shamkhore 7-12 yanvary 1918 g., Po neizdannym arkhivnym materialam Muzeya Pevolyucii CCP Gruzii. Akc. O-vo Zakkniga, T'iflis.* [The Truth about Shamkhor January 7-12, 1918, Based on unpublished archival materials of the Museum of the Revolution of the SSR of Georgia. Joint-stock company Zakkniga, Tiflis] 1927. (In Russian)
24. Shahumyan, Step'an. *ELJh, h. 4 (1917 hoktember-1918 mayis)*. Erevan. [CCW, vol. 4 (1917 October-1918 May). Yerevan] 1978. (In Armenian)
25. Shamakheci (Barghamyan, Harut'yun). *T'rqasirut'i'wn, t'e' t'rqamolut'iwn: Y'nddimaxo'sakan Eghishe' a.-q. Geghameani «Tatwikneri' Kovkasum ew Ba-gui ankumy'e grqi ar't'iw»*. T'iflis. [Loving Turkey or Obsessed with Turkey (On the Occasion of Opposition speaker Yeghishe A. Geghamian's book "The Grandchildren in the Caucasus and the Fall of Bagu"). T'iflis] 1920. (In Armenian)
26. Simonyan, Hrachik. *T'urq-haykakan haraberut'yunneri patmut'yuniys*. Erevan. [From the History of Turkish-Armenian Relations. Yerevan] 1990. (In Armenian)
27. Step'anyan, Gevorg. *Baqu qaghaqi hayut'yan patmut'yuny' (patmajhoghovrdagrakan usumnasirut'yun)*. Erevan. [History of the Armenians of Baku (Historical-Demographic Study). Yerevan] 2011. (In Armenian)
28. Svarants, Aleksandr. *Pantjurkizm v geostrategii Turcii na Kavkaze*. Moskva. [Pan-Turkism in Turkey's geostrategy in the Caucasus. Moscow] 2002. (In Russian)
29. Swietochuski, Tadeusz. *Russian Azerbaijan, 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community*. Cambridge, 1985.

30. Torlaqean, Misak. *O'rerus het. G hrat., Pe'yrut'*. [Along with my Days. G Edition, Beirut] 2001. (In Armenian)
31. Vratsean, Simon. *Keanqi ughinerov (De'pquer, de'mqer, aprumner)*. h. Z, Pe'yrut'. [Through the Ways of Life (Events, Faces, Experiences). Vol. 6, Beirut] 1967. (In Armenian)
32. Yakobean, Yovhannes. *T'iwrqia German twankerun me'*. T'iflis. [Turkey in German Clutches. Tiflis] 1918. (In Armenian)
33. Zarevand [Nalbandjan, Zaven]. *Turcija i panturanizm*. Parizh. [Turkey and Pan-Turanism. Paris] 1930. (In Russian)
34. Avetisyan, Hrant. «Eritasard t'urqeri ev Musavat'i hamat'urqakan gorts'akcut'yuny' ev hakahaykakan vochragorts'ut'yunnery' 1918 t'». *Patma-banasirakan handes*, № 1, ej 43-64. ["Young Turks & Musavat All-Turkish Partnership and Anti-Armenian Crimes 1918". *Historical-Philological Journal*, № 1, pp. 43-64] 1991. (In Armenian)
35. Khudinyan, Gevorg. «Mi ushagrav qartez». *Erevani hamalsaran*, № 3, e'j 37-38. ["A Remarkable Map". *Yerevan University*, № 3, pp. 37-38] 1989. (In Armenian)
36. Nəcəfov, Etibar. «Azərbaycan Milli Azadlıq Hərəkatının Xüsusiyyətləri». *Elmi Jurnal Azərbaycan Bu Gün və Sabah*. № 5, s. 29-38. ["Features of the Azerbaijan National Freedom Movement". *Scientific Journal Azerbaijan today and tomorrow*, № 5, pp. 29-38] 2007. (In Azerbaijani)
37. Sarkisov, Ervand. «Bor'ba narodov Zakavkaz'ja protiv tureckih okkupantov v 1918 godu». *Arevelagitakan jhoghovac'u*, № 1, e'j 190-242. ["The Struggle of the Peoples of Transcaucasia Against Turkish Occupants in 1918". *Journal of Oriental studies*, № 1, pp. 190-242] 1960. (In Russian)
38. Step'anyan, Gevorg. «Hayeri kotorats'nern u inqnapashtpanakan martery' Nukhi ev Aresh gavar'nerum 1918-1920 t't'». *Hayots tseghaspanut'yan patmut'yan ev patmagrut'yan hartser*, h. 5, pp. 23-28. ["Armenian massacres and self-defense battles in the provinces of Nukhi and Aresh in 1918-1920". *Issues of the History and Historiography of the Armenian Genocide*, Vol. 5, pp. 23-28] 2002. (In Armenian)
39. Varjhapetean, Gabriel. «Misaq T'orlaqeani datawarut'iwny' Polsoy me'j 1921 in». *Amenun Taregirqy'*, khmb. Ge'orgean, Karo', T' tari, pp 123-130. ["Misak Torlakian's trial in Istanbul in 1921". The Yearbook of All, Ed.: Kevorkian, Garo, Year 9, pp. 123-130] 1962. (In Armenian)
40. Hayastani azgayin arkhiv, f. 27, c. 1, g. 338, t'. 59. [Armenian National Archive, f. 27, l. 1, c. 338, p. 59]. (In Armenian)
41. ---. f. 223, c. 1, g. 36, t'. 45. [f. 223, l. 1, c. 36, p. 45]. (In Armenian)
42. ---. f. 223, c. 1, g. 58, t'. 2, 4-5. [f. 223, l. 1, c. 58, p. 2, 4-5]. (In Armenian)
43. ---. f. 275, c. 6, g. 2, t'. 43. [f. 275, l. 6, c. 2, p. 43]. (In Armenian)
44. ---. f. 278, c. 1, g. 8, t'. 45, 46. [f. 278, l. 1, c. 8, p. 45, 46]. (In Armenian)
45. ---. f. 1022, c. 7, g. 96, t'. 54. [f. 1022, l. 7, c. 96, p. 54]. (In Armenian)
46. ---. f. 1267, c. 1, g. 29, t'. 3, g. 26, t'. 21. [f. 1267, l. 1, c. 29, p. 3, c. 26, p. 21]. (In Armenian)
47. ---. f. 1267, c. 2, g. 94, t'. 12-14, 49, 53, 96, 103, 105. [f. 1267, l. 2, c. 94, p. 12-14, 49, 53, 96, 103, 105]. (In Armenian)
48. ---. f. 1267, c. 2, g. 105, t'. 3. [f. 1267, l. 2, c. 105, p. 3]. (In Armenian)
49. ---. f. 1441, c. 1, g. 20, t'. 2. [f. 1441, l. 1, c. 20, p. 2]. (In Armenian)
50. ---. f. 4049, c. 1, g. 2, t'. 4. [f. 4049, l. 1, c. 2, p. 4]. (In Armenian)
51. Abeghean, Artashes. «Menq ew mer harewannery' (azgayin qaghaqakanu-t'ean khndirner)». *Hayreniq*, Z tari, 1928t'. mayis, № 7 (67), Boston, e'j 132-144 ["We and Our Neighbors (Problems of National politics)". *Homeland*, Year 6, 1928 May, № 7 (67), Boston, pp. 132-144]. (In Armenian)

52. Davit' Ananun. «Bagui shirimnery' (I)». *Mshak*, 1919t'. marti 29, № 69, T'iflis. ["Graves of Baku (I)"]. *Mshak*, 1919 March 29, № 69, Tiflis]. (In Armenian)
53. «Dzhoxayin horer». *Zang*, 1918t'. dektemberi 5, № 76, Erevan. ["Hell Wells"]. *Zang*, 1918 December 5, № 76, Yerevan]. (In Armenian)
54. Grigoreanc, Sargis. «Hajiqabuli sarsap'nerits». *Mer-o'rer*, 1918t'. dektemberi 5-23, № 1, Bagu. ["From the horrors of Hajikabul"]. *Our-days*, 1918 December 5-23, № 1, Baku]. (In Armenian)
55. «Horizon». 1918t'. hoktemberi 30, № 222, T'iflis. ["Horizon". 1918 October 30, № 222, Tiflis]. (In Armenian)
56. «Kavkazskoe slovo». 1918, 13 marta, № 57, Tiflis. ["Caucasian Word". 1918 March 13, № 57, Tiflis]. (In Russian)
57. Lucifer B. «Niw't'er, p'aster ew yusher haykakan oghbergut'iwnic». *Mer-o'rer*, 1918t'. dektemberi 5-23, № 1, Bagu. ["Materials, Facts and Recollections of Armenian Tragedy". *Our-days*, 1918 December 5-23, № 1, Bagu]. (In Armenian)
58. «Pe'hput xan Jivanshiri spanich p. Misaq T'orlaqeani datavarut'iwny' angl. zinuorakan ateanin ar'jew». *Twakatamart*, 1921t'. septemberi 29, № 872, K. Polis. ["The trial of Jivanshir's assassin Mr. Misak Torlakian in front of the British military court". *Battle*, 1921 September 29, № 872, Constantinople]. (In Armenian)
59. «Irani 1918 t-iboghoq-namaky` Kovkasum Adrbejan anvamb keghts petutyun steghtselu kapaktsutyamb. PASTATUKHT». *Live 24*, <https://www.live24.am/66443>. Mutq` 10.22.2020. ["Iran's 1918 letter of complaint in connection with the creation of a false state in the Caucasus called "Azerbaijan": document". *Live 24*. Accessed: 10.22.2020]. (In Armenian)

THE STAGES OF IMPLEMENTATION OF THE POLICY OF ETHNIC CLEANSING AND GENOCIDE OF ARMENIANS IN THE EASTERN CISCAUCASUS (11TH-20TH CC.) (PART III)

GEVORG STEPANYAN

*NAS RA Institute of History, Department of History of Armenian Colonies and
Diaspora, Head, Doctor of Sciences in History, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to present the motives and implementation stages of ethnic cleansing and genocidal policy perpetrated towards the indigenous Armenian population during the 11th-20th centuries in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, on the basis of various primary sources (archival documents, statistical materials, periodical press, theme related literature).

The work is written by a combined examination of facts, applying the principles of historical investigation and historical-comparative analysis. The level of reliability and validity of the sources through their comprehensive study have been verified.

Through the combination of facts the following phases of the history of the main issue are presented: the policy of ethnic cleansing and genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus were still implemented in the 11th-18th centuries when the region regularly appeared under the invasions and dominion of various conquering nomadic tribes (Turk-Seljuks, Mongol-Tatars, Tamerlane, nomadic Turkmen tribes of Kara-Koyunlu and Ak-Koyunlu, Kizilbash invasions followed by the Turkish-Persian wars, Sunni Lezgins, invasions of Nader Shah and Agha Mohammad Khan). As a result, some part of the Armenian population was deported and left native lands or forcedly accepted the

Muslim religion of the conquerers. The next phase of ethnic cleansing and atrocities was the period of the Armenian-Tatar clashes (1905-1906). Later, the policy of ethnic cleansing and genocide was implemented at state level already during the Musavat regime of the artificial “Azerbaijan” formation (1918-1920), and finally during the Soviet regime (1920-1990).

The article substantiates the fact that the indigenous Armenian population of the region was subjected to ethnic cleansing and genocide in its cradle, just as the Young Turks carried out the extermination of the Western Armenians in Western Armenia. Therefore, this policy should be described as a continuation and an integral part of the Genocide of Armenians, as the Armenian Genocide with its geographical coverage (from Cilicia to Baku), was a consequence of the implementation of a comprehensive pan-Turkic program.

There are numerous references to the issue in the historical literature, though the comprehensive study of ethnic cleansing and genocidal policies of Armenians in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, has not been the subject of a separate study.

Key words: *Eastern Cis-Caucasus, Baku province, left bank of Kur, Pan-Turkism, ethnic cleansing, xenophobia, genocide, deportation.*

ЭТАПЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ЭТНИЧЕСКИХ ЧИСТОК АРМЯН И ГЕНОЦИДАЛЬНОЙ ПОЛИТИКИ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ (XI-XX ВВ.) (ЧАСТЬ III)

ГЕВОРГ СТЕПАНЯН

*заведующий отделом истории армянских колоний и
Дiasпоры Института истории НАН РА,
доктор исторических наук, профессор
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – на основе разнообразных источников (архивные документы, статистические материалы, периодическая печать, тематическая литература) представить причины и этапы осуществления этнических чисток и геноцидальной политики по отношению к коренному армянскому населению Восточного Закавказья в течение XI-XX вв., на территории, простирающейся от долины р. Куры до Апшеронского полуострова.

Работа изложена с применением принципов сравнительно-исторического анализа, сопоставительного изучения фактов. Степень достоверности и подлинности источников уточнена нами путем их всестороннего исследования.

На основе сопоставления фактов история проблемы представляется через следующие этапы: политика этнических чистки и погромы по отношению к армянам Восточного Закавказья в XI-XVIII вв., когда регион подвергался захватническим набегам и установлению господства турок-сельджуков, монголо-татар, Тамерлана, кочевых туркменских племен кара-коюнлу и ак-коюнлу, кзлбашей, а также последовавшими за всем этим турецко-персидским войнам, походам суннитов лезгинов, Надир-шаха и Ага Могамед хана. Вследствие всего этого определенная часть армянского населения была насильственно депортирована от родных очагов или вынужденно приняла веру мусульманских захватчиков. Следующий этап

этнических чисток и погромов армянского населения происходил в период армяно-татарских столкновений 1905-1906 гг. Затем политика этнических чисток и геноцида осуществлялась уже на государственном уровне мусаватистским режимом искусственного образования, именуемого «Азербайджан», в 1918-1920 гг., и наконец, – в эпоху советского периода в 1920-1990 гг.

В статье обосновывается факт о том, что коренное армянское население края было подвергнуто этническим чисткам и геноциду на своей родине, также, как младотурки осуществили геноцид армян в Западной Армении. Следовательно, эту политику следует квалифицировать как продолжение и составную часть политики геноцида армян, так как Геноцид армян в своем географическом охвате (от Киликии до Баку) был следствием реализации единой программы пантюркизма.

Несмотря на то, что научно-историческая литература неоднократно обращалась к рассматриваемой проблеме, она, однако, не стала предметом отдельного всеобъемлющего исследования.

Ключевые слова: *Восточное Закавказье, Бакинская губерния, левобережье Куры, пантюркизм, этнические чистки, геноцид, депортация.*

Կ. ՊՈԼՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԶԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԱՁԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ*

ՉՏԴ 94(479.25):364:008:37:396

DOI: 10.52063/25792652-2022.1.12-61

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
nairahambardzumyan@yahoo.com

Ուսումնասիրության նպատակն է քննել XIX դարի երկրորդ կեսին Կ.Պոլսի մշակութային-կրթական, պարզասիրաց միությունների, կանանց արհեստագործական աշխատանոցների, բարեգործության, մարդասիրության, նորաձևության հարցերին հետևող ընկերությունների և օրիորդաց վարժարանների դերակատարությունը, որոնք նպաստում էին կանանց ազատագրության գործընթացներին:

Ուսումնասիրության խնդիրը վերը նշված ընկերությունների և միությունների գործունեությունն ըստ բնույթի (ինամակայական-բարեգործական հարցեր լուծելը), նպատակի (հագուստով, օրապահիկով, գրենական պիտույքներով և ֆինանսական միջոցներով ապահովելը), գաղափարաբանական հիմքի (մարդասիրական և ազգօգուտ գործունեություն ծավալելը), և ըստ գործառույթների իրականացման կանոնակարգերի (հագուստի, ոճի, նորաձևության, արհեստների յուրացման հարցեր լուծելը, պատերազմում վիրավորված զինվորներին բժշկական ու դեղորայքային օգնություններ ցուցաբերելը) դիտարկելն է:

Կիրառել ենք պատմահամեմատական (ավանդական արժեքների և կողմնորոշումների վերանայումը, գրական զարգացումների հետագիծը), ֆենոմենոլոգիական (իմաստաբանական և տիպաբանական ընթացակարգը, առանձնահատկությունները, դերը, նշանակությունը և ազդեցության ոլորտները սոցիալ-հասարակական և քաղաքական կյանքում, հասկացման մեթոդաբանությունը) և ժամանակագրական (կարգավորում է իրադարձությունները՝ ըստ ժամանակային հերթագայության) մեթոդները:

Ուսումնասիրությունը կարևոր է և արդիական ոչ միայն բարեգործական ընկերությունների և վարժարանների համակարգման, այլև հայագիտության մեջ կանանց հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ մարդասիրություն, ազատագրություն, Կ. Պոլիս, «Պարզասիրաց միություն», «Հայ կարմիր խաչի ընկերություն», բարեգործական միություններ, աշխատանոցներ, գրական հանդեսներ:

* Հոդվածը ներկայացվել է 01.03.2022 թ., գրախոսվել՝ 08.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Նախաբան

XIX դարի երկրորդ կեսին օսմանյան կայսրության տիրապետության ներքո ապրող արևմտահայ մտավորական սոցիումում¹ կանանց ազատագրության գործընթացները զարգանում էին եվրոպական հասարակության նույնօրինակ ընդհանուր գործընթացներին զուգահեռ: Արևմտահայ կիրթ և մտավորական կանայք ստեղծում էին մշակութային, բարեգործական, պարզասիրաց ընկերություններ և միություններ, որոնց միջոցով իրականացնում էին հասարակական բարեփոխումներ և բարենորոգումներ: Մուսուլմաններով բնակեցված Արևելքում հայերն առաջինն էին, որ գիտակցաբար բարձրացրին ու ընդգծեցին կնոջ դերակատարությունը ազգային-հասարակական կյանքում և սկսեցին պայքարել կնոջ ազատագրության ու իրավունքների համար: Հայ կանանց հասարակական ու քաղաքական դերի ակտիվացմանը էապես նպաստում էր հայաշատ քաղաքներում (հատկապես Կ.Պոլսում, Իզմիրում) աշխատանոցների, օրհորդաց վարժարանների և դպրոցների հիմնումը, որտեղ հայ օրհորդները կրթվում ու դաստիարակվում էին, և հենց այդ հաստատությունների շրջանավարտներից շատերն էլ հետագայում դառնում էին առաջադիմական գաղափարներ տարածողներ:

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիայում հայ կանայք սկսեցին նաև տնտեսական ու հասարակական ակտիվ գործունեություն իրականացնել՝ հիմնելով որբանոցներ և բարեգործական ընկերություններ, բացելով արհեստանոցներ, փոքրիկ աշխատանոցներ, խմբագրելով գրական հանդեսներ, զբաղվելով իրատարակչական գործունեությամբ:

1860 թվականից տպագրվել են կանանց նվիրված հայալեզու հանդեսներ (առաջին անգամ աշխարհում), որոնց խմբագիրները կանայք էին («Կիթառ» հանդես ամսօրեայ 1-7), թերթերում տպագրվել են կանանց հասարակական գործունեությունը լուսաբանող անդրադարձներ, հոդվածներ, վեպեր, էսսեներ, ձևավորվել են հասարակական խմբակներ, բարեգործական միություններ, որոնց միջոցով կանայք կարողանում էին ինքնիրացվել և ինքնադրսևորվել:

Գրական-մշակութային զարթոնքը և նրա ազդեցությունը հայ կնոջ ազատագրության գործընթացներում

Հայ կնոջ ինքնագիտակցության զարթոնմի իրական ժամանակահատված կարելի է նշել 1860 թվականը և դրանից հետո, երբ հասարակական կյանքում սկսվեց մշակութային մեծ եռուզեռ: 1860 թվականին Հայոց ազգային սահմանադրության ձեռնարկումից և 1863 թվականին վերջնական ընդունումից հետո² (Ազգային սահմանադրութիւն հայոց)³ 1860-1870-ական թվականներին, սկսեցին իրատարակվել շուրջ հիսուն նոր հանդեսներ ու պարբերականներ (Լևոնյան XXIV): Հատուկ ուշադրության էր արժանանում դպրոցների կրթունակության մակարդակը: 1860 թվականից հայ կանայք ներգրավվեցին նաև գրական շարժման մեջ: Օտար լեզուներ սերտող և հայոց լեզուն անտեսող օրհորդները սկսեցին հայերեն սովորել: Նրանք

¹ Խոսքը եվրոպական նշանավոր համալսարաններում կրթություն ստացած արևմտահայ մտավորականների մասին է՝ որպես հայ հասարակության ամենաազատ և եվրոպականացված մասի:

² 1863 թվականի սահմանադրությունը (հայտնի է նաև Ազգային սահմանադրություն հայոց) կազմված էր «Ներածությունից» («Հիմնական սկզբունք»), հինգ գլուխներից, որոնք բաժանվում էին առանձին ենթագլուխների, և ինսուլինը հոդվածներից (Նախնական տարբերակում (1860 թ.) հարյուր հիսուն ենթագլուխ էր):

աշխատակցում էին նաև հայ մամուլին, գրում էին էսսեներ, ակնարկներ, հոդվածներ¹, տպագրում էին բանաստեղծություններ, հրատարակում հանդեսներ և թերթեր²: 1860-1864 թվականներին հիմնադրվեցին տասից ավելի մշակութային ընկերություններ («Յանդես ամսօրեայ» 550-554): Չարթոնք էր ապրում նաև հայ թատրոնը³: Այս իրողությունները, որոնցում ներգրավվել էր հայ կինը, տվյալ ժամանակահատվածում բնութագրվում և դիտարկվում էին որպես տղամարդու գործ, և այս առաջընթացը ֆեմոմենալ էր:

Ավելի ուշ՝ 1880-1890-ական թվականներին և դրանից հետո, կանանց սոցիալ-հասարակական և գրական-մշակութային գործունեությունը ընդգրկում էր դարոցների, վարժարանների, գրադարանների, ընթերցասրահների ստեղծման, գրքեր հրատարակելու, դասախոսություններ և հրապարակային ընթերցումներ կազմակերպելու, երեխաների խնամատարության կենտրոնների, արհեստագործական դասընթացների, նպաստներ նշանակելու, տարաբնույթ (կարի, ասեղնագործության, քանդակի, նկարչության)⁴ արհեստանոցներ, արտելներ, փոխօգնության հիմնադրամներ, ապաստարաններ, հիվանդանոցներ բացելու գործընթացները: Կանանց կրթության, դաստիարակության, կատարելագործման, ընտանիքում կնոջ դիրքի, դերակատարման և նշանակության հիմնահարցերին անդրադառնում էին նաև ժամանակի թերթերը, հատկապես «Մասիս»⁵ օրաթերթը: Վերոնշյալ նպատակները իրագործելու համար, սակայն, հասարակությանը անհրաժեշտ էին մարդկային ռեսուրսներ և նյութական միջոցներ, ուստի զուգահեռաբար կազմավորվում էին նաև նրանց գործունեությունն ու կենսականությունը ապահովող և կառավարող հոգաբարձուական խմբեր, բացվում էին հիմնադրամներ, ընկերություններ ու միություններ: Այդ նպատակով կազմակերպվում էին նաև բարեգործական ճաշկերույթներ, վիճակահանություններ⁶ («Թերճենանը Էֆքեար» 3), պարահանդեսներ⁷ (Պողոսեան 555), միջոցառումներ,

¹ 1868 թվականին Վաղարշապատի «Արարատ» ամսագրի առաջին համարներին աշխատակցել է Սոֆյա Առաքելյանը:

² 1860-1864 թվականներին Տիֆլիսում հրատարակվող «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրում նյութեր է տպագրել Նատալյա Միրզոյանը: 1862 թվականին Ե.Կ.Տ. Յայկուհի ծածկանունով «Կանանց մասին և կանանց համար» առաջին հայալեզու հանդեսը տպագրել է Էլյաիս Կեսարացյանը: 1863-1864 թվականներին Ռաֆայել Պատկանյանի «Յյուսիս»-ում օրիորդ Օլգա Ամեդին տպագրում էր Լանգլուայից կատարած իր թարգմանությունները: Սրբուհի Վահանյանը (Տյուսաբ) 1864 թվականին «Բազմավեպ» հանդեսում տպագրել է իր անդրանիկ բանաստեղծությունը՝ «Գարուն» խորագրով:

³ 1861 թվականին Կ. Պոլսի ազգային թատրոնի դերասանուհի օրիորդ Արուսյակ Փափազյանը արժանացել է առաջին մրցանակի (հետագայում տիկին Պեգիրճյանը):

⁴ Կանանց հասարակական և մշակութային դերակատարության հիմնախնդիրները ներթափանցում էին նաև գրականություն. Սիպիլի (Չապել Խանջյան) «Աղջկան մը սիրտը» (1891) վեպի հերոսուհիներից Բուբուլը լավ նկարում էր և հաճախել էր գործող նկարչական խմբակ, Սոֆին ուսուցիչ էր, իսկ Մելինեն քանդակագործությամբ էր զբաղվում, և իր քանդակը ներկայացնելով՝ նա հաղթել էր Փարիզի քանդակագործական մրցույթներից մեկում: Սիպիլ՝ հին աշխարհի մարգարեուհի (Լ.Յ.):

⁵ Այդ մասին վկայում են «Մասիս» օրաթերթի 1860-1880-ական թվականների համարները:

⁶ 1882 թվականին «Ազգանուէր հայունեաց ընկերութիւնը» ձեռնարկեց վիճակահանություն, որի արդյունքում բարեգործական նպատակներով հավաքագրեց բազմաթիվ նվերներ՝ ոսկե գինդեր, ասեղնագործ պատկերներ և թաշկինակներ, գորգեր, թանկագին այլ իրեր, ինչի մասին փաստում է ընկերության հաշվետվությունում ընդգրկված նվերների և նվիրատուների մեծ ցանկը:

⁷ 1880 թվականի մարտին «Ազգանուէր հայունեաց ընկերութիւնը» սուլթանի հովանավորությամբ բարեգործական պարահանդես է կազմակերպել և դրամական հատույթի կեսը հատկացրել Վանի, Բայազետի, Վաղարշակերտի աղքատներին (սովյալներին):

որտեղ կազմակերպվում էին գրքերի շնորհանդեսներ և դրանցից գոյացած ողջ հասույթը ուղղվում էր բարեգործական ընկերությունների և մշակութային միությունների գործունեությունն ու կենսունակությունը ապահովելուն¹:

Պարզասեր և խնամակալական ընկերությունների գործունեությունը

1860 թվականի նոյեմբերին Կ. Պոլսում հայ նշանավոր գերդաստանների կանանց կողմից հիմնվեց «Խնամակալ տիկնանց ընկերությունը», որը ստանձնեց Ս.Խաչ ազգային հիվանդանոցի՝ կանանց բաժնի խնամակալությունը: Ընկերությունը, կանոնադրության համաձայն, հիվանդանոցի խնդիրները քննարկելու նպատակով ամեն ամսվա առաջին հինգշաբթի օրը ժողով է գումարել: Տարեկան հավաքագրված երեսուն-քառասուն հազար դուրուշը ծախսվել է հիվանդանոցի համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու նպատակով: Ընկերության ֆինանսների մեծ մասն իր անձնական միջոցներից հատկացնում էր հիմնադիր անդամներից Տիկին Երամյանը: «Խնամակալ տիկնանց ընկերության» գործունեությունը շարունակվել է մինչև 1866 թվականը (Պողոսեան 694):

1865 թվականին Հիսարտիպիում ստեղծվել և 1879 թվականին Գում Գափու թաղամաս է տեղափոխվել «Մեզպուրյան» օրհորդաց վարժարանը, որի նախկին սաները 1884 թվականին հիմնեցին «Սանուհեաց ընկերությունը», որը պետք է «Հայաստանի՝ կրթության կարոտ գյուղերում» աղքիկների համար դպրոցներ բացեր: 1884 թվականին Կ. Պոլսի «Սլաքը» Թիֆլիսի «Նոր-Դար» թերթին նամակ է գրել՝ «Մեզպուրեան վարժարանի ուսումնասարտ և բարձրագոյն դասու աշակերտուհիք՝ Սանուհեաց ընկերութիւն մը կազմելով՝ մտադիր են այս տարի Հայաստանի կարօտ գիւղերն մէկուն մէջ՝ յանուն իւրեանց բարերար-դաստիարակին՝ Մեզպուրեան տարրական վարժարան մը հաստատելու, ընդ պաշտպանութեամբ Խիզանու ուսումնասիրաց ընկերութեան» («Նոր-Դար» 2): Նույն թվականին Ներսիսյան օրհորդաց վարժարանին օգնելու նպատակով ստեղծվել է «Խնամակալուհեաց ընկերութիւնը», որի տասը անդամներից բաղկացած խորհրդի նախագահն էր տիկին Աննա Եսայանը: Ընկերության ատենապետն էր Իսկուհի Պ. Տեմիրճիպաշյանը, ատենադպիրը՝ Թերեզա Ս. Ճիզմեճյանը: 1891 թվականին ընկերությունը «հարկ դատած է դադարեցնել ամսական նպաստը, զոր կ'ըներ յիշեալ վարժարանին (Ներսիսեանի) մասնակի վճարմամբ վարժուհւոյ ամսականին», ֆինանսական սղության պատճառով դադարեցրել է գործունեությունը (Պողոսեան 195): Չբաղվելով հայ աղքիկների կրթության, դաստիարակության, խնամակալության և շատ այլ հարցերով՝ պոլսահայ կանայք միաժամանակ հոգացել են, որ հայուհիները չկորցնեն իրենց ազգային մտածողությունն ու արժեհամակարգը:

Այդ նպատակով 1879 թվականի հուլիսի տասնհինգին Նունյան-Վարդուխյան վարժարանի նախկին աշակերտուհիները հիմնել են «Պարզասեր հայուհեաց ընկերութիւնը» («Մասիս» 2): Ընկերությունն ուներ տնօրենների խորհուրդ, առաջին ատենապետն էր Վիկտորիա Չիլճյանը, ատենադպիրը՝ Փիրուզ Զերեթեճյանը, որոնք գրում էին. «Պարզասեր հայուհեաց ընկերութեան Տնօրեն Խորհուրդը պարտ անձին կը համարի հրավիրել բոլոր Ազգասեր եւ Տնտեսագետ Հայուհիք՝ որք կը փափաքին մասնակցիլ Ընկերութեանս, Ընկերութիւն մը, որ միանգամայն երկու վսեմ նպատակ կը պարունակէ իւր մէջ, ջնջել Հայագգի իգական սեռի մէջէն Նորասիրութեան ազգակործան մոլութիւնը եւ օգնել Ազգին բարոյական յառաջադիմութեան...» (Պողոսեան 581):

¹ 1879 թվականի աշնանը օրհորդ Էլպիս Կեսարացյանը տպագրել է «Նամականի առ ընթերցասեր հայուհիս» հոդվածների, նամակների ու բանաստեղծությունների ժողովածուն և վաճառքից ստացված ողջ հասույթը տրամադրել «Ազգանուէր հայուհեաց ընկերութեանը»:

Ընկերության կանոնագիրն ընդգրկում էր տասներեք հոդված, որոնք հրատարակվել են «Մասիս» և «Թերճեմանը Էֆքեար» պարբերականներում: Անդամավճարը մեկ արծաթ դահեկան էր (Յօդ. 2), որից ստացված ողջ հասույթը գործածվում էր՝ «ազգին բարոյական յառաջադիմութեանը նպաստելու» (Յօդ. 3), ինչպես նաև՝ «ո՛ր ոք կամի, կրնայ ընկերուհի ընդունուիլ, առանց բաժնեգին վճարելու, բաւ է, որ Հայկական Համազգեստը կրելու փափաքը յայտնէ» (Յօդ. 5) (Պողոսեան 582):

Ընկերության անդամները «Հայկական համազգեստը» կրում են մինչև 1881 թվականի կանոնադրության փոփոխությունը, որը իրականացվում էր ընկերության անդամ տիկիների և օրիորդների խնդրանքով. «Կանոնագիրը կ'ենթարկուի վերաքննութեան եւ այդ առթիւ զգեստներու եւ գլխարկի յատուկ ձեւեր սահմանելու Յօդւածը կը ջնջուի եւ «միմիայն պարզասիրութիւնը ընկերուհեաց համար իբր պարտաւորիչ սկզբունք կ'ընդունուի» (Պողոսեան):

1886 թվականի ապրիլի քսանմեկին Բերայում հիմնվել է «Տիկնանց խնամակալություն» ընկերությունը, որը զբաղվում էր թաղամասի օրիորդաց վարժարանների հովանավորչությամբ: Ընկերությունն ուներ «խնամակալ մարմին»՝ հետևյալ անդամներով՝ Տիկին Աննա Մայր Եսայանց, Տիկին Չ. Սարգիս Համամճյան, Տիկին Մաննիկ Տաւսուտեան: 1888 թվականի ապրիլի վեցից ընկերությունը զբաղվում էր նաև թաղամասի աղքատների խնամքով, հոգում նրանց սննդի և հագուստի, բժշկության ու դեղերի, որբերին ու այրիներին աշխատանքով ապահովելու ևև հարցերով: Ընդլայնելով գործունեությունը՝ ընկերությունը օրիորդների համար աշխատանոց է հիմնել Բերայի Նարեկյան վարժարանում:

Պատերազմներում վիրավորված զինվորներին բժշկական, դեղորայքային օգնություններ ցուցաբերող ընկերություններ

1876 թվականի թուրք-սերբական պատերազմից հետո արևմտահայ նշանավոր գերդասատանների «Լուսաւորչական եւ Կաթողիկէ Տիկնանց» (Պողոսեան 97) նախաձեռնությամբ հիմնադրվեց «Հայ կարմիր խաչի» ընկերությունը, որի առիթով ժամանակի հայ մամուլը գրել է. «Բերկրութեամբ կ'իմանանք որ հայազգի նշանաւոր գերդաստանաց ոմանց տիկնայք, Երոպիոյ քաղաքակիրթագագ օրինակին հետեւելով, Օսմանեան տերութեան թշնամիներուն դէմ պատերազմելով վիրավորեալ զօրականաց դարմանին համար պէտք եղած նիւթերը պատրաստելու եւ Լուիրելու նպատակաւ մասնաժողով մը կազմեր են: Յիշեալ մարդասիրական եւ հայրենասիրական մասնաժողովին անդամ գրուած են արդէն տիկնայք՝ Նուրեան, Ստեփան փաշա, Ս. Այրօ, Ս. Աղաբեկեան, Մաքսուտ, Թ. Սանտալճի, Նորատունկեան, Ալլահվերտի, Թընկըր, Չենոր Էլմասեան, Սինապեան, Անտոն պէյ Մըսըրը, Եուսուֆեան, Մերեմգուլի, Ռ. Տեմիրճիպաշեան, Եսայեան, Խորպասանճեան, Իլիաս Չայան, Գագագեան, Յ. Տավուտեան, Յ. Սագըզ, Կ. Շահպագ: ... տերութեան նախարարաց ընտանիքներն ալ՝ լսելով հայ տիկնանց այս հայրենասիրական գործը, փափաքեր են իրենք ալ անդամակցիլ տոյն մասնաժողովին: ...Մասնաժողովն այսօր կամ վաղը շրջաբերականաւ մը պիտի յայտնէ իւր անդամոց՝ պատրաստուելիք նիւթոց տեսակներն եւ յանձնուելու տեղերը: Մասնաժողովն որոշած է հրատարակել ապագային մէջ այն անդամոց անուններն՝ որք իրոք օժանդակեն այս մարդասիրական գործին» («Մասիս» 2):

Սույն ընկերության ազգանվեր գործունեությանն անդրադարձել է նաև Կ. Պոլսի «Լոյս» թերթը՝ տպագրելով «Մարդասիրական Ընկերութիւն Հայ Տիկնանց» անդրադարձը. «Հայ կանանց այս Հայրենանուէր ու մարդասիրական ձեռնարկեն մեծի գոհունակութեան եւ շնորհակալեաց արժանի է, որ մեծ պատիւ կը բերէ ընդհանուր հայոց ազգին: Նորա դարեւոր հավատարմութեան եւ անձնուիրութեան նոր ապա ցոյց մի ալ տալով: Իցի՛ւ թէ Հայ կանայք այս կարգի Հայրենյաց պաշտպանութեան եւ

մարդասիրական գործոց մեջ իրենց վաստակն ու ջանքն կրկնապատկեն եւ աշխարհի յայտնեն թէ իրենք ալ Կատրամիտէի, Շուշանայ, Տիգրանուհւոյ եւ այլոց Հայոց մեծաց Տիկնանց սերունդն են» («Լոյս» 12):

Կ. Պոլսի հայ տիկնանց օրինակով գթութեան քույրերի աշխատանք են տարել նաև Իզմիրի հայ կանայք, որոնք նույն թվականին Իզմիրում ստեղծել են համանուն ընկերություն՝ «Հարժեալ ի գեղեցիկ օրինակէ՛ կը միանան նոյն ժամանակին մէջ» («Արշալոյս Արարատեան» 2): 1906 թվականին Կ. Պոլսում հիմնվել է «Հայրենասեր հայուհեաց ընկերութիւնը», որի մասին, ինչպէս հայր Եփրեմ Պողոսյանն է նշում, հստակ տեղեկություններ չեն պահպանվել. «Թղթիկ մը կը ծանուցանէ այս անունով Ընկերութեան մը հիմնումը 1906ին: Ուրիշ կողմէ լուսաբանութիւն մը չենք գտած» (Պողոսեան 719):

1908 թվականի սահմանադրությունից հետո Կ. Պոլսում «յատուկ իմաստով» կրկին կազմվեց «Հայ կարմիր խաչի» ընկերությունը: Կազմավորման ճշգրիտ ժամանակահատվածը հայտնի չէ, սակայն Վիեննայի Մխիթարյան միաբանության հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը նշում է, թե 1909 թվականի սկզբին արդեն կազմավորված էր (Պողոսեան 694): Ընկերության ղոկտ. Ս. Թերզյանը գրում է. «Լաւ գործ մ'ըրած եք անմիջապէս ձեր ծառայութիւնները Ազատութեան Բանակին տրամադրութեան ներքեւ դնելով: Կը ինդրեմ որ ամբողջ Կիլիկիոյ ներկայ աղետալի կացութիւնն ուշադրութեան առնելով, ձեր ծառայութեանց մէկ մեծ մասն ալ նուիրեք տեղւոյն տառապեալ, վիրաւորեալ, անպատասպար ու մահամերձ եղբայրներուն եւ քույրերուն: Ասով ա'լ անլի արժեցուցած պիտի ըլլաք ձեր մարդասիրական ու ազգասիրական նուիրական պաշտօնը, որուն մէջ այնչափ պէտք ունի մեր տարաբախտ Կիլիկիան» («Բիւզանդիոն» 3; «Հայ Բոյժ» 90):

1915 թվականի հայոց ցեղասպանությունից հետո՝ 1918 թվականի նոյեմբերի քսանվեցին, Կ. Պոլսում նորից կազմավորվեց «Հայ կարմիր խաչ» ընկերությունը՝ նպատակ ունենալով «ինամել եւ դարմանել տարագիր, անոք եւ որբ հայ հիւանդները՝ Պոլիս եւ գաւառներու մէջ, ընկեցիկներ դիեցնել, մայրանոցներու մէջ հովանաւորել ծննդաբերութիւններ, ապաստարաններու եւ մանկանոցներու մէջ պատասպարել ազատագրուած աղջիկներ եւ տղաք»: Այդ տարիներին «Հայ կարմիր խաչն» ուներ հինգ հազար անդամ, Կ. Պոլսում և գավառներում շուրջ քառասուն մասնաճյուղ («Ամենոյն Տարեցոյցը» 299-300): Կանանց ազատագրության գործընթացները, փաստորեն, զարգանում էին արևմտահայ (մասնավորապէս Կ. Պոլսի) սոցիալ-հասարակական և պատմաքաղաքական հարաբերությունների ժողովրդավարացման առավել լայն ու երկարաժամկետ գործընթացներին զուգահեռ: Խոսքը սոցիալական խմբերի, սոցիալական տարբերակման, սոցիալ-մշակութային ինստիտուտների և դրանցից ամենաբարդի՝ սոցիալական սուբյեկտի ձևավորման ու դասակարգային-հիերարխիկ հասարակությունից դեպի արդիականություն անցման երկու փուլերի մասին է: Այս և նման իրողությունները մեծապէս նպաստում էին սոցիումում կանանց իրավունքների ձեռքբերման, ազատագրության, կրթության ու դաստիարակության հիմնախնդիրները տեսնելուն և լուծում առաջադրելուն:

Եզրակացություն

XIX դարի 60-ական թվականներից մինչև Հայոց ցեղասպանությունը սուլթանական բռնապետության մեջ ապրող հայ կինը աստիճանաբար ազատագրվում էր այնտեղ իշխող մուսուլմանական (խլամիստական) սոցիումի հայրիշխանական, փակավանդական և կենցաղային գերության, հասարակության լիիրավ անդամ չլինելու, խոսքի և ձայնի իրավունք չունենալու կարգավիճակներից, ներգրավվում էր հասարակության տարբեր շերտեր՝ դառնալով լիիրավ անդամ: Այդ գործընթացին էապէս նպաստում էր թուրքական կայսրապետության հայաշատ քաղաքներում (մասնավորապէս Կ. Պոլսում) կրթական բարեգործական

խնամակալական, հումանիտար, աղքատախնամ միությունների և օրիորդաց դպրոցների ու վարժարանների հիմնումը, որոնց գործունեությունը ծավալվում էր հայ մտավորական կանանց կողմից ստեղծված հասարակական ընկերությունների ազգօգուտ գործունեության արդյունքում: Այսօրինակ իրողությունները մեծապես նպատակաուղղված էին սոցիոմոմ կանանց իրավունքների ձեռքբերման, ազատագրության, կրթության և դաստիարակության հիմնախնդիրները լուծելուն: Ուստի կարելի է ասել, թե հայ կանանց պատմաքաղաքական, սոցիալ-հասարակական, կրթական, գրական-մշակութային դերի ակտիվացումը սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսից:

Ուսումնասիրության արդիականությամբ որոշվում է XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին կանանց հիմնախնդիրների և կնոջ անհատական գիտակցության զարթոնքի շուրջ պատկերացումներ կազմելու հանգամանքը: Համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվում է նաև գաղափարը, թե վերոնշյալ ընկերությունների գերնպատակը հայ հասարակության *բարենորոգությունն* էր: Այս համատեքստում պատմությունը թույլատրում է ոչ միայն ուսումնասիրել կանանց դիրքը պատմահասարակական և գրական-մշակութային զարգացումներում, այլև ուսումնասիրելով տվյալ ժամանակաշրջանի արևմտահայ հասարակությունը, նրա զարգացման ընթացքը՝ բացահայտել կանանց համապատասխան դերակատարությունը, գործունեության հաճախականությունը, գաղափարները և դրանց տեղը սոցիալ-հասարակական զարգացման համապատկերում՝ միաժամանակ ընդգծելով նոր տիրույթների և մակարդակների անցնելու դրույթներից երկուսը՝ մտածողությունը և սոցիալական չափանիշները, որոնք մշակվել են տվյալ ժամանակաշրջանի ըմբռնումներում:

Օգտագործված գրականություն

1. *Ազգային սահմանադրութիւն հայոց (Նիզամնամեի Միլլեթի Էրմենիան)*. Ի տպարանի Յ. Միլհենտիսեան (Ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթեոսի Ա. կաթողիկոսի ամենայն հայոց, Ի Տեղապահութեան պատրիարքական աթոռոյ Կոստանդնուպօլսոյ Տ. Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի Նիկումեդիոյ), Կ. Պօլիս-Սթանպօլ, 1863:
- համամարդկային քաղաքակրթության բազմազանության պահպանմանը և մարդկության սոցիալ-բնական կենսազարգացմանը,

- արարող, հոգևոր-բարոյական-արժեքային մարդկային տեսակի լիարժեք կենսագործունեությանը և ապագա աշխարհակարգի հաստատման հիմքում արարչական սկզբունքի ու արդարության ներդրմանը,

- քաղաքակրթական հաղորդակցի իր գործառույթի իրացմանը և Հյուսիս-Հարավ-Արևելք-Արևմուտք քաղաքակրթական կողերի ներդաշնակմանը,

- դաշնակիցների հետ լիարժեք կենսագործունեությանը՝ հանուն համընդհանուր գերնպատակների կայացման:

Օգտագործված գրականություն

1. Schwab, Klaus, and Malleret Thierry. *Covid-19: The Great Reset*, Forum Publishing, 2020.
2. Ներսիսյան, Արմեն. «Հայկական երազը»՝ որպես քաղաքակրթական հայեցակարգ: Ձևակերպման աշխարհաքաղաքական, աշխարհամշակույթային և աշխարհատնտեսական նախադրյալները. *ՇՊՀ գիտական տեղեկագիր*, N 1, Ա պրակ, 2021, էջ 82-95:
3. ---. «Հայկական քաղաքակրթությունը լուրջ քաղաքակրթությունների ձևավորման համատեքստում. *ՇՊՀ գիտական տեղեկագիր*, N 1, Ա պրակ, 2019, էջ 128-134:
4. Фурсов, Андрей. “Капитализм, антикапитализм и судьбы мира: жизнь и смерть самой загадочной системы в истории человечества и её антипода”. *Изборский Клуб, Аналитика*, 1 августа 2021, <https://izborsk-club.ru/21476>. Доступно: 15 январь 2021.
5. «Աշխարհաժողովի կողմից ազգային պետության անվտանգային հիմնադրույթների հռչակումը». *Arjeq.am*, 25 դեկտեմբեր 2021, <https://arjeq.am//1359/>. հասանելի է՝ 15.01.2022:
6. «Ժամանակակից աշխարհաժողով. Հիմնավորում, առաքելություն, լեզվախմբում». *Arjeq.am*, 25 դեկտեմբեր 2021, <https://arjeq.am//1359/>. հասանելի է՝ 15.01.2022:
7. «Папа объяснил, что такое инклюзивный капитализм». *Vatican news*. 11 ноября 2019, <https://www.vaticannews.va/ru/vatican-city/news/2019-11/papa-obyasnil-chto-takoe-inklyuzivnyy-kapitalizm.htm>. Доступно: 15.01.2022.

WORKS CITED

1. Schwab, Klaus, and Malleret Thierry. *Covid-19: The Great Reset*. Forum Publishing, Geneva, 2020.
2. Fursov, Andrey, “Kapitalizm, antikapitalizm i sud'by mira: zhizn' i smert' samoy zagadochnoy sistemy v istorii chelovechestva i yeyo antipoda”. *Izborskiy Klub, Analitika*, 1 avgusta 2021, <https://izborsk-club.ru/21476>. Dostupno: 15 yanvar' 2021. [“Capitalism, anti-capitalism and the fate of the world: the life and death of the most mysterious system in the history of mankind and its antipode”. *Izborsky Club, Analytics*, 1 August 2021, Accessed 15 January 2021]. (In Russian)
3. Nersisiyan, Armen. «Haykakan q'aghaq'akrt'ut'yuny lokal q'aghaq'akrt'ut'yunneri dzevavorman hamatek'stum». *ShPH gitakan teghekagir*, N 1, A prak, ej 128-134. [“Armenian civilization in the context of the formation of local civilizations”. *SHSU Scientific bulletin*, N 1, Edition 1, pp. 128-134] 2019. (In Armenian)
4. ---. ««Haykakan yerazy» vopes q'aghaq'akrt'akan hayets'akarg. Dzevakerpman ashkharhaq'aqak'akan, ashkharhamshakut'ayin yev ashkharhatntesakan nakhadryalneri». *ShPH gitakan teghekagir*, N 1, A prak, ej 82-95. [“Armenian dream” as a civilization concept. Geopolitical, geocultural and geoeconomic preconditions for registration”. *SHSU Scientific bulletin*, N 1, Edition 1, pp 128-134] 2021. (In Armenian)
5. «Ashkharhazhoghovi koghmits' Azgayin petut'yan anvtangayin himnadruyt'neri hrch'akumy». 25 dektember 2021, <https://arjeq.am//1359/>, hasaneli e՝ 15.01.2022. [“Proclamation of the security principles of the Nation by the Worldassembly”. 25 December 2021, Accessed: 15.01.2022]. (In Armenian)
6. “Papa ob'yasnil, chto takoye inklyuzivnyy kapitalizm”. *Vatican News*, 1 noyabrya 2019, <https://www.vaticannews.va/ru/vatican-city/news/2019-11/papa-obyasnil-chto-takoe->

[inklyuzivnyy-kapitalizm.htm](#). Dostupno: 15.01.2022. [“The Pope Explained What Inclusive Capitalism Is”. *Vatican News*, 1 November 2019. Accessed: 15.01.2022]. (In Russian)

7. «*Zhamanakits' Ashkharhazhoghov. Himnavorum, arak'elut'yun, legitimats'um, Ashkharhazhoghovi hayets'akarger*». 25 dektember 2021, <https://arjeg.am//1359/>, hasaneli e` 15.01.2022. [“*Modern Worldassembly. Rationale, mission, legitimation, Concepts of the Worldassembly*”. 25 December 2021, Accessed: 15.01.2022]. (In Armenian)

APPLICATION OF ARMENIAN CIVILIZATION IN THE PROCESS OF ESTABLISHING A NEW WORLD ORDER

ARMEN NERSISYAN

*Shirak State University, Department of Geography,
Ph.D. in Geography, Associate Professor
Gyumri, the Republic of Armenia*

The article examines the content of the modern civilizational crisis, the nature of the New World Order perceived as a result of its overcoming, and the essence of the contradictory meta-political processes aimed at it.

It is the necessity and relevance of considering these issues that summarizes the purpose of this study and emphasizes the content of the social order of relevance.

In the course of the study, a number of interrelated questions were put forward and resolved. In particular, the trends of the formation of the new world order and the nature of the processes already unfolding were examined in detail.

The above-mentioned issues were discussed from the perspective of the Armenian civilization, where the essence of the Armenian civilization application, i.e. the restoration and reassessment of its own historical mission as a political communicator, was explored and summarized as a key task.

To solve the research tasks methods of analysis, comparison, scientific methods of comparative geography and theoretical generalization were used.

The theoretical conclusions and suggestions received as a result of the research may be useful and applied in the spheres of state and national politics, as they will enable Armenia and Armenianness to become active players of the New World Order formation process instead of passive subjects of influence.

Key words: *Armenian civilization, New World Order, national state, civilizational application, civilizational area, geopolitical structure of the Planet, metapolitics, ethnic vitality.*

ЗАЯВКА АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ В ПРОЦЕССЕ УТВЕРЖДЕНИЯ НОВОГО МИРОПОРЯДКА

АРМЕН НЕРСИСЯН

*преподаватель кафедры географии
Ширакского государственного университета,
кандидат географических наук
г. Гюмри, Республика Армения*

В статье рассматривается содержание современного характер нового миропорядка, цивилизационного кризиса, в контексте результатов его преодоления и сущность направленных на него противоречивых метаполитических процессов.

Именно необходимостью изучения этих вопросов и актуальностью социального заказа обусловлена цель данного исследования.

В ходе работы был выдвинут и решен ряд взаимосвязанных вопросов. В частности, были детально рассмотрены тенденции становления нового миропорядка и характер уже разворачивающихся процессов.

Данные вопросы были рассмотрены в аспекте армянской цивилизации, где в качестве ключевой идеи была исследована и обобщена суть армянской цивилизационной концепции, которая заключается в, то восстановление и переоценке собственной исторической миссии.

Для решения поставленных задач мы использовали методы анализа, сопоставления, научные методы сравнительно-географического, теоретического обобщения.

Полученные результат исследования и теоретические выводы и предложения могут быть применены в сферах государственной и национальной политики, так как они могут способствовать тому, чтобы в процессе формирования нового миропорядка чтобы Армения и армянство из пассивного субъекта влияния перешли в статус активного игрока.

Ключевые слова: *армянская цивилизация, новый миропорядок, национальное государство, цивилизационная заявка, цивилизационный ареал, геополитическая структура планеты, метаполитика, этноориентированная политика.*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ. ՀՀ ԵՎ ԳՂՀ ՕՐԻՆԱԿԸ*

ՀՏԴ 351:32:304.4:364:34

DOI: 10.52063/25792652-2022.1.12-89

ԷԴԳԱՐ ԶԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի դասախոս,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgar.kalantaryan@ysu.am

ԱՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի
հանրային քաղաքականության մագիստրոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ani.nersisyan.98@gmail.com

**Հոդվածի նպատակներն են վեր հանել սոցիալական քաղաքականության
Եռթյունն ու առանձնահատկությունները՝ այն դիտարկելով որպես պետական
կառավարման արդիականացման կարևորագույն գործոն, արժևորել
վերջինիս դերը պետական կառավարման համակարգի համատեքստում: Մեր
խնդիրն է ուղենշել սոցիալական պետության հայեցակարգի գերակա-
յությունը, որը կերաշխավորի առավել ժողովրդավարական կառավարման
համակարգ:**

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար
տեսական հիմք են հանդիսացել հանրային կառավարման,
քաղաքագիտության, իրավագիտության դասական և ժամանակակից
տեսությունների հիմնական դրույթները, հայեցակարգերը, մոդելներն ու
մեթոդները: Հետազոտության իրականացման ընդհանուր մեթոդաբանական
հիմքը վերլուծության, համեմատական և համակարգային մեթոդներն են:

Արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ սոցիալական
պետության կայացման գործում կարևոր է արդյունավետ սոցիալական
քաղաքականության իրականացումը՝ որպես հասարակության կայուն
զարգացման հիմք: Ուստի կարևորվում է այս ոլորտում հստակ մշակված
հայեցակարգի առկայությունը՝ զարգացման կոնկրետ մշակված
նազմավարությամբ:

Հետազոտության շրջանակներում կատարված օբյեկտիվ վերլուծության
արդյունքում հանգեցինք եզրակացության, որ Գերմանիայում սոցիալական
քաղաքականությանը շատ մեծ ուշադրություն է դարձվում նաև մեր օրերում,
և դեռևս նախորդ դարում ընդունված օրենքները այսօր ավելի են
կատարելագործվել՝ ստեղծելով կայուն երաշխիքներ հետագա զարգացման

* Հոդվածը ներկայացվել է 11.02.2022 թ., գրախոսվել՝ 07.03.2022 թ., տպագրության
ընդունվել՝ 10.04.2022 թ.:

համար: Հայաստանի պարագայում, չնայած իրականացված բարեփոխումներին, այս ոլորտում ունենք բավականին չօգտագործված հնարավորություններ: Ուստի ոլորտի հետագա զարգացումը պետք է պայմանավորված լինի համապատասխան օրենսդրական կարգավորումներով, ժողովրդավարական կառավարման կառուցակարգերի ամրապնդմամբ և այլն:

Հիմնաբառեր՝ պետական կառավարման համակարգ, սոցիալական քաղաքականություն, սոցիալական պետություն, սոցիալական ապահովություն, սոցիալական արդարություն, սոցիալական պատասխանատվություն, սոցիալական բարեփոխումներ, արդյունավետ կառավարում, սոցիալական երաշխիք, իրավական հիմքեր:

Նախաբան

Մեր հասարակությունը թեև ակտիվ է զարգացման մի այնպիսի փուլ, որում պետական կառավարման համակարգի արդյունավետ գործունեության համար կարևորագույն գործոն է սոցիալական քաղաքականության կառավարման ճիշտ իրականացումը, որը դրական ազդեցություն ունի մարդկային փոխգործունեության և փոխազդեցության վրա:

Հասարակության անդամների պահանջմունքներն ու շահերը փոխվում են, փոխվում են նաև հանրային կառավարման խնդիրները. եթե նախկինում դրանք պարզ էին և հստակ, ապա այսօր արդեն ամբողջ աշխարհում նոր արժեհամակարգերի հարահոսի պայմաններում հասարակության առջև ծառանում են նորանոր հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծումներ են պահանջում (Քայլաթարյան 73-80): Մյուս կողմից էլ ականատես ենք լինում բոլորովին նոր երևույթների, նախկինում անհայտ հասկացությունների առաջացման՝ «սոցիալական կառավարում», «սոցիալական արդարություն», «սոցիալական պետություն» և այլն: Ակնհայտ է, որ արդի պայմաններում անհրաժեշտ է նորովի վերաձևակերպել սոցիալական քաղաքականության և հանրային կառավարման խնդիրները՝ տալով դրանց համապատասխան լուծումներ:

Հասարակության և պետության փոխհարաբերությունները և այս համատեքստում իրականացվող սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները դեռ շատ վաղուց համարվում էին կարևոր: Տարբեր մտածողներ իրենց հետազոտական աշխատանքներում արժևորել են սոցիալական քաղաքականության դերն ու նշանակությունը, սակայն հասարակության զարգացմանը զուգահեռ այս ոլորտը ունի թերևս բազում չլուծված հիմնահարցեր, բացթողումներ, որոնց հայտնաբերման և լուծման եղանակներ առաջարկելով էլ պայմանավորել ենք հետազոտության կարևորությունը:

Սոցիալական քաղաքականության էությունն ու դերը՝ որպես պետական կառավարման համակարգի գերակայություն

Դեռևս անտիկ ժամանակաշրջանում մի շարք դպրոցների մտածողներ գիտակցում էին, որ պետության գլխավոր խնդիրը իր բնակիչների մասին հոգ տանելն է:

Սոցիալական քաղաքականության նկատմամբ պետական քաղաքականության առաջին դրսևորումները դիտվել են XIX դարի կեսերից, երբ առաջին անգամ Անգլիայում շրջանառության մեջ դրվեց «սոցիալական խնդիր» հասկացությունը, որով բնորոշվում էին հասարակության շրջանում նկատվող այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են համաճարակները, սովը, անօթևանությունը: Արդյունքում

սոցիալական քաղաքականությունը սկսեց դիտարկվել որպես սոցիալական խնդիրների լուծման և բարեփոխումների իրականացման մեխանիզմ (Գյոզալյան 8):

XX դարի սկզբներից տնտեսագետների կողմից մշակվեցին սոցիալական քաղաքականության տարբեր մոդելներ, որոնց հիման վրա էլ առանձին երկրներ սկսեցին զարգանալ այս կամ այն ուղղությամբ, օրինակ՝ «բարեկեցության պետությունը» Շվեդիայում, «սոցիալական պետությունը» Գերմանիայում և այլն (Արմենակյան 35):

Սոցիալական քաղաքականության օբյեկտ են երկրի բնակչությունը, հասարակության մաս կազմող տարբեր սոցիալական խավերը, սոցիալական փոխհարաբերությունները և այլն, սուբյեկտը՝ նրանք, ովքեր անմիջականորեն մասնակցում են այդ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը: Սկզբնական շրջանում միակ սուբյեկտը պետությունն էր, այսօր այդ սուբյեկտները մի քանիսն են. պետական կազմակերպություններից գատ՝ ոլորտի հիմնախնդիրների լուծմանը կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունները, մասնավոր հատվածի ընկերությունները, բարեգործական միություններ, անհատներ և այլն:

Համաշխարհային տնտեսական և տեխնոլոգիական զարգացումների ներկա փուլում սոցիալական քաղաքականությունը անհամեմատ ընդլայնել է իր շրջանակները: Բովանդակային առումով վերջինս գիտական գրականության շրջանակում մեկնաբանվում է լայն ու նեղ իմաստներով:

Լայն իմաստով սոցիալական քաղաքականությունը պետական քաղաքականության ուղղություններից մեկն է, ածանցվում է պետական կարգից և քաղաքական ու տնտեսական առաջնահերթություններից, ձևավորվում է՝ ելնելով հասարակության սոցիալական կառուցվածքից, պետության սոցիալական զարգացման հայեցակարգ է, առնչվում է իրականացվող մակրոտնտեսական քաղաքականությանը, բաղկացած է ռեսուրսների վերաբաշխման համալիր միջոցառումներից՝ ի նպաստ համընդհանուր հասարակական շահի:

Նեղ իմաստով գործող օրենսդրության շրջանակում բնակչության տարբեր սոցիալական խմբերի, տնտեսության ճյուղերի միջև ֆինանսական ռեսուրսների վերաբաշխումն է պետական հարկային ու բյուջետային կառուցակարգերի միջոցով հասարակության շրջանում սոցիալական արդարության սկզբունքի հաստատման նպատակով (Хохлова и Бачурин 9): Ժամանակակից զարգացած պետություններում այս ոլորտը կարևորվում է թե՛ լայն և թե՛ նեղ իմաստներով:

Մասնագիտական գրականության մեջ սոցիալական քաղաքականության վերաբերյալ կարելի է հանդիպել տարբեր սահմանումների: Օրինակ՝ Ռ. Բարկերը իր «Սոցիալական աշխատանքի բառարան» աշխատության մեջ նշում էր, որ սոցիալական քաղաքականությունը հասարակության գործունեության սկզբունք է, որը կարգավորում է հարաբերությունները անհատների, խմբերի, հանրույթների և սոցիալական կառույցների միջև: Այդ սկզբունքները և գործընթացները հասարակության սովորույթների ու արժեքների արդյունք են և մեծ մասամբ սահմանում են ռեսուրսների բաշխումը և քաղաքացիների բարեկեցության մակարդակը (Баркер 38): Նկատելի է հատկապես այն, որ հեղինակը սոցիալական քաղաքականությունը դիտարկում է ոչ թե պետության, այլ հասարակության գործառույթ:

Ի հակադրություն այս մոտեցման՝ ռուս հեղինակները սոցիալական քաղաքականության իրականացման գործընթացում առաջնային տեղը տալիս են պետությանը, այնուհետև՝ միայն հասարակությանը: Մասնավորապես Պ. Պավլենկոն ընդգծում էր հասարակության սոցիալական զարգացման օպտիմալացումը, սոցիալական տարբեր խմբերի միջև հարաբերությունները, ինչպես նաև հասարակության պահանջմունքների բավարարումը՝ պայմանավորելով դրանք պետության սոցիալական քաղաքականությամբ (Павленок 13):

Մեկ այլ հայտնի հեղինակ Վ. Մ. Կապիցինը սոցիալական քաղաքականությունը դիտարկում էր քաղաքական-իրավական հարաբերությունների տեսանկյունից: Ըստ հեղինակի՝ սոցիալական քաղաքականությունը պետության կառավարչական գործունեությունն է՝ հիմնված որոշակի կանոնների համակարգի, նորմատիվային կառուցվածքների վրա, որոնք ընդունում են որոշումներ և իրականացնում գործընթացների կազմակերպումը՝ հնարավորություն տալով տարբեր սուբյեկտների ներգրավմանը քաղաքական գործընթացներին: Նման ազդեցության նպատակն է հնարավոր դարձնել բնակչության լայն շերտերի ընդհանուր շահերի ձևավորումը և կոնսոլիդացնել (համախմբել) ողջ հասարակությունը՝ ձևավորելով հասարակության աջակցությունը պետության գործունեության հանդեպ (Капицын 4):

Առավել համապարփակ մեկնաբանություն է տվել Ա. Գրիգորևան. սոցիալական քաղաքականությունը պետության և հասարակական տարբեր կառույցների գործունեությունն է՝ ուղղված արտադրության, բաշխման ու սպառման ոլորտներում սոցիալական և սոցիալ-տարածքային տարբեր խմբերի շահերի և հասարակության երկարաժամկետ նպատակների ներդաշնակեցմանը (Григорьева 20-21): Այս սահմանումը սոցիալական քաղաքականությունը արժևորեց առավել լայն իմաստով՝ ընդգրկելով հասարակության ողջ կենսագործունեության ոլորտը՝ չտարանջատելով այն պետության այլ ոլորտներում իրականացվող քաղաքականությունից:

Սոցիալական քաղաքականությունը արտահայտվում է պետության սոցիալական գործառույթի միջոցով, իսկ սոցիալական գործառույթը շատ տեսաբանների պնդմամբ մեկնաբանվում է որպես պետության կազմակերպարարական և պրակտիկ գործունեության ուղղություն, որը կարգավորում է անձի սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման և կյանքի որակի ապահովման գործընթացները հասարակության ու պետության զարգացման կոնկրետ փուլում (Олейникова 21-22):

Սոցիալական պետության հետազոտությամբ զբաղվող մի շարք տեսաբաններ արդարացիորեն նշում են, որ ժամանակակից իրավական պետության փաստը պայմանավորված է սոցիալական պետության առկայությամբ, և իրավական պետության գլխավոր հատկանիշը, ըստ Հիմնական օրենքի, վերջինիս սոցիալական լինելն է (Хесце 220) :

XIX դարի հայտնի գերմանացի իրավաբան Ռոբերտ Ֆոն Մոլը դիտարկել է իրավական պետության կյանքական բովանդակությունը սոցիալական խնդիրների լուծման համատեքստում: Մինչև նա, պետք է նշել, որ իրավական պետության էությունը արտահայտվում էր ֆորմալ օրինականությամբ, այսինքն՝ ընդունված օրենքներին հետևելու պահանջով՝ անկախ դրանց իրավական բովանդակությունից: Իսկ Ռոբերտ Ֆոն Մոլը իրավական պետության նպատակը կառավարման ոլորտում տեսնում էր նրանում, որ պետությունը պետք է ակտիվորեն մասնակցի նաև սոցիալական կյանքի ապահովմանը (Лукашева 115):

Եթե ընդհանրացնենք, ապա սոցիալական քաղաքականությունը ընդհանուր առմամբ սահմանվում է իշխանության կողմից կառավարման և հասարակական խնդիրների լուծման գործընթաց, օրենքների ձևավորում, պահպանում ու փոփոխում՝ ըստ սոցիալական նշանակության նպատակների (Желтов 169-170): Գործընթացային տեսանկյունից այն սահմանվում է որպես պետության գործունեություն՝ ուղղված հասարակության ներսում հավասարության և անհավասարության այնպիսի համամասնության ապահովմանը, որը հնարավոր է դարձնում հասարակության համաչափ զարգացումը և կառավարության կայունությունը (Василик, Вершинин и др. 216): Ինստիտուցիոնալ տեսանկյունից պետության, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների գործունեության կարևորագույն ոլորտներից է, որի նպատակն է հասարակության առանձին խմբերի, ողջ հասարակության և անհատի զարգացումը (Осипов 397):

Ինչպես ցույց է տալիս սոցիալական պետության իրավական հիմքերի վերաբերյալ տարբեր կոնցեպցիաների վերլուծությունը, ժամանակակից սոցիալական պետությանը բնորոշ են ոչ միայն սահմանադրությամբ հաստատված որոշակի սկզբունքների առկայությունը, հստակ մշակված սոցիալական քաղաքականությունը և դրա իրականացման մեխանիզմները, այլ նաև մի շարք այլ սահմանադրական կարգավորումներ, որոնք բացահայտում են սոցիալական պետության սկզբունքն ու ապահովում են վերջինիս իրականացումը: Այդ սահմանադրաիրավական նորմերը ծառայում են որպես հիմք սոցիալական քաղաքականության բովանդակության սահմանման համար: Այս առումով նշանակալի հետաքրքրության են արժանի տարբեր հեղինակների մոտեցումները սոցիալական պետության էության վերաբերյալ:

Այսպես, գերմանացի հետազոտողներին բնորոշ է շուկայական տնտեսության ու քաղաքացիների սոցիալական ապահովության ոլորտում մասնավոր նախաձեռնողականության վրա հիմնված և սոցիալական ծրագրերի իրականացման համար միջոցներ հավաքագրող պետության գաղափարի ներակայացումը (Braun und Niehaus 42):

Բայրի կարծիքով սոցիալական պետությունը կենտրոնացված կառավարող հոգաձուլություն է՝ ապահովելու բոլոր քաղաքացիների կյանքի համար նպաստավոր պայմաններ, որը ներկայացվում է որպես ժամանակակից ժողովրդավարության առաջին դրսևորում, որտեղ սոցիալական արդարությունը հիմնվում է տնտեսական լիբերալիզմի վրա (Bair 9):

Մեկ այլ գերմանացի տեսաբան Կոնրադ Յեսեն նշում է, որ պետությունը կատարում է պլանավորող, կառավարող, արտադրող, բաժանող գործառույթներ: Սահմանադրության հաստատված սոցիալական պետության գաղափարը ենթադրում է հնարավոր սոցիալական և ինդիվիդուալ կյանքը որպես պետության գլխավոր առաջադրանք: Սա ենթադրում է ոչ միայն հասարակության նկատմամբ սոցիալական պատասխանատվություն, սոցիալական պահանջումների բավարարում և սոցիալական ապահովագրություն, այլ նաև սոցիալական պատասխանատվություն միմյանց նկատմամբ, սեփականության իրավունքից բխող սոցիալական պարտավորությունների իրականացում և այլն (Xecce 98,108, 111):

Այս համատեքստում հատկանշական է հատկապես առաջատար երկրների փորձը: Մասնավորապես, ԳՂՀ Դաշնային սահմանադրական դատարանի որոշումներում սոցիալական պետության կարևորագույն նպատակների շարքում նշվում են՝ կարիքավոր անձանց մասին հոգաձուլություն, արժանի նվազագույն կենսաապահովման երաշխիք, սոցիալական հարաբերություններում թույլ կողմերի շահերի հաշվի առնում, անաշխատունակ անձանց նկատմամբ հոգաձուլություն, հասարակության բարեկեցության բարձրացման նպատակը և այլն (Лимбах 11):

Գերմանիան Եվրոպայի առաջին երկիրն է, որտեղ սկսվեց սոցիալական պետության կառուցման գործընթացը. դեռևս XIX դարի վերջին ընդունվեցին օրենքներ, որոնք կանխորոշում էին սոցիալական քաղաքականության լայնածավալ իրականացումը, որի շնորհիվ էլ ձևավորվեց համընդհանուր բարեկեցության սոցիալական պետությունը՝ դիտարկվելով աշխարհի տարբեր երկրների փորձագետների կողմից որպես սոցիալական պետության կառուցման լավագույն օրինակ:

«Սոցիալական պետություն» տերմինը առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց գերմանացի հայտնի տնտեսագետ Լորենց Փոն Շտայնի կողմից: Նա առաջ քաշեց այն գաղափարը, որ ցանկացած միապետություն կունենա անկում, եթե չգտնի իր մեջ ուժ՝ դառնալու սոցիալական բարեփոխումների միապետություն: Շտայնը առաջինն էր նաև, որ սոցիալական խնդիրը առնչում էր աշխատանքային խնդրին՝ նշելով, որ պետական իշխանության միջոցով աշխատավոր դասի անձինք կկարողանան իրենց աշխատանքից կախվածության մեջ գտնվող կարգավիճակը փոխել և դառնալ անկախ ու նյութապես ազատ քաղաքացիներ (Кочеткова 69): Նա

կարևորում էր պետության հայրիշխանական դերի ստանձնումը հասարակության անխտիր բոլոր անդամների նկատմամբ՝ անկախ նրանց սոցիալական պատկանելիությունից:

Գործնականում սոցիալական քաղաքականության իրականացման ուղին առաջինը բռնեց Գերմանիայի կանցլեր Օտո ֆոն Բիսմարկը. 1881 թվականին նա հայտարարեց, որ կնպաստի աշխատավորների սոցիալական ապահովության համակարգի զարգացմանը և Ռայխսթագում անցկացրեց սոցիալական ապահովագրության մասին երեք հիմնական օրենքները. 1883 թվականին ընդունվեց «Հիվանդության ապահովագրության մասին», 1884 թվականին՝ «Դժբախտ պատահարների մասին», իսկ 1889 թվականին՝ «Ճերմության և հաշմանդամության մասին» օրենքները: Այսպես ձևավորվեցին գերմանական սոցիալական ապահովության համակարգի երեք հիմնական ուղղությունները, որոնք պահպանվել են մինչ օրս: Սոցիալական պետության ձևավորման ժամանակահատվածը, որն ընդգրկում է 1871-1914 թվականները, ստացել է «սահմանդրական» անվանումը (Henkel 38):

Ընդունված օրենքները նախատեսում էին սոցիալական երաշխիքներ բնակչության ամենից անապահով խմբերի՝ արդյունաբերության ոլորտի աշխատակիցների համար: Նրանք երկար ժամանակ համարվում էին նոր ձևավորվող սոցիալական պետության գլխավոր առաջնահերթություն ունեցող խումբը: Բիսմարկի կողմից սոցիալական ապահովության համակարգը աստիճանաբար զարգացում ապրեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: 1885-1903 թվականներին այս համակարգում կատարվեցին 11 համալրումներ. 1891 թվականին ներդրվեց արհեստագործական արտադրության ոլորտում աշխատանքի ապահովագրության համակարգը: 1903 թվականին ընդունված օրենքը կարգավորում էր մանկական աշխատանքն ու կանանց աշխատանքային օրը, իսկ 1905 թվականին ընդունված օրենքով վերահսկվում էին սակագնային համաձայնագրերը:

1911 թվականին ընդունվեց «Աշխատողների սոցիալական ապահովության մասին» օրենքը և Ապահովագրության միասնական կոդեքսը: Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը ապահովագրական համակարգը ներառում էր նաև համապատասխան աշխատակցի ընտանիքի անդամներին (Handbuch der Geschichte der Sozialpolitik im Deutschen Kaiserreich (1871 - 1918) 102,104,106):

Այս քաղաքականությունը դարձավ Եվրոպայի մի շարք երկրների կառավարությունների համար լավագույն օրինակ: Պատահական չէ, որ սոցիալական քաղաքականության հայտնի հետազոտող գերմանացի Խ. Բուլտերվերգը այս ժամանակաշրջանը համարում է գերմանական սոցիալական պետության «ոսկե շրջան»՝ ընդգծելով պետության սոցիալական գործառույթների, կառույցների և ապահովագրված քաղաքացիների թվաքանակի արագ աճը (Butterwegge 5):

Առաջին համաշխարհային պատերազմից հետո հասարակության մի շարք անապահով խմբերի բողոքի ալիքը, ինչպես նաև մինչև 1923 թվականը ձգվող աշխատավորական շարժումները ստիպեցին կառավարությանը իրականացնել մի շարք պահանջներ: Նախ 1920 թվականին ընդունվեց օրենք՝ «Պատերազմում զոհված անձանց ընտանիքներին փոխհատուցում տրամադրելու մասին»: Ընդունվեց նաև օրենք՝ «Աշխատանքային կոլեկտիվների, արտադրական խորհուրդների ձևավորման մասին»: 1891 թվականին կատարվեցին լրացումներ նաև օրենքում՝ «Աշխատողների արտադրական գործընթացի կառավարմանը (Mitbestimmung) մասնակցության մասին»: 1922 թվականին ընդունվեց «Երիտասարդներին բարեգործական, հասարակական աջակցության տրամադրման մասին» օրենքը՝ ամրագրելով նրանց՝ հասարակության կողմից կրթության և խնամակալության իրավունքը: 1923 թվականին ընդունվեց օրենք՝ նաև «Հանքափորների սոցիալական ապահովության մասին»: Ստեղծվեցին նաև պետական արբիտրաժային դատարաններ

հանքափորների և հանքերի սեփականատերերի միջև կոնֆլիկտների հարթեցման նպատակով (Neumann und Schaper 43-44):

Նացիստական իշխանությունների օրոք ևս ընդլայնվեց սոցիալական քաղաքականության ոլորտում օրենսդրական համակարգը: 1938 թվականին ընդունվեց «Երիտասարդության բազմակողմանի պաշտպանության մասին» օրենքը և այլ օրենքներ (Neumann und Schaper 44):

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը առաջինն էր, որտեղ սահմանադրորեն ամրագրվեցին սոցիալական պետության արժեքները: 1949 թվականին ընդունված Հիմնական օրենքի (Սահմանադրություն) 20-րդ հոդվածը հռչակում է, որ ԳԴՀ-ն դեմոկրատական, սոցիալական և դաշնային հանրապետություն է: 28-րդ հոդվածը բովանդակում է սոցիալական և իրավական պետության գաղափարը (ԳԴՀ Սահմանադրություն 23.05.1949, հոդ. 28): Սոցիալական պետության գլխավոր, կենտրոնական խնդիրը քաղաքացիների՝ պետության կողմից սոցիալական երաշխիքներ ստանալու իրավունքի իրացման ապահովումն է: Այդ երաշխիքները ոչ միայն ստացան իրավական ամրագրումներ, այլ նաև դարձան պետության գլխավոր առաջնահերթություն:

Պետք է նշել, որ «իրավական պետություն» և «սոցիալական պետություն» հասկացությունները ԳԴՀ-ում դարձան անբաժանելի և հավասար: Եվ եթե Արևմուտքի մի շարք երկրներում սոցիալական պետության եռությունը նկարագրելու համար կիրառվում է «համընդհանուր բարեկեցության պետություն» տերմինը, ապա Գերմանիայում մինչ օրս գործածվում են «սոցիալական պետություն», «սոցիալական շուկայական տնտեսություն» և «սոցիալական իրավական պետություն» հասկացությունները (Bernhard und Zapf 145): Գերմանիայում այս ոլորտում իրականացվող քաղաքականությանը շատ մեծ ուշադրություն է դարձվում նաև մեր օրերում, և այն բոլոր օրենքները, որոնք ստեղծվել են դեռևս Նախորդ դարից, այսօր ավելի են կատարելագործվել՝ ստեղծելով կայուն երաշխիքներ հետագա զարգացման համար:

Չնայած սոցիալական պետության հայեցակարգի ավելի քան հիսուն տարվա պատմությանը՝ պետք է նշել, որ սոցիալական արդյունավետ քաղաքականության իրականացման հիմնահարցը դեռևս արդիական է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների, մասնավորապես հետխորհրդային պետությունների համար: Նախկին սովետական հանրապետությունների անկախ զարգացման ճանապարհը սոցիալական ոլորտում եղավ ավելի դժվար, ծանր և անկանխատեսելի, քան պատկերացելի էր արմատական սոցիալ-տնտեսական բարեփոխումների մեկնարկի ժամանակ, որոնց շարքում բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրություն 22.12.2015, հոդած 1):

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման զարգացման ընթացքը պայմանականորեն բաժանվում է մի քանի փուլերի, որոնցից առաջինը շուկայական հարաբերությունների ձևավորման ժամանակահատվածն է՝ 1991-1995 թվականները: Հայաստանի անցումը կենտրոնացված պլանային տնտեսությունից դեպի շուկայական տնտեսության հարթ չի ընթացել. այդ ընթացքում տեղի ունեցան տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն ունեցող մի շարք վայրիվերումներ:

Երկրորդ փուլը պայմանականորեն ընգրկում է 1996-2000 թվականները, երբ սկիզբ դրվեց սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերի տարանջատմանը: Անկախության տասը տարիների ընթացքում ՀՀ-ում իրականացված սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումները չեն բխել հստակ մշակված ոլորտային քաղաքականությունից և

եղել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթի («Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2003» 93): Սակայն սոցիալական պաշտպանության ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է առանձնացնել բնակչության սոցիալական պաշտպանության նոր կառուցակարգերի ստեղծումը, ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը և ոլորտի բարեփոխումներին ուղղված մի շարք այլ միջոցառումների իրականացումը:

Երրորդ փուլը, որը ներառում է 2001 թվականից մինչ մեր օրերը ընկած ժամանակահատվածը, սոցիալական քաղաքականության ոլորտում արմատական բարեփոխումների իրականացման շրջանն է, երբ կանխորոշվեցին բարեփոխումների ընթացքն ու ուղղությունները:

Կարևորելով սոցիալական քաղաքականության կատարելագործումը՝ Հայաստանը այս ոլորտում բավական բարեփոխումներ է իրականացրել, ինչը դրական շարժընթաց է արձանագրել այս հարաբերություններում, սակայն ոլորտն ամբողջապես կայացած տեսելու համար կան չօգտագործված բավական հնարավորություններ: Այն առավել արդյունավետ դարձնելու համար պետք է հաշվի առնել տարբեր երկրներում առկա փորձը, իրականացված բարեփոխումները, ընդունել համապատասխան օրենքներ, բարելավել հանրության կարիքները և այլն: Ի տարբերություն ԳԳՀ-ի, որտեղ սոցիալական պետության կառուցման գործընթացը դեռ վաղ փուլերում աչքի է ընկնում հստակ մշակված հայեցակարգով, համապարփակ բնույթով և ներկայանում է հասարակության տարբեր շերտերի շահերն արտահայտող հստակ օրենքների տեսքով, ՀՀ-ում անկախացումից ի վեր սոցիալական քաղաքականությունը իրականացվում է հիմնականում առանձին մշակված ռազմավարությունների տեսքով: Այս և նմանատիպ դեպքերը պետք է կարգավորվեն համապատասխան օրենսդրության ընդունմամբ, որոնք էլ կերաշխավորեն ոլորտի հետագա զարգացումը:

Եզրակացություն

Ժամանակակից պետական արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ են այնպիսի ընթացակարգերի մշակումն ու իրականացումը, որոնք էլ ավելի կհեշտացնեն հասարակության պահանջմունքներն ու սոցիալական խնդիրները: Ուստի այս համատեքստում չափազանց կարևոր է պետության կողմից հստակորեն մշակված սոցիալական քաղաքականության իրականացումը: Այն մարդկային հանրույթի և սոցիալական հարաբերությունների տարբեր ոլորտներում անհատի և պետության հարաբերությունների ներդաշնակեցման մշակույթ է, մյուս կողմից՝ նաև պետական իշխանության մշտապես թարմացվող գործունեության, փոխհարաբերությունների համակարգ՝ միտված մարդկային զարգացմանն ու սոցիալական ապահովությանը: Այս համատեքստում ուսումնասիրության են արժանի առաջատար երկրների, հատկապես ԳԳՀ-ի փորձը, որը Եվրոպայում առաջիններից էր, որ պետական համակարգի բարեփոխումների շրջանակում ներդրեց և զարգացրեց սոցիալական քաղաքականության այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառումը նպաստեց հասարակության լայն շրջանակների համերաշխությանն ու «լավ կառավարմանը»: ՀՀ-ն սոցիալական քաղաքականության ոլորտում նույնպես իրականացրել է բազմաթիվ բարեփոխումներ, սակայն դրանք եղել են հիմնականում ոլորտային բարեփոխումների տեսքով: Պետք է մշակել և զարգացնել այնպիսի մի հայեցակարգ, որը կերաշխավորի ոլորտի հետագա զարգացումը:

Օգտագործված գրականություն

1. Արմենակյան, Ռուզաննա. *Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը*. ԵՊՏԻ, Երևան, 2004:
2. Գյոզալյան, Վարդուշ. *Սոցիալական քաղաքականություն, ուս. ձեռնարկ*. Տիր հրատարակչություն, Երևան, 2017:
3. *Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2003*. Երևան, 2001:
4. Баркер, Роберт. *Словарь социальной работы*, Логос, Москва, 1994.
5. Василик, Михаил, и др.. *Политология: Словарь-справочник*. Гардарики, Москва, 2001.
6. Григорьева, Ирина. *Социальная политика и социальное реформирование в России в 90-х годах*. СПб.. Санкт-Петербург, 1998.
7. Желтов, Виктор. *Основы политологии*. Феникс, Ростов н/Д., 2004.
8. Лукашева, Елена. *Права человека и правовое социальное государство в России*. Норма, Москва, 2011.
9. Осипов, Геннадий. *Российская социологическая энциклопедия*. НОРМА-ИНФРА, Москва, 1999.
10. Павленок, Петр. *Основы социальной работы*. ИНФРА-М, Москва, 1997.
11. Хессе, Конрад. *Основы конституционного права ФРГ*. Юридическая литература, Москва, 1981.
12. Хохлова, Мария, и Эрнест Бачурин. *Социальная политика: практикум*. СФУ, Красноярск, 2010.
13. Bair, Horst. *Ehrlichkeit im Sozialstaat*. Weinheim, Zürich, 1988.
14. Braun, Hans, und Mathilde Niehaus. *Sozialstaat Bundesrepublik Deutschland auf dem Weg nach Europa*. New York: Campus Verlag, Frankfurt/Main, 1990.
15. Butterwegge, Christoph. *Krise und Zukunft des Sozialstaates*. Verlag für Sozialwissensch, Wiesbaden, 2012.
16. *Handbuch der Geschichte der Sozialpolitik im Deutschen Kaiserreich (1871 - 1918)*. München, 1996.
17. Henkel, Michael. *Sozialpolitik in Deutschland und Europa*. Sömmerda GmbH, Sömmerda, 2002.
18. Neumann, Lothar, und Klaus Schaper. *Die Sozialordnung der Bundesrepublik Deutschland*. Campus Verlag, Frankfurt/M, 2008.
19. Schäfers, Bernhard, und Wolfgang Zapf. *Handwörterbuch zur Gesellschaft Deutschlands*. Bundeszentrale für politische Bildung, Bonn, 1998.
20. Զախարյան, Էդգար. «Հանրային կառավարում» հասկացության սահմանման հարցի շուրջ»։ «*Բանբեր Երևանի համալսարանի միջ. հարսբ., քաղաքագիտություն*», № 3, 2019:
21. Капицын, Владимир. «Социальная политика и право: сущность и взаимозависимости». *Российский журнал социальной работы*, № 8, 1998.
22. Кочеткова, Людмила. «Теория социального государства Лоренца фон Штейна», *Философия и общество* 3, 2008.
23. Лимбах, Юрий. «Цели социального государства: содержание и развитие в решениях Конституционного Суда» *Российская юстиция*, № 8, Август 2002.
24. Олейникова, Светлана. «Социальная функция государства: история и современность» *Правовая политика и правовая жизнь*, № 4, 2011.
25. ԳԴՀ *Սահմանադրություն*. 23.05.1949, հոդ. 28, <https://www.gesetze-im-internet.de/gg/GG.pdf>:
26. ՀՀ *Սահմանադրություն*. 22.12.2015, ՀՀՊՏ 2015.12.21, Հատուկ թողարկում, հոդ. 1118, գլուխ 1-ին, հոդված 1, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>.

WORKS CITED

1. Armenakyan, R'uzanna. *Bnakchut'yan kensamakardaky ev petut'yan so'tsialakan qaxaqakanut'yuny'*. EPTI, Erevan. [*The living standards of the population and the social policy of the state*. YSEI, Yerevan] 2004. (In Armenian)
2. Bair, Horst. *Ehrlichkeit im Sozialstaat*. Weinheim, Zurich. [*Honesty in the welfare state*. Weinheim, Zurich] 1988. (In German)
3. Barker, Robert. *Slovar' social'noj raboty*. Logos, Moskva. [*Dictionary of social work*. Logos, Moscow] 1994. (In Russian)
4. Braun, Hans, und Mathilde Niehaus. *Sozialstaat Bundesrepublik Deutschland auf dem Weg nach Europa*. New Jork: Campus Verlag, Frankfurt/Main. [*Welfare state of the Federal Republic of Germany on the way to Europe*, New York: Campus Publishing, Frankfurt] 1990. (In German)
5. Butterwegge, Christoph. *Krise und Zukunft des Sozialstaates*. Verlag für Sozialwissensch, Wiesbaden. [*Crisis and future of the welfare state*. Social Sciences Publishing, Wiesbaden] 2012. (In German)
6. Grigor'eva, Irina. *Social'naja politika i social'noe reformirovanie v Rossii v 90-x godakh*. SPB, Sankt-Peterburg. [*Social policy and social reform in Russia in the 90s..* SPB, Saint Petersburg] 1998. (In Russian)
7. Gyozyalyan, Vardush. *Sotsialakan qaxaqakanut'yun, us. d'zernark*. Tir hratarakchutyun, Erevan. [*Social policy. Textbook*. Yerevan] 2017. (In Armenian)
8. *Handbuch der Geschichte der Sozialpolitik im Deutschen Kaiserreich (1871 - 1918)*. München, [*Handbook of the History of Social Policy in the German Empire (1871-1918)*. Munich] 1996. (In German)
9. Henkel, Michael. *Sozialpolitik in Deutschland und Europa*. Sömmerda GmbH, Sömmerda. [*Social policy in Germany and Europe*. Sommerda GmbH, Sömmerda] 2002. (In German)
10. Hesse, Konrad. *Osnovy konstitucionnogo prava FRG*. Juridicheskaja literatura, Moskva. [*Fundamentals of the constitutional law of Germany*. Legal literature, Moscow] 1981. (In Russian)
11. Khohlova, Marija, I Jernest Bachurin. *Social'naja politika: praktikum*. SFU, Krasnojarsk, [*Social policy: workshop*. SFU, Krasnoyarsk] 2010. (In Russian)
12. Lukasheva, Elena. *Prava cheloveka i pravovoe social'noe gosudarstvo v Rossii*. Norma, Moskva. [*Human rights and the legal social state in Russia*. Norma, Moscow] 2011. (In Russian)
13. *Mardkayin zargacman zekuyc, Hayastan 2003*. Erevan. [*Human Development Report, Armenia 2003*. Yerevan] 2001. (In Armenian)
14. Neumann, Lothar, und Klaus Schaper. *Die Sozialordnung der Bundesrepublik Deutschland*. Campus Verlag, Frankfurt/M. [*The social order of the Federal Republic of Germany*. Campus Publishing, Frankfurt/M.] 2008. (In German)
15. Osipov, Gennandij. *Possijskaja sociologicheskaja yenciklopedija*. NORMA-INFRA, Moskva. [*Russian sociological encyclopedia*. NORMA-INFRA, Moscow] 1999. (In Russian)
16. Pavlenok, Petr. *Osnovy social'noj raboty*. INFRA-M, Moskva. [*Fundamentals of social work*. INFRA-M, Moscow] 1997. (In Russian)
17. Schäfers, Bernhard, und Wolfgang Zapf. *Handwörterbuch zur Gesellschaft Deutschlands*. Bundeszentrale für politische Bildung, Bonn, [*Dictionary of German society*. Federal Agency for Civic Education, Bonn] 1998. (In German)
18. Vasilik, Mihail, i dr.. *Politologija: Slovar'-spravochnik*. Gardariki, Moskva. [*Political Science: Dictionary-Reference*. Gardariki, Moscow] 2001. (In Russian)

19. Zheltov, Viktor. *Osnovy politologii*. Feniks, Rostov n/D, [Fundamentals of Political Science. Fenix, Rostov-on-Don] 2004. (In Russian)
20. Kapicyan, Vladimir. "Social'naja politika i pravo: sushhnost' i vzaimozavisimosti". *Rossijskij zhurnal social'noy raboty*, № 8 ["Social policy and law: essence and interdependencies". *Russian Journal of Social Work*, № 8] 1998. (In Russian)
21. Kochetkova, Ljudmila. "Teoria social'nogo gosudarstva Lorenca fon Shtejna". *Filosofija i obshhestvo* 3. ["Lorenz von Stein's theory of the welfare state". *Philosophy and society* 3] 2008. (In Russian)
22. Limbax, Jurij. "Celi social'nogo gosudarstva: sodержanie i razvitie v reshenijax Konstitucionnogo Suda". *Rossijskaja justicija*, № 8. ["Goals of the welfare state: content and development in the decisions of the Constitutional Court". *Russian justice*, № 8] August 2002. (In Russian)
23. Olejnikova, Svetlana. "Social'naja funkciya gosudarstva: istorija i sovremennost'". *Pravovaja politika i pravovaja jizn'*, № 4. ["The social function of the state: history and modernity". *Legal policy and legal life*, № 4] 2011. (In Russian)
24. Qalant'aryan, E'dgar. ««Hanrayin karavarum» haskacut'yan sahmanman hartsi shurdj». *Banber Erevani hamalsarani. Mij. Harab., Qaxaqagitut'yun*, № 3 ["On the issue of defining the concept of "Public Administration"". *Banber – Bulletin of Yerevan university, int. rel., political science*, Yerevan] 2019. (In Armenian)
25. *GDH Sahmanadrut'yun*. 23.05.1949, hod. 28, <https://www.gesetze-im-internet.de/gg/GG.pdf>. [*Constitution of the Federal Republic of Germany*. 23.05.1949, art. 28]. (In Armenian)
26. *HH Sahmanadrut'yun*. 22.12.2015, HHPT 2015.12.21, Hatuk togharkum hod. 1118, glux 1-in, hodvac' 1-in, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>. [*Constitution of the Republic of Armenia*. Official bulletin of the Republic of Armenia 2015.12.21, Special issue art. 1118, h. 1st, article 1st]. (In Armenian)

ON THE ISSUE OF SOCIAL POLICY: THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE FEDERAL REPUBLIC OF GERMANY

EDGAR KALANTARYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Public Administration,
Ph.D. in Political Sciences, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

ANI NERSISYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Public Administration, Master in Public Policy
Yerevan, the Republic of Armenia*

The article's aim is to reveal social policy's essence and peculiarities, consider it as a key factor in the public administration modernization, evaluate its role in the public administration context. Our purpose is to underline the supremacy of social state's concept guaranteeing a more democratic government system.

The basic provisions, concepts, models, and methods of classical and modern theories of public administration, political science, and law served as the theoretical basis

for solving the research's posed problems. Comparative, systemic methods and the method of analysis are the research's general basis.

We concluded that effective social policy implementation as a society's sustainable development basis is significant to establish a social state. Therefore, having a clearly developed concept with a specifically drafted development strategy is important in this field.

The analysis revealed that much attention is paid to social policy in Germany: the last century laws have been improved to guarantee further development. In Armenia, despite the implemented reforms, many unused opportunities exist in this sphere. Therefore, the sphere's development should be based on legislative regulations, strengthening of democratic governance structures, etc.

Keywords: *public administration system, social policy, social state, social security, social justice, social responsibility, social reforms, effective governance, social guarantee, legal basis.*

К ВОПРОСУ О СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКЕ: ПРИМЕР РА И ФРГ

ЭДГАР КАЛАНТАРЯН

*преподаватель кафедры государственного управления
факультета международных отношений
Ереванского государственного университета,
кандидат политических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

АНИ НЕРСИСЯН

*магистр государственной политики
кафедры государственного управления
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является раскрытие сущности и особенностей социальной политики, ее рассмотрение как ключевого фактора модернизации государственного управления, оценка ее роли в контексте системы государственного управления.

Наша задача – указать на превосходство концепции социального государства, которое будет гарантировать более демократическую систему управления.

Теоретической основой для решения задач, поставленных в исследовании, стали основные положения, концепции, модели и методы классических и современных теорий государственного управления, политологии и права. Общей методологической основой проведения исследования являются аналитические, сравнительные, систематические методы.

В результате исследования сделан вывод о том, что в процессе становления социального государства важна эффективная реализация социальной политики как основы устойчивого развития общества. Поэтому важно иметь четко проработанную концепцию в этой сфере, с конкретной разработанной стратегией развития.

В результате объективного анализа, проведенного в рамках исследования, мы пришли к выводу о том, что в настоящее время в Германии социальной политике уделяется большое внимание; законы, принятые в прошлом веке, сегодня усовершенствовались, создав устойчивые гарантии для дальнейшего развития. В случае с Арменией, несмотря на проведенные реформы, достаточно неиспользованных возможностей в этой сфере. Поэтому дальнейшее развитие сферы должно быть обусловлено соответствующим законодательным регулированием, укреплением демократических структур управления и т. д.

Ключевые слова: *система государственного управления, социальная политика, социальное государство, социальное обеспечение, социальная справедливость, социальная ответственность, социальные реформы, эффективное управление, социальная гарантия, правовые основы.*

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԻՐԸ ՖՐԱՆՍԻԱ-ԹՈՒՐԵԻԱ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ***

ՀՏԴ 327

DOI: 10.52063/25792652-2022.1.12-102

ՍԱՐԻԱՍ ԹՈՓԱԿՅԱՆ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և
դիվանագիտության ամբիոնի սասյիրանտ,
«Գիտական Արցախ» պարբերականի պատասխանատու քարտուղար,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mariam.topakyan@gmail.com

Հոդվածի նպատակն է ներկայացնել Ղարաբաղյան հիմնախնդրի դերը և
նշանակությունը Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների համատեքստում,
գնահատել դրա ազդեցությունը երկու երկրների միջև հարաբերությունների
դինամիկայի ծավալման ընթացքի՝ որպես երկկողմ հարաբերությունների
կարևոր հանգույցի վրա, որն առ այսօր համարվում է ֆրանս-թուրքական
հարաբերությունների թեժ կետերից մեկը: Վերոնշյալ նպատակից ելնելով՝
ուսումնասիրության առանցքում դրվել են հետևյալ խնդիրները՝ ա) ուսումնա-
սիրել տարբեր տարիների ընթացքում Ղարաբաղյան հիմնախնդրի
առնչությամբ Ֆրանսիայի և Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումները,
նրանց կողմից վարվելիք քաղաքականությունը, բ) քննության ենթարկել տեղի
ունեցած աշխարհաքաղաքական այն գործընթացները, իրողություններն ու
իրադարձությունները, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել
Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ծավալվող բանակցային գործընթացի ու
այդ համատեքստում Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների վրա:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են պատմահա-
մեմատական բովանդակային ու արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի
համադրման, վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ
ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա իր մեծ ազդեցությունն
ունեցող հայկական գործոնի բաղկացուցիչներից մեկը Ղարաբաղյան
հիմնախնդիրն էր, որի շուրջ երկու երկրների տարբեր և միևնույն ժամանակ
իրենց էությամբ հակադիր դիրքորոշումներն ու դրա վերաբերյալ որդեգրած
քաղաքականությունը, որը երկրների ռազմավարական հետաքրքրու-
թյունների, շահերի, նպատակների ծրագրերի արտահայտությունն է, մինչև օրս
իրենց անմիջական ներգործությունն ունեն երկկողմ հարաբերությունների
զարգացման դինամիկայի վրա՝ փոփոխություններ առաջացնելով և նոր
երևույթներ ներդնելով դրա ծավալման ընթացքի վրա:

Հիմնաբառեր՝ Ղարաբաղյան հիմնախնդիր, Ֆրանսիայի Հանրապետություն,
Թուրքիայի Հանրապետություն, հարաբերությունների դինամիկա, պետական շահ,
բանակցային գործընթաց, ԵԱՀԿ Մինսկի խումբ:

* Հոդվածը ներկայացվել է 15.02.2022 թ., գրախոսվել՝ 07.03.2022 թ., տպագրության
ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Ներածություն

Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների ծավալման համատեքստում իրենց կարևորագույն նշանակությունն ունեն հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող իրողություններն ու փոփոխությունները: Երկու երկրների համար ռազմավարական առանցքային նշանակություն ունեցող տարածաշրջանում աշխարհաքաղաքական վերջին զարգացումներից հետո էլ ավելի սրվեցին երկկողմ հարաբերությունները, հանգամանք, որի համատեքստում իր ծանրակշիռ դերն ունի նաև հայկական գործոնը, որն իր բոլոր բաղադրատարրերով վճռորոշ ներգործություն ունի Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների զարգացման ու ծավալման դինամիկայի վրա՝ անմիջական ազդեցություն ունենալով և որոշակի փոփոխություններ ներդնելով դրանում: Ֆրանս-թուրքական հարաբերություններում հայկական գործոնի կարևորագույն բաղադրատարր է Ղարաբաղյան հիմնախնդիրը, որի շուրջ ոչ միայն տարբեր են երկու երկրների պաշտոնական, այլև միմյանց հակադիր դիրքորոշումները, որոնք էլ սահմանում են երկրների վերաբերմունքը և քաղաքականությունը խնդրո առարկա թեմայի վերաբերյալ:

Ղարաբաղյան հիմնախնդիրը Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների համատեքստում 1990-ական թվականներին

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքական օրակարգի և ազգային անվտանգության առանցքային խնդիրն է («Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»), որից անմիջականորեն բխում է Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը հիմնախնդրի առնչությամբ («Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր»): Ֆրանսիայի Հանրապետության հետ ունեցած պատմական հարուստ անցյալ ունեցող հարաբերությունները Հայաստանի համար կարևորագույն նշանակություն ունեն նաև Արցախյան հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից: Ֆրանսիան համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարներից է, որն իր շահերն ու հետաքրքրություններն ունի աշխարհի տարբեր տարածաշրջաններում, ներառյալ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Հարավային Կովկասում, ուստի Հայաստանի հետ ունեցած մշտապես ամրապնդվող հարաբերությունների վրա հիմնվելով՝ Ֆրանսիան ձգտում է ամրապնդվել և քաղաքական ազդեցություն ունենալ նաև այս տարածաշրջանում:

Եվ, այսպես, Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական հրապարակումներում, որոնք վերաբերում են Հարավային Կովկասի երկրների հետ թուրքական պետության հարաբերություններին, մասնավորապես անդրադարձ կատարելով՝ հակամարտության կողմ հանդիսացող Ադրբեջանի հետ հարաբերություններին և Արցախյան հիմնախնդրին՝ նշված է. «Թուրքիան խորը պատմական և մշակութային կապեր ունի Հարավային Կովկասի հետ, որն իր համար ծառայում է որպես Կենտրոնական Ասիային կապող կամուրջ:... ԽՍՀՄ կազմալուծումից հետո Թուրքիան առաջին երկրներից էր, որ ճանաչեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի անկախությունը: Հաջորդող տարիներին Թուրքիան լավ հարաբերություններ է զարգացրել Ադրբեջանի և Վրաստանի հետ: Այնուամենայնիվ, հայ-թուրքական հարաբերությունները չկարողացան ձեռք բերել նույն թափը Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի օկուպացիայի և Թուրքիայի նկատմամբ Հայաստանի բացասական վերաբերմունքի պատճառով: Այն բանից հետո, երբ 1993 թվականին Հայաստանը գրավեց ադրբեջանական Քելբաջարի շրջանը, երկու երկրների միջև սահմանը փակվեց: ...Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն հաստատելու նպատակով Թուրքիան աջակցում է տարածաշրջանում (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա և Հարավային Օսեթիա) հակամարտությունների

կարգավորմանն Ադրբեջանի ու Վրաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության շրջանակներում: Այս համատեքստում Թուրքիան պահպանում է նաև Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու իր ցանկությունը: Այնուամենայնիվ, գործընթացն ընդհատվեց, մի կողմից, Հայաստանի կողմից Ցյուրիխյան արձանագրությունների կասեցմամբ, ապա՝ 2015 թվականին փետրվարին խորհրդարանից հետ կանչելով: Արձանագրությունները դեռ գտնվում են Թուրքիայի խորհրդարանի օրակարգում» («Güney Kafkasya Ülkeleri İle İlişkiler»):

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հանգել ենք այն եզրահանգման, որ քաղաքական ինստիտուտների կարևորությունը կախված է քաղաքական

նպատակադրումից, և որ ինստիտուտների կայունությունը մեծապես հիմնվում է կաճանային կախվածության վրա:

Ջիմնաբառեր` ընտրական համակարգ, կուսակցական համակարգ, ինստիտուցիոնալ միջավայր, կառավարման ձև, վարչակարգի անկայունություն, կառավարման էֆեկտիվություն, մեխանիկական և հոգեբանական քվեարկություն, կախվածության կաճան:

О ВОЗДЕЙСТВИИ ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ НА ПАРТИЙНУЮ СИСТЕМУ И ЕЕ ЗАВИСИМОСТЬ ОТ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ

ТИГРАН МУГНЕЦЯН

*аспирант кафедры политического управления и публичной политики
Академии Государственного Управления РА,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является исследование теоретических основ политических институтов, в частности, избирательного института и его влияние на устройство политических партий. Кроме того, в статье изучается институциональное поведение избирательных систем в зависимости от формы правления.

Для этой цели поставлены задачи детального изучения теоретических подходов Линца, Липсета и Горовитца, касающихся форм правлений, а также модели воздействия Коломера и избирательная, партийная система.

Для выполнения указанных задач используются дискурс -анализ и сравнительный метод. Для каждой институциональной модели разбираются их преимущества и недостатки: от гибкости формирования правительства, волатильности политического режима до дисциплины в партийной системе и характеристик избирательной системы. Кроме того, также детально дискутированы избирательные системы и их методы воздействия на партийные системы.

Выделяются две важные категории: механистическое и психологическое голосование как основные факторы, которые влияют на партийную систему. В статье при применении категории стабильности партийной системы, описывается воздействие избирательной системы на партийную систему и смену режима.

В качестве заключения статьи является предположение, что конкретный набор политических институтов уместен для конкретных целей и что устойчивость этих институтов держится от колеи зависимости.

Ключевые слова: *избирательная система, партийная система, институциональная среда, форма правления, нестабильность режима, эффективность управления, механистическое и голосование, эффект колеи.*

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՉԱԿՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ*

ՀՏԴ 327.8

DOI: 10.52063/25792652-2022.1.12-135

ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
միջազգային հարաբերությունների և
դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ,
Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարության ավագ քաղծառայող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nush.petrosyan2019@gmail.com

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում վերհանելու Անդրկովկասյան միասնական կառավարության գոյության անհնարինությունը պայմանավորող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության արդյունքները: Նշված համատեքստում միաժամանակ դիտարկվել են նաև Գերմանիայի տարածաշրջանային դերն ու քաղաքականությունը դիտարկվող ժամանակահատվածում:

Հետազոտության նպատակն է նաև դասակարգել Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության փլուզման պատճառ դարձած ներքին և արտաքին գործոնները՝ ընդգծելով անկախ հանրապետությունների ստեղծման գործում միջազգային դերակատարների շահերի սպասարկումը, իսկ ուսումնասիրության խնդիրն է բացահայտել փլուզման պատճառները, վեր հանել տարածաշրջանային շահեր հետապնդող միջազգային դերակատարների, մասնավորապես՝ Գերմանիայի տարածաշրջանային շահերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես առաջնային աղբյուրներ, ինչպիսիք են Հայաստանի ազգային արխիվի որոշ նյութեր, տպագիր փաստաթղթերի՝ առանձին հեղինակների պատկանող ժողովածուներ, այնպես էլ ռուս և արևմտյան առաջատար փորձագետների վերլուծական աշխատանքներ:

Գիտական հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են տվյալների համեմատության, վերլուծության և պատմական հետազոտության մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է պնդել, որ միջազգային իրողությունների նման զարգացման պայմաններում Անդրկովկասյան միացյալ կառավարության փլուզումն այլընտրանք չուներ, քանի որ դրան էր ուղղված ակտիվ դերակատարների քաղաքականությունը: Վերջիններիս շահերը թեև շատ դեպքերում նկատելիորեն անհամատեղելի էին, այնուամենայնիվ անկախ բուլֆերային հանրապետությունների ստեղծումը ամենաշահավետ տարբերակն էր նրանց համար, իսկ անդրկովկասյան ժողովուրդների դեպքում փաստացիորեն անխուսափելի պատմական զարգացման հետևանք էր:

* Հոդվածը ներկայացվել է 04.02.2022 թ., գրախոսվել՝ 03.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Հիմնաբառեր՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագիր, Անդրկովկասյան սեյմ, Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետություն, գերմանա-թուրքական զաղտնի դաշնագիր, Տրապիզոնի բանակցություններ, Բաթումի բանակցություններ, աշխարհաքաղաքական շահեր, պանթուրքական գաղափարախոսություն:

Նախաբան

Կան պատմական իրադարձություններ, որոնց ազգ-պետությունները անմիջական մասնակցություն չեն ունենում, սակայն դրանք ոչ անմիջականորեն, բայց էապես ազդում են այդ ժողովրդի ճակատագրի վրա: Նման պատմական իրադարձություն կարող ենք համարել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Վերջինս կնքվել է 1918 թվականի մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և Զառյակ միության երկրների միջև: Հեղափոխական ու անկայուն իրավիճակը Ռուսաստանում հանգեցրեց Կովկասյան ճակատի փլուզմանը, ինչն էլ հանգեցրեց պայմանագրի կնքմանը՝ նվազագույն կորուստներով պատերազմից դուրս գալու համար:

Պայմանագիրն առնչվում էր նաև անդրկովկասյան ժողովուրդների ճակատագրին, սակայն նրանք չէին մասնակցել այդ պայմանագրի մշակման և կնքման գործընթացին, ինչն էլ դիտարկվող ժամանակահատվածում անդրկովկասյան ժողովուրդների համար պատմական ու քաղաքական երևույթների ոչ շահեկան ընթացքի պատճառ դարձավ:

Գերմանիան մեծ դերակատարում ունեցավ պայմանագրի կնքման և Օսմանյան կայսրության տարածքային ձեռքբերումների հարցում, և թվում է՝ նման պայմաններում լինելով Օսմանյան կայսրության դաշնակից ու նրա վրա ազդեցության լծակ ունեցող պետություն՝ կարող էր ապահովել վերջինիս անցնելիք Կարս, Արդահան և Բաթում նահանգների բնակչության անվտանգությունը, ինչպես նաև պայմանագրի մնացյալ դրույթներով թուրքական պարտավորությունների իրականացումը: Որպես տարածաշրջանում տնտեսական շահեր հետապնդող և հեղինակություն ունեցող երկիր՝ Գերմանիան փորձում էր զսպել թուրքական ծավալապաշտ մոտեցումները, որոնք դուրս էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի տրամաբանությունից, ամեն կերպ ջանքեր էր գործադրում պայմանագրի դրույթների իրականացումը կայսրությանը պարտադրելու համար, սակայն դա հասկանալիորեն արվում էր ոչ թե ուժային, այլ դիվանագիտական մոտեցումներով, ինչը ազդեցիվ մոտեցումներ ունեցող և տարածաշրջանային ինտերվենցիա իրականացնող պետության դեպքում անարդյունավետ էր: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունն առանց Գերմանիայի հետ փոխհամաձայնության ավելի ուշ գնաց Բաթումի պայմանագրի կնքման ճանապարհով, ինչն էլ խորացրեց տարածաշրջանային անկայունությունը՝ ամրապնդելով կայսրության շահերն ու հեղինակությունը Անդրկովկասում:

Գերմանական կառավարության ջանքերը

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կենսագործման ուղղությամբ

1918 թվականի մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի բազմակողմ հաշտության պայմանագիրը ստորագրվեց Խորհրդային Ռուսաստանի, Օսմանյան կայսրության, Գերմանական կայսրության, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի թագավորության միջև: Թեև պայմանագրում հանդես է գալիս հինգ պետություն, սակայն այն համարվում է երկկողմ, քանզի իրավական առումով կնքված է Խորհրդային Ռուսաստանի և Առաջին համաշխարհային պատերազմում որպես դաշնակիցներ հանդես եկող Առանցքի երկրների (Զառյակ դաշինք) միջև: Պայմանագրով Խորհրդային Ռուսաստանն իրեն պարտված էր ճանաչում պատերազմում՝ դուրս գալով պատերազմից: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն առաջին հերթին խայտառակ պայմանագիր էր Խորհրդային Ռուսաստանի համար:

Ռուսաստանը ոչ միայն հսկայական տարածքներ էր զիջում Արևմուտքում, այլև պարտավորվում էր Օսմանյան կայսրությանը վերադարձնել Առաջին աշխարհամարտի ժամանակ գրաված հայկական հողերը: Ավելին, Ռուսաստանի կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում թուրքերին վերադարձնելու նաև 1878 թվականին Ադրիանապոլիսի և Բեռլինի պայմանագրերով Ռուսաստանին կցված Կարսի, Արդահանի շրջանները: Կարսի և Արդահանի շրջանները Օսմանյան կայսրությանը հանձնելու պահանջը ներկայացրին ոչ թե թուրքական, այլ գերմանական կողմի ներկայացուցիչները: Դրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո Գերմանիան, թվում է, պետք է որոշակի պարտավորություններ կրեր Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանի քրիստոնյա ազգաբնակչության անվտանգության ապահովման համար, քանի որ Օսմանյան կայսրության միակ դաշնակիցն էր, միաժամանակ պետություն էր, որն ուներ ազդեցության լծակներ և կարող էր ճնշում գործադրել նրա վրա՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար:

Այս ընթացքում, սակայն, Օսմանյան կայսրությունը, հավատարիմ մնալով իր ավանդական դարձած գործելակերպին, գերմանական դաշնակցին հավաստիացումներ էր տալիս հայ բնակչության հանդեպ անկարգությունների բացառման և խաղաղ հարաբերություններ հաստատելու իր ցանկության մասին, իսկ Գերմանիան էլ շարունակական հիշեցումներով փորձում էր նպաստել թուրքական պարտավորությունների իրականացմանը: Չնայած Գերմանիան բազմիցս բախվել էր թուրքական կեղծ խոստումներին, սակայն նրա վրա ազդելու համար այլ տարբերակ, քան դիվանագիտական մոտեցումն էր, չէր տեսնում:

Գերմանական կառավարության շրջանում մեծագույն անհանգստությունների պատճառ էր Օսմանյան կայսրությունում ծայր առած ազգայնամոլական ու պանթուրքական տրամադրությունների աճը, որը խիստ անցանկալի հետևանքների կարող էր հանգեցնել: Մարտի 17-ին գերմանական արտգործնախարարությունը նամակի միջոցով հայտնում էր Բուխարեստում գտնվող պետքարտուղար Քյուլիմանին, որ Մեծ վեզիրի բացակայությունը Կոստանդնուպոլսից և նրա գտնվելը Բուխարեստում ցավալի իրողություն էն, քանի որ թուրքական ազդեցիկ շրջաններում տարածվել է պանիսլամական ու ազգայնական տրամադրություն, որը կարող է վերացնել միայն Թալեաթը՝ հայերի հանդեպ ստանձնած պարտավորությունների իրականացման վերաբերյալ հայտարարություններ անելով, ինչն էլ արմատախիլ կաներ հակահայկական տրամադրությունները: Նման պայմաններում պետքարտուղարին առաջարկվում էր դրդել Թալեաթին Բուխարեստից հայերի հանդեպ քաղաքական մոտեցումների և հետագա քայլերի առնչությամբ հրահանգներ շտապ ուղարկել Կոստանդնուպոլիս (Lepsius 374-375):

Պատասխան հեռագրում, որը թվագրվում էր մարտի 20-ին, պետքարտուղարը ներկայացնում էր Թալեաթի հետ ունեցած զրույցի արդյունքները: Վերջինս նշել է, որ Բուխարեստից արդյունավետ գործել չի կարող, ուստի Կ. Պոլիս վերադառնալուց հետո խոստացել է արձակել պահանջվող հրամանագիրը (Lepsius 377): Ակնհայտ է, որ այս ամենը թուրքական իշխող վերնախավի կողմից միայն ժամանակ շահելու նպատակ էր: Փաստորեն՝ Գերմանիան Օսմանյան կայսրությանը իր պարտավորությունների իրականացումը դրդելիս թեև զերծ էր մնում բախումներից և ուժի կիրառումից՝ ապավինելով միայն դիվանագիտական մոտեցումներին, սակայն չէր կարող նաև բացարձակապես հաշտվողական լինել:

Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Կարախանի և Չիչերինի ստորագրությամբ ապրիլի 13-ին Գերմանիայի ԱԳՆ ուղարկվեց հեռագիր, որով ներկայացվում էին Կովկասյան ճակատում թուրքական զորքերի կուտակման ծանրագույն հետևանքները Կարսի, Արդահանի և Բաթումի բնակչության համար, որը դարձել էր իր ճակատագրի միակ պատասխանատուն: Նամակում ընդգծվում էր, որ թեև թուրքական ճակատում գերակշռությունը

Ռուսաստանի կողմն էր, սակայն հարկադրված էր հանձնել Կարսը, Արդահանն ու Բաթումը, քանի որ Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակիցն էր, և վերջինս Գերմանիայի աջակցությամբ է այս տարածքները պահանջել, ուստի նամակում հստակորեն ընդգծվում էր, որ հայ ազգաբնակչության նկատմամբ տեղի ունեցող ոճրագործության պատասխանատվությունը ընկնում է Գերմանիայի վրա: Արտաքին գործերի կոմիսարիատը հուլիսի դրել էր Գերմանիայի աջակցության վրա՝ տեղի ունեցող երևույթներին վերջ տալու համար (Documents of political archives of Ministry of Foreign Affairs of Germany written by Mikaelyan 483-484):

Այս ընթացքում Հայոց ազգային խորհրդի կողմից Նիկողայոս Ադոնցի և Հակոբ Չավրիևի ստորագրությամբ Գերմանիայի ԱԳՆ է ուղարկվում մեկ այլ հեռագիր, որում ևս տեղի ունեցող վայրագություններում ընդգծվում էր գերմանական մեղքի առկայության հանգամանքը՝ շեշտը դնելով այն բանի վրա, որ ռուսական զորքերի դուրս գալուց հետո Կարսում ու Արդահանում քրիստոնյա հայ բնակչության, ներառյալ ռուսահայ ու թուրքահայ հատվածի անվտանգության ապահովման նկատմամբ պատասխանատվությունը պատկանում էր Գերմանիային, ուստի Հայոց ազգային խորհուրդը հույս էր հայտնում, որ Գերմանիան կիրացներ այդ պատասխանատվությունը՝ բոլոր հնարավոր միջոցներով ճնշում գործադրելով Օսմանյան կայսրության վրա (Հայրուհի 19-20):

Չնայած այդ ամենին՝ Գերմանիան շարունակում էր դիվանագիտական խողովակներով որոշակի քայլեր իրականացնել՝ բացառելով ուժային միջոցները, ինչի հերթական դրսևորում էր դեսպան Բեռնշտորֆի միջոցով Թալեաթին համաներման մասին հիշեցնելը, որին ի պատասխան՝ հաջորդեցին Թալեաթի հավաստիացումները՝ հայ բնակչության վերադարձի ու փոխհատուցման շուրջ նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Փաստորեն՝ Գերմանիան, հասկանալի պատճառներով Առաջին համաշխարհային պատերազմում իր դաշնակից Օսմանյան կայսրությանը ուժային ճանապարհով որևէ բան պարտադրել չկարողանալով, նրա հետ երկխոսության ողջ ընթացքում շեշտում էր պայմանագրային պարտավորություններ կատարելու առաջնայնությունը, քանի որ Գերմանիային անհանգստացնում էին Բրեստի պայմանագրից հետո կայսրության կողմից ռազմական ճանապարհով տարածաշրջանում առաջնախույժ ձգտումները, ինչն առաջին հերթին հարվածում էր իր տնտեսական շահերին: Այնուամենայնիվ, օսմանյան ռազմատենչ մոտեցումն ու Գերմանիայի կողմից գործնական քայլերի բացակայությունը պատճառ դարձան տարածաշրջանում հերթական ոճրագործ քաղաքականության իրականացման համար:

Գերմանիայի շահերն ու քաղաքականությունը Անդրկովկասում՝ որպես անկախ հանրապետությունների հռչակման դրսևորում

Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության ստեղծման փաստը հիմք հանդիսացավ Օտտո ֆոն Լոսովի կողմից հայտնի հեռագրի համար (1918 թ. ապրիլի 23), որն ուղղված էր Գերմանիայի արտգործնախարարությանը և ներկայացնում էր իրավիճակը Անդրկովկասում, որն այլևս Սեյմի կարգավիճակով գոյություն չուներ: Ըստ նրա՝ թուրքերը Ելիզավետպոլում և թաթարական այլ տարածքներում թուրքական դրոշներ են պարզել, գրավել են Իզդիրը՝ մոտենալով Երևանին, իսկ Թիֆլիսում խուճապային իրավիճակ էր տիրում: Հայկական և ադրբեջանական մարզերի Անդրկովկասյան սեյմի կազմից դուրս գալով՝ այն փաստացիորեն դադարել էր գոյություն ունենալ: Գերմանացի դիվանագետի խոսքերով այն այլևս չկար, որ կարողանար բանակցություններ վարել Օսմանյան կայսրության և Զառյակ դաշինքի երկրների հետ: Օ. ֆոն Լոսովը հավաստիացնում էր՝ Վրաստանը ամրագրել է իր անկախությունը և արտգործնախարար Չիտենկելու միջոցով առաջարկում է Գերմանիային ստանձնել իր մանդատը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Վրաստանը պատմական դժվարին իրավիճակում գտել էր

ամենաբարենպաստ տարբերակը Գերմանիայի աջակցության միջոցով թուրքական սպառնալիքը վերացնելու տեսանկյունից: Նա շատ լավ էր գիտակցում Գերմանիայի հետ փոխադարձ շահեր ունենալու հանգամանքը և ամենահմուտ ձևով շահարկում էր այդ հաղթաթուղիքը:

Նույն հեռագրում Օ. ֆոն Լոսովը հորդորում էր օպերատիվ քայլեր ձեռնարկել վրացական մանդատը ստանձնելու ուղղությամբ, քանի որ այն դիտարկում էր միակ հնարավորությունը՝ կանխելու Վրաստանում թուրքական դիրքերի ամրապնդումը (Documents of political archives of Ministry of Foreign Affairs of Germany written by Mikaelyan 506):

Անդրկովկասյան միասնական կառավարության գոյությունը անիրատեսական էր ու դատապարտված էր փլուզման, և հիմնական ու առաջնային գործոնները ներքին գործոններն էին, այսինքն՝ անդրկովկասյան երեք ժողովուրդների տարակարծությունները, այդ թվում՝ տարբեր քաղաքական կողմնորոշումներն ու շահերի ոչ համատեղելիությունն ու շատ հաճախ նաև բախումը: Ներքին գործոնների թվին կարող ենք դասել նաև սահմանային ու տարածքային վեճերը, որոնք ծայր էին առել երկրների միջև, ինչպես նաև անհանդուրժողականությունն ու անվստահությունը, ինչին զումարվում էր ռազմական միջոցների անբավարար քանակը՝ հանգեցնելով Օսմանյան կայսրության դեմ պայքարում նկատելի ձախողումների: Որպես ներքին գործոն կարող ենք առանձնացնել նաև միջքաղաքակրթային, մասնավորապես կրոնական տարբերությունները, ինչն առաջին հերթին իր արտացոլումն էր ունենում հայ-թաթարական աստիճանաբար սրացող հարաբերություններում՝ խորացնելով նաև տարածքային ու էթնիկական բնույթի վեճերը կողմերի միջև:

Այս ընթացքում իրադրությունն Անդրկովկասում նկատելիորեն սրվեց՝ հատկապես պայմանավորված միջազգային տարբեր դերակատարների շահերով և դրանք իրացնելու ձգտմամբ, ինչն էլ այն վերածել էր մրցակցության թատերաբեմի:

Անդրկովկասը նշված ժամանակաշրջանում կարելի էր որակել որպես տարածաշրջանային ինտեգրացիոն կառույց, սակայն այս դեպքում մենք գործ ունենք մի կառույցի հետ, որտեղ կառուցվածքային տարրերի ինտեգրումը թույլ էր նախևառաջ քաղաքական տարակարծությունների ու տարբեր կողմնորոշումների հետևանքով. անդրկովկասյան թաթարների կողմնորոշումը դեպի թուրքական էր, իսկ հայերի կողմնորոշումն ուղղված էր դեպի Ռուսաստանը, ինչը պատճառ էր դարձել ստանալու «անուղղելի ռուսասերներ» բնորոշումը, իսկ վրացիներն այս շրջանում ունեին գերմանական կողմնորոշում (Պետրոսյան 54-55):

Մասնավորապես դիտարկելով այս շրջանում տարածաշրջանում բավականին ակտիվ դերակատար Գերմանիայի քաղաքականությունը՝ կարող ենք ասել, որ Գերմանիայի քաղաքականությունը Անդրկովկասում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և դրա առաջին շրջանում կարելի է համարել նրա իմպերիալիստական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ մուտք դեպի Փոքր Ասիա և Պարսից ծոց, ինչպես նաև դեպի Յնդկաստան ամուր հիմքերի ստեղծում:

Գերմանիայի համար Վրաստանը դիտվում էր որպես պոտենցիալ կամուրջ դեպի Արևելք: Պատերազմից առաջ Վրաստանն արտադրում էր համաշխարհային մանգանի մոտ մեկ երրորդը, իսկ Գերմանիան ներմուծում էր վրացական ընդհանուր արտադրության մոտ 41 տոկոսը (հանքերը գտնվում էին Արևմտյան Վրաստանում՝ Զիաթուրայում) (Jones):

Չուրաբ Ավալիշվիլին (1876-1944)՝ Վրաստանի ամենախորամիտ դիվանագետներից մեկը, հետագայում իր հուշերում պատկերավոր մեկնաբանել է, որ «Կովկասի գետերն ու ջրվեժները վերածվել են պողպատե գրահի մեջ գտնվող ձիերի (ձիու), որոնք պատրաստ են քաշել գերմանական կապիտալիզմի կառքը դեպի Ասիայի խորքերը» (Avalishvili):

Այս քաղաքականությունը առավել ակտիվացավ 1918 թվականին, երբ գերմանական իմպերիալիզմին հաջողվեց գրավել Ուկրաինան սևծովյան նավահանգիստներով, տարածվել Կովկասի հյուսիսում և մտնել Անդրկովկաս:

Այս փուլում Գերմանիայի նպատակներն ու խնդիրները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ռազմավարական, տնտեսական և քաղաքական: Գերմանիայի հավակնությունները Անդրկովկասի նկատմամբ պայմանավորված էին Անդրկովկասի բարենպաստ աշխարհագրական դիրքով, որը Եվրոպան կապում էր Ասիային, նաև ռազմավարական նշանակությամբ: Այստեղից հնարավոր էր դառնում տարածել ազդեցությունը Իրան, Աֆղանստան նաև Անդրկասպյան շրջաններ, միաժամանակ հնարավոր պատերազմական իրավիճակում հնարավոր կլիներ այն օգտագործել անգլիական ուժերի դեմ հյուսիսիրանական հատվածում:

Անդրկովկասի գրավումը ծրագրելով՝ Գերմանիան փորձում էր այն օգտագործել նաև Խորհրդային Ռուսաստանի դեմ՝ թույլ չտալով հեղափոխության լիակատար հաղթանակ, ինչի արդյունքում այն տարածում կգտներ նաև Մերձավոր Արևելքում: Սակայն Գերմանիայի համար հատկապես կարևոր էր Անդրկովկասի տնտեսական ներուժը՝ Բաքվի նավթը, վրացական մանգանն ու հայկական պղինձը (Пития 10):

Փաստորեն՝ Գերմանիայի առաջին հերթին տնտեսական և միաժամանակ նաև աշխարհաքաղաքական շահերը հիմք հանդիսացան Վրաստանի հովանավորությունը ստանձնելու համար, բայց քանի որ Օսմանյան կայսրությունը տարածաշրջանում վարում էր նվաճողական քաղաքականություն, ուստի հարկ էր ստիպել նրան բանակցային սեղանի շուրջ նստել անդրկովկասյան ժողովուրդների հետ: Այս ընթացքում ապրիլի 27-ին, կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր (Պետրոսյան 131-132), որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության գոտիների, մասնավորապես Գերմանիայի ազդեցության ոլորտ անցան Վրաստանն ու Ադրբեջանը, իսկ Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին անցավ թուրքական վերահսկողության ներքո, թեև Օսմանյան կայսրությունը հակում ուներ դեպի Բաքու, ուստի միաժամանակ պայմանագիր կնքեց մուսավաթականների հետ՝ դեպի Բաքվի նավթը ճանապարհ ձեռք բերելով (Людендорф 598): Ի պատասխան՝ Գերմանիան էլ ստանձնեց վրացական հովանավորությունը, իսկ սա բնավ էլ չէր բխում թուրքական շահերից, ուստի թույլ չտալու համար գերմանական ազդեցության ան տարածաշրջանում՝ թուրքական կողմը որոշեց գնալ բանակցությունների անդրկովկասյան ժողովուրդների հետ, որն էլ կայացավ Բաթումում:

Բաթումի հունիսի 3-ի պարտավորագիրն ու հունիսի 4-ի պայմանագիրը ծանրագույն կացության մեջ դրեցին Նորանկախ հայկական կողմին, որը փաստացիորեն չէր կարող դիվանագիտական հարաբերություններ ունենալ Օսմանյան կայսրության հետ պատերազմող որևէ երկրի հետ (այս պարագայում խոսքը, բնականաբար, Անտանտի երկրների մասին էր), պարփակվելու էր 12 հազ. քառակուսի կիլոմետր տարածքում և անվտանգային առումով կախվածության մեջ էր հայտնվելու Թուրքիայից, այսինքն՝ կորցնում էր սուվերենության զգալի տարրեր:

Նույն օրը օսմանյան կողմը պայմանագիր կնքեց նաև Վրաստանի հետ, որով նրան անցան Կարսը, Արդվինը, Արդահանը, Բաթումը, Ախալքալաքը ու Ախալցխան:

Բաթումի պայմանագիրը Հայաստանի Հանրապետության առաջին արտաքին քաղաքական ակտն էր: Այդ պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը կախման մեջ էր ընկնում Օսմանյան կայսրությունից: Սակայն պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը, Մուղրոսի զինադադարի (1918 հոկտեմբերի 30) կնքումը և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի չեղյալ հայտարարելը հնարավորություն տվեցին Հայաստանի Հանրապետությանը հրաժարվելու Բաթումի պայմանագրից (Կիրակոսյան Ջ. 426-435):

Եթե դասակարգենք Անդրկովկասյան միասնական կառավարության ձևավորմանը խոչընդոտող հիմնական պահանջները, ապա կստանանք հետևյալ պատկերը.

- Անդրկովկասյան երեք երկրների նպատակներում միասնական մոտեցման բացակայությունը անհամաձայնության ու փոխադարձ անվստահության պատճառ էր դառնում:

- Անդրկովկասյան հանրապետությունների ներսում առկա էին քաղաքական տարակարծություններ և արտաքին քաղաքական տարբեր կողմորոշումներ:

- Բացակայում էր կողմերի համար ընդհանուր վստահելի գործընկերը:

- Ռազմավարական իրավիճակը բարդ էր, շփոթեցնող և արագ փոփոխվող:

- Առկա էին սահմանային ու տարածքային վեճեր:

- Տվյալ ժամանակահատվածում միջազգային հիմնական դերակատարները տարածաշրջանում ունեին անհամատեղելի շահեր:

«Միջազգային դերակատարների անհամատեղելի շահեր» ասելով՝ առաջին հերթին պետք է նկատի ունենալ Անդրկովկասում իմպերիալիստական նկրտումներ ունեցող անգլո-ամերիկյան և գերմանա-թուրքական բլոկները: 1918 թվականի առաջին կեսին տարածաշրջանում ակտիվ դերակատարություն ուներ անգլո-ամերիկյան բլոկը, որը Սեյմի ստեղծման գործում մեծ դեր ունեցավ, ինչն էլ պայմանավորեց Սեյմի որոշումը՝ շարունակելու պայքարը գերմանա-թուրքական խմբավորման դեմ: Առհասարակ դիտարկելով միջազգային դերակատարների, այս դեպքում՝ անգլո-ամերիկյան բլոկի քաղաքականությունը՝ կարող ենք նկատել, որ նրա համար բոլշևիզմի տարածումը լուրջ սպառնալիք էր, ուստի Անդրկովկասը դիտվում էր միջանկյալ գոտի՝ հնարավոր սպառնալիքից խուսափելու համար: Սակայն Անդրկովկասը շուտով փոխեց իր կողմորոշումը՝ որդեգրելով գերմանա-թուրքական կողմորոշում, իսկ պատճառը միանշանակ ակնհայտ էր. դա պայմանավորված էր Անտանտի նկատմամբ գերմանական հաջողություններով: Այս առումով հատկապես տպավորիչ է Սեյմի մենշևիկյան ներկայացուցիչներից մեկի ճառը, որում նշվում էր. «Անդրկովկասի ազգությունները, եթե մի դար առաջ ընդունեցին ռուսական օրինակացիա, որովհետև միայն Ռուսաստանի միջոցով նրանք Եվրոպայից կարող էին ստանալ լույս և գիտություն, այսօր մենք Ստամբուլի և Դարդանելի միջոցով կարող ենք ստանալ Եվրոպական լույսը և գիտությունը» («Մշակ» № 76):

Տրապիզոնի բանակցություններում իրեն անկախ հռչակած Սեյմը ինքնուրույն գևաց բանակցությունների գերմանա-թուրքական կողմի հետ, սակայն որքանով էր դա բխում իր շահերից՝ կարող է խիստ տարակարծությունների տեղիք տալ: Սեյմի նկատմամբ թվացյալ հանդուրժողական վերաբերմունքը երկու խմբավորումների կողմից բացատրվում էր նրա հակախորհրդային տրամադրություններով, սակայն նրանցից և ոչ մեկին ձեռնառու չէր Անդրկովկասում տեսնել մեկ իշխող ուժի: Այս համատեքստում, եթե դիտարկենք գերմանա-թուրքական բլոկը, ապա կարող ենք նկատել, որ թեև նույն ճակատի զինվորներ էին, սակայն ունեին սեփական շահերը, որոնք միշտ չէ, որ համընկնում էին, ուստի հակախորհրդային տրամադրություններ կրող երկրներին առավել ձեռնառու էր Անդրկովկասն իր հակասություններով, որոնք թույլ էին տալիս նրանց, ըստ անհրաժեշտության, շահարկել դրանք: Այդ էր պատճառը, որ գերմանա-թուրքական բլոկը, ԱՄՆ-ն ու Անտանտն ամեն կերպ նպաստեցին Սեյմի կազմալուծմանը և Կրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի անկախացմանը, որն ուղղված էր վերացնելու խորհրդային ազդեցությունը տարածաշրջանում և ստեղծելու բուֆերային գոտի. այն չէր բխում անդրկովկասյան ժողովուրդների շահերից:

Եթե ի սկզբանե գերմանա-թուրքական բլոկի համար խնդիր էր Բրեստի պայմանագրով իրեն անցած տարածքների պահպանումը, ապա հետագայում Բրեստի պայմանագիրը չընդունած Անդրկովկասի հանդեպ թուրքական հավակնություններն ավելի աճեցին, ինչի արտահայտությունը եղան գերմանա-թուրքական

հարաբերությունների անկայունությունը և առանց Գերմանիայի մասնակցության Օսմանյան կայսրության կողմից Բաթումի պայմանագիրը, որը կնքվեց բանակցային սեղանին միայնակ հայտնված Անդրկովկասի հետ: Թե որքանով էր հնարավոր կործանարար պայմանագրից խուսափել Անդրկովկասում հակախորհրդային տրամադրությունները թողափելու ու բոլշևիկյան աջակցությանն ապավինելու դեպքում, կարող ենք պնդել՝ հետագայում Մոսկոյի գինադարարի արդյունքում Բաթումի պայմանագրի չեղարկումը տեսնելով:

Փաստորեն՝ անկախ հանրապետությունների հռչակումը ոչ այնքան քաղաքական հրամայական էր ու անհրաժեշտություն, որքան հակախորհրդային ուժերի շահերի համընկնման և պատմական իրողությունների թելադրանքի արտահայտություն:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք հանգել եզրակացության, որ նշված ժամանակահատվածում բոլշևիկից ազատվելու ճգնուճը ընտրության սակավության պայմաններում Անդրկովկասին տանում էր դեպի գերմանա-թուրքական կողմնորոշում, ինչ էլ ավելի էր ծանրացնում Անդրկովկասում առկա ռազմաքաղաքական իրավիճակը: Բրեստի պայմանագիրը Օսմանյան կայսրության կողմից ունահարելու արդյունքում գերմանա-թուրքական կողմերի միջև ծագեցին անհամաձայնություններ առաջին հերթին Կովկասի բաժանման հարցում, և չնայած համառ ջանքերին՝ Գերմանիան թույլ չտվեց թուրքական գործերին մուտք ունենալ Վրաստանի խորք, որը դիտարկում էր իր ազդեցության գոտի:

Ամփոփելով կարող ենք ընդգծել, որ Անդրկովկասյան սեյմի անջատումը, ապա՝ ավելի ուշ՝ 1918 թվականի ապրիլի 22-ին ձևավորված Անդրկովկասյան դաշնության փլուզման պատճառը եղել է այն ժամանակվա ներքաղաքական և արտաքին ծանր իրավիճակը, ու չհերքելով այս բոլոր կարևոր գործոնները՝ հարկ է նշել նաև անդրկովկասյան երկրների և քաղաքական գործիչների արտաքին քաղաքական ոչ միանշանակ մոտեցումներն ու տարբեր կողմնորոշումները:

Արդյո՞ք դրական էր Սեյմի, ապա՝ Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության ստեղծումն ու գոյությունը, թե՞ ոչ, վիճելի է. որպես հետևանք կարող ենք ասել, որ այն հնարավորություն տվեց առժամանակ հետաձգելու խորհրդային կարգերի պարտադրումը:

Ինչ վերաբերում է Գերմանիայի տարածաշրջանային քաղաքականությանը, ապա այն առաջին հերթին ուղղված էր իր տնտեսական շահերի կենսագործմանը, ինչն էլ հանգեցնում էր Գերմանիայի կողմից Օսմանյան կայսրությանը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները պարտադրելուն, որի համար, սակայն, զուտ դիվանագիտական լծակների կիրառումը բավարար չէր, ուստի կայսրությունը շարունակաբար վարում էր ռազմատեսչ քաղաքականություն՝ իր դիրքերը տարածաշրջանում ամրապնդելու համար:

Օգտագործված գրականություն

1. Խատիսյան, Ալեքսանդր. *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը*. Աթենք, 1930:
2. Կիրակոսյան, Արման. *Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը*. Նորավանք գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2006:
3. Կիրակոսյան, Ջոն. *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, 1828-1923*. Երևան, 1972:
4. Հայրունի, Աշոտ. *Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին*. ԵՊՀ հրատ., Երևան, 2013:

5. Պետրոսյան, Գեղամ. *Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917 փետրվար - 1918 հունվար)*. ԵՊՀ հրատ., Երևան, 2018:
6. Людендорф, Эрих. *Мои воспоминания о войне. Первая мировая война в записках германского полководца. 1914-1918*. Центрполиграф, Москва, 2007.
7. Пипия, Георгий. *Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов*. Тбилиси, 1971.
8. Avalishvili, Zourab. *The independence of Georgia in international politics, 1918-1921*. Hyperion Press, Westport, 1981, <https://encyclopedia.1914-1918-online.net/bibliography/ASRVDIZY>.
9. *Deutschland und Armenien 1914-1918, sammlung diplomatischer Aktenstucke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius*. Potsdam, 1919.
10. *Documents of political archives of Ministry of Foreign Affairs of Germany; the volume is composed and the introduction is written by Mikaelyan V.* Yerevan, 2004.
11. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200 [ՀՀ արտաքին գործերի մինիստրություն], ց. 1, գ. 8, թ. 105:
12. ---. ֆ. 200 [ՀՀ արտաքին գործերի մինիստրություն], ց. 1, գ. 9, թ. 25, 26, 27, 29, 30, 31:
13. «Մշակ». 1918թ., № 76, Թիֆլիս:
14. Jones, Stephen. "Georgia". 14 September 2021, <https://encyclopedia.1914-1918-online.net/article/georgia>.
15. "The October Revolution, Glossary of the Russian Revolution". <https://www.marxists.org/history/ussr/events/revolution/index.htm>.

WORKS CITED

1. Avalishvili, Zourab. *The independence of Georgia in international politics, 1918-1921*. Hyperion Press, Westport, 1981, <https://encyclopedia.1914-1918-online.net/bibliography/ASRVDIZY>.
2. *Deutschland und Armenien 1914-1918, sammlung diplomatischer Aktenstucke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius*. Potsdam. [Germany and Armenia 1914-1918, Collection of Diplomatic Documents. Edited and introduced by Dr. Johannes Lepsius. Potsdam] 1919. (In German)
3. *Documents of Political Archives of Ministry of Foreign Affairs of Germany; the Volume is Composed and the Introduction is written by Mikaelyan V.* Yerevan, 2004.
4. Hayruni, Ashot. *Haykakan khndiry' Germaniayi artaqin qaghaqakanut'yan mej 1918 t'vakani*, EPH hrat., Erevan. [The Armenian issue in German foreign policy in 1918. YSU Edition, Yerevan] 2013. (In Armenian)
5. Khatisyan, Alexandr. *Hayastani Hanrapetut'yan t'sagum u zargacumy'*. At'enk. [Origin and Development of the Republic of Armenia. Athens] 1930. (In Armenian)
6. Kirakosyan, Arman. *Haykakan Harcy' Ev Hayeri Tseghaspanut'yuny'*. «Noravanq» Gitakrt'akan Himnadram, Erevan. [The Armenian Question and the Armenian Genocide. Scientific Educational Foundation Noravank, Yerevan] 2006. (In Armenian)
7. Kirakosyan, John. *Hayastany' mijazgayin divanagitut'yan ev sovetakan artaqin qaghaqakanut'yan p'astat'ght'erum, 1828-1923*. Erevan. [Armenia in Documents of International Diplomacy and Soviet Foreign policy, 1828-1923. Yerevan] 1972. (In Armenian)
8. Ljudendorf, Jerih. *Moi vospominanija o vojne. Pervaja mirovaja vojna v zapiskah germanskogo polkovodca. 1914-1918*. Tsentrpoligraf, Moskva. [My Memories of the War. The First World War in the Notes of the German Commander. 1914-1918. Centrpoligraf, Moscow] 2007. (In Russian)

9. Petrosyan, Gegham. *Andrkovkasy' divanagitakan hord'zanutum: Hayoc ankagh petakanut'yan kertumy' (1917 p'etrvar 1918 hunvar)*. EPH hrat., Yerevan. [*Transcaucasia in the Whirlpool of Diplomacy: the Creation of an Independent Armenian Statehood (1917 February 1918 January)*]. YSU Edition, Yerevan] 2018. (In Armenian)

10. Pipija, Georgij. *Politika Germanii v Zakavkaze v 1918 godu, Sbornik dokumentov*. Tbilisi. [*German Policy in Transcaucasia in 1918, Collection of Documents*. Tbilisi] 1971. (In Russian)

11. Hayastani azgayin arkhiv, f. 200 (HH artaqin gorts'eri ministut'yun), c. 1, g. 8, t'. 105. [National Archive of Armenia, f. 200, (RA Ministry of Foreign Affairs), l. 1, a. 8, p. 105]. (In Armenian)

12. ---. f. 200 (HH artaqin gorts'eri ministut'yun), c. 1, g. 9, t'. 25, 26, 27, 29, 30, 31. [National Archive of Armenia, f. 200, (RA Ministry of Foreign Affairs), l. 1, a. 9, p. 25, 26, 27, 29, 30, 31]. (In Armenian)

13. «Mshak». 1918t'. № 76, Tiflis. ["Mshak". 1918, № 76, Tiflis]. (In Armenian)

14. Stephen, Jones. "Georgia". 14 September 2021, <https://encyclopedia.1914-1918-online.net/article/georgia>.

15. "The October Revolution, Glossary of the Russian Revolution". <https://www.marxists.org/history/ussr/events/revolution/index.htm>.

GERMAN POLICY ON THE EVE OF THE DECLARATION OF INDEPENDENT REPUBLICS IN THE TRANSCAUCASUS

NUSHIK PETROSYAN

Yerevan State University,

Faculty of International Relations,

Chair of International Relations and Diplomacy, Ph.D Student;

Ministry of High-Tech Industry of the

Republic of Armenia, Senior Civil Servant,

Yerevan, the Republic of Armenia

This article aims to identify the results of the study of external and internal factors that cause the impossibility of the existence of a single Transcaucasian government, at the same time, in this context, the article also considered the regional role and policy of Germany during this period.

The purpose of the study is to identify the causes of the collapse of the Federal Democratic Republic of Transcaucasia, to identify the regional interests of international actors pursuing regional interests, in particular, the regional interests of Germany, and the purpose of the study is to classify internal and external factors that caused the collapse, emphasizing the service of the interests of international actors in the creation of independent republics.

The research used both primary sources, such as some materials of the National Archive of Armenia, as well as collections of printed documents belonging to individual authors, and analytical works of leading Russian and Western experts.

Methods of comparison, analysis and historical data research were used in the scientific research.

Based on the results of the study, it can be argued that in the conditions of such a development of international realities, the collapse of the United Transcaucasian government had no alternative, since the policy of active actors was aimed at this. Although the interests of the latter were incompatible in many cases, nevertheless, the creation of independent buffer republics was the most advantageous option for them, and

in the case of the Transcaucasian peoples it was the result of virtually inevitable historical development.

Keywords: *Treaty of Brest-Litovsk, Transcaucasian Seim, Transcaucasian Federative Democratic Republic, German-Turkish secret pact, Trabzon negotiations, Batumi negotiations, geopolitical interests, pan-Turkism ideology.*

ПОЛИТИКА ГЕРМАНИИ В ЗАКАВКАЗЬЕ НАКАНУНЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ НЕЗАВИСИМЫХ РЕСПУБЛИК

НУШИК ПЕТРОСЯН

*аспирант кафедры международных отношений и дипломатии
факультета международных отношений
Ереванского государственного университета,
старший государственный служащий министерства
высокотехнологической промышленности Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи выявить результаты исследования внешних и внутренних факторов, обуславливающих невозможность существования единого Закавказского правительства, и в этом контексте – региональная роль и политика Германии в указанный период.

Задача исследования – выявить причины развала Закавказской Демократической Федеративной Республики определить региональные интересы международных акторов, преследующих свои интересы, в частности, региональных интересов Германии. Целью исследования является классификация внутренних и внешних факторов, ставших причиной развала ЗДФР, и подчеркнуть фактор обслуживания интересов международных акторов создании независимых республик.

В ходе исследования были использованы как первоисточники, такие, как материалы Национального архива Армении, а также сборники печатных документов, принадлежащие отдельным авторам, и аналитические работы ведущих российских и западных экспертов.

При проведении научного исследования были использованы методы сравнения, анализа и исторического исследования данных.

На основе результатов исследования можно утверждать, что в условиях подобного развития международных реалий развал Объединенного Закавказского правительства не имел альтернативы, поскольку именно на это была направлена политика активных акторов. Хотя интересы последних во многих случаях не совпадали, тем не менее, создание независимых буферных республик было для них самым выгодным вариантом, а для закавказских народов стало следствием фактически неизбежного исторического развития.

Ключевые слова: *Брест-Литовский договор, Закавказский сейм, Закавказская Федеративная Демократическая Республика, германо-турецкий секретный пакт, Трабзонские переговоры, Батумские переговоры, геополитические интересы, пантюркистская идеология.*

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА



**ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱՏԵԶՍԸ
ԲՈՒՀԵՐԻ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ***

ՉՏԴ 378.016:811.111

DOI: 10.52063/25792652-2022.1.12-146

ԼՈՒՍԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Iusikhovakimyan@ysu.am*

Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու Երևանի պետական համալսարանի ոչ մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դասավանդման փորձը և առկա մարտահրավերները:

Բոլոնյան բարեփոխումները բուհական համակարգ ներմուծելու արդյունքում ԵՊՀ-ում վերանայվեցին կրթական, այդ թվում՝ օտար լեզուների ծրագրերը ոչ մասնագիտական ֆակուլտետներում: Բարձրագույն կրթության արդիականացումն ու միջազգայնացումը, բացի ծրագրերի փոփոխումից և միջազգային չափանիշներին համապատասխանեցումից, ունեն ևս մեկ բաղադրիչ՝ ուսանողների ակադեմիական շարժունության խթանումը: Ուստի, մի կողմից, կարևորվում է անգլերենի իմացությունը, մյուս կողմից՝ մի շարք ֆակուլտետներում նվազում է անգլերենին հատկացված ժամաքանակը, որն անհամատեղելի է կրթության միջազգայնացման ռազմավարության հետ:

Հոդվածում հիմնավորվում է ոչ մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզվի ուսուցման առաջնահերթության խնդիրը: Դիտարկվում են մասնագիտական կողմնորոշմամբ օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դասավանդման զանազան մոտեցումների տարբերությունները, ինչպես նաև այն գործոնները, որոնք ազդում են դասընթացներն ավելի թիրախային դարձնելու վրա:

Աշխատանքը շարադրված է դիտարկման, ընդհանրացման և վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

Որպես եզրակացություն նշենք, որ օտար լեզուները զգալի ներուժ ունեն ուսանողների ոչ միայն լեզվական, այլև մասնագիտական և ակադեմիական իրազեկությունը ձևավորելու համար, ուստի ոչ մասնագիտական ֆակուլտետներում անգլերենը հարկ է դիտարկել ոչ թե որպես օժանդակ առարկա, այլ հաղորդակցական և մասնագիտական փոխանցելի հմտություններ և կոմպետենցիաներ զարգացնող գործիք, որն ապահովում է ապագա մասնագետների մրցունակությունը:

* Հոդվածը ներկայացվել է 24.02.2022 թ., գրախոսվել՝ 17.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Հիմնաբառեր՝ անգլերենը հատուկ նպատակների համար, ընդհանուր անգլերեն, պահանջմունքների վերլուծություն, մասնագիտական անգլերեն, բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցում, բուհական կրթություն, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ:

Ներածություն

Համաշխարհայնացման հետևանքով տնտեսական, կրթական, սոցիալ-մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, անշուշտ, առաջացրել են համընդհանուր լեզվական տարածքի ստեղծման անհրաժեշտություն, և այդ դերը որպես lingua franca ստանձնել է անգլերենը: Անցյալ դարի երկրորդ կեսին շեշտակիորեն աճեց հետաքրքրությունն օտար լեզուների նկատմամբ: Դա պայմանավորված էր աշխարհի մասշտաբով տնտեսության, գիտության և տեխնիկայի աճով, ինչն իր հերթին անհրաժեշտություն ստեղծեց օտարերկրյա մասնագետների հետ հաղորդակցման ու փոխշփումների համար: Այդ ժամանակահատվածում օտար լեզուներին տիրապետելը ոչ միայն համընդհանուր կրթության կարևոր ու անբաժանելի մաս, այլև լավ կրթության ցուցանիշներից մեկը դարձավ: Օտար լեզուների իմացությունը համեմատական մրցակցային առավելություն էր մասնագետների համար և նշանակալից դեր էր խաղում կարիերայի առաջընթացի համար: Խորհրդային միության փլուզումից հետո, երբ հետզհետե սկսեց նվազել ռուսերենի գերակա դերը, օտար լեզուների՝ հատկապես անգլերենի ուսուցումը մեծ թափ առավ:

Սույն հետազոտության նպատակն է քննել բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզուների, մասնավորապես անգլերենի ուսուցման մարտահրավերները ապագա մասնագետների համար:

Նոր շուկայական հարաբերությունների ի հայտ գալը ենթադրում է անհատի դիվերսիֆիկացված հմտությունների ձևավորում, որոնց շարքում, բացի մասնագիտական հմտություններից, օտար լեզվի իմացությունն ունի իր ուրույն տեղը: Եթե նախկինում թարգմանչի միջոցով էին կատարվում զանազան գործառնություններ, այդ թվում՝ բանավոր և գրավոր հաղորդակցությունն օտարերկրյա գործընկերների հետ, ապա տեխնոլոգիաների զարգացման արդյունքում, երբ անձնական հեռախոսակապով, էլեկտրոնային փոստով և այլ միջոցներով ակնթարթորեն կարելի է կապ հաստատել աշխարհի ցանկացած կետում գտնվող գործընկերների հետ, երբեմն անգամ ընդունված աշխատանքային ժամերից դուրս (հատկապես ժամային գոտիների տարբերության դեպքում), դա դառնում է ոչ միայն անարդյունավետ և ժամանակատար, այլև հաճախ անհնար:

Ներկայիս իրազեկ (competent) շրջանավարտը պետք է ունենա ինչպես մասնագիտական կամ կոշտ հմտություններ (hard skills), այնպես և վերմասնագիտական կամ փափուկ հմտություններ (soft skills): Գործարար աշխարհում մասնագիտական հմտությունների հետ մեկտեղ կարևորվում են արդյունավետ հաղորդակցվելու և պայմանավորվելու, մարդկանց կառավարելու, գործընկերների և սպառողների հետ սերտ շփումներ պահպանելու, հանրային ելույթներ ունենալու և բազմաթիվ այլ կարողություններ: Արդի պայմաններում այս ամենը մայրենի լեզվով իրականացնելու կողքին առաջանում է նաև պահանջ՝ նույնը պատշաճ եղանակով իրականացնելու օտար լեզվով: Չուր չէ, որ աշխատանքային ինքնակենսագրականներում (ռեզյումեներում) պահանջվում է նշել օտար լեզուների իմացության մակարդակը:

Վերոնշյալ գործոնները նպաստեցին նրան, որ անցյալ դարի 90-ականներին Երևանի պետական համալսարանի մի շարք ոչ մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզուների ավանդական 4-ժամյա (շաբաթական 2 անգամ) դասաքանակը

գրեթե կրկնապատկվեց՝ հասնելով 6-8 ժամի: Մասնավորապես, *Տնտեսագիտության ֆակուլտետում* օտար լեզուներն ուսուցանվում էին 3,5 տարի (7 կիսամյակ) շաբաթական 3-4 դասաքանակով: (Խոսքը դեռևս հնգամյա կրթության մասին է): Նման «հեղեղը» թույլ էր տալիս առաջին և երկրորդ կուրսերում ամրապնդել և զարգացնել ուսանողների հիմնական լեզվական գիտելիքները չորս հմտությունների՝ ընթերցելու, ունկնդրելու, գրելու, խոսելու ուղղությամբ, ապա՝ ավագ կուրսերում ներմուծել մասնագիտական անգլերենը, որը սկսեց ուսուցանվել անգլերենի դասավանդման նոր՝ անգլերենը հատուկ նպատակների համար (English for Specific Purposes (հետագա շարադրանքում կկիրառենք ընդունված ESP հապավումը)) մոտեցմամբ: Դա դրական արդյունք էր ապահովում, քանի որ ուսանողներն արդեն բավականաչափ զինված էին լինում թե՛ մասնագիտական, թե՛ լեզվական գիտելիքներով: Ուսանողների՝ ավագ կուրսերում առարկայական գիտելիքի իմացությունը հնարավորություն է ընձեռում դասախոսին հենվելու նրանց գիտելիքի վրա և գեներացնելու իրական հաղորդակցություն (Dudley-Evans and St. Jones 13):

Ինչպիսի՞ անգլերեն ուսուցանել ապագա մասնագետներին

Ի՞նչ է ենթադրում «անգլերենը հատուկ նպատակների համար» մոտեցումը: ESP-ն տարածում գտավ անցյալ դարի 60-ականներից, երբ անգլերենը սկսեց գործածվել որպես գիտության, տեխնոլոգիայի և բիզնեսի միջազգային լեզու: Ի տարբերություն ընդհանուր անգլերենի (General English)՝ այն շեշտը դնում է գործնական արդյունքների վրա (Dudley-Evans and St. John 1): Ընդհանուր անգլերենում հավասարապես ընդգծվում են բոլոր չորս լեզվական հմտությունները, իսկ ESP դասընթացը կառուցվում է՝ հիմնվելով սովորողների պահանջմունքների վերլուծության (needs analysis) վրա (տե՛ս Dudley-Evans and St. John 122; Hutchinson and Waters 52; Robinson 7), որին հաջորդում են ծրագրի կազմումը, նյութերի հավաքագրումը, ստեղծումը և մշակումը: Նյութերի ընտրությունը բխում է սովորողների կոնկրետ պահանջմունքներից աշխատավայրում կամ ուսումնական հաստատությունում:

Համապարփակ սահմանում է տալիս Հայլանդը. «Պահանջմունքների վերլուծությունը վերաբերում է դասընթացի մշակման համար էական տեղեկատվություն հավաքելու և գնահատելու մեթոդներին. այն դասընթացի *ինչպեսը և ինչը* հաստատելու միջոց է: Դա շարունակական գործընթաց է, քանի որ մենք ձևափոխում ենք մեր ուսուցումը, երբ ավելի ենք տեղեկանում մեր ուսանողների մասին, և այս կերպ այն վերածվում է գնահատման՝ դառնալով դասընթացի արդյունավետությունը հաստատելու միջոց: Պահանջմունքը ընդհանրական եզր է, որը ներառում է սովորողների՝ դասընթացին մասնակցելու պատճառները, ուսանելու և ուսուցանվելու նախընտրությունները, ինչպես նաև հաշվի են առնվում հաղորդակցման իրավիճակները: Պահանջմունքները կարող են ընդգրկել այն, թե սովորողներն ինչ գիտեն, ինչ չգիտեն և ինչ են ուզում իմանալ, և այս ամենը կարելի է հավաքել ու վերլուծել զանազան եղանակներով» (73-74) (թարգմանությունը մերն է – Լ. Հ.):

Պահանջմունքների գնահատման հիմնական գործիքները հարցաթերթիկներն են, հարցազրույցները, դիտարկումները, իրական (authentic) բանավոր ու գրավոր տեքստերը, քննարկումները, որոնց արդյունքները միավորելով՝ մշակվում է դասընթացը: Պահանջմունքների վերլուծությունը կարևոր է ընդհանուր անգլերեն դասավանդելիս ևս, և եզակի չէ ESP-ի համար, սակայն այն վերջինիս անկյունաքարն է դասընթացը մշակելիս (Dudley-Evans and St. John 122; Hamp-Lyons 127; Robinson 7):

Պահանջմունքները կարող են բազմապիսի և բազմազան լինել: Այսպես, սակավա անտեսագետների համար դրանք կարող են ընդգրկել հետևյալ կարողունակությունները և հմտությունները՝ կարողանալ բանակցություններ վարել, կազմել գրավոր գեկույցներ, գրել նամակներ, նախապատրաստել բանավոր ներկայացումներ, հեռախոսազանգեր անել, բացատրել տեխնիկական գործընթացներ, մասնակցել անգլերենով անցկացվող վերապատրաստումներին, զուգել հաճախորդների և գործընկերների հետ, հյուրընկալել նրանց աշխատանքային ժամերից դուրս և այլն: Լեզվական նյութի մատուցմանը զուգահեռ ուշադրություն է դարձվում միջմշակութային հաղորդակցման խնդիրներին ու նրբություններին:

Թեև ESP-ն հիմնականում նպատակահարմար է աշխատող մասնագետների համար, սակայն կիրառվում է նաև բուհերում, քանի որ անգլերենի ուսուցումը յուրաքանչյուր ֆակուլտետում թիրախավորում է նաև մասնագիտական համատեքստը: Իսկ մի՞թե 90-ական թվականներից առաջմասնագիտական անգլերենը արդեն իսկ ներառված չի եղել ծրագրերում՝ մասնագիտական ուղղվածությամբ անգլերենի դասագրքերի ներգրավմամբ: Անշուշտ, եղել է, սակայն այս դեպքում գործ ունենք դասագրքով պայմանավորված (textbook-driven) ուսուցման հետ, երբ ուսուցանվում է ընդհանուր անգլերենը՝ հենվելով մասնագիտական տեքստերի ու բառապաշարի վրա: ESP-ն այլ մեթոդաբանություն է կիրառում՝ էլենվով կոնկրետ առարկայից կամ մասնագիտությունից (Dudley-Evans and St. John 4):

Վերջին տասնամյակում լայն տարածում է գտել նաև բովանդակության ու լեզվի ինտեգրված ուսուցումը (content and language integrated learning, հետագա շարադրանքում՝ CLIL), որը սկզբնապես սկսվեց կիրառվել Եվրոպայում, մասնավորապես երկլեզու (bilingual) համատեքստում, երբ միաժամանակ և հավասարապես կարևորվում է թե՛ բովանդակային նյութի և թե՛ հավելյալ լեզվի (additional language) ուսումնասիրությունը: CLIL եզրը թեև ստեղծվել է 1994 թ., սակայն մեթոդաբանությունը կիրառվել է վաղուց, այլ, օրինակ, բովանդակության վրա հիմնված (content-based instruction, հետագա շարադրանքում՝ CBI) մոտեցման ներքո: CLIL/CBI մոտեցման դեպքում առաջնայինը բովանդակության ուսուցումն է, իսկ անգլերենը կամ մեկ այլ լեզու՝ գործիք է, որի միջոցով իրագործվում է այդ նպատակը: Ի տարբերություն դրա՝ ESP ուսուցման թիրախը լեզուն է՝ անգլերենը: Այսպիսով, այս երկու մոտեցումների հիմնական տարբերությունը ուսուցման նպատակն է: ESP դասավանդելիս ցանկալի և նպատակահարմար է CLIL/CBI մեթոդաբանության կիրառումը, և հաճախ հենց այդպես էլ արվում է, որովհետև նշված մոտեցումները փոխյուացնող են և համադրությամբ ավելի արդյունավետ: Ինչպես իրավացիորեն նշում է Նեյշընը, մասնագիտական կամ տեխնիկական բառապաշարը առանձին, համատեքստից դուրս ուսուցանելը ավարդյուն ջանք է և պետք է ուսումնասիրվի առարկայական նյութի զուգահեռ (Nation 130):

CLIL մոտեցումը հայաստանյան բուհերում էպիգոդիկ բնույթ է կրում, թեև, անշուշտ, հետաքրքրությունը կա (Sidorenko and Apresyan): Այն կրթական համակարգ ներմուծելու համար պետք է հաշվի առնվի կրթական համատեքստը, ինչպես նաև մշակվի համապատասխան լեզվաքաղաքականություն: Չէ՞ որ, ի տարբերություն ESP դասավանդողների, որոնք անգլերենի և ոչ թե այլ ոլորտների մասնագետներ են, ու հնարավոր է՝ մակերեսային պատկերացումներ ունենան տվյալ բնագավառի մասին, CLIL դասավանդողները պետք է լինեն տվյալ առարկայի մասնագետներ, որոնք լավ տիրապետում են օտար լեզվին: Արտասահմանյան բուհերում այս խնդրի լուծման համար առկա է նաև թիմային ուսուցման (team-teaching) փորձը, երբ լսարանում միաժամանակ գտնվում են լեզվի և դասավանդվող առարկայի մասնագետները, սակայն մեր կրթական համակարգը դեռևս չունի համապատասխան ճկունությունը,

ռեսուրսները, կադրերը և փորձը¹: Ներկա փուլում, երբ կարևորվում է միջգիտակարգային ինտեգրման անհրաժեշտությունը կրթական գործընթացներում, CLIL-ը հենց այն մեթոդն է, որի միջոցով կարելի է իրականացնել այդ ինտեգրումը: CLIL-ի ներմուծումը հայաստանյան կրթական գործընթացներում կարելի է դիտարկել որպես հեռանկարային ուղղություն, որը նաև կնպաստի ոչ մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզուների կարգավիճակի բարելավմանը:

2005 թվականից հայաստանյան կրթական համակարգը միացավ Բոլոնիայի գործընթացին, փուլ առ փուլ սկսեցին բարեփոխումներ իրականացվել նաև բուհական համակարգում, վերանայվեցին կրթական ծրագրերը, սակայն լսարանային ժամաքանակի նվազեցումը բացասաբար անդրադարձավ օտար լեզուների դասավանդմանը: Դասաքանակի կտրուկ կրճատումները՝ ընդհուպ մինչև երկու կիսամյակ, թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին կանգնեցրին դժվարությունների առջև: Առաջին կուրսում դասավանդվող առարկաները կրում են համահամալսարանական ընդհանուր բնույթ, իսկ բուն մասնագիտական առարկաների թիվը քիչ է և ներածական բնույթ ունի: Հետևաբար ուսանողները դեռևս էական գիտելիքներ չունեն մասնագիտական առարկաներից, սակայն փոփոխված ծրագրով արդեն իսկ նախատեսվում է անգլերենի դասընթացում մասնագիտական կյուրթի ուսուցումը իրականացնել առաջին կուրսերում: Ուսանողը, որը նախկինում սերտել է անգլերենի քերականությունը և լեզվական կառուցվածքները, այժմ միանգամից պետք է հարմարվի լեզվի այլ մոտեցմամբ ու մեթոդով ուսուցմանը՝ օտար լեզուն կիրառելով իր համար նոր, դեռևս անծանոթ մասնագիտական համատեքստում: Ուստի ուսանողը կրկնակի ծանրաբեռնվածությամբ է սովորում, դժվարանում է ընկալել մասնագիտական կյուրթը օտար լեզվով: Բացի այդ՝ թույլ կարողություններով ուսանողները հաճախ ապամոտիվացվում են և օտարվում՝ հանդիպելով լեզվական խոչընդոտների: Փաստացիորեն ստեղծվում է մի իրավիճակ, երբ օտար լեզու դասավանդողները առաջինն են (առարկայական մասնագետներից առաջ) ուսանողներին ներկայացնում մասնագիտական զանազան երևույթները և հասկացությունները: Սա այնքան էլ խրախուսելի չէ, քանի որ օտար լեզու դասավանդողը բովանդակության «առաջնային իմացողը» չէ ('primary knower') (Dudley-Evans and St. John 13): Հարկ է ընդգծել, որ մասնագիտական առարկայի հիմունքների՝ մայրենի լեզվով նախնական յուրացան գործոնը, որն աշխարհի որոշակի կոնցեպտուալ պատկեր է ձևավորում, կարող է կարևոր նշանակություն ունենալ օտարալեզու հաղորդակցական կարողությունների զարգացման համար (Хомякова 143):

Հենց այդ ժամանակաշրջանում էր, որ հրապարակախոսները ահազանգ էին հնչեցնում, որ հայության կյանքում առկա խնդիրներին զումարվում է ևս մեկը՝ արտագաղթը: Սա այն թեմաներից էր, որի ծանր հետևանքների ողջ կարևորությունը գիտակցելով՝ պարբերականները հաճախ էին ներկայացնում հրապարակախոսների հոդվածները: 1989 թվականին, երբ արտագաղթի ալիք էր թափ առել, ականավոր գրող Սերո Խանգադյանը մամուլի էջերից հորդորեց՝ «մի՛ հեռացեք, տղաներ»՝ միաժամանակ հիշատակելով «Ադրբեջանական ՍՍՀ-ից եկած անօգնական հայերին» («Սովետական Հայաստան», 26.01.1989), թեպետ հիշեցնում էր, որ ստեղծված իրավիճակում «կարևորը պայքարն է» («Ռզկի» N 3):

Պերճ Չեյթունցյանը ևս՝ որպես ներգաղթած ընտանիքի զավակ, հստակ պատկերացնում էր արտագաղթի պատճառները, վտանգները և անդրադառնում

դրանց բավական սուր հողվածներով (Ժուռնալիստիկա, Պրակ ԺԲ 21)՝ խիստ գույներով ներկայացնելով արտագաղթի հետևանքները փոքր ժողովրդի համար:

Արտագաղթի թեման առանցքային էր Չեյթունցյանի հրապարակախոսության համար: Նա գիտակցում էր, որ «մեր ճակատագրի տեր փոքր ժողովուրդները դեռ վրեժ ունեն պատմությունից, մենք հազիվ-հազ պատեհություն ենք ստացել մի տանիքի տակ հավաքվելու...»: Հայաստանյան մամուլը հետևողականորեն և խիստ գույներով էր ներկայացնում արտագաղթի հետևանքները հայ ժողովրդի համար:

Հերթական անգամ մամուլի, մասնավորապես հրապարակախոսների համար փորձություն էին Բաքվի ջարդերը: Փաստարկված խոսք, նաև դատապարտող հայտարարություններ արեց Չորի Բալայանը ոչ միայն մամուլում, այլև Հայաստանի գրողների միության վարչության պլենումում («Խորհրդային Հայաստան», 04.02.1990):

Վիճակագրական տվյալները, նաև դաժան տեսարանների պատկերավոր նկարագրություններն ավելի ազդեցիկ դարձրին Հովհաննիսյանի հրապարակախոսական հողվածը: Հովհաննիսյանը հավատացած էր՝ «մենք հետամուտ ենք ճշմարտության բացահայտմանը, առանց որի անխուսափելի են նոր ոճրագործությունները», և ցանկանում էր, որ «...վերջանա այս մղձավանջը» («Երեկոյան Երևան», 27.10.1988)¹:

«Ազգային» վերաիմաստավորումը հրապարակախոսական հողվածներում

Մի առիթով Պ. Չեյթունցյանն ասել է. «Մինչև 1988 թվականը հրապարակախոսական ոչ մի հողված չեմ գրել, բայց ժողովրդի հրաշք զարթոնքը ստիպեց, ուղղակի պահանջ արթնացրեց անդրադառնալու ժամանակի իրադարձություններին»: Ուստի պատահական չէ, որ այս թեմայով գրված հողվածներն աչքի էին ընկնում առանձնակի զգացմունքայնությամբ: Չեյթունցյանը ազգային զարթոնքի այս շրջանը, իր բոլոր թերություններով հանդերձ, համարում էր «մեր պատմության աստեղային ժամանակներից մեկը»: Ավելին՝ Չեյթունցյանը խնդրի լուծմանը արդարությամբ, իրավական ճանապարհով հասնելու հաստատականություն և վստահություն ուներ: Հավատացած էր, որ ազգի պատմական երթը չվտանգելու համար և նպատակին հասնելու ճանապարհին չպետք է անտեսվեն երկրի տնտեսությունը, ազգային լեզուն, դպրոցը, հայեցի դաստիարակությունը:

Կարևորելով պատմական արդարության վերհանումը՝ հրապարակախոսները գիտակցում էին, որ միասնականությունը, հավաքական կամքը պահանջատիրական ոգի կծնեն, ուստի ոգեշնչման կարիք կար: Պատահական չէին Չեյթունցյան գրողի նշած օրինակները հայոց պատմության հերոսական էջերից: Չեյթունցյանը հետևողականորեն ջանում էր հասարակության մեջ արմատավորել հայրենասիրության զգացումներ և նաև դրանով պայմանավորված՝ տարածել լավատեսություն և ձևավորել սեփական ուժերի նկատմամբ վստահություն: Ըստ Էության, ինքնաճանաչողության խորքային ընկալումն այդ շրջանի հրապարակախոսությունների առանցքում էր: Հրապարակախոսներն այդ կերպ հասարակական կարծիք էին ձևավորում՝ իրենց առջև հասարակության գիտակցության մեջ միասնականության գաղափարի արմատավորման հստակ նպատակ դնելով:

Արցախի համար մղվող պատերազմում կարևոր էր ազգային գաղափարախոսության ամրապնդումը, ինչի վրա էլ շեշտը դնում էին հրապարակախոսները: Վ. Պետրոսյանը ներքին զգացողությամբ էր ըմբռնում և համարժեքորեն հակադարձում հակառակորդի տեղեկատվական, գիտական շրջանակներից ուղղված և մեզ սպառնացող վտանգները: Նրա մի շարք հրապարակումներում առաջադրվում էր ինքնաճանաչողության խնդիրը՝

¹ «...Որ վերջանա այս մղձավանջը» հողվածն առանձին մասով տպագրվել է «Կոմունիստ» թերթում (2 նոյեմբերի, 1988 թ., Երևան) և կոչվել է «Ջրբաժան»: Այստեղ Հովհաննիսյանը յուրովի է մեկնաբանում սումգայիթյան իրադարձությունները՝ կապելով դրանց հայ ժողովրդի անցյալի հետ: Նա կոչ է անում պատասխան տալ Սումգայիթում կատարվածին:

միաժամանակ կարևորելով սեփական ուժերի իրատեսական գիտակցումն ու նպատակային օգտագործումը: Պետրոսյանը թերևս գիտակցում էր, որ ինքնաճանաչողության պակասը կարող է հանգեցնել ինքնագնահատականի նվազման, մինչդեռ հավաքական կամքն ու միասնական ձգտումը կարող էին և պետք էին հայրությանը: Ընդհանուր առմամբ, Վ. Պետրոսյանի՝ այդ շրջանի հրապարակախոսությունը միտված էր հային ու հայկականը մեծարելուն, նրա արարքները հստակ գնահատելուն, առաջիկա քայլերն ուրվագծելուն: Նա չափազանց ազդեցիկ էր արձանագրում ստեղծված իրավիճակը:

Գեղարվեստական պատկերավորման յուրահատուկ դրսևորում ցուցաբերած Ս. Կապուտիկյանը Ղարաբաղյան շարժումը համեմատում էր «ծովածավալ ալեկոծության» հետ, իսկ շարժման նախաձեռնողների մասին առանձնահատուկ ոգևորությամբ էր խոսում (Ժուռնալիստիկա, Պրակ ԺԲ 33): Չընկճվող, չհուսահատվող հրապարակախոսը պայքարի կոչ էր անում այն համոզմունքով, որ «մեր դատն արդար է, և մենք հաղթելու ենք անպայման»: Հրապարակախոսին ոգևորում էր այն հանգամանքը, որ շարժումը արթնացրել է ժողովրդին տարիների նիրհից, ու միասնական պայքարը կարող է արդյունքի հանգեցնել (Կապուտիկյան 381): Համադրելով փաստերը և վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ Կապուտիկյանը կոչ էր անում չընկճվել, մաքառել այն համոզմունքով, որ «մենք պիտի ապրենք» (Կապուտիկյան 416): Հատկանշական է, որ քաղաքական-հասարակական թերթերը միշտ չէ, որ տպագրում էին Կապուտիկյանի հոդվածներն ու ելույթները¹:

Քանի որ հասարակության համախմբմանն ու հասարակական կարծիքը որոշակի հուն մղելուն նպաստելը հրապարակախոսության կարևոր գործառույթներից է, ուստի հրապարակախոսները ջանք ու եռանդ չէին խնայում դրա իրականացման համար:

Ի վերջո ուսումնասիրվող ժամանակաշրջանի մամուլում տեղ գտած հրապարակախոսական հոդվածների հեղինակները մտավորականներ էին, որոնք հանդես էին գալիս քաղաքական մեկնաբանություններով և գնահատականներով՝ ձգտելով ոչ միայն հանրությանը ծանոթացնել ընթացիկ կյանքի երևույթներին, այլև «օպերատիվ, փաստագրական-զգացմունքային արտացոլմամբ ներգործել» (Ученова 73): Արցախյան հիմնահարցի ներկայացման առումով, ըստ եռթյան, մտավորականները հրապարակախոսական միտքը զարգացրին հետևյալ ուղղությամբ. նրանք միաբանության և պայքարի կոչ էին անում՝ առանձնահատուկ ընդգծելով, թե հակառակ դեպքում ինչ ճակատագրական կորուստներ կարող ենք ունենալ: Խնդիրը ներկայացվում էր իր ողջ սրությամբ, որպեսզի սթափ հայացքը կանխարգելեր սխալ քայլերը:

Մտավորականի ծայրը ներագրման մեծ լիցքեր էր պարունակում, ուստի պատահական չէր, որ մտավորականներն օգտագործում էին պատկերավոր խոսքին հատուկ բառապաշար: Հրապարակախոսական ոճին բնորոշ է պատկերավորման միջոցների որոշակի համակարգ: Ուստի ոճական առումով հարկ է նկատել, որ լրագրողների հրապարակումների կողքին հանդես եկող մտավորականներն իրենց հրապարակախոսական հոդվածներում իրականության պատկերումը զուգորդում էին ստեղծագործողի պատկերավոր խոսքին: Այստեղ մեծապես գնահատելի է նրանց դերը՝ ժողովրդին համախմբելու և միասնական պայքարի դուրս բերելու համար: Հրապարակախոսներն իրականության վերլուծությանը միախառնում էին իրենց մեկնաբանությունները, որոնցում հուզականությունը, հաճախ խիստ կոչերը, առհասարակ հռետորական բոլոր հնարավոր միջոցներն օգտագործում էին՝ հանրության տրամադրությունները ճիշտ ուղղորդելու նպատակով:

¹ «Երկիրը» չտպագրեց Ս. Կապուտիկյանի հետ հարցազրույցը՝ պատճառաբանելով, որ այն ընդարձակ է, ու շատ ավելի լավ կլիներ, որ բանաստեղծուհին արծարծեր առավելապես ստեղծագործական հարցեր. «Քաղաքականը շատ է»:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրեք, որ հրապարակագիրների՝ հայաստանյան պարբերականներում հնչեցվող կոչերը, ազգովի համախմբվելու հորդորները, սթափ հայացքը մեկ անգամ ևս փաստում են հրապարակախոսության կարևորությունը հայ մամուլի պատմության մեջ: «Հրապարակախոսությունը անհնար է պատկերացնել առանց վերլուծության, փաստարկումների, ընդհանրացման» (Черепанов 45) դրույթն այստեղ իր լավագույն դրսևորումն է գտել: Ղարաբաղյան շարժման զարգացմամբ և հետո նաև հասարակարգի փոփոխությամբ պայմանավորված՝ 1988-1991 թթ. հայ մամուլի պատմությունը հարստացավ հրապարակախոսական բազմաթիվ էջերով: Հրապարակախոսների սևեռուն հայացքն ուղղված էր ոչ միայն Արցախին ու արցախահայությանը, այլև մեր հոգևոր արժեքներին՝ հիմքում դարձյալ ունենալով ազգային գաղափարախոսությունը:

Անկախ ծավալվող իրադարձությունների ընթացքից¹ այդ շրջանի հրապարակախոսական հոդվածները ներծծված են տազևապի և միաժամանակ լուսավոր հավատի շնչով («Երեկոյան Երևան», 17.01.1990): Տեղեկատվական չհայտարարված պատերազմում հայտնված հայ մտավորականներն իրենց հրապարակախոսական հոդվածներում մեծապես կարևորում էին արդարության համար պայքարի գաղափարական իմաստավորումը՝ ընդդեմ ադրբեջանական քարոզչամեթոդների հակահայկական տեղեկատվական քաղաքականության և կեղծարարության: Հրապարակախոսների և հրապարակախոսության պայքարը շարունակվեց նաև 1991 թվականից հետո անկախ մամուլի էջերում:

Օգտագործված գրականություն

1. Դեմոյան, Հայկ. *Ղարաբաղյան հիմնասխևի շուրջ Ադրբեջանի քարոզչության նախապատմությունը և հակահայ քարոզչության ելակետերը*. «Տարածաշրջան» տեղեկագրի հատուկ թողարկում (Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ), Երևան, 2005:
2. Եզեկյան, Լևոն. *Ոճագիտության ուղեցույց*. Չանգակ-97 հրատ., Երևան, 2007:
3. Կապուտիկյան, Սիլվա. *Էջեր փակ գորոցներից*. Երևան, 1997:
4. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր). Պրակ Ա, Երևան, 1999:
5. ---. Պրակ ԺԲ, Երևան, 2012:
6. Սարգսյան, Արմեն. *Հայաստանյայցի Ադրբեջանում. ռեսեստիստների և ավտորիտարիզմի խաչմերուկում*. Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, Երևան, 2013:
7. Скуленко, Михаил. *Убеждающее воздействие публицистики (Основы теории)*. Киев, 1986.
8. Ученлова, Виктория. *Исторические истоки современной публицистики*. Москва, 1972.
9. Черепанов, Матвей. *Проблемы теории публицистики*. Мысль изд., Москва, 1973.
10. Полонский, Андрей. *Публицистика как особый вид творческой деятельности*, БелГУ, 2008, №11, вып.1.
11. «Ավանգարդ». 1990 թ. սեպտեմբերի 28, Երևան:
12. «Ավանգարդ». 1989 թ. մայիսի 17, Երևան:

¹ Այդ շրջանում հրապարակախոսները լավատես էին և հավատում էին, որ խնդիրը մոտ ապագայում իր հանգուցալուծումը կստանա («...Ով էր մտածում, որ Ղարաբաղյան շարժումը կճյուղավորվի անվերջանալի...», տես Ս. Կապուտիկյան, «Արցախական աշխարհի զավակներ» բաց նամակ):

13. «Երեկոյան Երևան». 1988 թ. հոկտեմբերի 27, Երևան:
14. «Երեկոյան Երևան». 1988 թ. նոյեմբերի 21, Երևան:
15. «Երեկոյան Երևան». 1988 թ. դեկտեմբերի 13, Երևան:
16. «Երեկոյան Երևան». 1988 թ. դեկտեմբերի 31, Երևան:
17. «Երեկոյան Երևան». 1989 թ. մայիսի 20, Երևան:
18. «Երեկոյան Երևան». 1989 թ. մայիսի 25, Երևան:
19. «Երեկոյան Երևան». 1990 թ. հունվարի 2, Երևան:
20. «Երեկոյան Երևան». 1990 թ. հունվարի 17, Երևան:
21. «Երեկոյան Երևան». 1990 թ. փետրվարի 20-21-23, Երևան:
22. «Երեկոյան Երևան». 1990 թ. սեպտեմբերի 25, Երևան:
23. «Խորհրդային Հայաստան». 1989 թ. օգոստոսի 17, Երևան:
24. «Խորհրդային Հայաստան». 1990 թ. փետրվարի 4, Երևան:
25. «Խորհրդային Հայաստան». 1990 թ. հուլիսի 10, Երևան:
26. «Խորհրդային Հայաստան». 1990 թ. հուլիսի 12, Երևան:
27. «Մուկետիկ». 1992թ., թիվ 4, Երևան:
28. «Ոգևի». 1989թ. փետրվար, N 3, Երևան:
29. «Սովետական Հայաստան». 1989թ. 26 հունվարի, Երևան:

WORKS CITED

1. Cherepahov, Matvej. *Problemy teorii publicistiki*. Mysl' izd., Moskva. [*Problems of the Theory of Journalism*. Misl' edition, Moscow] 1973. (In Russian)
2. Demoyan, Hayk. *Gharabaghyan himnakhndri shurj Adrbejani qarozchut'yan naxapatmut'yuny' ev hakahay qarozchut'yan elaketery'*. «Tarac'ashrjan» teghekagri hatuk t'ogharkum (Teghekatvakan anvtangut'yan khndirneri shurj), Erevan [*The Background of Azerbaijan's Propaganda on the Karabakh Issue and the Starting Points of Anti-Armenian Propaganda*. Yerevan] 2005. (In Armenian)
3. Ezekyan, Levon. *Vochagitut'yan ughecuyc*. Zangak-97 hrat., Erevan. [*Guide of Stylistics*. Zangak-97 edition, Yerevan] 2007. (In Armenian)
4. Kaputikyan, Silva. *E'jer p'ak gzrotsneric*. Erevan, [*Pages from Closed Shelves*. Yerevan] 1997. (In Armenian)
5. Sargsyan, Armen. *Hayatyatsut'yuny' Adrbejanum. r'esentimenti ev avtoritarizmi xachmerukum*. Hanrayin kaperi ev teghekatvut'yan kentron, Erevan, [*Anti-Armenian Sentiment or Armenophobia in Azerbaijan at the Crossroads between Recentiment and Authoritarianism*. Public Relations and Information Center, Yerevan] 2013. (In Armenian)
6. Skulenko, Mihail. *Ubezhdajushhee vozdejstvie publicistiki (Osnovy teorii)*. Kiev. [*The Persuasive Impact of Journalism (Fundamentals of Theory)*. Kyiv] 1986. (In Russian)
7. Uchenova, Viktorija. *Istoricheskie istoki sovremennoj publicistiki*. Moskva. [*Historical Origins of Modern Journalism*, Moscow] 1972. (In Russian)
8. «Zhur'nalistika» (tesut'yan ev patmut'yan hartser). Prak A, Erevan. ["Journalism" (questions of Theory and History). Vol. 1, Yerevan] 1999. (In Armenian)
9. ---. Prak JhB, Erevan. ["Journalism" (questions of Theory and History). Vol. 12, Yerevan] 2012. (In Armenian)
10. Polonskij, Andrej. *Publicistika kak osobyj vid tvorcheskoj dejatel'nosti*. BelGU, №11, vyp.1, [*Publicism as a Special Kind of Creative Activity*. BSU, №11, Edition 1] 2008. (In Russian)
11. «Avangard». 1989t'. mayisi 17, Erevan ["Vanguard". 1989 May 17, Yerevan]. (In Armenian)
12. «Avangard». 1990t'. septemberi 28, Erevan ["Vanguard". 1990 September 28, Yerevan]. (In Armenian)
13. «Erekoyan Erevan». 1988t'. hoktemberi 27, Erevan ["Evening Yerevan". 1988 October 27, Yerevan]. (In Armenian)

14. «Erekoyan Erevan». 1988t'. noyemberi 21, Erevan ["Evening Yerevan". 1988 November 21, Yerevan]. (In Armenian)
15. «Erekoyan Erevan». 1988t'. dektemberi 13, Erevan ["Evening Yerevan". 1988 December 13, Yerevan]. (In Armenian)
16. «Erekoyan Erevan». 1988t'. dektemberi 31, Erevan ["Evening Yerevan". 1988 December 31, Yerevan]. (In Armenian)
17. «Erekoyan Erevan». 1989t'. mayisi 20, Erevan ["Evening Yerevan". 1989 May 20, Yerevan]. (In Armenian)
18. «Erekoyan Erevan». 1989t'. mayisi 25, Erevan ["Evening Yerevan". 1989 May 25, Yerevan]. (In Armenian)
19. «Erekoyan Erevan». 1990t'. hownvari 2, Erevan ["Evening Yerevan". 1990 January 2, Yerevan] (In Armenian)
20. «Erekoyan Erevan». 1990t'. hownvari 17, Erevan ["Evening Yerevan". 1990 January 17, Yerevan]. (In Armenian)
21. «Erekoyan Erevan». 1990t'. p'etrvari 20-21-23, Erevan ["Evening Yerevan". 1990 February 20-21-23, Yerevan]. (In Armenian)
22. «Erekoyan Erevan». 1990t'. septemberi 25, Erevan ["Evening Yerevan". 1990 September 25, Yerevan]. (In Armenian)
23. «Khorhrdayin Hayastan». 1989t'. o'gostosi 17, Erevan ["Soviet Armenia". 1989 August 17, Yerevan]. (In Armenian)
24. «Khorhrdayin Hayastan». 1990t'. p'etrvari 4, Erevan ["Soviet Armenia". 1990 February 4, Yerevan]. (In Armenian)
25. «Khorhrdayin Hayastan». 1990t'. howlisi 10, Erevan ["Soviet Armenia". 1990 July 10, Yerevan]. (In Armenian)
26. «Khorhrdayin Hayastan». 1990t'. howlisi 12, Erevan. ["Soviet Armenia". 1990 July 12, Yerevan]. (In Armenian)
27. «Munetik». 1992t'. t'iv 4, Erevan ["Crier". 1992, no. 4, Yerevan]. (In Armenian)
28. «Sovetakan Hayastan». 1989t'. hownvari 26, Erevan ["Soviet Armenia". 1989 January 26, Yerevan]. (In Armenian)
29. «Vozni». 1989t'. p'etrvar, N 3, Erevan ["Hedgehog". 1989 February, N 3, Yerevan]. (In Armenian)

ACCENTS ON ARTSAKH OF ARMENIAN PUBLICISTS AND THEIR PRESENTATION IN THE ARMENIAN PRESS (1988-1991)

ANNA MKRTICHYAN

Yerevan State University,

Chair of Printed and Broadcast Media, Lecturer;

Academy of Justice, Unit of Cooperation and Public Relations, Head,

Yerevan, the Republic of Armenia

This article aims at revealing the articles of well-known Armenian publicists in the Armenian press, which were published during the years of the Karabakh movement and stand out with accents on Artsakh.

The objective of the work is to examine the coverage of the Karabakh events in the press through publicist articles in 1988-1991, as well as to reveal the peculiarities of the public discourse of the famous publicists through comparative analysis. The work is also aimed at the unique and important significance of publicist articles in the process of forming public opinion in the context of influencing the audience.

The work is written by a combined examination of facts, applying the principles of historical and media analysis.

Based on the results of the study it can be argued that in 1988-1991 the press of Soviet Armenia was seriously challenged by the Armenian publicists with a political perception of reality and a unique emotional interpretation. In this regard, the authoritative intellectuals stood out, trying to reveal to the public the real picture of the political and public life of the country, not only by giving assessments, but also by sending messages aimed for the future. Moreover, in parallel with pointing out the existing problems, the publicists tried to unite the audience and push for practical steps. In the articles dedicated to Artsakh, besides the concerns, there were psychologically influential calls, as well as optimistic moods.

Keywords: *Karabakh movement, publicity, intellectuals, Karabakh issue, Armenian press, Artsakh, accents on Artsakh, national reinterpretation.*

АРЦАХСКИЕ АКЦЕНТЫ АРМЯНСКИХ ПУБЛИЦИСТОВ И ИХ ПРОЯВЛЕНИЯ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ (1988-1991 гг.)

АННА МКРТИЧЯН

*преподаватель кафедры печатных и вещательных СМИ Ереванского
государственного университета, руководитель отдела сотрудничества и
общественных связей Академии юстиции,
г. Ереван, Республика Армения*

Данная работа направлена на выявление статей авторитетных армянских публицистов в армянской прессе, опубликованных в годы карабахского движения, которые отличаются ярко выраженной арцахской направленностью, то есть по акцентируют арцахскую тематику.

Целью работы является изучение освещения карабахских событий в прессе в 1988-1991 гг. через публицистические статьи, а также путем сравнительного анализа выявить особенности публичного дискурса известных ученых того времени. Работа направлена также на то, чтобы подчеркнуть уникальное и важное значение публицистических статей в процессе формирования общественного мнения в контексте воздействия на аудиторию.

Работа изложена с применением принципов сравнительно-исторического и медиа анализа, сопоставительного изучения фактов.

Согласно результатам исследования, можно утверждать, что в 1988-1991 годах армянская публицистика со своим восприятием действительности и своеобразной эмоциональной интерпретацией событий бросила серьезный вызов прессе Советской Армении. В этом контексте выделялись представители интеллигенции, пытавшиеся раскрыть перед публикой реальную картину политической и общественной жизни страны не только путем оценок, но и посылов, определяющих будущее. Более того, параллельно с указанием на существующие проблемы, публицисты пытались объединить аудиторию и подтолкнуть к практическим шагам. В публицистических статьях, посвященных Арцаху, кроме фиксирования вызовов и угроз, содержались также воодушевляющие призывы оптимистические высказывания.

Ключевые слова: *Карабахское движение, общественный дискурс, интеллектуалы, карабахский вопрос, армянская пресса, Арцах, арцахские акценты, национальная реинтерпретация.*

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА



ՄՏԱԳՐՈՅԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՌԻՍՈՒՑԱՆ ՄԵԹՈԴ*

ՀՏԴ 37.02

DOI: 10.52063/25792652-2022.1.12-187

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի գիտքարտուղար,
ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դասախոս,
ասիստենտ, Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտաշխատող և գիտքարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
meri.hovhannisyan@ysu.am

Հետազոտության նպատակն է հստակորեն սահմանել մտազրոհ մեթոդը, վերլուծել մեթոդի տեսակները, իրականացման փուլերն ու կիրառման կանոնները, առանձնահատկությունները ուսումնական գործընթացում: Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել մտազրոհ մեթոդի էությունը, սկզբունքները, առավելությունները, սահմանափակումները, մեթոդի կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Թեմայի շրջանակում առաջադրված խնդրի համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության, համեմատության մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մտազրոհը ուսուցման խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն մեթոդ է, որը ենթադրում է մտքերի, գաղափարների խրախուսում, ցանկացած քննադատության բացակայություն, դասին մասնակից սովորողների հավասարություն, զուգորդումների ազատություն, մտքերի գրառում և նպատակահարմար է ուսումնական որևէ խնդրի լուծմանը: Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել ցանկացած առարկայի դասի խթանման փուլում կոնկրետ խնդիր լուծելու և սովորողների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը զարգացնելու, ինքնավստահություն, համագործակցային հմտություններ ձևավորելու նպատակով: Մեթոդի արդյունքները հեշտ գնահատելի են, իսկ հստակ կանոնների առկայությունը մեթոդը դարձնում է դյուրընկալելի սովորողների համար: Մտազրոհի արդյունավետությունը պայմանավորված է մասնակիցների ոչ մեծ խմբի ներգրավվածությամբ, առաջարկված լուծումների ու խնդիրների վերլուծությամբ ու հետազայում գործնականում դրանց կիրառությամբ:

Հիմնաբառեր՝ ուսումնական գործընթաց, ուսուցման մեթոդ, փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ, մտազրոհ, մտքերի գրառում, ստեղծագործական մտածողություն, անհատական մտազրոհ:

* Հոդվածը ներկայացվել է 09.02.2022 թ., գրախոսվել՝ 15.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Ներածություն

Այսօր ուսուցման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և փոխներգործուն (ինտերակտիվ): Ավանդական են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Փոխներգործուն մեթոդների հիմքում սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաև գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ սովորողը գիտելիք է ձեռք բերում՝ ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ (Պետրոսյան 19): Բացի դրանից՝ փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ենթադրում է գիտելիքների ու մտքերի փոխանակում, որը նպատակաուղղված է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը՝ այն հնարավորինս ակտիվացնելով, ստեղծելով այնպիսի միջավայր, որում սովորողը դառնում է իր ուսուցումը կազմակերպող անձ՝ գործընթացի սուբյեկտ՝ ինքնուրույնության բարձր աստիճանով (Մկրտչյան 75): Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են նաև միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, քննադատական մտածողության զարգացմանը:

Լեզուների դասավանդման ժամանակ փոխներգործուն մեթոդների և հնարների կիրառումը հրաշալի արդյունք կարող է ապահովել, երբ խոսքը վերաբերում է սովորողների շրջանում ճանաչողական կամ ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև սովորողների ու մանկավարժների միջև փոխազդեցությանը (Панфилова 18-33; Dugosh, et al. 722-735):

Փոխներգործուն մեթոդների կիրառման կանոններն են.

ա. սովորողներից ոչ մեկը չի կաշկանդվում մտածելով, որ ինքը կարող է սխալվել,

բ. դիմացինի կարծիքը չի մերժվում ոչ մեկի կողմից,

գ. ցանկացած կարծիք կամ գաղափար խրախուսվում է:

Փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանքների կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր անդամները պատասխանատու են դառնում նյութը յուրացնելու համար: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել և կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում՝ խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները և այլն: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ժամանակ սովորողները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորքային ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Մտագրոհ կամ «մտքերի տարափ»

Մտագրոհը փոխներգործուն մեթոդ է: Այն «մտքերի տարափ», «ուղեղային փոթորիկ» («ուղեղային գրոհ») են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում է ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող մտքեր, գաղափարներ արտահայտելը: Մտագրոհը ստեղծագործական գաղափարների արարման, խմբովի ստեղծագործելու մեթոդ է, որի ընթացքում փորձում են գտնել նախօրոք ձևակերպված որևէ խնդրի լուծումը՝ մասնակիցների ինքնաբուխ արտահայտած մտքերը,

գաղափարն ու կարծիքները հավաքելու և գրանցելու միջոցով: Մտագրողը խնդրի լուծման յուրօրինակ տեխնիկա է, որը ազատ միջավայր է ապահովում անհատական գաղափարներ ներկայացնելու համար՝ առանց որևէ քննադատության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում ու դիտարկվում են որպես խնդրի լուծում: Խմբի անդամների միջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ զերծ մնալով մեկնաբանությունից (Michael Diehl and Wolfgang Stroebe 497-480): Արգելվում է քննադատել այլ մասնակիցների արտահայտած կարծիքները, չի խրախուսվում նաև արտահայտած մտքերի հիմնավորումը:

Մեթոդը մշակվել է Ալեքս Ֆ. Օսբորնի կողմից 1939 թվականին, երբ վերջինս սկսեց մշակել խնդիրների լուծման ստեղծագործական մեթոդներ: Հետագայում՝ 1953 թվականին, իր «Կիրառական երևակայություն» վերնագրով գրքում առաջարկեց իր մեթոդաբանությունը բիզնես գործունեության առավել արդյունավետ ծրագրման համար: Նշված մեթոդը լայն կիրառություն գտավ ձեռնարկությունների ղեկավարների շրջանում՝ նպաստելով աշխատանքի արդյունավետությանը, շահույթի աճին և հետաքրքիր գաղափարների ի հայտ գալուն: Մեթոդի էությունը հետևյալն էր. ձեռնարկության ղեկավարներին ու աշխատակիցներին տրվում էր խնդիր, և խմբի յուրաքանչյուր անդամ կարող էր առաջարկել իր լուծումները, առաջ քաշել վարկածներ, քննարկել արդյունքները, ենթադրություններ անել, վիճարկել մյուս անդամների առաջարկները: Արդյունքում ծնվում էին նոր գաղափարներ ու առաջարկություններ (Osborn; Felder 674-681):



Նկար 1

Մտագրողի մեթոդի կիրառման ժամանակ շեշտը դրվում է հնարավորինս շատ կարծիքներ ու գաղափարներ արտահայտելու վրա՝ առանց մտածելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու մասին: Մտագրողի դեպքում չկա «սխալ» գաղափար. սովորողները պետք է առավելագույնս ազատ զգան իրենց, միայն այդ դեպքում նրանք կկարողանան հստակորեն արտահայտել իրենց մտքերը՝ չմտահոգվելով քննադատության կամ սխալ լինելու մասին: Մանկավարժն էլ իր պահվածքով պետք է ցույց տա, որ արժեքավոր է

սովորողի հայտնած յուրաքանչյուր կարծիք, ինչը ևս կիրախուսի նրանց ազատ արտահայտվել՝ չվախենալով սխալվելուց: Շատ կարևոր է նաև բոլոր սովորողների տրամադրվածությունը: Նրանք պետք է հարգեն և փոխըմբռնմամբ մոտենան մեկը մյուսին: Յուրաքանչյուր սովորողի հայտնած միտքը պետք է լսելի լինի և ուշադրության արժանանա: Ոչ մի սովորող չպետք է առավելություններ ունենա մյուսների նկատմամբ. բոլորը պետք է ունենան կարծիքներ հայտնելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ:



Գծապատկեր 1

Մտագրողը դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկն է, որի միջոցով մանկավարժը վեր է հանում սովորողների նախնական գիտելիքները՝ ուսուցանվող թեմայի վերաբերյալ մտքեր «հավաքելով»: Մտագրողը կարող է բազում բացահայտումներ անել ինչպես մանկավարժի, այնպես էլ հենց իրենց՝ սովորողների համար: Ընդ որում՝ մեթոդի կիրառումը երևան է հանում նաև սովորողի խոսքի բազմազանությունը, հարստությունը, մտածողության առանձնահատկությունները:

Մտագրոհն ունի իր կիրառման կանոնները՝ *խրախուսել սովորողների մտքերն ու առանձնահատկությունները, բացառել քննադատությունը, ապահովել մասնակիցների հավասարությունը՝ մտքեր արտահայտելու հարցում գերակայություն չստեղծելով, սահմանափակումներ չդնել, բոլոր մտքերը գրառել կամ հաշվի առնել:*

Կարևոր է նաև ժամանակային սահմանափակումների հարցը: Ճիշտ կլինի սովորողներին նախապես ասել, որ մտագրոհի համար նախատեսված է, օրինակ, 8-10 րոպե: Կարևոր է վերջին փուլի քննարկմանը ժամանակ տրամադրել: Երբ մտքեր արտահայտելու համար տրամադրված ժամանակն ավարտվի, կարելի է

հնարավորություն տալ այլընտրանքային տարբերակներ մտածելու կամ լրացուցիչ մոդեր արտահայտելու:

Համագործակցային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր խումբ ինքն է ընտրում գրառման ձևը՝ պարզապես թվարկմամբ գրել, թղթի տարբեր անկյուններում առանց վերլուծության խմբավորել մոդերը, կենտրոնում գրել խնդիրը, թեման, ապա, դրա շուրջը շրջանաձև գրառելով, «հավաքել» արտահայտված մոդերը և այլն: Երբ մեթոդը կիրառվում է սովորողների մեծ խմբի մասնակցությամբ, գրանցումները գրատախտակին կամ թղթի վրա կարող է կատարել մանկավարժը կամ սովորողներից մեկը (մի քանիսը):

Մտագրոհի տեսակները

Կան մտագրոհի տարբեր տեսակներ՝ գրավոր ու բանավոր, անհատական ու խմբային: Մտագրոհը սովորաբար իրականացվում է բանավոր եղանակով, սակայն երբեմն, որպեսզի ոչ ակտիվ սովորողները դուրս չմնան մտագրոհից, առաջարկվում է կիրառել նաև մտագրոհի գրավոր տարբերակը, որը չի փոխարինում բանավոր մտագրոհին, բայց լրացնում է դրան:

Անհատական մտագրոհը նպատակաուղղված է ստեղծելու գաղափարների ավելի լայն շրջանակ, քան խմբային մտագրոհը, սակայն հակված է ոչ այնքան արդյունավետորեն զարգացնելու գաղափարները: Իսկ խմբային մտագրոհի դեպքում յուրաքանչյուր նախորդ գաղափար դառնում է նոր գաղափարի խթան, և դա շարունակվում է որոշակի ժամանակով (ոչ ավելի, քան 15 րոպե): Երբ ստեղծվում են մեծ թվով գաղափարներ, դա օգնում է խնդրի ճիշտ լուծում ստանալ: Դասարանում կամ լսարանում լինում է հատուկ տախտակ, որի վրա սովորողներն ուսումնական որևէ խնդրին առնչվող իրենց ստեղծագործ գաղափարներն են գրառում: Խնդիրը միշտ մեր աչքի առաջ է, և դրա մասին մոդերն անընդհատ կատարվեն բոլոր նրանց մոդերում, ովքեր հետաքրքրված են խնդրի լուծմամբ:

Առանձնացվում է նաև «մտագրոհի՝ ճապոնական ձևով», որը հիմնված է խմբի բոլոր անդամների համար խնդիրը բացահայտելու և լուծելու միասնական մոտեցման անհրաժեշտության գիտակցման վրա: Այս տեխնիկան թույլ է տալիս մոտեցնել խմբի բոլոր անդամների դիրքորոշումները և հնարավորություն է տալիս բոլորի համար ընդհանուր որոշում կայացնելու:

Մեթոդը կիրառվում է երկու փուլով՝ խնդրի ձևակերպում և լուծում: Առաջին փուլում խմբի յուրաքանչյուր անդամ պետք է որոշի խնդրի էությունը, առաջարկի դրա լուծման տարբերակ: Խմբի ղեկավարը թվարկում է թեմային առնչվող բոլոր հասկացությունները: Մասնակիցներից յուրաքանչյուրը քարտերի վրա գրում է քննարկվող խնդրի վերաբերյալ բոլոր փաստերը՝ յուրաքանչյուր քարտի համար մեկ փաստ: Փաստերը պետք է լինեն համապատասխան և անմիջականորեն առնչվեն ուսումնասիրվող թեմային: Խումբը «գաղափարների հավաքածուին» տալիս է անվանում, որն արտացոլում է նրանում ներկայացված բոլոր փաստերի էությունը: Խմբի անդամները միավորում են մնացած փաստերը հավաքածուներում (յուրաքանչյուրն իր անունով): Այնուհետև բոլոր հավաքածուները ավելացվում են մեկի մեջ, որին խումբը տալիս է անուն, որն արտացոլում է վերջնական հավաքածուի էությունը: Այս վերջնական համալիր հավաքածուն հնարավորինս մոտ կլինի խնդրի էությանը և դրա սահմանմանը: Հիմնաբառերը պետք է վերադասավորվեն այնպես, որ խնդրի հստակ ու ճշգրիտ սահմանում երևան գա:

Մտագրոհի այս տեսակն աշխատում է այսպես. երբ խմբի անդամները քարտերի վրա գրում են ուսումնասիրվող թեմային առնչվող փաստեր, խնդրի սահմանումը ընդլայնվում է, երբ փաստերը խմբավորում են խմբերի, այն նեղանում է: Վերը նկարագրված սկզբունքով փաստերը համադրող խմբում փոխվում է խնդրի տեսլականը, որն առավել օբյեկտիվ է դառնում:

Մտագրողի մեթոդի առավելություններն ու սահմանափակումները

Ինչպես յուրաքանչյուր մեթոդ, մտագրողը ևս ունի իր առավելությունները.

- ✓ խնդրի լուծման յուրօրինակ տեխնիկա է,
- ✓ խթանում է ստեղծագործական մտածողությունը, ստեղծարարությունը,
- ✓ ընդլայնում և զարգացնում է մտածողությունը,
- ✓ կենտրոնանում է տարբեր գաղափարների վրա՝ ամբողջական լուծում

ստանալու համար,

- ✓ խրախուսում է ինքնուսուցումը, գաղափարների արտահայտումը,
- ✓ նպաստում է համագործակցային հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,

- ✓ նպաստում է ուսուցանվող նյութի բազմակողմանի ընկալմանը,

- ✓ ունի նաև ժամանակի խնայողության միտում:

Մտագրողի մեթոդի սահմանափակումներն են.

- մասնակիցների մեծ խմբի ներգրավվածության դեպքում ոչ բոլորը հնարավորություն ունեն իրենց մտքերն ու գաղափարները արտահայտելու,
- մտագրողը գործուն է այն դեպքում, երբ սովորողների խումբն ասելիք ունի և պատրաստ է այն ներդնել ընդհանուր նպատակի շուրջ,
- մտագրողը միշտ անավարտ է և ոչ ամբողջական: Սա ընդամենը մեկ քայլ է ուսումնական խնդրի լուծման ճանապարհին, առաջարկված լուծումներն ու գաղափարները կարող են գոհացնող լինել, բայց իրական առավելությունները երևում են, երբ դրանք վերլուծվում են ու մշակվում՝ գործնականում կիրառվելով:

Եզրահանգում

Այսպիսով՝ մտագրողի մեթոդը կիրառվում է մտքերի, գաղափարների, տեսակետների անկաշկանդ ու անսահմանափակ արտահայտման համար: Այս մեթոդը արդյունավետ է կիրառել ցանկացած առարկայի դասի խթանման փուլում, ինչպես նաև՝

- կոնկրետ խնդիր լուծելու,
- ստեղծագործական մտածողությունը խթանելու,
- երևակայությունը զարգացնելու,
- լսելու ու հաղորդակցման, ինքնուրույն մտածելու և կարծիք արտահայտելու հմտություններ ձևավորելու,
- համագործակցային թիմ ձևավորելու,
- ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշվելու,
- սովորողին ինքնավստահություն ներշնչելու նպատակով:

Մտագրողի միջոցով վեր են հանվում սովորողների նախնական գիտելիքները, այն, ինչ նրանք գիտեն կամ ենթադրում են, որ գիտեն տվյալ թեմայի, նյութի վերաբերյալ: Դասի վերջում (կշռադատման փուլում), երբ արդեն սովորողները ծանոթացել կամ յուրացրել են թեման, նյութը, անպայման անդրադարձ է կատարվում մտագրողի արդյունքներին՝ ճշգրտելով, ուղղելով, լրացնելով ու ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը: Միայն այս դեպքում է սովորողի իմացական կառույցներում տեղաշարժ կատարվում՝ նոր գիտելիքի ամրագրմամբ:

Օգտագործված գրականություն

1. Մկրտչյան, Մանուկ, *Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը*. Երևան, 2001:
2. Պետրոսյան, Ռուբեն, *Ուսուցչի մասնագիտական գործունեության ժամանակակից մոդելները*. Երևան, 2007:

3. Osborn, Alex. *Applied Imagination: Principles and Procedures of Creative Problem Solving*. New York: Charles Scribner's Sons, New York, 1953.
4. Панфилова, Альвина. *Методы стимулирования критического и творческого мышления в учебном процессе*. В. В. Бойко, В. А. Винокур и др., Методологические и методические аспекты последипломного образования, Методические разработки, СПб МАЛО, Санкт-Петербург, 1997.
5. Dugosh, Karen, et al. "Cognitive Stimulation in Brainstorming". *Journal of Personality and Social Psychology*, 79(5), 2000, pp. 722-735.
6. Felder, Richard. "Learning and Teaching Styles in Engineering Education". *Eng Educ.*, No. 78, 1988, pp. 674-681.
7. Michael, Diehl, and Wolfgang Stroebe. "Productivity Loss in Brainstorming Groups: Toward the Solution of a Riddle". *Journal of Personality and Social Psychology*. No. 53 (3), 1987, pp. 497-509.

WORKS CITED

1. Mkrtchyan, Manuk. *Krt'ut'yan kazmakerpman kolektiv eghanaki kayacman hinaharcery'*. Erevan. [*The Problems of Establishing a Collective Way of Organizing Education*. Yerevan] 2001. (In Armenian)
2. Osborn, Alex. *Applied Imagination: Principles and Procedures of Creative Problem Solving*. New York: Charles Scribner's Sons, New York, 1953.
3. Panfylova, Al'vina. *Metodyy stymulyrovanyja krytycheskogo y tvorcheskogo myyshlenyjav uchebnom processe*. V. V. Bojko, V. A. Vynokur y dr., Metodologycheskye y metodycheskyeaspektyy posledyplomnogo obrazovanyja, Methodycheskye razrabotky. SPb MALO, Sankt-Peterburg. [*Methods of Stimulating Critical and Creative Thinking in the Educational Process*. V. V. Boyko, V. A. Vinokur et al., Methodological and methodological aspects of postgraduate education, Methodological developments, SPb MALO, St. Petersburg] 1997. (In Russian)
4. Petrosyan, Ruben. *Usucchi masnagitakan gorc'uneut'yan jhamanakacic modelnery'*. Erevan. [*Modern Models of Teacher Professional Activity*. Yerevan] 2007. (In Armenian)
5. Dugosh, Karen, et al. "Cognitive stimulation in brainstorming". *Journal of Personality and Social Psychology*, 79(5), 2000, pp. 722-735.
6. Felder, Richard. "Learning and teaching styles in engineering education". *Eng Educ.*, No. 78, 1988, pp. 674-681.
7. Michael, Diehl, and Wolfgang Stroebe. "Productivity Loss in Brainstorming Groups: Toward the Solution of a Riddle". *Journal of Personality and Social Psychology*. No. 53 (3), 1987, pp. 497-509.

BRAINSTORMING AS METHOD OF INTERACTIVE LEARNING

MERI HOVHANNISYAN

*Yerevan State University, Academic Secretary,
The Centre of Pedagogy and Education Development, Lecturer, Assistant,
Institute for Armenian Studies, Researcher, Scientific Secretary,
Ph.D. in Philology,
Yerevan, the Republic of Armenia*

The objectives of the study are to clearly define the method of brainstorming, to analyze the types of the given method, the rules for conducting, the stages of implementation and the features of the application of brainstorming in the learning process. Our task is to reveal the essence of the brainstorming method, its principles, advantages, limitations, pedagogical problems that arise when applying the method, as well as the ways for their solution. The general scientific logical, as well as the private or special methods of the analysis and the comparison have been used during the comprehensive study of the problem put forward within the framework of the topic.

As a result of the study we came to a conclusion that brainstorming is the simplest method of group (team) learning, supposing the encouragement of ideas, thoughts, the lack of criticism, the equality of students participating in the lesson, the freedom of association, the registration of thoughts, and is aimed at the solution of any educational problem.

It is advisable to use the given method at the stage of promotion of a lesson on any subject for the solution of a specific problem and the development of creative thinking, the imagination of students, the formation of self-confidence and cooperation skills. The results of the method have been easily evaluated, and the presence of clear rules makes it easier for students to understand the method. The effectiveness of the brainstorming is conditioned by the involvement of a small group of participants, the analysis of the proposed solutions and problems, as well as their subsequent application in practice.

Keywords: *learning process, learning method, interactive methods, brainstorming, thought registration, creative thinking, individual brainstorming*

МОЗГОВОЙ ШТУРМ КАК МЕТОД ИНТЕРАКТИВНОГО ОБУЧЕНИЯ

МЕРИ ОГАННИСЯН

*ученый секретарь Ереванского государственного университета,
преподаватель Центра педагогики и развития образования
Ереванского государственного университета, ассистент,
научный сотрудник и ученый секретарь Института
арменоведческих исследований,
кандидат филологических наук
г. Ереван, Республика Армения*

Цели исследования - четко определить метод мозгового штурма, проанализировать виды данного метода, правила проведения, этапы осуществления и особенности применения мозгового штурма в процессе обучения. Наша задача - выявить сущность метода мозгового штурма, его принципы, преимущества, ограничения, педагогические проблемы, возникающие при применении метода, и пути их решения. В ходе всестороннего изучения задачи, выдвинутой в рамках темы, применялись общенаучные логические, а также частные или специальные методы анализа и сравнения.

В результате исследования мы пришли к выводу о том, что мозговой штурм является наиболее простым методом группового (командного) обучения, предполагающим поощрение идей, мыслей, отсутствие критики, равенство учащихся, принимающих участие в уроке, свободу ассоциаций, регистрацию мыслей, направленным на решение любой учебной задачи.

Этот метод целесообразно использовать на этапе мотивации урока по любому предмету для решения конкретной задачи и развития творческого мышления, воображения учащихся, формирования уверенности в себе и навыков сотрудничества. Результаты метода легко оцениваются, а наличие четких правил облегчает понимание метода учащимися. Эффективность мозгового штурма обусловлена вовлечением небольшой группы участников, анализом предложенных решений и проблем и последующим их применением на практике.

Ключевые слова: *процесс обучения, метод обучения, интерактивные методы, мозговой штурм, регистрация мыслей, творческое мышление, индивидуальный мозговой штурм.*

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ «ՉՐՈՒՅՑՆԵՐ ԱՐՎԵՍԻ ՄԱՍԻՆ» ԹԵՄԱՏԻԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ*

ՀՏԴ 37.016:73/76:008:72:94(479.25) DOI: 10.52063/25792652-2022.1.12-196

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
avetisyan.gaqik.93@mail.ru*

2020 թվականի աղետալի պատերազմի արդյունքում, Արցախի Հանրապետության հարյուրավոր բնակավայրերից զատ, բազմաթիվ հայրենի պատմական նշանակության հուշարձաններ ևս հայտնվել են Բաքվի ռեժիմի ներքո: Վերջինս պետական ամենաբարձր մակարդակով իրագործում է մշակութային ցեղասպանություն՝ վերացնելով հայկականության քարակերտ հետքերը՝ կոթողները ներկայացնելով երբեմնի աղվանական մշակութային ժառանգություն: Ուստի չհանդուրժելով բռնազավթված մեր հայրենիքում վանդալիստական գործողությունները՝ հարկ է նաև ռուսական խաղաղապահ և ՊԲ ուժերի կողմից վերահսկվող Արցախի մնացյալ տարածքներում վերաարժևորել առկա կոթողային անգին հուշարձաններն ու պետական մակարդակով ձևավորել հայրենաճանաչ ու հայրենատեր քաղաքացու կերպարը:

Այս համատեքստում սույն հոդվածի նպատակն է հիմնավորել սովորողների կողմից Արցախի Հանրապետության հսկողության ներքո գտնվող տարածքների պատմամշակութային կոթողների նորովի ուսումնասիրման և ապագա հայրենասեր քաղաքացիների ձևավորման հիմքերը: Խնդիրներն են վերլուծել համապատասխան մանկավարժական մոտեցումներն ու հիմնավորել պատմամշակութային կոթողների վերաբերյալ սովորողների հետաքրքրությունների առկայությունը: Գիտական նորույթն ընդհանուր մասնագիտական պատրաստվածության մեջ պատմամշակութային կոթողների ներկայացման գործընթացում սովորողներին նպաստող ուսուցման դերն ու տեղը բացահայտելն է:

Վերոնշյալ խնդրի լուծմանը գործուն քայլեր ձեռնարկելու նպատակային միջոց ենք համարում տեղի ուսումնական հաստատություններում 7-րդ դասարանի Կերպարվեստ առարկայի «Չրույցներ արվեստի մասին» թեմատիկ դասընթացների շրջանակում (հին հայկական ճարտարապետությունը, կոթողային հուշարձանները) ներառելու նաև սովորողների կողմից պատմամշակութային կոթողների ծանոթացմանն ու պլեներային պատկերագրմանը միտված գործընթացը, որի արդյունքում վերջիններիս մոտ կարժևորվի հայրենաճանաչությունը, կձևավորվի գեղարվեստական ընկալունակություն, ու միջազգային հարթակներում ցուցադրությունների միջոցով կամրապնդվի Արցախի՝ որպես հայոց հնամենի բնօրրան լինելու անառարկելի փաստը:

Սույն հոդվածում Արցախի Հանրապետության պատմամշակութային կարևորագույն կոթողների շարքում անդրադառնում ենք Գանձասարի,

* Հոդվածը ներկայացվել է 14.02.2022 թ., գրախոսվել՝ 03.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Դադիվանքի և Ամարասի ճարտարապետական ընդհանուր նկարագրին, պատմությանն ու պատկերագրմանը միտված հիմնական առանձնահատկություններին: Աշխատանքը շարադրված է համապատասխան փաստերի համադիր քննությամբ, մանկավարժամեթոդական վերլուծությամբ: Մանրամասն ուսումնասիրելով խնդրո առարկան՝ հանգել ենք այն եզրակացության, որ թեմայի արդիականությունից ելնելով՝ սովորողների կողմից պատմամշակութային կոթողների ծանոթացման ու պատկերագրման գործընթացը կնպաստի վերջիններիս մոտ հայրենասիրության գաղափարախոսության ամրապնդմանն ու հայրենիքի վերաազատագրման սրբազան առաքելությանը:

Հիմնաբառեր՝ Արցախի Հանրապետություն, «Չրույցներ արվեստի մասին», պատմամշակութային կոթողներ, գեղարվեստական ընկալունակություն, հայրենաճանաչություն, սովորողներ, պատկերագրում, Գանձասար, Դադիվանք, Ամարաս:

Նախաբան

2020 թվականի աղետալի պատերազմից հետո Արցախի Հանրապետության (ԱՀ) երկու երրորդը փաստացի ռազմակալված է (Հակոբյան 509): Պատերազմի արդյունքներով զավթած հայկական տարածքներում Բաքվի ռեժիմի կողմից շարունակվում է նաև մշակութային ցեղասպանության քաղաքականությունը՝ իսպառ ջնջելով կամ ընդհանրապես վերացնելով պատմամշակութային կոթողների հայկականության հետքերը՝ դրանք ներկայացնելով իբրև ուղիական (աղվանական) ժառանգություն:

Պատմության գեղծարարներին դիմագրավելու, երբեմնի սահմաններին վերադառնալու առաջնահերթ նախապայմանները կրթված հասարակությունը, հզոր տնտեսությունն ու մարտունակ բանակն են, իսկ շարժիչ ուժերը՝ հայրենաճանաչությունն ու հայրենասիրության վեհ գաղափարը: Վերջինս պետք է սերմանվի օրորոցից, արմատավորվի դպրոցում և հասունացվի հետագա կրթական հաստատություններում:

Այդ համատեքստում առաջնային ենք համարում ԱՀ հանրակրթական դպրոցներում 7-րդ դասարանի «Կերպարվեստ» առարկայի «Չրույցներ արվեստի մասին» թեմատիկ դասընթացներում ներառելու նաև հայրենաճանաչությանն ու հայրենասիրությանը միտված պատմամշակութային կոթողների մասնագիտական ներկայացման թեմաներ, որոնց շնորհիվ էապես կգարգանան սովորողների մոտ գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ու հայրենասիրության վեհ առաքիտությունը, ինչն ունի նաև առանցքային նշանակություն:

Արցախի Հանրապետության պատմամշակութային կոթողները

Արցախի Հանրապետությունում առկա են հայոց հնամենի մի շարք կոթողային շինություններ, որոնց պատշաճ ներկայացումը, դաստիարակչական և զարգացնող առաջնահերթ արժեքներից գատ, սովորողների մոտ կծևավորի նաև հայրենիքի հանդեպ ճանաչողության մակարդակ՝ ամրապնդելով ազգապահպանության հիմնախնդիրը, որն առավել քան ակտուալ է վերջին պատերազմից հետո: Այդ ամենի կիրառումը հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է իրականացվի դասավանդման գործընթացում առաջնային խնդիրների լուծման, ստուգման և հաստատման նպատակով գործածվող հետևյալ հետազոտական մեթոդների ներգրավմամբ.

- տեսական – համապատասխան գիտամեթոդական, մասնագիտական, ուսումնական և լրացուցիչ գրականության վերլուծություն,
- հետազոտական – ԱՅՆ նախապես ընտրված մի քանի դպրոցներում կատարել ներդրված փորձի ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն,
- փորձարարական – ստեղծել պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների հայրենաճանաչությանը նպաստող ուսուցման մեթոդական նմուշօրինակ:

Տեսական դասապրոցների կահավորման համար նպատակահարմար կլինի գործածել ժամանակակից էլեկտրոնային գրատախտակ, առանձին իյուստրացիաներ, վերատպություններ, սահիկահանդես և համապատասխան էկրանային հարմարանքներ: Իսկ հայրենի բնությանն ու ճարտարապետության ուսումնասիրմանը միտված գործնական դասերի շրջանակում (համապատասխան անվտանգային երաշխիքների առկայության դեպքում) կազմակերպել նաև էքսկուրսիոն այցեր՝ պլեներային պատկերագրման գործընթացի կիրառմամբ:

Առկա պատմամշակութային կոթողներից առաջնահերթ պետք է ուսումնասիրվեն և պատկերագրվեն համազգային նշանակություն ունեցող Գանձասարի, Դադիվանքի և Ամարասի համալիրները, որոնք Արցախում հայերի հազարամյա բնակության լավագույն քարե վկաներն են: Վերոնշյալից ելնելով՝ ներկայացնենք սովորողներին առաջարկվող թեմաների հակիրճ անդրադարձն ու գրույցի հիմնական բովանդակությունը:

Այսպես, Գանձասարի վանական համալիրը ոչ միայն ԱՅ, այլև բովանդակ Յայաստանի հռչակավոր կոթողներից մեկն է: Ներկայիս համալիրը բաղկացած է 10-13-րդ դարերի կառույցներից: Գլխավոր եկեղեցին հիմնվել էր իշխանաց իշխան Յասան Ջալալյանի օրոք և նվիրված էր Յովհաննես Մկրտչին, քանի որ այդտեղ էին ամփոփված վերջինիս գլուխն ու այլ ընդհանրական սրբերի մասունքներ (Գանձակեցի 270):

1240 թվականին օծված բուն կոթողը կենտրոնագմբեթ խաչածն հորինվածք ունի՝ քառանկյուն կրկնահարկ ավանդատներով: Կոթողն արտաքնապես ևս պատված է մշակված զարդաքանդակներով և պարուրածն կամարաշարերով: Թմբուկի արտաքին նիստերը երիզված են բուսածաղկային մոտիվային երիզներով և հագեցած են քանդակագարդ խոյակներով: Նախշագարդերը միանման չեն. տարբերվում են կոմպոզիցիայով և մշակվածությամբ: Արևմտյան նիստերում քանդակված են կտիտորներ Յասան Ջալալյանն ու իր որդի Աթաբեկը՝ եկեղեցու մանրակերտը ձեռքներին: Կան նաև Զրիստոսի, Ադամի և Եվայի առանձին պատկերաքանդակները: Այդ ամենը գրաֆիկական ոճավորմամբ պատկերագրման ուսանելի օրինակներ են: Սովորողները տեղի զարդանախշերի կրկնօրինակները կարող են օգտագործել կիրառական արվեստի գործերում: Վերոթվարկյալ զարդաքանդակներին անդրադառնալով՝ տեղին է նշել հնագետ Ա. Յակոբսոնին, որը Գանձասարը համարել էր XIII դարի հայկական մշակույթի հանրագիտարանը (Якобсон 75):

Եկեղեցուն կից գավիթը, որը կոնստրուկցիոն առումով հատվող կամարների համադրություն է, իր կազմությամբ բնորոշ է ժամանակի հայկական նմանատիպ այլ կոթողներին (հատկապես մեծ է Լոռվա ճարտարապետական ազդեցությունը): Դեպի եկեղեցի տանող կամարածն մուտքի երեսակալն ասեղնածն մշակված է երկրաչափական տարրերով: Մուտքի վերնամասում քանդակված է Յասան Ջալալյանի տոհմական զինանշանը՝ հովազների տեսքով (Ուլուբաբյան, Գանձասար 42):

ԱՅ չքնաղ բնությունն ու անտառապատ լեռներն իրենց գիրկն են առնում Գանձասարի վանքն ու դիտողին ստիպում ժամերով հիանալ այդ աստվածային պատկերով: Ներկայումս Գանձասարը գտնվում է արցախա-ադրբեջանական շփման գծին մոտ, և անվտանգությունից ելնելով՝ դեպի վանք ուխտագնացություններն իրականացվում են ռուս խաղաղապահների ուղեկցությամբ:

Հաջորդ մարգարիտը՝ IX-XIII դարերի կառույց Դադիվանքն է (Խուլթավանք): Անվանումը կապված է Թադևոս առաքյալի յոթանասուն պշակերտներից մեկի՝ Դադիի հետ (Ասորի 33): Սրբավայրի մասին առաջին գրավոր տեղեկությունները հիշատակվում են IX դարից (Կաղանկատուացի 340):

Գլխավոր եկեղեցին Հաթերքի Մեծ իշխան Վախթանգի տիկին Արզուխաթուն իշխանուհու մեկենասությամբ 1214 թվականին կառուցված Կաթողիկե Ս. Նշանն է (Մաթևոսյան և ուրիշներ 18): Այն կազմությամբ խաչաձև գմբեթավոր սրահի տիպի է՝ չորս կողմերում կառուցված ավանդատներով: Կոթողը հագեցած է արծանագրություններով, որոնք հաճախ նաև զարդանախշի դեր են կատարում: Եկեղեցին արտաքնապես հարուստ է զարդանախշերով և պատկերաքանդակներով: Հարավային պատին կերտված են իշխանուհու ամուսնու և որդու պատկերաքանդակները՝ եկեղեցու մանրակերտը ձեռքներին (Մաացականյան 110): Հատկանշական է կառույցի կամարակապ 16-նիստակի գմբեթը, ուր ճարտարապետական ինքնատիպ գունային լուծման շնորհիվ «...գմբեթի ծածկի մաքուր հղկած, իրար ագուցված սալերը գորշի մուգ երանգն ունեն, ամբողջ թմբուկի ֆոնը բաց վարդագույն է, կամարներն ու սրանց հիմքերը՝ սև, և գոտևորոջ քիվը՝ նորից գորշ» (Ուլուբաբյան, *Դադի կամ Խաթունվանք* 63): Այս ամենը սովորողների համար գեղանկարչական պատկերագրման գունազարդ մի նմուշ է՝ հագեցած աշխանային երանգավորմամբ:

Կոթողի ուրույն ճարտարապետական կառուցվածքը զուգորդվում է ոչ պակաս նշանավոր ինտերիերի որմնակարներով: Պատկերներից մեկում ներկայացված է Ս. Նիկողայոս Սքանչելագործի վարքը՝ Զրիստոսի և Ս. Աստվածածնի ներքո: Մյուս որմնակարում պատկերված է Ստեփանոս Նախավկայի մարտիրոսության տեսարանը (Մանուկյան 53): Այստեղ ևս պատկերագրական ոճը տիպիկ հայկական է, եռթամբ համահունչ է տեղի մանրանկարչական ավանդույթներին: Առատ գույների համադրությունը վառ արտահայտված արևելյան ոճի դիմագծերին ստեղծում է ընդհանուր կոլորիտային հանգիստ միջավայր (Дурнова 154): Եկեղեցուն կից գտնվող երկհարկանի զանգակատան մոտ մինչ վերջին պատերազմը տեղադրված էին XIII դարի երկու ասեղնակերտ խաչքարերը, որոնք, անվտանգությունից ելնելով, տեղափոխվել են Էջմիածին:

Դադիվանքի ամենահին կոթողը Ս. Դադիի միանավ բազիլիկան է: Սրբի աճյունի ամփոփման վայրին համադրում է եկեղեցու խորանը: Հատկանշական են գավթի ներքին պատերին ագուցված տարբեր դարերի կերտված մոտ մեկ տասնյակ խաչքարերը (Հասրաթյան, *Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը* 45): Գմբեթավոր փոքր և միանավ բազիլիկ եկեղեցիները իրենց կազմությամբ փոխուրացնում են համալիրի ընդհանուր կոլորիտը:

Ճարտարապետական ներդաշնակության շնորհիվ Դադիվանքի պատկերագրումը կարելի է կատարել՝ ինչպես առանձին կոթողները վերցնելով, այնպես էլ ընդհանուր չնաշխարհիկ բնության համապատկերում: Նրբաոճ քարակերտ կոթողների գրաֆիկական պատկերագրումը կնպաստի սովորողների շրջանում ազգային սիմվոլիկայի ուսումնասանաչմանն ու գեղարվեստական ընկալունակության ամրապնդմանը: Դադիվանքի դետալային պատկերագրման շնորհիվ սովորողների մոտ կհստակեցվի նաև համալիրի հայկականության անշեղոթությունը, իսկ որմնակարների և արծանագրությունների կրկնօրինակումն ու վերծանումը լիովին կհերքեն վերջին շրջանում կոթողի ուղիական (աղվանական) լինելու առասպելները:

2020 թվականի ավերիչ պատերազմի արդյունքում կնքված եռակողմ հայտարարությամբ Դադիվանքի տարածքը, գտնվելով Զարվաճառի շրջանային տիրույթում, պետք է հանձնվեր Ադրբեջանին, սակայն Ամենայն հայոց կաթողիկոսի՝ ռուս ուղղափառ պատրիարքին անձնական միջնորդությամբ վանական համալիրը ներառվել է ռուս խաղաղապահների ազդեցության գոտում, և թույլատրվել է տեղի հայ հոգևորականների ծառայության շարունակումը: Առանձին ուխտավորների խմբեր՝

խաղաղապահների ուղեկցությամբ մերթընդմերթ այցելում են Արցախի նշանավոր սրբավայրը՝ շարունակելով վառ պահել հայկականության հետքը այս դժոխակ միջավայրում:

Արցախի Հանրապետության հնագույն հոգևոր կառույցներից է Նան Ամարասի վանական համալիրը, որի «Ամարագ» անվանումը, ըստ որոշ հետազոտողների, ունի հեթանոսական ծագում և բառացի նշանակում է «Աստվածություն» (Շ. Մկրտչյան և Ա. Մկրտչյան 65): Տեղի առաջին եկեղեցին (գուցե երբեմնի հեթանոսական սրբավայրի տեղում) հիմնվել էր Գ. Լուսավորչի կողմից (Բուզանդ 75): Վերջինիս թոռան՝ Գրիգորիսին է վերագրվում արդեն կոթողի հիմնական կառուցումը, ուր և թաղվել էր 338 թվականին (Օրմանեան 69): Մեսրոպ Մաշտոցն Ամարասում հիմնել է Արցախի առաջին դպրանոցը: V դարավերջին Վաչագան Բարեպաշտ թագավորը Գրիգորիսի կորուսյալ գերեզմանի վրա մի փոքրիկ մատուռ-դամբարան է հիմնել և բարեկարգել մնացյալ կառույցները (Լեո 153):

Դարեր շարունակ Ամարասի վանքը դիմագրավել է ավերիչ ասպատակությունների և սորովի տեսք է ստացել XVII դարում Գանձասարի Պետրոս կաթողիկոսի վերականգնողական աշխատանքների շնորհիվ՝ դառնալով եպիսկոպոսական աթոռանիստ: Մելիք Շահնագարի օրոք Ամարասը շրջապատվել է ամրակուռ պարիսպներով, որոնց ողջ պարագծով ներսից կառուցվել են բնակելի և օժանդակ նշանակության շինություններ, իսկ կենտրոնական մասում՝ Ս. Գրիգորիս եկեղեցին (Բարխուտարեանց 174): Կաթնագույն սրբատաշ կրաքարով կառուցված համալիրի ներսում են գտնվում գլխավոր եկեղեցին, վանական խցերն ու այլ օժանդակ շինություններ: Ներսի բակում սովորողների համար առկա են նպաստավոր պայմաններ՝ պատկերագրելու ինչպես եկեղեցին, այնպես էլ օժանդակ շինությունները: Կոթողի կաթնային երանգավորումը համահունչ է միջավայրի կոյորիտին: Գրաֆիկական ուսանելի աշխատանքներ կարող են ստեղծվել պարսպաշարի և բլուրածն աշտարակների պատկերագրման դեպքում:

Ս. Գրիգորիսի անվան գլխավոր եկեղեցին կառուցվածքով երկու զույգ մույթանի եռանավ բազիլիկա է: Ճարտարապետությամբ պարզ կառույց է՝ զուսպ հարդարանքներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է, ուր մշակված են երեսակալներն ու քիվերը՝ շեշտված կամարակապ պսակով ու հյուսածն խաչով: Ինտերիերը կազմությամբ ևս համեստ է: Արևելյան կողային ավանդատների կենտրոնում Ավագ խորանն է, որին կից աստիճանավոր մուտքը տանում է դեպի բեմի ներքո գտնվող Ս. Գրիգորիսի ուղղանկյունաձև միանավ մատուռ-դամբարանը (Հասրաթյան, *Ամարասի ճարտարապետության համալիրը* 51):

Վերջին տարիներին սկսվել էին կոթողի համալիր վերականգնողական աշխատանքները, որոնք, սակայն, ընդհատվեցին 2020 թվականի ավերիչ պատերազմի պատճառով: Ներկայումս արցախա-ադրբեջանական շփման գիծն անցնում է Ամարասի վանքից մոտ մեկ կիլոմետր հեռավորությամբ և անվտանգությունից ելնելով՝ ուխտագնացություններն այստեղ ևս իրականացվում են ռուս խաղաղապահների ուղեկցությամբ:

Եզրակացություն

Սույն հոդվածում ամփոփելով ներկայիս ԱՀ պատմամշակութային կոթողների պատկերագրման առանձնահատկություններն ու 7-րդ դասարանի «Կերպարվեստի» «Չրույցներ արվեստի մասին» թեմատիկ դասընթացներում սովորողների կողմից դրանց կարևորագույն նշանակությունը՝ հարկ ենք համարում շեշտել, որ վերոնշյալ գործընթացը առաջնահերթ է ոչ միայն խնդրո առարկա վայրում, այլև հենց ՀՀ-ում:

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ պատմամշակութային կոթողների ուսումնասիրման արդյունքում սովորողների մոտ կձևավորվի հոգատար

վերաբերմունք ազգային կոթողային արվեստի նկատմամբ, և ծանոթանալով Արցախի հինավուրց քարեդեմ վշակույթի գոհարներին՝ կամրապնդվի ընտանիք-հավատք - բանակ - հայրենիք պետականակերտ համակարգը:

Վերաթվարկյալ կոթողներից գատ՝ ներկայիս ԱՅ տարածքում սովորողների կողմից պլեներային պատկերագրման օրինակելի պատմամշակութային հուշարձանների թվում կարելի է ընդգրկել նաև տեղական նշանակության մեծ ու փոքր կիսավեր առանձին հոգևոր կառույցները, ամրակուռ բերդերը, խաչքարակերտ կոթողներն ու հնամենի ապարանքները, որոնց պատկերագրման միջոցով ուսումնասիրությունն ու միջազգային հարթակներում հանրայնացումը Արցախում հայերի դարավոր ներկայության կարևորագույն ապացույցներն են ու գալիք սերնդի կողմից պետականության պահպանության հիմնարար երաշխիքը:

Օգտագործված գրականություն

1. Բարխուտարեանց, Մակար. *Պատմութիւն Աղուանից*. հ. Ա, Թիֆլիս, 1901:
2. Լեո. *Երկերի ժողովածու*. հ. 2, Երևան, 1947:
3. Կիրակոս Գանձակեցի. *Պատմություն հայոց*. Երևան, 1961:
4. Հակոբյան, Թաթուլ. *Արցախյան օրագիր: Կանաչ ու սև*. Երևան, 2021:
5. Հասրաթյան, Մուրադ. *Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը*. Երևան, 1992:
6. Մաթևոսյան, Կարեն և ուրիշներ. *Դադիվանք. վերածնված հրաշալիք*. Երևան, 2018:
7. Միխայել Ասորի. *ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորւոյ Պատրիարքի*. Յերուսաղէմ, 1871:
8. Մնացականյան, Ստեփան. *Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում*. Երևան, 1976:
9. Մովսես Կաղանկատուացի. *Պատմություն Աղուանից աշխարհի*. Երևան, 1983:
10. Փավստոս Բուզանդ, *Պատմություն հայոց*, Երևան, 1968:
11. Օրմանեան, Մադաթիա. *Ազգապատում*. հ. Ա, Պեյրոլթ, 1959:
12. Дурнова, Лидия. *Очерки изобразительного искусства средневековой Армении*. Москва, 1979.
13. Якобсон, Анатолий. *Из истории армянского средневекового зодчества*. Москва, 1977.
14. Ուլուբաբյան, Բագրատ. *Գանձասար*. Երևան, 1982:
15. Հասրաթյան, Մուրադ. «Ամարասի ճարտարապետության համալիրը». *Լրաբեր հասարակական գիտությունների*, № 5, 1975:
16. Մանուկյան, Սեյրանուշ. Միջնադարյան հայաստանի կոթողային գեղանկարչությունը. *Հայկական որմնանկարչություն գիտական հոդվածների և նյութերի ժողովածու*, Երևան, 2019:
17. Մկրտչյան, Շահեն, և Արմեն Մկրտչյան. Ամարասի վանական համալիրը. «*Էջմիածին*», № 6, 2000:
18. Ուլուբաբյան, Բագրատ. Դադի կամ Խաթուվանք. «*Էջմիածին*», № 2-է, 1971:

WORKS CITED

1. Barkhutareants, Makar. *Patmutiyun Aghuanic*. h. A, T'iflis., [Albanian history. Book 1. Tiflis] 1901. (In Armenian)
2. Durnova, Lidija. *Ocherki izobrazitel'nogo iskusstva srednevekovoj Armenii*. Moskva. [Essays on the Fine Art of Medieval Armenia. Moscow] 1979. (In Russian)
3. Hakobyan, T'at'ul. *Artsakhyan oragir: Kanach u sev*. Erevan. [Artsakh Diary: Green and Black. Yerevan] 2021. (In Armenian)

4. Hasrat'yan, Murad. *Haykakan tchartarapetut'yan Artsakhi dprocy'*. Erevan. [Artsakh School of Armenian Architecture. Yerevan] 1992. (In Armenian)
5. Jakobson, Anatolij. *Iz istorii armjanskogo srednevekovogo zodchestva*. Moskva. [From the History of Armenian Medieval Architecture. Moscow] 1977. (In Russian)
6. Kirakos Gandzaketsi. *Patmut'yun hayoc*. Erevan. [History of Armenia. Yerevan] 1961. (In Armenian).
7. Leo. *Erkeri zhoghovats'u*. h. 2, Erevan. [Collection of Essays. book 2, Yerevan] 1947. (In Armenian).
8. Mat'evosyan, Karen yev urishner. *Dadivank: verats'nvats' hrashalik*. Erevan. [Dadivank. Rivied Wonder. Yerevan] 2018. (In Armenian)
9. Mikhaye'l Asori. *Zhamanakagrutyun Tear'n Mikhaye'li Asorvoy Patriarki*. Erusaghem. [Chronology of Patriarch Mikael of Assyria. Jerusalem] 1871. (In Armenian)
10. Mnatsakanyan, Step'an. *Haykakan ashkharhik patkeraqandaky' IX-XIV darrerum*. Erevan. [Armenian Secular Sculpture in the IX-XIV Centuries. Yerevan] 1976. (In Armenian)
11. *Movses Kaghankatvetsi. Patmut'yun Aghvanic ashkharhi*. Erevan. [The History of the Caucasian Albanians. Yerevan] 1983. (In Armenian)
12. Ormanean, Maghakia. *Azgapatum*. h. A, Peyrut'. [National History. book 1, Beirut] 1959. (In Armenian)
13. P'avstos Buzand. *Patmut'yun hayoc*. Erevan. [History of Armenia. Yerevan] 1968. (In Armenian)
14. Ulubabyan, Bagrat. *Gandzasar*. Erevan. [Gandzasar. Yerevan] 1982. (In Armenian)
15. Hasrat'yan, Murad. "Amarasi tchartarapetut'yan hamaliry". *Lraber hasarakakan gitut'yunneri*, № 5. ["Amaras Architecture Complex". *The Herald of Social Sciences*, № 5] 1975. (In Armenian)
16. Manukyan, Seyranush. «Mijnadaryan Hayastani kot'oghayin geghankarchutyuny'». *Haykakan vormnankarchut'yun gitakan hodvats'neri ev nyuteri zhoghovats'u*. Erevan. ["The Mural Painting of Medieval Armenia". *Armenian frescoes. Collection of scientific articles and materials*. Yerevan] 2019. (In Armenian)
17. Mkrtchyan, Shahen, yev Armen Mkrtchyan. «Amarasi vanakan hamaliry'». *E'chmiadz'in*, № 6. ["Amaras Monastery Complex". *Etchmiadzin*, № 6] 2000. (In Armenian)
18. Ulubabyan, Bagrat. «Dadi kam Khat'uvank». *E'chmiadz'in*, № Z-E'. ["Dadi or Khatuvank". *Etchmiadzin*, № 6-7] 1971. (In Armenian)

THE STUDY OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF THE REPUBLIC OF ARTSAKH IN THE FRAMEWORK OF THEMATIC COURSES «CONVERSATIONS ABOUT ART»

GAGIK AVETISYAN

*Armenian State Pedagogical University by Kh. Abovyan,
Chair of Fine Arts, Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia*

As a result of the catastrophic war of 2020, in addition to the hundreds of settlements in the Republic of Artsakh, many monuments of national historical significance also appeared under the Baku's regime. The latter commits cultural genocide

at the highest level by eliminating the stone traces of Armenian presenting monuments as the former Caucasus Albanian cultural heritage.

Therefore, not tolerating vandalistic actions in our occupied homeland, it is also necessary to overestimate the existing priceless monuments in the remaining territories of Artsakh controlled by Russian peacekeepers and the forces of the Defense Army, and at the state level to form the image of a patriot citizen.

In this context, the purpose of this article is to substantiate a new study by students of historical and cultural monuments of the territories under the control of the Republic of Artsakh and the formation of future patriots. The task is to analyze the appropriate pedagogical approaches and justify the presence of students' interest in historical and cultural monuments. The scientific novelty is to determine the role and place of education that helps students in the process of presenting historical and cultural monuments. In this context the aim of this article is to adopt new approaches aimed at preserving and publicizing the historical and cultural monuments of the territories under the supervision of the Artsakh Republic.

We consider it expedient to take effective steps on the above problem in local educational institutions for the 7th grade within the framework of thematic courses on the subject of fine arts "conversations about art" (ancient Armenian architecture, monumental monuments), the process of familiarizing students with historical and cultural monuments and plenary illustrations will also be included, thanks to which they will gain knowledge of the Motherland, form an artistic perception and strengthen Artsakh as an indisputable fact of the ancient Armenian cradle through displays on international platforms.

In this article among the most important historical and cultural monuments of the Republic Artsakh we refer to general architectural description of Gandzasar, Dadivank, Amaras, the main features aimed at history and depiction. The work is presented in a comparable analysis of the relevant facts and a methodical analysis. Having studied the topic in detail, we find that, based on the relevance of the topic, the process of familiarization and illustration of historical and cultural monuments by students will help strengthen their ideology of patriotism and the sacred mission of rethinking the Motherland.

Keywords: *Republic of Artsakh, historical and cultural monuments, "Conversations about art", artistic perception, cognition of the Motherland, students, Gandzasar, Dadivank, Amaras.*

ИЗУЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ РЕСПУБЛИКИ АРЦАХ В РАМКАХ ТЕМАТИЧЕСКИХ КУРСОВ «БЕСЕДЫ ОБ ИСКУССТВЕ»

ГАГИК АВETИСЯН

*соискатель кафедры изобразительного искусства
Армянского государственного педагогического
университета им. Х. Абовяна,
г. Ереван, Республика Армения*

В результате разрушительной войны 2020 года, помимо сотен населенных пунктов, в Республике Арцах под бакинским режимом осталось множество памятников отечественного исторического значения. Азербайджан осуществляет культурный геноцид на высшем государственном уровне, уничтожая архитектурные

следы армянства, выдавая эти памятники за культурное наследие Кавказской Албании.

Поэтому, противостоя вандалистским действиям на нашей оккупированной родине, необходимо также заново взять на учет бесценные памятники на оставшихся территориях Арцаха, контролируемых российскими миротворцами и силами Армии Обороны, и на государственном уровне формировать образ гражданина-патриота, знающего родную историю.

В этом контексте целью данной статьи является обоснование необходимости изучения учащимися историко-культурных памятников на территориях, находящихся под контролем Республики Арцах, что является необходимым фактором патриотического воспитания.

Задачи исследования: проанализировать соответствующие педагогические подходы и обосновать возможность наличия у учащихся интереса к историко-культурным памятникам. Научная новизна заключается в выявлении роли и места изучения историко-культурных памятников в процессе общей профессиональной подготовки. В этом контексте целью данной статьи является принятие новых подходов, направленных на сохранение и популяризацию историко-культурных памятников на территориях, находящихся под контролем Республики Арцах.

Для решения указанных проблем мы считаем целесообразным включить в тематический план по предмету «Изобразительное искусство» для 7 класса местных общеобразовательных учебных заведений в рамках темы «Беседы об искусстве» (древнеармянская архитектура, памятники и монументы) курс по ознакомлению учащихся с историко-культурными памятниками и рисунку на пленэре, благодаря чему, помимо формирования художественного восприятия, они получают новые знания о своей родине, что также позволит представлять Арцах на международных площадках, что и будет способствовать укреплению его независимости и укрепляться подтверждению неоспоримого факта об Арцахе как о древней колыбели армянства.

В данной статье к числу наиболее важных историко-культурных памятников Республики Арцах причисляются Гандзасар, Дадиванк и Амарас и дается их общее архитектурное описание. Исследование проведено на основе сопоставления и фактического анализа и с использованием приемов методического анализа. В результате исследования мы пришли к выводу о том, что процесс ознакомления учащихся с историко-культурными памятниками и их зарисовывание может способствовать укреплению идеологии патриотизма и священной миссии освобождения Родины.

Ключевые слова: *Республика Арцах, историко-культурные памятники, «Беседы об искусстве» художественное восприятие, познание Родины, учащиеся, Гандзасар, Дадиванк, Амарас.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА



ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ*

ՀՏԴ 330

DOI: 10.52063/25792652-2022.1.12-205

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
«Գիտական Արցախ» պարբերականի
խմբագրական խորհրդի անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sargsyan.vsu@gmail.com

ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Տվյալների գիտությունը բիզնեսում»
մագիստրոսական ծրագրի դեկավար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ruben_gevorgyan@yahoo.com

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և
գործարարության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kaminasyan@gmail.com

Հոդվածի նպատակն է համադրել պետական կառավարման արդյունավետության և թվայնացման մակարդակը բնորոշող համաթվերը: Հետազոտությունն իրականացվել է 198 երկրների ընտրանքի հիման վրա: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ բացահայտել ֆունկցիոնալ կապը վերը նշված փոփոխականների միջև և պարզել դրանց ազդեցությունը ինստիտուցիոնալ համակարգի բարելավման հարցում: Ոչ գծային ռեգրեսիոն մեթոդների միջոցով բացահայտվել են էլեկտրոնային կառավարման արդյունավետության ցուցանիշների և երկրների ինստիտուցիոնալ զարգացման ցուցանիշների միջև կապերը: Որպես էլեկտրոնային կառավարման համակարգի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշ օգտագործվել է Միացյալ Ազգերի e-governance համաթիվը, իսկ որպես պետությունների ինստիտուցիոնալ զարգացման

* Հոդվածը ներկայացվել է 26.02.2022 թ., գրախոսվել՝ 17.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

արդյունավետությունը գնահատող փոփոխական՝ «Համաշխարհային բանկի world governance indicator-ների շտեմարանի» world governance effectiveness փոփոխականը: Արդյունքում պարզվել է, որ Էլեկտրոնային կառավարման համակարգը բնութագրող համաթվի բարելավումը 0.1 կետով բերում է կառավարման ինդեքսի շուրջ 0.36 կետի աճի: Պարաբոլիկ կապով նկարագրվող արդյունքը վկայում է այն մասին, որ Էլեկտրոնային կառավարման ազդեցությունը ինստիտուտների վրա նշանակալի է, և, ըստ այդմ, ցուցանիշի բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական կառավարման տարբեր ոլորտների վրա: Բացի այդ՝ աշխատանքում ներկայացված է նաև վերջին տարիներին ՀՀ-ում թվային տեխնոլոգիաների օգտագործումը պետական կառավարման համակարգում, և համեմատություններ են արված համաշխարհային զարգացումների համատեքստում:

Հիմնաբառեր՝ ինստիտուտներ, Էլեկտրոնային կառավարում, կոռուպցիա, պետական կառավարման ինդիկատորներ, թվային փոխակերպում, ինստիտուցիոնալ զարգացում, e-governance համաթիվ, world governance effectiveness փոփոխական:

Նախաբան

Վերջին տասնամյակներին տեղեկատվական անհամաչափության, պետության՝ արագ փոփոխվող իրողություններին հարմարվելն ու այլ խնդրահարույց հանգամանքները հասարակական կյանքում դրսևորվում են սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրների առաջադրումով: Էնդոգեն և Էկզոգեն ծագում ունեցող տարբեր երևույթներ ստիպում են տնտեսություններին անցնել լուրջ վերափոխումների միջով և անհրաժեշտ բարելավումներին զուգահեռ ներդնել նաև նոր թվային ինստիտուտներ:

Ինստիտուցիոնալ մոտեցումը թույլ է տալիս հակադիր հատկություններով օժտված տնտեսական երևույթները և գործընթացները ուսումնասիրել միևնույն դիրքերից՝ ընձեռնելով հնարավորություն տեսնելու դրանց ընդհանրական բնույթը և մեկից մյուսին անցնելու պայմաններն ու իրավիճակները: Ինստիտուցիոնալ մոտեցումների կիրառումը նպաստում է իրական տնտեսական կյանքին վերաբերող գործնական հետազոտությունների բարելավմանը, սոցիալ-տնտեսական տարբեր երևույթների համար դիտարկվող հարաբերությունների մասնակիցների յուրահատուկ նորմերի բացահայտմանը՝ հետևելով դրանց Էվոլյուցիային և հաշվի առնելով նորմերի փոփոխման անհրաժեշտ ուղղությունները բարեփոխումների ժամանակ:

Առանց համապատասխան միջավայրի ձևավորման հնարավոր չէ անցումը թվային տնտեսությանը, իսկ այդ միջավայրը ձևավորվում է արդեն առկա տարատեսակ ռեսուրսների և ինստիտուտների ու տնտեսական սուբյեկտների՝ այդ պահին առկա փոխազդեցության համակարգի ազդեցությամբ: Հենց այդ փոխազդեցության ժամանակ էլ ի հայտ է գալիս հասարակության կենսագործունեության թվայնացմանը խոչընդոտող որոշակի ինստիտուցիոնալ նորմերի անկատարությունը, ակներև է դառնում զանազան արգելակող երևույթների բացասական ազդեցությունը:

Ինստիտուցիոնալ միջավայրը ձևավորում է որոշումների ընդունման սահմանափակող բնույթի հասարակական շրջանակներ, որոնց ներսում առաջանում է անորոշության մակարդակի իջեցված ու գործողությունների կանխատեսելի հետևանքներով տիրույթ: Վերջինս նպաստում է կայունացնող տնտեսվարման միջավայրի և ավելի հուսալի դարձնող տնտեսական գործունեության ակնկալելի արդյունքների ստացմանը: Այդ միջավայրն ստեղծում է անձանց գործունեությունը հստակ հունով տանող խթանների համակարգ. բացասական խթաններն ուղղված են վարքի մի շարք դրսևորումների ճնշմանը, իսկ դրական խթաններն ապահովվում են

սուբյեկտներին գործառնական ծախսերի նվազմամբ և աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ:

Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և գործունեության արդյունավետությունը պետական համակարգում

Վերջին տարիներին աշխարհի բոլոր երկրները պետական կառավարման ոլորտում այս կամ այն չափով ներդրում են էլեկտրոնային կառավարման սկզբունք, որի նպատակն է թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարձրացնել գործընթացների արդյունավետությունը՝ մասնավորաբար նվազագույնի հասցնելով պետական ծառայողների ու քաղաքացիների ֆիզկական շփումները: Ակնհայտ է, որ այս գործընթացները ոչ միայն տեխնոլոգիական բնույթ են կրում և պայմանավորված են այս կամ այն երկրում թվային տեխնոլոգիաների զարգացման աստիճանով, այլ նաև տնտեսական հարաբերությունների կատարելագործման նոր կանոնակարգերի ու նույնիսկ բիզնես սովորույթների, մարդկանց վարքագծի փոփոխման հնարավորություններով:

Պետական կառավարման ոլորտի թվայնացման գործընթացների հաջողության երաշխիքը գոյություն ունեցող ինստիտուտների որակն ու հասարակությունում ընդունված վարքագծային նորմերի բարելավումն է: Կառավարությունների թվային վերափոխումը չի կարելի դիտարկել սոսկ որպես տեխնոլոգիական զարգացման գործընթաց: Այդ վերափոխումները ենթադրում են նոր գործընթացներ պետություն-բիզնես, պետություն-քաղաքացի հարաբերություններում: Պետական կառավարման համակարգի թվային վերափոխման հաջողությունը կախված է նաև կիրառվող տեխնիկական լուծումների որակից, կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումների ճիշտ հաշվարկված ծրագրերից, որոնք պետք է հաշվի առնեն այս կամ այն երկրում պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները և գոյություն ունեցող վարքագծային սովորույթները:

Էլեկտրոնային կառավարման սկզբունքների ներդրման գործընթացները ունեն բավականին երկար պատմություն. կուտակվել են որոշակի քանակությամբ հավաստի ու ստույգ տվյալներ, և բավականին մեծ ծավալով հետազոտություններ են իրականացվում այս ոլորտում: Այդ ամենի վկայություն է մի շարք օրինաչափություններ, որոնք բերված են «GovTech Dataset»-ից (<https://www.worldbank.org/en/programs/govtech/gtmi>):

Տվյալների այդ բազայում համեմատված են մի շարք ցուցանիշներ, որոնցից մենք կդիտարկենք հետևյալները.

1. UN eGov Development Index (2020) (<https://publicadministration.un.org/egovkb/en-us/data-center>), որը չափում է երկրների էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման մակարդակը՝ համեմատելով այդ գործընթացի բոլոր հնարավոր գործոնները:


2. WGI Government Effectiveness (2019) (<https://info.worldbank.org/governance/wgi/>) – Համաշխարհային բանկի պետական կառավարման արդյունավետությունը չափող ինդեքս:

3. WGI Control of corruption (2019) (<https://info.worldbank.org/governance/wgi/>) – պետական կառավարման արդյունավետությունը կոռուպցիայի զսպման տեսանկյունից չափող ինդեքս:

4. Corruption Perception Index (2019) (<https://www.transparency.org/en/cpi/2020/index/dnk>) – կոռուպցիայի ընկալման ինդեքս:

Ստորև բերված նկարում պատկերված է էլեկտրոնային կառավարման ինդեքսի և պետական կառավարման ինդեքսի փոխկապվածությունը 198 երկրների ընտրանքի համար: Կարելի է տեսնել, որ գոյություն ունի բավականին հստակ պարաբոլիկ կապ:

Ըստ նշված մոդելի՝ Էլեկտրոնային կառավարման համակարգը բնութագրող ինդեքսի բարելավումը 0.1-ով հանգեցնում է կառավարման ինդեքսի շուրջ 0.36-ով աճի: Հայաստանի համար դա նշանակում է, որ եթե Էլեկտրոնային կառավարման ինդեքսը մեծանա 0.1-ով, ըստ մոդելի կանխատեսման՝ կառավարման արդյունավետության ինդեքսը -0.07-ից կբարձրանա 0.29-ի:



Նկար 1. Էլեկտրոնային կառավարման ինդեքսի և պետական կառավարման ինդեքսի փոխկապակցությունը, Աղբյուր՝ <https://publicadministration.un.org/eqovkb/en-us/data-center>

Հաջորդիվ ներկայացված է Էլեկտրոնային կառավարման ինդեքսի և պետական կառավարման արդյունավետությունը՝ կոռուպցիայի զսպման տեսանկյունից չափող ինդեքսի փոխկապակցությունը՝ նույն ընտրանքի վրա.

$$y = 4.07x^2 - 1.34x - 0.93, \quad R^2 = 0.56,$$

որտեղ y-ը կոռուպցիայի զսպման ինդեքսն է, իսկ x-ը՝ Էլեկտրոնային կառավարման ինդեքսը:

Հաջորդ բանաձևը ներկայացնում է Էլեկտրոնային կառավարման ինդեքսի և կոռուպցիայի ընկալման ինդեքսի փոխկապակցվածությունը՝ նույն ընտրանքի վրա.

$$y = 48.47x^2 - 2.64x + 25.15, \quad R^2=0.45,$$

որտեղ y-ը կոռուպցիայի ընկալման ինդեքսն է, իսկ x-ը՝ Էլեկտրոնային կառավարման ինդեքսը:

Երկու բանաձևից էլ տեսնում ենք, որ կրկնվում է օրինաչափությունը, ինչը վկայում է այն մասին, որ Էլեկտրոնային կառավարման ազդեցությունը ինստիտուտների վրա բազմակողմանի է, և այդ ցուցանիշի բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական կառավարման տարբեր ոլորտների վրա:

Ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման միտումները թվայնացման համատեքստում

Ինստիտուտների ստեղծումը պահանջում է խորը գիտակցում այն ամենի, թե ինչն է հանգեցնում հաջող փոխակերպումների, որոնք են դրանց նպաստող գործոնները, նաև հասարակության պահանջումները և նախասիրությունները: Թվային հասարակության պայմաններում ինստիտուցիոնալ միջավայրի զարգացումը առավել կարևորվում է նրանով, որ թվային տեխնոլոգիաների ներդրմամբ թելադրվող փոփոխությունները ձևափոխում են արդյունաբերական հասարակության օրոք առաջացած նորմերը և խաղի կանոնները: Սոցիալ-տնտեսական փոխազդեցությունների տեղափոխումն ինտերնետային միջավայր, սոցիալական ցանցերի, բլոկչեյնի, թվային պլատֆորմների ի հայտ գալը պահանջում են նոր սկզբունքների մշակում: Շատ երկրներում պետական մակարդակով փորձում են իրագործել ինստիտուցիոնալ միջավայրի վերակազմավորում՝ պայմանավորված տարբեր գործոններով, ներառյալ գլոբալ ցանցային աշխարհը, անձանց աճող սպասումները, նոր տեխնոլոգիաները, և լուծել բարդ խնդիրները, որոնց բախվում են ընկերությունները, երկրները և հասարակությունը:

Ինստիտուցիոնալ միջավայրում թվայնացման ազդեցությամբ տեղի ունեցող երևույթները, միջավայրի հիմնական բաղադրիչների ձևափոխման կամ ինստիտուցիոնալ նոր միավորների առաջացման հանգամանքների պարզորոշումը ենթադրում են հետևյալ խնդիրների լուծումը.

- մանրամասն ներկայացնել տնտեսության թվայնացմամբ պայմանավորված հիմնական ինստիտուցիոնալ իրողությունները, առանձին ուշադրություն դարձնել պլատֆորմներին և դրանց շահառուների գործունեությանը,
- դիտարկել թվային միտումներով պայմանավորված գործառնական ծախքերի հայտնի տեսակների ձևափոխումը և նոր՝ թվային ծախքերը,
- համակարգել ինստիտուցիոնալ ծուղակները, տալ դրանց համալիր դասակարգումը, դիտարկել որոշ առանցքային ծուղակների էությունը և կամ դրանց շուրջ տեղի ունեցող զարգացումները,
- քննարկել պետական կառավարման վրա ունեցած ազդեցությունը, թվային կառավարման սկզբունքները և տարրերը, հնարավոր խնդիրները:

Ինստիտուցիոնալ միջավայրը թվայնացման համատեքստում և թվային տնտեսության ինստիտուտները մասնագիտական գրականության շրջանակներում դիտարկվել են թվային իրողությունների սկզբնավորումից ի վեր, սակայն միջավայրի վերափոխման տեսանկյունից առավելապես վերաբերել են առանձին բաղադրիչներին: Երբեմն իրականացվել են նաև մի քանի բաղադրիչների կամ գրեթե ողջ միջավայրին վերաբերող հետազոտություններ: Նշված օբյեկտները եղել են առավելապես արտասահմանյան հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Թվային սպառման և արտադրության հրատապ հարցերը

Տնտեսության վրա թվայնացման ունեցած ազդեցության չափումը և մակրոտնտեսական վիճակագրությունում թվային տնտեսության իրողությունների հաշվառումը մասնագետների ուսումնասիրությունների կարևոր առարկաներից են: Համախառն ներքին արդյունքում չեն արտացոլվում անվճար սպառման մշակույթը (ներառյալ ֆայլերի անօրինական ներբեռնումը), թվային ապրանքների և ծառայությունների արտադրությունը, նախկինում լայնորեն տարածված ֆիզիկապես շոշափելի ապրանքների փոխարեն թվային փոխարինիչների կիրառությունն ու դրանցով վերոնշյալ առարկաներից ստացվող ծառայությունների սպառման մակարդակի բարձրացումը և այլն:

Բարիքների համատեղ օգտագործումը նույնպես որոշակի ռիսկեր է ստեղծում, օրինակ՝ օտար սեփականության ոչ պատշաճ օգտագործման ռիսկը գործարքի մասնակիցների պարտավորությունների իրավաբանական ձևակերպման բացակայության դեպքում, հարկային մուտքերի նվազման և ստվերային տնտեսության ընդլայնման ռիսկերը, անհատական բարեկեցության մակարդակի՝ առանց արտադրության ծավալների պարտադիր աճի ապահովման բարձրանալու հանգամանքը: Սեփականություն հանդիսացող բարիքների քանակը չի աճում. ընդլայնվում են ժամանակավոր օգտագործման հնարավորությունները՝ բարեկեցության մակարդակի աճի տպավորություն ստեղծելով, մինչդեռ արտադրության ծավալները և վերականգնման կարողությունները կարող են նվազել, իսկ օգտագործվող բարիքները՝ արագորեն մաշվել: Սա երևան է հանում թվային տնտեսության՝ մակրոտնտեսական հաշվառման գործընթացում համալիր ներկայացման աշխատանքների և դրանց շրջանակներում միջազգային գործընկերների հետ գործակցության կարիքը: Նշված իրողություններից բխում է նաև համատեղ սպառման ոլորտում պետական հսկողության մակարդակի բարձրացման և ստվերային գործունեության բացառման կարևորությունը:

Թվային ապրանքներ արտադրողների համար իրենց կոնտենտի անօրինական օգտագործման դեմ պայքարի տարբերակից է ներբեռնման անհրաժեշտությունը բացառելը. ամեն ինչ իրականացվում է ամպային տեխնոլոգիաների կիրառմամբ, իսկ սպառողը ձեռք է բերում ժամանակավոր հասանելիության հնարավորություն: Ժամկետի լրանալուն հետևում է լավագույն դեպքում սահմանափակ հասանելիություն, բացառված չեն նաև արտադրողի կողմից հնարավոր խափանումներն անգամ մինչև լրանալը և դրա հետևանքով ի հայտ եկող կորուստները: Էական է մշակել արդյունավետ մեխանիզմներ ընկերությունների՝ թվային արտադրության անվան տակ իրականացվող կամայականությունները բացառելու, կորուստների նվազեցման նպատակով թվային միջավայրում սպառողների գործունեության արդյունքների պահպանման ու հասանելիության ապահովման համար:

Թվայնացման միտումներն աշխատանքի շուկայում

Վիրտուալացումը և ինտելեկտուալացումը հանգեցնում են աշխատանքի վարձման համակարգից աշխատուժի դուրս գալու պայմանների ստեղծմանը, քանի որ արտադրության միջոցները շատ դեպքերում կարող են սահմանափակվել անհրաժեշտ ինտելեկտուալ աշխատանքի անմիջական կատարողի սեփականություն հանդիսացող սարքավորումներով (ֆրիլանսի կամ այլ դեպքերում): Սա նշանակում է ֆորմալ զբաղվածության անկում և կարող է ծնել սոցիալական խնդիրներ: Բժշկական ապահովագրությունը, կենսաթոշակային համակարգը, բոնուսների համակարգերը և աշխատողների իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմներ կարող են հօդս ցնդել, ինչի արդյունքում աշխատողներն ստիպված կլինեն նվազեցնել իրենց սպառումը՝ հօգուտ նշված սոցիալական բաղադրիչների համար խնայելու: Հնարավոր ռիսկերից են նաև ցածր վարձատրությունը և աշխատաժամանակի վերահսկողության բացակայությունը, հատկապես պլատֆորմների կիրառության դեպքում:

Սոցիալական պաշտպանության ինստիտուտները քաղաքական և տնտեսական լիովին այլ պայմանների ծնունդն են, և ներկա իրողություններին դրանց հարմարեցման համար կարող է պահանջվել աշխատանքային հարաբերությունների նոր մոդել: Մինչդեռ աշխատաշուկայի առկա ինստիտուտներն արգելակում են մի շարք միտումների համատարած դառնալը և նոր հարացույցի (պարադիգմի) ներդրվելը՝ ստեղծելով խզում տնտեսության ներկայիս կազմակերպման ու աշխատանքի շուկայի վերափոխման միջև: Բացի այդ՝ պլատֆորմների կապող գործառույթը կարող է նվազեցնել աշխատաշուկայում վերաբաշխման

արդյունավետությունը, եթե այն թուլացնում է աշխատողի դիրքերը, խթանում ցածր որակավորման գործերում ներգրավվելը:

Պլատֆորմների միջնորդական գործառույթը կարող է աշխատողների համար բարձրացնել գործառնական ծախսերը, եթե նրանք աշխատանք փնտրելու և սպասելու վրա պետք է երկար ժամանակ ծախսեն: Նվազագույն աշխատավարձի անալոգիայով կարգավորումների բացակայության դեպքում պլատֆորմները կարող են գրեթե չունենալ խթաններ՝ աշխատանք փնտրելն արդյունավետ դարձնող այլաբանությունների գծով ներդրումներ անելու համար: Դրանք կարող են նաև չունենալ աշխատողների և պատվիրատուների միջև վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներ, և շուկայի ձախողումների հետ կապված ռիսկերը կարող են փոխանցվել աշխատողներին, եթե պատվիրատուներն աշխատողների արդյունքներից բավարարված չեն և դրա արդյունքում չեն ցանկանում վճարել վերջիններիս:

Այսպիսով՝ թվայնացման պայմաններում աշխատաշուկայի ինքնակազմակերպման ներկա միտումները հակասում են սոցիալական պաշտպանության և բարեկեցության համար ներդրվող ջանքերին: Վստահության ինստիտուտը չվերահսկվող թվային միջավայրում դեռևս չի հաջողում, ինչը հնարավոր վերափոխումների և ռիսկերի համատեքստում հիմնավորում է կարգավորիչների միջամտության և ոլորտի մեխանիզմների կայացման անհրաժեշտությունը:

Պլատֆորմներից ծագող խնդիրները և լուծման առաջարկվող տրամաբանությունը

Երբ պլատֆորմը շուկայում զգալի դիրքեր է զբաղեցնում, այն օգտագործողների համար հաճախ դժվարանում են վերջինիս ծառայություններից հրաժարվելը և այլընտրանքներին անցնելը: Պլատֆորմները խթանում են ներդնել ջանքեր և ժամանակ՝ նպաստելով մի լուծումից մյուսին անցնելու ծախսերի ավելի արագ բարձրանալուն, եթե օգտագործողի տվյալները կապված են մի ամբողջ էկոհամակարգի հետ՝ տալով պլատֆորմներին շուկայում խոշոր մասնաբաժին, անգամ մոնոպոլ դիրք: Ցանցային ընկերությունները զլոբայիզացիայի պայմաններում վերածվում են մասնագիտացված միջնորդների, որոնք, դառնալով մոնոպոլիստներ և ազատվելով ավելի փոքր մրցակիցներից, ցանկացած կազմակերպության ու անհատի ստիպում են կամ կիրառել զլոբալ մոնոպոլացված շուկայի առաջարկածը, կամ դուրս մնալ միջազգային շուկաներից:

Ցանցային մոնոպոլիաները նաև վերցնում են իրենց հսկողության ներքո և միավորում իրենց գործունեությանն առնչվող, բայց առանձին բիզնեսները՝ ապահովելով արտադրության տեղեկատվական ու գործառնական ծախսերի նվազեցում: Նման մոնոպոլացումն արգելակում է արդյունավետության ընդհանուր աճը և ծնում է առանձին շուկաների զարգացման խնդիրներ: Նշվածը հիմնավորվում է խոշոր թվային ընկերությունների հավելվածների՝ «ուժով» առաջնորդման, փոքր ու միջին ձեռնարկությունների շրջանում իրենց գործընկերների աշխատանքի պայմանների փոփոխման և ավելի թույլ մրցակիցների չեզոքացմանը հանգեցնող այլ մեթոդների կիրառմամբ:

Պլատֆորմներում կուտակվող տվյալներն զգալի հնարավորություններ են ստեղծում օգտագործողների վերաբերյալ պատկերացում ստանալու, վերջիններիս համապատասխան պրոդուկտները ներկայացնելու և յուրաքանչյուրի համար առանձնահատուկ գնագոյացում իրականացնելու համար: Լրացուցիչ մասնակիցների ներգրավման համար առաջարկվում են անգամ անվճար ապրանքներ և ծառայություններ, որոնց վրա կատարվող ծախսերը սուբսիդավորվում են ներդրողների, գովազդատուների կամ այլ շահառուների հաշվին: Նման մտեցումները դժվար կիրառելի են ավանդական շուկաներում, որտեղ ծախսերից ցածր գները չեն կարող լինել շուկան մաքրող գներ, իսկ մրցակցության տեսանկյունից կարող են

դիտարկվել իբրև անօրինական դեմպինգի դրսևորումներ: Այնուամենայնիվ, անվճար ծառայություններից օգտվելով՝ մասնակիցները տալիս են իրենց համաձայնությունը փոխանցելու անձնական և վարքագծային տվյալներ, որոնց մշակումից ստացվող արդյունքները մոնետիզացիայի են ենթարկվում՝ ապահովելով գովազդատուներին հասանելիություն և պոտենցիալ հաճախորդներին:

Տվյալների խոշոր ծավալներին հասանելիությանը զուգահեռ շուկայական ուժի պահպանման և հզորացման նպատակով Եական ուշադրություն է դարձվում անհրաժեշտ ալգորիթմների մշակմանն ու կիրառմանը: Արդյունքում արհեստական բանականությանը վերաբերող հետազոտություններով համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ մեկտեղ աչքի են ընկնում նաև մասնավոր կազմակերպությունները: Մասնավորապես, 2016 թվականի սկզբից մինչև 2021 թվականի հունվարի վերջ իրականացվել է այս սեգմենտում ակտիվ ստարտափների հետ միավորման և դրանց ձեռքբերման 308 գործարք՝ 28.4 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Ձեռք բերող ընկերությունների առաջատար հնգյակը բացառապես ԱՄՆ-ից է («Apple», «Google», «Microsoft», «Facebook», «Amazon»), թեև առաջին տասնյակում են նաև տեխնոսկաներ Չինաստանից («Baidu» և «Tencent Holdings»):

Չուզահեռաբար տեղի է ունենում տաղանդների և հմտություններ ունեցողների՝ սահմանափակ թվով վայրերում կուտակում. արհեստական բանականությամբ զբաղվող հետազոտողների 59 %-ն աշխատում է ԱՄՆ-ում, 11 %-ը՝ Չինաստանում: Հետազոտողների ծագման առումով առաջատարները դարձյալ Չինաստանն (29%) ու ԱՄՆ-ն (20%) են, որոնց հաջորդում են եվրոպական երկրները, Հնդկաստանը, Իրանը, Իսրայելը և այլք:

Խոշոր տեխնոլոգիական ընկերություններն ստեղծում են արտահոսք ակադեմիական ոլորտից ու պետական կառավարման համակարգից, որակյալ մասնագետների պահանջը և մասնավոր ոլորտի առաջատարների համար աշխատելու առավել նախընտրելի լինելը հանգեցնում են հաշվողական կարողությունների անհավասար բաշխմանը, ինչը խորը ուսուցման ժամանակաշրջանում լուրջ խնդիր է դառնում այլ շահառուների համար: Նման իրավիճակի երկարաժամկետ հետևանքներն են հետազոտական արդյունքների և դրանց կիրառման բազմազանության անկումը, գլոբալ թվային ընկերությունների՝ ակադեմիական և պետական սեկտորների համեմատ մեկ քայլ առաջ լինելը, անհրաժեշտ կարգավորումների՝ ոլորտի զարգացումներից զգալի հետ մնալը: Իսկ մասնավորի ձեռքբերումներն օգտագործվում են առաջին հերթին կոմերցիոն նպատակներով, արդյունքում առանց կարգավորումների մեծանում են անձանց տվյալների անթույլատրելի օգտագործման, նրանց անվտանգության խաթարման և անտեղի վերահսկման ռիսկերը:

Վերոնշյալ խնդիրներն ահագանգում են ոլորտի բացթողի վիճակի և բացասական հետևանքների ռիսկի մասին: Կարգավորման և խաղի կանոններ սահմանող մարմինները պետք է հետևեն, թե ինչպես են ընկերություններն ստանում ու կիրառում օգտագործողների տվյալները: Գերիշխող կամ մոնոպոլ դիրքը, միջավայրի թվային բնույթով պայմանավորված, տրամադրում է սեփական շահերի առաջնության ճկունություն, ինչը հիմք է ընկերությունների գործողությունների զսպման նոր մեխանիզմների ձևավորման համար: Այն դեպքերում, երբ պետությունները ցանկանում են դառնալ ոլորտի գիտական կողմի առաջատարներից, անհրաժեշտ է իրականացնել զգալի ներդրումներ՝ մասնագետներին իրենց մոտ պահելու և կամ դեպի իրենց ձգելու, նաև ենթակառուցվածքների կայացման և առաջատար երկրների համեմատ գրավիչ դառնալու համար:

Դիտարկումներ թվայնացման ծուղակների և գործառնական ծախքերի վերաբերյալ

Թվային տնտեսության պայմաններում ստեղծվում են խնդիրներ՝ կապված մտավոր սեփականության սպեցիֆիկացիայի հետ, և դժվար է իրագործել իրավունքների լիարժեք պաշտպանություն. առկա են թվային օբյեկտներ, որոնք սեփականության իրավունքի օբյեկտներ չեն, գերակշռում են ոչ ֆորմալ նորմեր, որոնք շնորհիվ հնարավոր է լինում օգտվել սահմանափակ հասանելիությամբ կոնտենտից, կարող են ստեղծվել դժվարություններ արհեստական բանականության շնորհիվ ստեղծվող արդյունքների՝ վերոնշյալ համատեքստում դասակարգման և պաշտպանության հետ: Այս իրավիճակում կարևոր են նշված ռիսկերի չեզոքացմանը միտված կարգավորումների մշակումն ու կիրարկումը, որպեսզի թվային միջավայրում տեղի ունեցող սպառումը հակասություններ չունենա սպառման օբյեկտների սեփականատերերի հետ, ինչպես նաև չառաջանան դժվարություններ լիովին այլ մեթոդներով ստեղծվող արդյունքների արտադրության ու իրացման մասով:

Լուրջ խնդիր է թվային տեխնոլոգիաների ստեղծվելու ու ներդրվելու արագության և դրանց նորմատիվ կարգավորման միջև բացահայտ խզումը, որը դրսևորվում է երկու ձևով՝ իբրև թվային զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի տարասեռություն և իբրև թվային միջավայրը կարգավորող օրենքների կիրարկումը հսկելու արդյունավետ մեխանիզմների բացակայություն: Եթե անգամ տեխնոլոգիական առաջընթացից նորմատիվ իրավական կարգավորման հետ մնալը հնարավորինս նվազեցվի, առկա են այդ տեխնոլոգիաների օգնությամբ պատժից խուսանավելու հնարավորություններ: Թվայնացման գործընթացների արգելակման հիմնական պատճառներից է նաև թվային միջավայրում սպառման և անվտանգության անհրաժեշտ հմտությունների բացակայությունը բնակչության զգալի մասի մոտ, ինչի արդյունքում խզվում է կապը թվայնացմանը միտված նախաձեռնությունների ու թվային մշակույթի առկա վիճակի միջև: Չուզահեռաբար կա բնակչության որոշակի հատված, որը թվայնացման և հարակից վերափոխումների հանդեպ զգուշավոր է՝ անանուն լինելու ու անպատժելիության զգացողությամբ, հեռախոսազանգային ու ինտերնետային խարդախություններով, բանկային հաշիվներին ու քարտային տվյալներին անօրինական հասանելիությամբ, ուրիշների տվյալները վնասակար ծրագրային ապահովմամբ խլելով, ապա՝ վերադարձնելու դիմաց ֆինանսական փոխհատուցում պահանջելով և այլ ռիսկերով պայմանավորված:

Թվայնացման գործընթացները ծնում են նաև նոր տեսակի գործառնական ծախքեր: Թվայնացմանը դիմադրելու ծախքերը *ex ante* գործառնական ծախքեր են, որոնք առաջանում են, քանի որ տնտեսական գործակալները, շատ հաճախ արժեքային ընկալումներից ելնելով, պատրաստ չեն դիմելու թվային լուծումներին (օրինակ՝ պլատֆորմներին, եթե առկա է ցանկություն պաշտպանելու անձնական տվյալները): Սրանք բնորոշ են անցանցից առցանցին (օֆլայնից օնլայնին) անցմանը: Արդյունքում նման սկզբունքներով առաջնորդվող կամայական գործակալ կրում է փոխազդեցության լրացուցիչ ծախքեր, հատկապես այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը դրդում է նման փոխազդեցության: Ժամանակակից լուծումներն օգնում են թվայնացմանը դիմադրելու խնդրի հարթման գործում, եթե այդ լուծումներն օգնում են պաշտպանվել այլ կողմերի թշնամական գործողություններից:

Թվային դիմադրության ծախքերը *ex post* ծախքեր են, որոնք ծագում են համապատասխան լուծումների կիրառությունից հետո և պայմանավորված են դրանցից ծագող ճախողումներով, նաև ենթադրում են տնտեսական գործակալների դիմադրություն և կոնֆլիկտայնություն թվային միջավայրի ներսում, օրինակ, երբ թվային պլատֆորմն ի վիճակի չէ արդյունավետ կոորդինացնելու գոյություն ունեցող

կամ կրկին ծագող փոխազդեցությունները դա օգտագործողների հետ կամ ստեղծելու գործառնությունների իրականացման հավասար պայմաններ: Թվային դիմադրությունը թվային ենթակառուցվածքների ոչ ֆորմալ նորմերի և ֆորմալ ալգորիթմների մերձեցման արդյունքն է, և այդ մերձեցումից կարող է առաջանալ լրացուցիչ կոնֆլիկտայնություն: Մասնավորապես, եթե կիրառվում են արհեստական բանականության ալգորիթմներ՝ պլատֆորմների օգտագործողների պահանջմունքները կանխազգալու և այդ հիմքով թիրախային առաջարկություններ անելու համար, կարող է ծագել լրացուցիչ թվային դիմադրություն: համապատասխան գործիքակազմի կիրառությամբ անձի վերաբերյալ կարելի է ստանալ ավելի շատ տեղեկատվություն, քան անձն իր մասին կարող է տեղյակ լինել, ինչի արդյունքում վերջինս կարող է դիմադրել՝ դիցուք տեղեկատվությունը դիտավորյալ խեղաթյուրելու եղանակով: Արդյունքում վստահության հատուկ մեխանիզմների ձևավորումը դառնում է ավելի քան անհրաժեշտ:

Մասնագետների պատրաստման և թվային տնտեսությունում վերջիններիս հանդեպ պահանջվածության միջև կառուցվածքային-կոմպետենտային անհավասարակշռության ծուղակը ծագում է թվային տնտեսության կառուցման թիրախային ուղղության ու կրթության ինստիտուտի միջև անհամաձայնեցվածության հետևանքով: Սրա չեզոքացման կարևոր օրինակ է տեղեկատվական տեխնոլոգիաների և լայնորեն տարածված նորամուծությունների կիրառումը կրթական գործընթացում, սակայն դասավանդող անձնակազմի պակասը, ծերացումն ու չհամալրվելը կամ համալրվելը մանկավարժական ուղղվածությամբ «վերջին հայտով» դիմող անձանցով լրջորեն վստա են հասցնում և խանգարում այս նպատակի իրագործմանը:

Համակողմանի բնույթի տեղեկատվության ստացման և իրականության վերաբերյալ ճշգրիտ պատկերացումների ձևավորման առումով հայտնի խնդիրներ են «արձագանքման խցիկը» և «ֆիլտրման փուչիկը»: Դրանք ակներև են դարձնում դիտարկվող սուբյեկտի՝ տեղեկատվության ստացման տեսանկյունից մասնատված և մեկուսացված լսարաններում գտնվելու հանգամանքը, իսկ թերտեղեկացման և կեղծ տեղեկատվության մեծ ծավալների կուտակման պարագայում կարող են անգամ լուրջ ազդեցություն ունենալ հանրային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Տվյալ զարգացումը մատնանշում է այդ ծուղակներից տուժած անձանց տեղեկատվական մեկուսացմամբ պայմանավորված թվացյալ լռության վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը, քանի որ մեծ է հավանականությունը, որ հասարակությունն իրականում գործ ունի թափ առնող աղմուկի շրջապտույտի հետ, որը խիստ փոքրաթիվ շահառուների կողմից կարող է օգտագործվել հասարակական կյանքի անդորրի խախտման, ձևավորված նորմերի քայքայման, սեփական շահերի իրացման, հանրային շահերը վտանգող դիվիդենտների ստացման և նմանատիպ այլ նպատակներով:

Նշված իրողությունները թվային իրականության միտումների ազդեցությամբ դառնում են ավելի վտանգավոր: Սոցիալական ցանցերի, ինտերնետային տարբեր հանրույթների և այլ մեխանիզմների ազդեցությամբ վերը բերված խնդիրները, որոնք նախկինում հանդիպում էին միայն իրական կյանքում, տեղափոխվում են վիրտուալ տարածություն և բազմապատկվում են: Այնուամենայնիվ, հաղորդակցման և կրթական ժամանակակից հնարավորությունների շնորհիվ անձանց համար զգալիորեն մեծացել են գիտական և այլ բնույթի տեղեկատվության ստացման և համեմատման աղբյուրները: Սա նշանակում է, որ առկա կարծիքներին և տեսակետներին հակասող մտքերին հաղորդակցվելն ավելի քիչ է սահմանափակված, թեև սեփական ցանկությամբ ու հոգեբանական գործոններով պայմանավորված նշված ծուղակները դրսևորվում են անգամ այդպիսի լայն հնարավորություններին հասանելիության պայմաններում: Այս բացասական իրողությունների ազդեցության նվազեցման նպատակով իրատապ պետք է իրականացնել տեղեկատվության ծագման

և ստացման միջոցների հսկողության, կեղծ տեղեկատվության բացառման և հասարակության տարբեր խմբերի՝ իրականությունից բխող պատկերացումների և գիտելիքների ձևավորման աշխատանքներ:

Պետական կառավարումը թվայնացման համատեքստում

Էլեկտրոնային կառավարման դեպքում հասարակությունն ականատեսն է պետական ֆունկցիաների իրագործման գործընթացների՝ նոր լուծումներով լրացմանը, սակայն պահպանվում է վերոնշյալ գործառնությունների իրականացման եղած տրամաբանությունը: Այդ իմաստով կարևոր է ուշադրություն դարձնել, որ թվային կառավարմանն անցնելու կարգախոսների ներքո տեղեկատվության թղթային կրիչներն էլեկտրոնային օրինակներով փոխարինելուն զուգահեռ չարունակելն տեղի ունենալ միևնույն գործընթացները: Թվայնացման գործընթացները պայքարում են նաև պետական կառավարման բնագավառում ձեռքով աշխատանքի գերակշռելու դեմ. տվյալների հավաքման ժամանակ օգտագործողների անմիջական մասնակցությունն չենթադրող բոլոր տեխնոլոգիաների (սենսորների և միջմեքենայական փոխազդեցությունների այլ սարքավորումների, սոցիալական ցանցերի վերլուծման ալգորիթմների և այլն) կիրառման բացակայությունը զգալիորեն դժվարացնում է անցումը ռեակտիվ կառավարումից պրոակտիվ միջամտությունների իրագործմանը:

Թվային կառավարման սկզբունքների մասով ամկա է մոտեցում, որ պետական մարմինները պետք է ծառայություններ մատուցելու թվային տարբերակը (ներառյալ տեխնիկական միջոցների կողմից տեղեկատվություն կարդալու ունակությունը) դիտարկեն որպես նախընտրելի եղանակ՝ շարունակելով պահպանել ոչ թվային հնարավորությունները, որպեսզի ծառայություններից կարողանան օգտվել նաև իրենց կամքով և կամ որոշակի իրողություններով պայմանավորված թվային լուծումներից չօգտվող անձինք: Դա հակասում է թվային կառավարման այնպիսի սկզբունքների, ինչպիսիք են «որպես մեկ ամբողջություն հանդես եկող կառավարություն» ստեղծելու մոտեցումն այն պայմանով, որ ամեն ինչ արվում է թվային եղանակով ու առանց այլ միջոցների ներգրավման, և «սկզբից մինչև վերջ թվային» սկզբունքին հավատարիմ լինելը (թվային մեխանիզմների կիրառություն՝ առանց զուգահեռ գործող ավանդական «թղթային» աղմուկստրատիվ գործընթացների): Այնուամենայնիվ, այն առավել նախընտրելի է, քանի որ այդ կերպ հաշվի են առնվում հասարակության բոլոր խմբերի և անձանց շահերը՝ առանց պարտադրելու ոչ ցանկալի լուծումների կիրառություն:

Թվայնացման արդյունքում պետական համակարգի զինանոցում հայտնվում է լիովին նոր գործիքակազմ, որը հիմնված է երկարատև ժամանակի ընթացքում կուտակված տվյալների և դրանք վերլուծելու համար նախատեսված ալգորիթմների ու մոդելների վրա: Տարաբնույթ հարցերի կարգավորմանը նպաստող այդ գործիքակազմը, այնուամենայնիվ, ինքնին կարող է խնդրահարույց լինել՝ հաշվի առնելով, որ թվային հարաբերությունները և նոր իրողությունների պայմաններում հասանելի դարձող տեղեկատվությունից օգտվելը դեռևս լիովին կանոնակարգված չեն: Արդյունքում պետությունը, որը որոշակի խնդիրներ լուծելու համար այժմ ունի հնարավորություն ուսումնասիրելու բնակչության բժշկական, վարկային, անշարժ գույքի և այլ տվյալների շտեմարանները, էլեկտրոնային և թվայնացված փաստաթղթերը, պետք է նաև չխախտի անձնական իրավունքներն ու ազատությունները:

Արդյունքների վրա հիմնված կառավարմանն անցնելու տեսանկյունից ստեղծվում է հնարավորություն՝ կիրառելու մեծ տվյալներ քաղաքականության մշակման, պետական վիճակագրության ձևավորման, գերատեսչությունների կողմից ներկայացվող տվյալների մանիպուլյացիան բացառելու, բյուջետային ծախսերի արդյունքայնության վերահսկման և այլ դեպքերում: Ծառայությունները պետության

կողմից կարող են մատուցվել ինքնաշխատ եղանակով, երբ առաջանում են անհրաժեշտ հանգամանքները: Տարաբնույթ շահառուների մոտեցումներն առավել քան երբևէ հասանելի են դառնում քաղաքականություն մշակողների համար, և որոշումների ընդունման գործում շահառուները ձեռք են բերում լսելի դառնալու լրացուցիչ տարբերակներ: Ստացված արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ պատրաստելուն և վերադաս մարմիններին ներկայացնելուն զուգահեռ տեղի է ունենում ստացվող արդյունքների վերաբերյալ ավտոմատ գեներացող տվյալների՝ հասանելի հարթակներում տեղաբաշխում և դրանց հիման վրա որոշումների ընդունում: Սրան նպաստում է նաև միջմեքենայական փոխազդեցության մեխանիզմների ներդրվելը, որը նվազեցնում է հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: Ի հայտ են գալիս պետական մարմինների աշխատանքի արդյունքների գնահատման նոր մեթոդներ, երկարժեք «կատարված է-կատարված չէ» դասակարգումը փոխարինվում է կանխատեսող վերլուծականությամբ, կիրառվում են ընտրողական վերահսկվող փորձարկումներ:

Եզրակացություն

Պետական կառավարման թվային վերափոխումը սոսկ առանձին գործընթացների ավտոմատացում և օպտիմալացում չէ. այն կոչված է փոխելու պետական կառավարման ու վերջինիս գործընթացների բովանդակությունը, համապատասխան գործառույթները: Ընդ որում դա պետք է նպաստի պետական կառավարման որակի բարձրացմանը, պետական միջամտության հիմնավոր լինելուն, արդյունքայնության մակարդակի և արդյունավետության բարձրացմանը, բիզնեսի և բնակիչների գործունեության պայմանների բարելավմանը:

թողարկվող ապրանքներին նախապատվություն տալուն (Մկրտումյան 26): Այս երկու սահմանումները մեր կողմից ընդունելի են, քանի որ դրանցում մրցունակության մեկնաբանության մեջ շեշտը դրվում է ապրանքի, ընկերության, ճյուղի և երկրի մրցակցին գերազանցելու և սպառողի նախապատվությանն արժանանալու հանգամանքի վրա: Բայց միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մրցունակ լինելը միանշանակ չի ենթադրում մրցակցին գերազանցել: Մրցունակ կարելի է լինել նաև մրցակցի հետ հավասարազոր լինելու պարագայում: Այս իմաստով հատկանշական է Մ. Պորտերի՝ մրցունակության վերաբերյալ սահմանումը, ըստ որի՝ «մրցունակությունը շուկայական հարաբերությունների սուբյեկտների, ապրանքների, ծառայությունների հատկությունն է շուկայում հավասարապես հանդես գալ համանման ապրանքների, ծառայությունների կամ շուկայական հարաբերությունների մրցակցող սուբյեկտների հետ» (Պորտեր 480):

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ մրցունակությունը՝ որպես ապրանքի, ընկերության, ճյուղի և երկրի տնտեսական համակարգի առանձնահատուկ բնութագրիչ, արտացոլում է դրանց առնվազն հավասարազոր լինելը տվյալ շուկայում առկա այլ համանման ապրանքի ու սուբյեկտների հետ:

Մրցունակության համընդհանուր սահմանման այլ մոտեցումներում այն մեկնաբանվում է արտադրողականության ու արդյունավետության դիրքերից, և միաժամանակ այդ մեկնաբանության մեջ առանձնակի տեղ է հատկացվում ռազմավարությանը. «Մրցունակությունը վերաբերում է ազգի, ընկերությունների և քաղաքացիների կատարելագործված ունակություններ և գործողություններ մշակելու ռազմավարությանը, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կիրառելու առկա պաշարներն ու ռեսուրսները: Այլ կերպ ասած՝ մրցունակությունն արդյունավետ և արտադրողական լինելու ունակությունն է» (Կոստանյան 16): Ինչ խոսք, արտադրողականության և արդյունավետության հետ մեկտեղ մրցունակության ապահովման գործում ոչ պակաս կարևորվում է մրցակցային պայքարում կիրառվող ճիշտ ռազմավարության դերը: Այդպիսի ռազմավարության կիրառումը հնարավորություն է տալիս մրցակիցների համեմատ ավելի լավ բավարարելու առաջարկվող ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Այս իմաստով հատկանշական է մրցունակության այն մեկնաբանությունը, ըստ որի՝ «լայն իմաստով, մրցունակությունն ենթադրում է, որ դրան տիրապետող սուբյեկտն (ապրանք, ընկերություն, ճյուղ, տնտեսություն) իր գործունեության արդյունքում ավելի լավ է բավարարում պահանջարկը և դրա հաշվին ապահովում զարգացում» (Կոստանյան 10-11):

Այսպիսով՝ մրցունակության վերը նշված մեկնաբանություններում շեշտը դրվում է դրա առանձին բնութագրիչների վրա, կամ տրվում է դրա վերացական սահմանում՝ առանց այդ բնութագրիչները հստակեցնելու: Կարծում ենք, որ մրցունակության սահմանումն առավել հստակ կարող է լինել դրա առանցքային բնութագրիչների համալիր ներկայացման պարագայում: Այս իմաստով հարկ է նկատել, որ մրցունակությունը տվյալ մրցակցային միջավայրում ներկայացված օբյեկտների կամ սուբյեկտների (ապրանքի, ծառայության, տնտեսավարող սուբյեկտի, ճյուղի, ոլորտի, տարածաշրջանի, երկրի) մրցակցելու ունակությունն է՝ ռեսուրսային ապահովվածության, արդյունավետ և արտադրողական լինելու, սպառողների նախապատվությանն արժանանալու, համախառն ներքին արդյունքի մեջ և շուկայում մասնաբաժնի ավելացման, ճկուն կառավարման, ռազմավարության, մարտավարության, տեխնիկական զինվածության բարձր մակարդակի, նորամուծական ու ներդրումային ակտիվության և առհասարակ մրցակցային գործողություններ կատարելու, տնտեսության առաջադիմական կառուցվածքի, հարաբերականորեն մեծ եկամտաբերության ու սոցիալ-տնտեսական արդյունքի առումով: Այս սահմանման մեջ թվարկված բնութագրիչներն արտացոլում են վերը նշված օբյեկտների կամ սուբյեկտների մրցակցային առավելությունները և

միաժամանակ հանդես են գալիս որպես նրանց մրցունակության ապահովման պայմաններ: Մրցունակությունն ապահովվում է նաև դրա վրա ազդող գործոնների հաշվին (դրանց մասին կիսուենք հետագա շարադրանքում): Այս իմաստով մրցունակությունը հանդես է գալիս որպես այնպիսի պայմանների և գործոնների ամբողջություն, որոնք ապահովվում են վերը նշված օբյեկտների կամ սուբյեկտների մրցակցելու կարողությունը: Վերջինս իր ընդհանրական արտացոլումն է գտնում տվյալ օբյեկտի կամ սուբյեկտի շուկայում ներկայացված այլ համանման օբյեկտներին կամ սուբյեկտներին գերազանցելու կամ նրանց հավասարագոր լինելու, մրցակցությանը դիմակայելու ունակությունում:

Մրցունակության վերը նշված սահմանումից հետևում է, որ մրցունակությամբ օժտված օբյեկտները կամ սուբյեկտներն են՝ ապրանքը (ծառայությունը), շուկայում դրանք առաջարկողը: Այլ խոսքով՝ «մրցունակությունը բազմամակարդակ հասկացություն է և դրսևորվում է ապրանքի (ծառայության), միկրո, մեզա և մակրոտնտեսական մակարդակներում: Մրցունակության նշված դրսևորումները, որքան էլ որ հարաբերականորեն տարանջատված են և աչքի են ընկնում իրենց յուրահատկությամբ, բայցևայնպես դրանք փոխկապակցված են և փոխներգործության մեջ են գտնվում միմյանց հետ: Մասնավորապես երկրի մրցունակության հիմքում ընկած է ապրանքի, ձեռնարկության, ճյուղի, դրա տարածքային միավորների մրցունակությունը:

Մեր հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխան՝ կանգ կառնենք ճյուղի, կոնկրետ՝ գյուղատնտեսության մրցունակության վրա՝ միաժամանակ հաշվի առնելով մրցունակության մյուս դրսևորումների հետ դրա փոխկապակցվածությունը:

Տնտեսագիտական գրականության մեջ ճյուղի մրցունակության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր սահմանումներ: Այսպես՝ «ճյուղի մրցունակությունը ներքին շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների ու ապրանքների մրցունակության այնպիսի աստիճան, որը հնարավորություն է տալիս տվյալ ճյուղի արտադրանքի գծով միջազգային շուկայում ապահովելու մրցակցային առավելություններ» (Մկրտումյան 24): Ինչպես երևում է, տվյալ սահմանման մեջ ճյուղի մրցունակությունը մեկնաբանվում է տնտեսավարող սուբյեկտների ու ապրանքների մրցունակության, ինչպես նաև ճյուղի արտադրանքի գծով միջազգային շուկայում մրցակցային առավելությունների հասնելու համատեքստում: Ընդունելով և կարևորելով այդ միաժամանակ գտնում ենք, որ նշված սահմանման մեջ հստակեցված չեն ճյուղի մրցունակության առանցքային բնութագրիչները, և այդ մրցունակությունը ներկայացված չէ միջճյուղային մրցակցության համատեքստում:

Մեկ այլ սահմանման մեջ ճյուղի մրցունակությունը մեկնաբանվում է որպես ազգային տնտեսության առանձին ճյուղերի աշխատանքի արդյունավետություն, որը ավանդական չափանիշների հետ մեկտեղ գնահատվում է տվյալ ճյուղին բնորոշ ցուցանիշներով, և բնութագրում է դրա կայունության ու դինամիկության աստիճանը տվյալ երկրի ու, ամբողջությամբ վերցված, աշխարհի տնտեսության զարգացման տարբեր տարբերակների դեպքում («Конкурентоспособность отрасли»): Այս սահմանման մեջ ճյուղի մրցունակությունը մեկնաբանվում է դրա աշխատանքի արդյունավետության, կայունության ու դինամիկության դիրքերից, և հստակեցված է այդ մրցունակության յուրահատկությունը՝ ավանդական չափանիշների հետ մեկտեղ ճյուղին բնորոշ ցուցանիշներով գնահատվելու առումով: Ընդունելով և կարևորելով այդ ամենը՝ միաժամանակ կարծում ենք, որ տվյալ ճյուղի կայունության և դինամիկության աստիճանն ընդհանուր առմամբ դրսևորվում է երկրի ու, ամբողջությամբ վերցված, աշխարհի տնտեսության զարգացման, իսկ անմիջապես միջճյուղային մրցակցության համատեքստում: Այս պարագայում թերևս առավել ընդունելի է ճյուղի մրցունակության մեկնաբանությունն այլ ճյուղերի նկատմամբ դրա հարաբերական դիրքի առումով. «Մրցունակությունը ցույց է տալիս ձեռնարկության,

ճյուղի, տարածաշրջանի, երկրի կամ երկրների խմբի հարաբերական դիրքը մյուս ձեռնարկությունների, ճյուղերի, տարածաշրջանների, երկրների և դրանց խմբերի նկատմամբ» (Сталпие и др.): Նման մեկնաբանության հետ կապված՝ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ դրանում առավել ընդհանրական ու խտացված ձևով է ներկայացվում ճյուղի մրցունակության բովանդակությունը:

Ճյուղի մրցունակությունը սահմանելիս, մեր կարծիքով, անհրաժեշտ է միաժամանակ հաշվի առնել ամենից առաջ դրա աշխատանքի արդյունավետությունը, արտադրողականությունը, կայունության հատկությունը, այսինքն՝ երկարաժամկետ հեռանկարում արտաքին միջավայրի ներգործության դեպքում որոշակի վիճակ պահպանելու ունակությունը, դինամիկությունը և մրցակցային դիրքը միջճյուղային մրցակցությունում: Ճյուղի մրցունակությունը բնութագրելիս այդ ամենի հետ մեկտեղ կարևորվում են ռեսուրսային ապահովվածությունը, գիտատարությունը, կապիտալատարությունը, տեխնիկական զինվածության մակարդակը, ճյուղում նորամուտությունների ներդրումը, այլ ճյուղերի հետ նրա փոխներգործությունը, փոխկապվածությունը, արտադրանքի նկատմամբ հասարակական պահանջմունքների բավարարման, արտահանման կողմնորոշվածության աստիճանը, եկամտաբերությունը:

Այսպիսով՝ ճյուղի մրցունակությունը հանդես է գալիս որպես դրա յուրահատկությունը, զարգացմանը նպաստող գործոններն ու պայմաններն արտացոլող բնութագրիչների այնպիսի համադրում, որն ապահովում է նրա մրցակցելու կարողությունը միջճյուղային մրցակցությունում, կայունությունն ու դինամիկությունը, այդ ճյուղի արտադրանքի նկատմամբ սպառողների պահանջմունքների բավարարվածությունն ու միջազգային շուկայում դրա մրցակցային առավելությունները:

Յուրաքանչյուր կոնկրետ ճյուղի մրցունակությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա յուրահատկությունը: Մեր հետազոտության շրջանակներում ընդգրկված գյուղատնտեսությունը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով, որոնցից հատկանշական են՝ ոչ բարձր շահութաբերությունը, վերարտադրության ցիկլի տևողությունը ու ներդրված միջոցների հետզման տևական ժամանակաշրջանը, բնակլիմայական պայմաններից կախվածությունը և տնտեսական գործունեության արդյունքի անկանխատեսելիության բարձր աստիճանը, հողի սահմանափակության բերումով բերքի քանակի անսահմանորեն ավելացման հնարավորության բացակայությունը:

Գյուղատնտեսության վերոնշյալ առանձնահատկությունները սահմանափակում են տնտեսության այլ ճյուղերի համեմատությամբ նրա մրցունակության հնարավորությունները, և այս պարագայում ծագում է միջճյուղային մրցակցությանը դիմանալու խնդիր: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորված է դրա վրա բազմապիսի գործոնների ազդեցությամբ և զարգացման համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ: Այլ խոսքով՝ գյուղատնտեսությունն մրցունակության բնութագրիչները որոշվում են ոչ թե դրա բնույթով, առանձնահատկություններով, այլ այն պայմանավորող նպաստավոր գործոններով և անհրաժեշտ պայմաններով: Այս պարագայում գյուղատնտեսության մրցունակությունը հանդես է գալիս որպես նշված գործոնների ու պայմանների ամբողջություն:

Գյուղատնտեսության մրցունակության վրա ազդում են բազմաթիվ և ոչ միատեսակ ազդեցությունն ունեցող փոխկապակցված ու փոխլրացնող գործոններ, և այդ գործոնների ազդեցությունը ճիշտ գնահատելու ու խառնաշփոթից զերծ մնալու համար նպատակահարմար է դրանք դասակարգել ըստ որոշակի հատկանիշների: Տնտեսագիտական գրականության մեջ նշված գործոնները դասակարգելիս առանձին հեղինակներ շեշտը դնում են այս կամ այն հատկանիշի կամ հատկանիշներիս համապատասխան գյուղատնտեսական արտադրանքի մրցունակությունը

պայմանավորող գործոնների դասակարգման վրա և հանդես չեն բերում համալիր մոտեցում այդ գործոնների դասակարգումը ճյուղի մակարդակով ներկայացնելու հարցում: Մասնավորապես Օ. Կորյակինն առանձնացնում է գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և սննդամթերքի մրցունակությունը պայմանավորող հետևյալ գործոնները՝ հիմք ընդունելով ստորև թվարկված հատկանիշները.

- դրանց ծագման միջավայրը (ներքին ու արտաքին գործոններ),
- արժեքային բնութագիրը (գնային ու ոչ գնային գործոններ),
- ներգործության բնույթը (հիմնական ու լրացուցիչ գործոններ),
- ներգործության տևողությունը (մշտական և փոփոխական գործոններ),
- ներգործության ոլորտը (մարքեթինգային, տնտեսական, արտադրական,

գիտատեխնիկական, Էկոլոգիական և այլ գործոններ) (Корякина):

Մեկ այլ հեղինակ՝ Ա. Բորելը, հիմք ընդունելով Մ. Պորտերի առաջարկած ձեռնարկության, ճյուղի և երկրի մրցունակության պայմանների դասակարգումը և հաշվի առնելով գյուղատնտեսության առանձնահատկություններն ու զարգացման արդի միտումները, առանձնացնում է գյուղատնտեսության մրցունակությունը ձևավորող գործոնների այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ արտադրության գործոնների համար պայմանները, պահանջարկի մակարդակը, կից և ուղեկցող ճյուղերը, կայուն ռազմավարությունը, կառուցվածքը և մրցակցությունը, պատահական իրադարձությունները, արտադրանքի մրցունակությունը, կառավարության քաղաքականությունը (Борель):

Այսպիսով՝ արդի տնտեսագիտական գրականությունում չկա միասնական մոտեցում գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների դասակարգման նկատմամբ: Չնայած մոտեցումների տարբերություններին՝ դրանք այնուհանդերձ ինչ-որ տեղ փոխլրացնում միմյանց և, այս իմաստով, կարծես ամբողջացնում են նշված գործոնների ցանկը: Բայցևայնպես նշված մոտեցումներում գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների դասակարգման ոչ բոլոր հատկանիշներն են հաշվի առնվել, առանձնացվել դրանց համապատասխանող գործոնները: Խոսքն այնպիսի հատկանիշների մասին է, ինչպիսիք են՝ գործոնների ազդեցության քանակական գնահատման հնարավորությունը, ազդեցության ժամանակը, ազդեցության աստիճանը, ձևը, հաճախականությունը, ուղղվածությունը և տնտեսության տարբեր մակարդակներում հանդես գալը: Այսպես՝ ազդեցության քանակական գնահատման հնարավորության հատկանիշով կարելի է առանձնացնել չափակցելի (օրինակ՝ ռիսկը), ոչ չափակցելի կամ փորձագիտական ճանապարհով գնահատվող գործոններ (օրինակ՝ իրավական գործոնը):

Ազդեցության ժամանակի առումով առանձնացվում են երկարաժամկետ (օրինակ՝ գիտատեխնիկական գործոնը), միջին ժամկետային (օրինակ՝ հաղորդակցային համակարգը) և կարճաժամկետ (օրինակ՝ գների կարճաժամկետ տատանումները) գործոններ: Ընդ որում՝ երկարաժամկետ ազդեցության գործոններն իրենց բնույթով ռազմավարական են, միջին ժամկետայինները՝ ընթացիկ, իսկ կարճաժամկետները՝ օպերատիվ նշանակության:

Ըստ ազդեցության աստիճանի՝ տարբերում են Էական (մասնավորապես՝ սղաճի տեմպն ու մակարդակը) և ոչ Էական ազդեցությամբ (օրինակ՝ բնակչության սովորույթները), իսկ ըստ ազդեցության ձևի՝ ուղղակի (մասնավորապես՝ գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը) և անուղղակի (օրինակ՝ քաղաքական) գործոններ:

Ազդեցության հաճախականության չափանիշով տարբերում են՝ մշտական (մասնավորապես՝ սպառողները) փոփոխական (օրինակ՝ ժողովրդագրական) և պատահական (մասնավորապես՝ եղանակային պայմանների անկանխատեսելի փոփոխությունները) գործոններ:

Գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները հանդես են գալիս մակրոմակարդակում, միկրոմակարդակում և մեզամակարդակում: Դրան

համապատասխան՝ տարբերում են մակրոմակարդակի (օրինակ՝ կառավարության ազդարային քաղաքականությունը և ռազմավարությունը), միկրոմակարդակի (մասնավորապես՝ գյուղատնտեսությունում հանդես եկող տնտեսավարող սուբյեկտների մրցունակությունը) և մեզամակարդակի (օրինակ՝ գյուղատնտեսական հումքի նկատմամբ արդյունաբերության պահանջարկի փոփոխությունը) գործոններ:

Գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները, մեր կարծիքով, կարելի է դասակարգել նաև ըստ ազդեցության ուղղվածության: Դրան համապատասխան՝ տարբերում են այդ մրցունակության վրա դրականորեն (օրինակ՝ գյուղատնտեսության մեքենայացման բարձր մակարդակը) կամ բացասաբար ազդող (մասնավորապես՝ ոչ բարենպաստ հողային և կլիմայական պայմանները) գործոններ: Ընդ որում՝ միևնույն գործոնը կարող է դրականորեն կամ բացասաբար ազդել գյուղատնտեսության մրցունակության վրա:

Վերը նշված հատկանիշին համապատասխան՝ որպես գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող առանձին գործոն, մեր կարծիքով, կարելի է դիտարկել նաև միջճյուղային մրցակցությունը, որը կարող է նպաստավոր լինել կամ չլինել այդ ճյուղի մրցունակության համար:

Այսպիսով՝ գյուղատնտեսության մրցունակությունը ձևավորվում է միմյանցից նշանալիորեն տարբերվող, միմյանցից անկախ կամ կախյալ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ:

Գյուղատնտեսության մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործումը

Մրցունակությունը, մասնավորապես ճյուղի մրցունակությունը գնահատվում է որոշակի չափանիշներով ու ցուցանիշներով: Վերջինս վերաբերում է նաև գյուղատնտեսության մրցունակությանը:

Չափանիշը գնահատման հատկանիշ է, իսկ ցուցանիշը՝ արդյունքներն ամփոփող տվյալ կամ տվյալների ամբողջություն: Ցուցանիշն արտացոլում է նաև երևույթի ընդհանրական քանակական բնութագիրը՝ որակական որոշակիության հետ միասնության մեջ:

Չնայած մրցունակության չափանիշի և ցուցանիշի նշված բովանդակային տարբերությանը՝ տնտեսագիտական գրականության մեջ դրանք սովորաբար հստակորեն սահմանազատված չեն:

Ճյուղի մրցունակությունը զգալիորեն կախված է այն բանից, թե ինչպիսին է պատրաստի արտադրանքի պահանջարկին համապատասխան առկա ռեսուրսների օգտագործման հնարավորությունը շուկայում: Այդ հնարավորության իրացման արդյունքը նշված ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունն է: Այս պարագայում վերջինս հանդես է գալիս որպես ճյուղի մրցունակության չափանիշ, որը բնութագրվում է որոշակի ցուցանիշների համակարգով: Խոսքը ամենից առաջ բնեղեն և արժեքային ցուցանիշների մասին է: Որպես արդյունավետության բնեղեն ցուցանիշներ հանդես են գալիս գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունն ու գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Բնեղեն ցուցանիշները հիմք են դառնում արժեքային ցուցանիշների՝ համախառն ու ապրանքային արտադրանքի, համախառն ու զուտ եկամտի, շահույթի ու արտադրության շահութաբերության հաշվարկման համար (Коваленко и др. 12):

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են նաև ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունը բնութագրող մասնակի ու ընդհանրական ցուցանիշներ: Մասնակիները բնութագրում են ռեսուրսների կամ ծախսերի առանձին տեսակների օգտագործման արդյունավետությունը, իսկ ընդհանրականը տալիս են ռեսուրսային ներուժի կամ բոլոր արտադրական ծախսերի օգտագործման արդյունավետությունը: Մասնակիին կարելի է վերագրել, օրինակ,

հողահատույցը, ֆոնդահատույցը, նյութատարությունը և այլն, ընդհանրականին՝ ռեսուրսահատույցը և շահութաբերության մակարդակը (Минаков и др. 276):

Ինչպես հայտնի է, գյուղատնտեսությունը տնտեսության առանձին ճյուղերի, հատկապես արդյունաբերության համեմատությամբ աչքի չի ընկնում նշված ցուցանիշների մակարդակով:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության համակողմանի բնութագրման համար տնտեսագիտական գրականության մեջ կիրառվում են նաև տնտեսագիտական գրականությունից հայտնի աշխատանքի արտադրողականության, ներդրումների արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները և այլն: Ընդ որում՝ աշխատանքի արտադրողականությունը խտացված ձևով արտացոլում է ճյուղի մրցունակությունը պայմանավորող առանձին գործոնների ազդեցությունը: Դրա հետ մեկտեղ այն «մի ցուցանիշ է, որը բնութագրում է արտադրության մրցունակության ընդհանուր մակարդակը ծախսերի կրճատման տեսանկյունից» (Մկրտումյան 51):

Գյուղատնտեսությունն արդյունավետության վերոնշյալ ցուցանիշներով ետ է մնում տնտեսության առանձին ճյուղերից, մասնավորապես՝ արդյունաբերությունից: Այս համատեքստում, որպես ճյուղի, մասնավորապես գյուղատնտեսության մրցունակության չափանիշներ կարելի է դիտարկել ներդրումային ու նորարարական ակտիվությունը, ներդրումային գրավչությունը և տեխնիկական զինվածության մակարդակը:

Գյուղատնտեսությունում ներդրումային ակտիվությունը բնութագրող առավել ընդհանուր ցուցանիշներ են ճյուղում ներդրումների ընդհանուր ծավալը, տնտեսության մեջ կատարված ներդրումների ընդհանուր ծավալում գյուղատնտեսության մասնաբաժինը, գյուղատնտեսությունն ներդրումների ներհոսքի և այդ ճյուղից ներդրումների արտահոսքի հարաբերակցությունը:

Ճյուղի ներդրումային ակտիվությունից հարկավոր է տարբերել դրա ներդրումային գրավչությունը: Ներդրումային ակտիվությունը, մեր կարծիքով, արտացոլում է ճյուղում կատարված փաստացի, իսկ գրավչությունը՝ ակնկալվող ներդրումները:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ներդրումային գրավչությանը, ապա այն իր առանձնահատկության բերումով տնտեսության առանձին ճյուղերի համեմատությամբ աչքի չի ընկնում այդպիսի գրավչությամբ, հատկապես ձեռնարկությունների գործունեության միջին ճյուղային շահութաբերության համեմատաբար ցածր մակարդակի, ճյուղային ներդրումային առավել մեծ ռիսկերի առումով:

Ներդրումային ակտիվության և գրավչության հետ մեկտեղ ճյուղի մրցունակության գնահատման չափանիշներից է նաև դրա նորարարական ակտիվությունը: Գյուղատնտեսությունում նորարարական ակտիվությունը բնութագրող առավել ընդհանուր ցուցանիշներ են նորարարական ուղղվածությամբ ներդրումների ծավալը, դրանց մասնաբաժինը ճյուղի ներդրումների ընդհանուր ծավալում, տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացման տեմպերը, նորարարությունների թիվը, արժեքը և դրանց տարածման աստիճանը:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մրցունակության վերը թվարկված մյուս չափանիշի՝ տեխնիկական զինվածության մակարդակը բնութագրող ցուցանիշներին, ապա որպես առավել ընդհանուր ցուցանիշներ կարող են ծառայել գյուղատնտեսությունում հիմնական միջոցների գործարկմանն ուղղված ներդրումների ծավալը, դրանց մասնաբաժինն այդ ճյուղի ներդրումների ընդհանուր ծավալում, գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը:

Ճյուղի տեխնիկական զինվածությունը և առհասարակ նրա զարգացումը զգալիորեն պայմանավորված են նրա ռեսուրսային ապահովվածությամբ ու ներուժով: Այս համատեքստում այն ևս կարելի է դիտարկել որպես նրա մրցունակության չափանիշ:

Ճյուղի ռեսուրսային ապահովվածության համատեքստում առանձնապես կարևորվում է սեփական ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը: Դրա գնահատման համար տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են ճյուղի ձեռնարկությունների սեփական ֆինանսական ռեսուրսների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների ծավալի և տեսակարար կշռի, նշված ձեռնարկությունների կողմից օգտագործվող կապիտալի ընդհանուր ծավալում սեփական կապիտալի մասնաբաժնի ցուցանիշները (Макроносов и Маврина 114):

Ճյուղի ռեսուրսային ապահովվածությունը, ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ներդրումային ու նորարարական ակտիվությունը, ներդրումային գրավչությունը և տեխնիկական զինվածությունն անդրադառնում են նրա կայունության վրա:

Առանձին հեղինակներ առաջարկում են ճյուղի մրցունակության կայունության վերլուծության ժամանակ օգտագործվող ցուցանիշները ներկայացնել հետևյալ կերպ.

«-ճյուղի արտադրանքի համար ներքին շուկայում պահանջարկի գնահատման ցուցանիշներ,

-մատակարար-ճյուղերի և տարածաշրջանի այլ ուղեկցող ճյուղերի մրցունակության ցուցանիշներ,

-մրցակցության արդյունավետ ռազմավարությունների կիրառմանը նպաստող ասպեկտների գործոնային գնահատման ցուցանիշներ» (Закирова):

Ճյուղի կայունությունը բնութագրող ցուցանիշների նման խմբավորումը ոչ ամբողջովին է արտացոլում դրա մրցունակությունը: Մասնավորապես անտեսվում է արտադրության արտահանման կողմնորոշման աստիճանը: Կարծում ենք, որ ճյուղի կայունությունը պետք է դիտարկել դրա կայուն վիճակն ու զարգացումը բնութագրող ցուցանիշների ամբողջության մեջ տևական ժամանակահատվածում դրանց առնվազն չվատթարանալու առումով և ավելին՝ դրանք համադրելով ամբողջ տնտեսության նույնպիսի վիճակն ու զարգացումն արտացոլող ցուցանիշների շարժի հետ:

Ճյուղի կայունությունը և մրցունակությունը զգալիորեն կախված են դրա արդյունավետ կառավարումից: Այս պարագայում ճյուղի կառավարման արդյունավետությունը ևս կարելի է դիտարկել որպես մրցունակության չափանիշ:

Ընդհանուր առմամբ, կառավարման արդյունավետությունն արտացոլում է նպատակներին հասնելու աստիճանը: Որպես ճյուղի կառավարման արդյունավետության առավել ընդհանրական ցուցանիշ կարող է հանդես գալ կառավարչական աշխատանքի արդյունքների և կառավարման ծախսերի հարաբերությունը:

Ճյուղի կայունության և կառավարման արդյունավետության հետ մեկտեղ ոչ պակաս կարևորվում է դրա մրցունակությունը բնութագրող այնպիսի չափանիշ, ինչպիսին է տնտեսության մեջ դրա մրցակցային դիրքը: Վերջինս բնութագրվում է համախառն ներքին արդյունքի մեջ տվյալ ճյուղի արտադրանքի տեսակարար կշռի ցուցանիշով:

2016-2020 թթ. տվյալներով հանրապետության գյուղատնտեսության ՀՆԱ-ի ցուցանիշի տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշը ունեցել է նվազման միտում: Այսպիսով՝ ՀՀ գյուղատնտեսության մասնակցությունը երկրի ՀՆԱ-ում 2020 թ. կազմել է 11.2 %, 2016 թ.՝ 16.4 %-ի դիմաց: Այսինքն՝ վերջինս որոշակիորեն վկայում է ճյուղի մրցակցային դիրքի մասին («Պարենային ապահովություն և աղքատություն 2021» 9):

Ճյուղի մրցունակության վերը նշված չափանիշների և ցուցանիշների վերաբերյալ դատողությունները, բնականաբար, չեն կարող շրջանցել դրա արտադրանքի մրցունակությունը, որակը: Ավելին, առանձին հեղինակների կարծիքով «Ագրոպարենային արտադրանքի մրցունակության գլխավոր և նշանակալի չափանիշ ու ցուցանիշ է ճանաչվում արտադրանքի որակը: Դրանց կապը դրսևորվում է

գնորդների պահանջմունքների բավարարման միջոցով, դրա հետ մեկտեղ դրանք տարբեր են ըստ օբյեկտների, գնահատման եղանակների և ձևավորման պայմանների: Արտադրանքի որակն արտացոլվում է մրցունակության կարևոր բազային բաղկացուցիչների՝ գնի ու ինքնարժեքի մեջ» (Корякина): Արտադրանքի որակը, մրցունակության չափանիշ լինելով հանդերձ, չի կարող միաժամանակ հանդես գալ որպես ցուցանիշ, քանի որ այն վերացական հասկացություն է և բնութագրվում է գնահատման համապատասխան ցուցանիշներով: Բացի այդ, ինչպես վերը նշվել է, արտադրանքի որակն արտացոլվում է դրա գնի ու ինքնարժեքի մեջ:

Ապրանքի որակի գնահատման ցուցանիշները մասամբ են բնութագրում դրա մրցունակությունը: Վերջինիս մասին թերևս առավել լրիվ պատկերացում կարելի է կազմել դրա նկատմամբ պահանջմունքների բավարարման աստիճանի հիման վրա, նաև մրցակիցների կողմից առաջարկվող համանման ապրանքների հետ համեմատության արդյունքում: Այս իմաստով տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են արտադրանքի կոնկրետ տեսակի մրցունակության եզակի, խմբային ու ինտեգրային ցուցանիշներ (Корякина):

Տնտեսագիտական գրականության մեջ ապրանքի մրցունակությունը դիտարկվում է նաև ներմուծվող համանման ապրանքի հետ համեմատության համատեքստում և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$K_{kcij} = \frac{CII}{II + TP + HDS} \quad 1.$$

որտեղ՝

K_{kcij} -ն j-րդ անդամ-պետության i-րդ տեսակի արտադրանքի մրցունակության գործակիցն է,

CII-ն j-րդ անդամ-պետության i-րդ տեսակի արտադրանքի արտադրողների միջին գինն է (ԱՄՆ դոլարով տոննայի համար),

II-ն j-րդ պետության սահմանին ներմուծվող i-րդ տեսակի արտադրանքի գինն է՝ մատակարարման պայմաններով (ԱՄՆ դոլարով տոննայի համար),

TP-ն j-րդ անդամ-պետությունում ներմուծվող i-րդ տեսակի արտադրանքի ներմուծման մաքսատուրքերն են (ԱՄՆ դոլարով տոննայի համար),

HDS-ն՝ j-րդ անդամ-պետությունում ներմուծվող i-րդ տեսակի արտադրանքի ավելացված արժեքի հարկն է:

Արտադրանքը մրցունակ է այն դեպքում, երբ դրա մրցունակության գործակիցը փոքր է 1-ից: Որքան փոքր է մրցունակության գործակցի արժեքը, այնքան արտադրանքը ավելի մրցունակ է (Распоряжение Коллегии Евразийской экономической комиссии от 20.06.2017 N 67):

Արտադրանքի մրցունակության վերոնշյալ ցուցանիշները թեպետ որոշակի պատկերացում են տալիս դրա նկատմամբ սպառողների պահանջմունքների և պահանջարկի բավարարման աստիճանի, մրցակից տնտեսավարող սուբյեկտների կողմից առաջարկվող, ներմուծվող համանման ապրանքների համեմատ մրցակցային առավելությունների մասին, բայցևայնպես թույլ չեն տալիս հստակ պատկերացում կազմել տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների կողմից առաջարկվող ապրանքների ու ծառայությունների մրցունակության հետ համեմատության արդյունքում տվյալ ճյուղի արտադրանքի մրցունակության մասին: Այս իմաստով որպես մրցունակության ընդհանուր ցուցանիշ, մեր կարծիքով, կարող է ծառայել ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ ճյուղի արտադրանքի իրացման ընդհանուր ծավալի աճի կամ նվազման տեմպը (համադրելի գներով արտահայտված) այլ ճյուղերի ու ոլորտների համեմատությամբ:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արտադրանքի կամ ծառայության մրցունակությունը, վերջին հաշվով, արտացոլում է դրա պահանջված լինելը սպառողի կողմից: Այս պարագայում որպես ճյուղի արտադրանքի մրցունակության չափանիշ

հանդես է գալիս սպառողի կողմից դրա պահանջված լինելը՝ բավարարված պահանջարկի ձևով, որը բնութագրող ընդհանուր ցուցանիշ, մեր կարծիքով, կարող է հանդիսանալ տվյալ ժամանակահատվածում ճյուղի արտադրանքի առաջարկի ընդհանուր ծավալում իրացված արտադրանքի տեսակարար կշիռը:

Ճյուղի մրցունակության չափանիշներից է նաև դրա արտադրության արտահանման կողմնորոշման աստիճանը: Մենք համաձայն ենք այն տնտեսագետների կարծիքին, համաձայն որի՝ «ապրանքների արտահանումը վկայում է այլ շուկաների կողմից դրանց որակի և մրցունակության ճանաչման մասին: Ինչքան բարձր է արտահանման ծավալը, այնքան ճանաչված և ընդունված են արտահանվող ապրանքների որակը և մրցունակությունը» (Մկրտումյան 53): Վերը նշված չափանիշը, մեր կարծիքով, կարող է բնութագրվել ոչ միայն տվյալ ճյուղի ապրանքների համաշխարհային շրջանառության մեջ այս կամ այն երկրի նույն ճյուղի մրցունակ ապրանքների արտահանման մասնաբաժնի, այլև ճյուղի արտադրության ընդհանուր ծավալում արտահանվող ապրանքների մասնաբաժնի, արտահանման և արտադրության հարաբերակցության ցուցանիշներով:

Միջազգային շուկայում ճյուղի մրցունակության դրսևորման չափանիշ կարելի է դիտել նաև արտաքին տնտեսական գործունեության ազատականացման աստիճանը, որն արտահայտվում է մաքսատուրքի դրույքաչափերում (Մկրտումյան 54): Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և ընդունելի համարել այն, որ այս ցուցանիշը կրում է պայմանական բնույթ. «Մասնավորապես, շատ դեպքերում մաքսային դրույքաչափերը սահմանվում են միջազգային տարբեր կազմակերպություններին կամ մաքսային միություններին անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների ստանձնման հետևանքով, ինչը, անշուշտ, չի վկայում ներքին արտադրության մրցունակության կամ դրա բացակայության մասին» (Մկրտումյան 55):

Արտադրանքի ներմուծման առումով ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության գնահատման առավել իրատեսական չափանիշ կարող է ծառայել ինքնաբավությունը՝ հաշվի առնելով, որ երկրի ներքին շուկայում ճյուղի պատրաստի արտադրանքի ներմուծման բարձր մասնաբաժինը և դրական դինամիկան վկայում են այդ ճյուղի արտադրական ոչ բավարար հնարավորությունների կամ սպառողի կողմից դրա արտադրանքի ոչ այնքան պահանջված լինելու, հարաբերականորեն ցածր մրցունակության մասին և ընդհակառակը:

Ինքնաբավության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով («Պարենային ապահովություն և աղբատուրություն 2021» 78).

$$I_{\text{Ի}} = \frac{A}{A + B - \text{ԱՐՏ}} * 100 \% \quad 2.$$

որտեղ՝

$I_{\text{Ի}}$ -ն ինքնաբավության մակարդակն է տոկոսային արտահայտությամբ,

A -ն դիտարկվող ժամանակաշրջանում սննդամթերքի առանձին տեսակների արտադրության ծավալն է՝ բնեղեն արտահայտությամբ,

B -ն տվյալ տեսակի սննդամթերքի ներմուծման ծավալն է՝ բնեղեն արտահայտությամբ,

ԱՐՏ -ն տվյալ տեսակի սննդամթերքի արտահանման ծավալն է՝ բնեղեն արտահայտությամբ:

Նշված բանաձևով ինքնաբավության մակարդակի հաշվարկը հնարավորություն է տալիս քանակական համապատասխանությունն ապահովելու սննդամթերքի առանձին տեսակների արտադրության իրական հնարավորությունների և երկրի բնակչության կողմից դրանցից յուրաքանչյուրի սպառման հիմնավորված ծավալների միջև:

Ճյուղի մրցունակության գնահատման չափանիշներից մեկն էլ դրա համակենտրոնացման մակարդակն է, դրանում խոշոր արդյունավետ տնտեսավարողների առկայությունը, որոնք կարող են հաջողությամբ մրցակցել արտաքին շուկայում: Այս պարագայում որքան շատ են տվյալ ճյուղում այդպիսի տնտեսավարողները, այնքան ճյուղն ավելի մրցունակ է դառնում: Նշված չափանիշն իր արտացոլումն է գտնում այն բնութագրող այնպիսի ընդհանուր ցուցանիշներում, ինչպիսիք են՝ խոշոր տնտեսավարողների թիվն ու տեսակարար կշիռը ճյուղի տնտեսավարողների ընդհանուր թվում, այդպիսի տնտեսավարողների մասնաբաժինը ճյուղի արտադրության ու արտադրանքի իրացման ընդհանուր ծավալում: Այսպիսով՝ ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության գնահատումն իրականացվում է բազմաթիվ չափանիշների ու դրանք բնութագրող ցուցանիշների համալիր կիրառմամբ:

Նշված չափանիշների և ցուցանիշների մասին առավել ակնառու պատկերացում կարելի է կազմել ստորև ներկայացված աղյուսակ 1-ից:

Աղյուսակ 1.

Ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության գնահատման չափանիշները և ցուցանիշները¹

Չափանիշները	Ցուցանիշները
1	2
Արտադրանքի մրցունակությունը	<ul style="list-style-type: none"> - Արտադրանքի որակի գնահատման տեխնիկական, ֆիզիկական նորմատիվային, տնտեսական, նաև ընդհանրական, անհատական և անուղղակի ցուցանիշներ, - արտադրանքի մրցունակության գնահատման եզակի, խմբային և ինտեգրալային ցուցանիշներ, - ներմուծված համանման արտադրանքի նկատմամբ տեղական արտադրանքի մրցունակության գործակից, - սպառողների կողմից արտադրանքի պահանջված լինելն արտացոլող տվյալ ժամանակահատվածում ճյուղի արտադրանքի առաջարկի ընդհանուր ծավալում իրացված արտադրանքի տեսակարար կշիռը (հաշվի առնելով, որ նշված ծավալը նախատեսելիս պետք է ելնել այդ արտադրանքի նկատմամբ պահանջարկից), - ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ ճյուղի արտադրանքի իրացման ընդհանուր ծավալի աճի կամ նվազման տեմպը (համադրելի գներով արտահայտված) այլ ճյուղերին և ոլորտներին վերաբերող նույն ցուցանիշի համեմատությամբ:
Ճյուղի կայունությունը	<ul style="list-style-type: none"> - Ճյուղի արտադրանքի համար ներքին շուկայում պահանջարկի գնահատման ցուցանիշներ, - մատակարար-ճյուղերի և տարածաշրջանի ուղեկցող այլ ճյուղերի մրցունակության ցուցանիշներ, - մրցակցության արդյունավետ ռազմավարությունների կիրառմանը նպաստող ասպեկտների գործոնային գնահատման ցուցանիշներ, - տարածաշրջանի տնտեսության մեջ ճյուղի ներդրման վերլուծության ցուցանիշներ (ճյուղի մրցունակության

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով տնտեսագիտական գրականության մեջ տեղ գտած համապատասխան չափանիշներն ու ցուցանիշները և դրանց վերաբերյալ իր առաջարկությունները:

	<p>վերլուծությունը քանակական արտահայտությամբ),</p> <ul style="list-style-type: none"> - ճյուղի մրցունակության ձևավորման պայմանների, այսինքն՝ ռեսուրսային բազայի վերլուծության ցուցանիշներ (ճյուղի մրցունակության վերլուծությունը որակական արտահայտությամբ), - կլաստերների վերլուծության ցուցանիշներ, ճյուղի և տնտեսության կայուն վիճակն ու զարգացումը բնութագրող ցուցանիշների, հատկապես ճյուղի արտադրանքի թողարկման ծավալի և երկրի համախառն ներքին արդյունքի դինամիկաների հարաբերակցությունը:
<p>Տնտեսության մեջ ճյուղի մրցակցային դիրքը</p>	<ul style="list-style-type: none"> - Համախառն ներքին արդյունքի մեջ տվյալ ճյուղի արտադրանքի տեսակարար կշիռը:
<p>Ճյուղի ռեսուրսային ապահովվածությունը, ներուժը</p>	<ul style="list-style-type: none"> - Նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսներից յուրաքանչյուրի գծով առկա և պահանջվող ռեսուրսների հարաբերությունը տոկոսային արտահայտությամբ, - ճյուղի ձեռնարկությունների սեփական ֆինանսական ռեսուրսների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների ծավալի և տեսակարար կշռի, նշված ձեռնարկությունների կողմից օգտագործվող կապիտալի ընդհանուր ծավալում սեփական կապիտալի մասնաբաժինը:
<p>Ճյուղում ռեսուրսների օգտագործման և դրա կառավարման արդյունավետությունը</p>	<ul style="list-style-type: none"> - Նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ, - ծախսերի կրճատման տեսանկյունից արտադրության մրցունակության ընդհանուր մակարդակը բնութագրող աշխատանքի արտադրողականությունը, - Ճյուղի կառավարման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ (մասնավորապես այդպիսի ընդհանրական ցուցանիշ հանդիսացող ճյուղի կառավարչական աշխատանքի արդյունքների և կառավարման ծախսերի հարաբերությունը):
<p>Ճյուղի ներդրումային ակտիվությունը և գրավչությունը</p>	<ul style="list-style-type: none"> - Ճյուղում ներդրումների ընդհանուր ծավալը, - տնտեսության մեջ կատարված ներդրումների ընդհանուր ծավալում ճյուղի մասնաբաժինը, - ճյուղի ներդրումների ներհոսքի և այդ ճյուղից ներդրումների արտահոսքի հարաբերակցությունը, - ճյուղի զարգացման հեռանկարայնության մակարդակը, ձեռնարկությունների գործունեության միջին ճյուղային շահութաբերությունը, ճյուղային ներդրումային ռիսկերը բնութագրող ցուցանիշներ:
<p>Ճյուղի նորարարական ակտիվությունը</p>	<ul style="list-style-type: none"> - Նորարարական ուղղվածությամբ ներդրումների ծավալը, դրանց մասնաբաժինը ճյուղի ներդրումների ընդհանուր ծավալում, - տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացման տեմպերը, - նորարարությունների թիվը, արժեքը,

	- Նորարարությունների տարածման աստիճանը (նորարարություններից օգտվող տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը):
Ճյուղի տեխնիկական զինվածության մակարդակը	- Ճյուղում հիմնական միջոցների գործարկմանն ուղղված ներդրումների ծավալը, դրանց մասնաբաժինն այդ ճյուղի ներդրումների ընդհանուր ծավալում, - ճյուղի մեքենայացման և ավտոմատացման մակարդակը:
Ճյուղի արտադրության արտահանման կողմնորոշման աստիճանը	- Տվյալ ճյուղի ապրանքների համաշխարհային շրջանառության մեջ այս կամ այն երկրի նույն ճյուղի մրցունակ ապրանքների արտահանման մասնաբաժինը, - ճյուղի արտադրության ընդհանուր ծավալում արտահանվող ապրանքների մասնաբաժինը:
Արտաքին տնտեսական գործունեության ազատականացման աստիճանը և ճյուղի ինքնաբավությունը	- Մաքսատուրքի դրույքաչափը, - տվյալ երկրի ներքին շուկայում կոնկրետ ճյուղի պատրաստի արտադրանքի ներմուծման մասնաբաժինը, դրա դինամիկան - երկրում տվյալ ճյուղի արտադրանքի սպառման ծավալում սեփականի տեսակարար կշիռը:
Ճյուղի համակենտրոնացման մակարդակը, դրանում արտաքին շուկայում հաջողությամբ մրցակցող խոշոր, արդյունավետ ձեռնարկությունների առկայությունը	- Խոշոր ձեռնարկությունների թիվը և տեսակարար կշիռը ճյուղի ձեռնարկությունների ընդհանուր թվում, - այդպիսի ձեռնարկությունների մասնաբաժինը ճյուղի արտադրության և արտադրանքի իրացման ընդհանուր ծավալում:

Ճյուղի մրցունակության վերը նշված չափանիշների մեջ, մեր կարծիքով, կարելի է պայմանականորեն առանձնացնել հիմնական և ածանցյալ չափանիշներ: Հիմնական չափանիշը խտացված ձևով բովանդակում է ճյուղի մրցունակության մյուս չափանիշները: Որպես այդպիսին հանդես է գալիս ճյուղի արտադրանքի մրցունակությունը, որը, վերջին հաշվով, արտացոլում է սպառողների կողմից դրա պահանջված լինելը՝ բավարարված պահանջարկի ձևով:

Ինչ վերաբերում է ճյուղի մրցունակության վերը նշված ածանցյալ չափանիշներին և ցուցանիշներին, ապա դրանք բնութագրում են մրցունակությունը այս կամ այն տեսանկյունից և հնարավորություն են տալիս խորապես ըմբռնելու դրա էությունը, համակողմանիորեն գնահատելու այն:

Վերը նշված ցուցանիշներն անհրաժեշտ է հաշվի առնել ճյուղի մրցունակության գնահատման մեթոդները կիրառելիս: Տնտեսագիտական գրականության մեջ կիրառվում են առհասարակ մրցունակության, մասնավորապես ճյուղի գնահատման մի շարք մեթոդներ: Դրանցից մեկը մատրիցային մեթոդն է, որը հիմնված է տնտեսագիտական գրականությունից հայտնի մատրիցաների (մասնավորապես՝ Մ.Փորթերի «Հինգ ուժերի», «Աճ-շուկայի բաժին», «Շուկայի գրավչություն-առավելությունները մրցակցությունում») կազմման և ռազմավարության նախնական ընտրության վրա:

Մատրիցային մեթոդը սովորաբար կիրառական է առանձին ձեռնարկությունների (թեպետ Մ. Փորթերի մատրիցայի դեպքում նկատի են առնվում ճյուղի ներսում բոլոր ձեռնարկությունների մրցունակության վրա առանցքային ուժերի ազդեցության պոտենցիալ վտանգները) և նրանց կողմից առաջարկվող արտադրանքի, այլ ոչ ճյուղի մրցունակության համալիր գնահատման պարագայում:

Ճյուղի մրցունակությունը գնահատվում է նաև Ա. Թոմպսոնի առաջարկած ճյուղի հիմնական տնտեսական բնութագրերի (մասնավորապես մրցակցության մասշտաբը, մրցակիցների, գնորդների թիվը և նրանց հարաբերական չափերը) ուսումնասիրության արդյունքում դրանում առկա ընդհանուր իրավիճակի ու մրցակցության վերլուծության մեթոդական մոտեցման հիման վրա: Այն հնարավորություն է տալիս վերլուծելու ճյուղում կոնկրետ իրավիճակը, սահմանելու գլխավոր տնտեսական բնութագրերը, քննության առնելու ճյուղի հաջողության գլխավոր գործոնները և զարգացման հեռանկարները (Макроносов и Маврина 106): Նշված մոտեցումը, մեր կարծիքով, թեպետ հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու ճյուղի մրցունակության մասին, բայց չի բովանդակում դրա համալիր քանակական գնահատական:

Ճյուղի մրցունակությունը գնահատվում է նաև Ռ. Ա. Ֆատիսոլոգինսկի մեթոդով, որը հիմնված է առաջատար ձեռնարկությունների համալիր, փուլային ու տարրային հետազոտության վրա (Макроносов и Маврина 109): Մեր կարծիքով ճյուղի մրցունակության, գնահատումը դրա առաջատար ձեռնարկությունների և արտադրանքի մրցունակության տեսանկյունից հնարավորությունն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել ողջ ճյուղի մրցունակության մասին:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ճյուղի մրցունակության գնահատման վերոնշյալ մեթոդներում դրա մրցունակությունը չի դիտարկվում տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների մրցունակության հետ համեմատության համատեքստում: Այս պարագայում, մեր կարծիքով, թերևս առավել ընդունելի կարելի է համարել ճյուղի մրցունակության գնահատման համեմատական վերլուծության մեթոդը: Այս մեթոդիկայի առավելությունն այն է, որ գոյություն ունի հնարավորություն համեմատելու ստացված արդյունքները մեծ տնտեսական տարածաշրջանի արդյունքների հետ: Մրցունակության հիմնական ցուցանիշն աշխատանքի արտադրողականությունն ու դրա աճի տեմպն են: Այդ ցուցանիշը զուգակցում է շատ գործոնների ազդեցությունը, քանի որ արտացոլում է շահութաբերության ու աշխատավարձի մակարդակը, որոնք, իրենց հերթին, կախված են մի շարք գործոններից (Сталгине и др.): Կարևորելով այդ մեթոդի դերը ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության գնահատման գործում՝ միաժամանակ գտնում ենք, որ այդ մեթոդը կիրառելիս մրցունակության հիմնական ցուցանիշների շրջանակը չպետք է սահմանափակվի միայն վերը նշված աշխատանքի արտադրողականությամբ, և անհրաժեշտ է նկատի ունենալ նաև մրցունակության այլ ցուցանիշները: Ավելին՝ համեմատական վերլուծության մեթոդը մյուս մեթոդների համեմատությամբ ճյուղի, մրցունակության գնահատման ցուցանիշներն առավել մեծ չափով հաշվի առնելու հնարավորություն է ստեղծում:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ գյուղատնտեսության մրցունակության բնութագրիչների, պայմանավորող գործոնների դասակարգման հիմքում ընկած հատկանիշների, գնահատման չափանիշների և ցուցանիշների վերաբերյալ առկա մեկնաբանություններում շեշտը դրվում է առանձին բնութագրիչների, հատկանիշների, չափանիշների ու ցուցանիշների վրա, ինչը թույլ է տալիս այս կամ այն տեսանկյունից մեկնաբանել նշված մրցունակությունը և գնահատել այն: Մինչդեռ գյուղատնտեսության մրցունակության բնութագրիչների,

պայմանավորող գործոնների դասակարգման հիմքում ընկած հատկանիշների, գնահատման չափանիշների, ցուցանիշների մասին լիարժեք պատկերացում կարելի է կազմել դրանց մեկնաբանության հարցում համալիր մոտեցում ցուցաբերելու դեպքում: Վերջինիս հնարավորությունը ճյուղի մրցունակության գնահատման ցուցանիշներն ամբողջությամբ հաշվի առնելու առումով ընդլայնվում է համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ:

Օգտագործված գրականություն

1. Կոստանյան, Նարեկ. *Մրցունակության բարձրացման կառավարման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում*. թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2011:
2. Մկրտումյան, Արարատ. *Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացման ուղիները (լեռնարդյունաբերության օրինակով)*. թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2017:
3. *Պարենային ապահովություն և աղքատություն 2021թ. հունվար-սեպտեմբերին*. Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե, Երևան, 2021:
4. Коваленко, Николай, и Юрий Агирбов. *Экономика сельского хозяйства: учебник для студентов высших учебных заведений и др..* Москва, 2004.
5. Макроносов, Александр, и Ирина Маврина. *Конкуренция и конкурентоспособность. Учебное пособие*. Екатеринбург, 2014.
6. Минаков, Иван, и др.. *Экономика отраслей АПК*. Под ред. И. А. Минакова, Москва, 2004.
7. Портер, Майкл. *Конкуренция*, Издательский дом Вильямс, Москва, 2001.
8. Алещенко, Виталий. «Теоретико-методологические вопросы конкурентоспособности экономической системы». *Маркетинг в России и за рубежом*, No. 1, 2005, <http://www.mavriz.ru/articles/2005/1/4334.html>.
9. Закирова, Вероника. «Методологические аспекты оценки конкурентоспособности отрасли». *Международный научно-исследовательский журнал*, Выпуск 6 (6), 2012, стр. 92-96, <https://research-journal.org/economical/metodologicheskie-aspekty-ocenki-konkurentosposobnosti-otrasli/>.
10. Корякина, Ольга. «Критерии, показатели и факторы конкурентоспособности продукции аграрной сферы экономики». *Бюллетень Оренбургского научного центра УрО РАН*, Выпуск 3, 2011, <https://cyberleninka.ru/article/n/kriterii-pokazateli-i-factory-konkurentosposobnosti-produktsii-agrarnoy-sfery-ekonomiki/viewer>.
11. Сталгиене, Алдона, и др.. «Возможности конкурентоспособности пищевой промышленности в Литве». *Развитие высшего образования, демократического общества и рыночной экономики в европейском контексте*, Выпуск 2, 2014, стр. 228-240, <https://www.laei.lt/?mt=mokslo-publikacijos&straipsnis=946&metai=2015>.
12. Борель, Алексей. «Сущность конкурентоспособности сельского хозяйства и формирующие ее факторы». *Развитие*, <http://evolutio.info/ru/journal-menu/2014-4/2014-4-borel>.
13. «Конкурентоспособность отрасли, ее оценка». *Grandars*, <https://www.grandars.ru/college/ekonomika-firmy/konkurentosposobnost-otrasli.html#>.
14. *Распоряжение Коллегии Евразийской экономической комиссии от 20.06.2017 No. 67 «Об утверждении Методики осуществления Евразийской экономической комиссией ценового мониторинга и анализа конкурентоспособности сельскохозяйственной продукции и продукции пищевой*

промышленности, производимой в государствах – членах Евразийского экономического союза». https://docs.eaeunion.org/clco_22062017_67.

WORKS CITED

1. Kostanyan, Narek. *Mrcunakut'yan bard'racman kar'avarman himnaharcery' Hayastani Hanrapetut'yan tntesut'yunum. t'eknac'uakan atenaxosut'yun*, Erevan. [*Problems Of Management Of Increasing Competitiveness In The Economy of the Republic of Armenia*. PhD thesis, Yerevan] 2011. (In Armenian)
2. Kovalenko, Nikolaj, i Jurij Agirbov. *Jekonomika sel'skogo hozjajstva: uchebnik dlja studentov vysshih uchebnyh zavedenij i dr.*, Moskva. [*Agricultural Economics: textbook for students of higher educational institutions et al*. Moscow] 2004. (In Russian)
3. Makronosov, Aleksandr, i Irina Mavrina. *Konkurencija i konkurentosposobnost'.* *Uchebnoe posobie*. Ekaterinburg. [*Competition and competitiveness. Study guide*. Ekaterinburg] 2014. (In Russian)
4. Minakov, Ivan, i dr.. *Jekonomika otraslej APK*. Pod red. I. A. Minakova, Moskva. [*Economics of the agro-industrial complex*. Ed. I. A. Minakova, Moscow] 2004. (In Russian)
5. Mkrtumyan, Ararat. *Hayastani Hanrapetut'yan tntesut'yan mrcunakut'yan bard'racman ughinery' (ler'nardyunaberut'yan o'rinakov)*. t'eknac'uakan atenaxosut'yun, Erevan. [*Ways To Increase The Competitiveness Of The Economy Of The Republic Of Armenia (On The Example Of The Mining Industry)*. PhD thesis, Yerevan] 2017. (In Armenian)
6. *Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2021t'. hunvar-septemberin*. Hayastani Hanrapetut'yan Vitwakagrut'yan komite, Erevan. [*Food Security And Poverty In January-September 2021*. Committee On Statistics Of The Republic Of Armenia, Yerevan] 2021. (In Armenian)
7. Porter, Majkl. *Konkurencija*. Izdatel'skij dom "Vil'jams", Moskva. [*Competitiveness*. Williams Publishing House, Moscow] 2001. (In Russian)
8. Aleshhenko, Vitalij. "Teoretiko-metodologicheskie voprosy konkurentosposobnosti jekonomicheskoj sistemy". *Marketing v Rossii i za rubezhom*, No. 1, <http://www.mavriz.ru/articles/2005/1/4334.html>. ("Theoretical and methodological issues of competitiveness of the economic system". *Marketing in Russia and abroad*, No. 1] 2005. (In Russian)
9. Korjakina, Ol'ga. "Kriterii, pokazateli i faktory konkurentosposobnosti produkcii agrarnoj sfery jekonomiki". *Bjulleten' Orenburgskogo nauchnogo centra UrO RAN*, Vypusk 3, <https://cyberleninka.ru/article/n/kriterii-pokazateli-i-factory-konkurentosposobnosti-produktsii-agrarnoy-sfery-ekonomiki/viewer>. ["Indicators And Factors Of Competitiveness Of Agricultural Products Of The Economy". *Bulletin of the Orenburg Scientific Center of the Ural Branch of the Russian Academy of Sciences*, Issue 3] 2011. (In Russian)
10. Stalgiene, Aldona, I dr. "Vozmozhnosti konkurentosposobnosti pishhevoj promyshlennosti v Litve". *Razvitie vysshego obrazovanija, demokraticeskogo obshhestva i rynochnoj jekonomiki v evropejskom kontekste*, Vypusk 2, str. 228-240, <https://www.laei.lt/?mt=mokslo-publikacijos&straipsnis=946&metai=2015>. ["Competitiveness opportunities of the food industry in Lithuania". *Development of higher education, democratic society and market economy in the European context*, Issue 2, pp. 228-240] 2014. (In Russian)
11. Zakirova, Veronika. "Metodologicheskie aspekty ocenki konkurentosposobnosti otrasli. Institut jekonomiki, upravlenija i prava". *Mezhdunarodnyj nauchno-issledovatel'skij zhurnal*, Vypusk 6 (6), str. 92-96,

<https://research-journal.org/economical/metodologicheskie-aspekty-ocenki-konkurentosposobnosti-otrasli/>. [“Methodological aspects of assessing the competitiveness of the industry”. *International research journal*, Issue 6 (6), pp. 92-96] 2012. (In Russian)

12. Borel', Aleksej. “Sushhnost' konkurentosposobnosti sel'skogo hozjajstva i formirujushhie ee factory”. *Razvitie*, <http://evolutio.info/ru/journal-menu/2014-4/2014-4-borel>. [“The essence of the competitiveness of agriculture and the factors forming it”. *Evolution*]. (In Russian)

13. “Konkurentosposobnost' otrasli, ee oцена”. *Grandars*, <https://www.grandars.ru/college/ekonomika-firmy/konkurentosposobnost-otrasli.html#>. [“Competitiveness of the industry, its assessment”. *Grandars*]. (In Russian)

14. *Rasporjazhenie Kollegii Evrazijskoj jekonomicheskoy komissii ot 20.06.2017 No. 67 "Ob utverzhenii Metodiki osushhestvlenija Evrazijskoj jekonomicheskoy komissiej cenovogo monitoringa i analiza konkurentosposobnosti sel'skohozjajstvennoj produkcii i produkcii pishhevoj promyshlennosti, proizvodimoj v gosudarstvah – chlenah Evrazijskogo jekonomicheskogo sojuza*. https://docs.eaeunion.org/clco_22062017_67. [Order of the Board of the Eurasian Economic Commission dated 06/20/2017 No. 67 "On approval of the Methodology for the Implementation by the Eurasian Economic Commission of price monitoring and analysis of the competitiveness of agricultural products and food products produced in the Member States of the Eurasian Economic Union].

COMPETITIVENESS OF AGRICULTURE FEATURES OF THE CLASSIFICATION OF DETERMINING FACTORS AND APPROACHES TO IMPROVING THE CRITERIA FOR ITS ASSESSMENT

LUSINE TSPNETSYAN

*National Agrarian University of Armenia,
Department "Agribusiness Management and Politics", Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to propose approaches by studying the theoretical and methodological provisions of the economic literature on the essence and assessment of the competitiveness of the industry, in particular agriculture, which will make it possible to get a more complete picture of its essence, the factors that determine it and evaluation criteria, indicators and methods.

Happiness has long been researched by psychologists through the study on reported happiness, but economists have just lately entered the topic. Early economists and philosophers, from Aristotle to Smith, included the pursuit of happiness in their work. They all concluded that economic issues had a role. They are not the only pillars of well-being. However, as economics got more scientific and quantitative, a new, hazy definition of happiness evolved. The utility was considered simply dependent on income, mediated by human choices or preferences, within appropriate personal financial budget restrictions. Even in a more conventional paradigm, focusing just on money might overlook the essential dimensions of happiness, as numerous economists have noted over time. Various people place varying values on material and nonmaterial goods.

Happiness research, also known as subjective well-being research, is part of a larger trend in economics to question restrictive assumptions. The rise of limited rationality and behavioral economics, for example, cleared the ground for new research. Happiness economics is founded on the wider concepts of utility and welfare. Interactions between rational and irrational factors in linked utility functions, procedural utility, and

economic decision-making. Richard Easterlin was the first modern economist to reconsider the idea of happiness in the early 1970s. (Easterlin 25-37)

The goal of well-being economics is not to replace income-based welfare indicators, but rather to supplement them with a broader measure of wealth. These numbers are from a massive poll of hundreds of thousands of people from around the world who were asked to rate their happiness over time. The poll collects data on a variety of elements that influence the well-being, including health, family and job situations, and public trust, in addition to money. This strategy, which depends on state rather than acknowledged preferences, is especially well-suited to dealing with challenges conditioned by preferences as well. It frequently exposes a discrepancy between stated and actual tastes. The latter is unable to correctly predict the future.

Examples of these are the impact of macroeconomic measures such as inequality, environmental degradation, inflation, and unemployment on welfare. For example, Sen's capacity-based approach to poverty emphasizes that poor people are unable to make decisions or take specific actions. In some of his articles, he analyzes economists' overemphasizing choices as the only predictor of human behavior (Sen 1-24). Understanding the limitations of the sampling approach and the willingness to use the information contained in the research preferences is between the generally positive assessment of economists for the globalization process and the assessment of the average person or female who experiences it. The former is based on more personal experience, while the latter is based on traditional estimates of the overall benefits of the procedure. Changes in opportunities and incentive systems are affecting them and can create new vulnerabilities and instability for many. The choices are determined by factors beyond the control of the individual, and there are limits to how these changes can affect welfare. The impact of addiction activities such as smoking and substance abuse on welfare is another area where alternative approaches are limited, and well-being surveys may provide additional interesting data. Public responsiveness to the health and other spheres be of significance because the participants belong to different socio-economic groups and bring forth diverse results.

Happiness surveys are based on questions such as "In general, how satisfied are you with your life?" Alternatively, "How satisfied are you with your life?" With 4-7 possible answers. There are some methodological issues with this strategy. Critics accustomed to defining happiness in terms of material or financial gain lament the lack of accuracy in these issues (Bertrand 67-72).



Figure 1. The state of world happiness, top 10 happy countries of the world

Another documented proof of the happiness effect upon people worldwide is shown through WH report. As a matter of a fact it focuses on COVID-19 effects that change the quality of people's lives and assesses the way governments struggle with pandemic (WORLD Happiness, Trust and deaths under COVID-19 18-22). Among 155 countries included in the World Happiness 2021 Report, the Republic of Armenia took the 121th place, which indicates that the factors considered by the World Happiness Report are not fully implemented in Armenia.¹ If some bunch of factors will be considered for the nearest future, it is possible that «life expectancy» will change in the country and, in addition, it will improve its rate in the report. Armenian model of economics is still based mainly on GDP, which does not make it a country that will be attractive for inhabitants and new comers.

Individual reactions, like all economic measures, can be affected by unique, unobserved events. Unobserved personality traits and their corresponding measurement errors can bias the satisfaction survey responses. Other concerns about linked unobserved variables are fully shared by economists. Another issue with the use of perceptual data is the accuracy of the report. The wording of the question and where it is placed in the survey can have a significant impact on people's reactions. The distortion created by different or shifting reference standards is another matter. When people are asked how much income they need to earn and/or become happy, they often refer to their current income and add a certain percentage to it regardless of the absolute amount.

Easterlin Paradox

While maximum happiness research displays that rich people are happier on common than terrible human beings, studies among international locations and throughout time display little, if any, correlation among will increase in line with capita profits and common happiness levels.

Common health and common happiness sometimes happen to be in different poles but one cannot neglect their interconnection as well. Thus, we may assume that wealth does not always condition happiness but works for it as well. Another clarification of the ambiguity is psychologists' "set point" idea of happiness, which assumes that everybody has a happiness stage that they go back to overtime, even after large existence activities like triumphing the lottery or being divorced (Easterlin 227-234). Individuals are incredibly flexible, no doubt, and can subsequently turn out to have the demand of maximum offerings worldwide, if the availability of digital tools was a dream decades ago, now it is an inseparable part of everyday routine. Individuals price losses disproportionately than gains, in keeping with the behavioral economics studies (Kahneman 60-67).

Policy Ramifications

Richard Layard underlines the quantity to which people's happiness is assessed with the aid of using their social standing, which ends up in the attitude towards exertions and cash profits, decreasing pleasure. He additionally highlights the need for employment and domestic security, in addition to the exceptional and trustworthiness of social interactions (Layard 1-3). Meanwhile, happiness studies in growing international locations mean that more emphasis ought to be positioned on the bad effects of volatility and inequality, in addition to the vulnerability of the close to poor. The findings emphasize the bigger argument that even as improvement is important; it isn't always enough for poverty alleviation.

¹ Countryeconomy.com/demography/world-happiness-index/Armenia.

Other important elements, including investments in public health, establishments that could make certain adherence to primary fairness and equity norms, and collective investments in social coverage to shield employees from the volatility that frequently comes with integration into international markets, significantly maintaining the improvement profits that globalization enables deliver approximately. The demands of men and women of different social groups may be a topic of public disputes regarding the consideration of more or less important factors. For some people the stability of political life in the country is a good indicator for happiness, for others that factor is not even contemplated. Furthermore, happiness surveys can also additionally produce anomalous outcomes that monitor sparkling insights into human psychology e.g. adaptability and coping with the course of monetary crises. The economy of happiness brings forth numerous issues that have not be mattered before, and the yearly report of happiness may remarkably differ from the study performed earlier. These encompass the results of happiness findings for countrywide metrics and monetary boom patterns, in addition to the effects of happiness on exertions effort, consumption, and investment, in addition to the outcomes on political conduct. In the case of the latter, surveys of dissatisfaction or frustration can be treasured in predicting the chance of social unrest and its linkages to the globalization technique in numerous circumstances. Researchers require greater and better exceptional wellness statistics, specifically panel statistics, to deal with lots of those concerns. Panel statistics permit for the correction of unobserved character elements and related dimension errors, in addition to a higher dedication to causality direction. In maximum happiness studies, they are key roadblocks. There is a desire that in the nearest future economists will aggregate more information about the social problems of the populations and make it a part of economy assessment.

Conclusion

The article unveils the issues that are beyond economic considerations yet comprising the all-embracing features that are not accepted as a sector of economy yet they are decisive in its manner. The polarization of the society is conditioned by the fact that basic economic indicators are called to describe the economic situation of the country yet those factors that are in a shadow are not less significant. The Republic of Armenia should improve its place in the world happiness rankings by adding social factors to the essential economic indicators since the current economic potential is a step behind from those social problems that the populations deals with every day. Among those factors can be the interrelation of education and labor market, the implementation of ecosystems aimed at solving ecological problems. The ladder-of-life is based on relative aspirations but if an examination took place in Armenia that would unveil the issues that concern the population more, the measures could also be taken accordingly. For getting the “big picture” of economics one needs to encompass the results of happiness findings to the already known factors, and only within the framework of mainstream economics, it will be possible to precisely assess the economic situation of the country.

WORKS CITED

1. Easterlin, Richard. *Does Economic Growth Improve the Human Lot? Some Empirical Evidence*. Academic Press, New York, 1974.
2. Groenland, Edward. *The problem analysis for empirical studies International Journal of Business and Globalization*. Vol. 12, 2014.

3. Kahneman, Daniel, et al. *The Foundations of Hedonic Psychology*. Russell Sage, New York, 1999.
4. Bertrand, Marianne. "Do People Mean What They Say? Implications for Subjective Survey Data". *American Economic Review*, Vol. 91, No. 2, 2001, pp. 67-72.
5. "Explaining Happiness". *Proceedings of the National Academy of Sciences*, Vol. 100, No. 19, 2000, pp. 227-234.
6. Rodrik, Dani. "Sense and Nonsense in the Globalization Debate". *Foreign Policy*, Summer, 1997, pp. 45-53.
7. Sen, Amartya. "Rationality and Social Choice". *American Economic Review*, Vol. 85, No. 1, 1995, pp.1-24.
8. "World Happiness, Trust and deaths under COVID-19". *Report*, Chapter 2, 2021, pp. 18-22.

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ

ԳՅՈՒԼՆԱՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Երջանկության տնտեսագիտության նպատակը տնտեսագետների և հոգեբանների կողմից առաջադրվող մեթոդների համախմբի միջոցով հետազոտության այն արդյունքների ներկայացումն է, որոնք միտված են հաղորդելու տարբեր մայրցամաքներում ու երկրներում ապրող մարդկանց բարեկեցության մասին պատկերացումները: Հարկ է ընդունել, որ նշյալ ոլորտի խնդիրները միայն մասնակիորեն են հատում ավանդական տնտեսագիտության սահմանները, քանի որ եկամտի գործոնները ընդգծելուն զուգահեռ երջանկության տնտեսագիտությունը դիտարկում է նաև այն գործոնների համախումբը, որոնք ազդում են մարդկանց բարեկեցության վրա, սակայն կարող են ֆիզիկական մարմնացում չունենալ:

Հոդվածի խնդիրը ավանդական և երջանկության տնտեսագիտության համադրումն է վերլուծական ու համեմատական տեսությունների կիրառման մեթոդով, ինչն արդեն իսկ արվում է բազմաթիվ երկրներում, սակայն դեռևս ոչ ՀՀ-ում:

Տրամաբանական է, որ բոլոր այն երկրներում, որտեղ նկատվում են գնաճ ու գործազրկություն, ցանկացած տնտեսական անհավասարություն, գլոբալիզացիայի գործընթացի բացասական երևույթներ, ապա բնակչությունը, ըստ էության, կրում է նաև այդ ամենի բեռը և հոռետեսական մոտեցում ունենում երջանկության մասին:

Հիմնաբառեր՝ *երջանկության տնտեսագիտություն, ավանդական տնտեսագիտություն, եկամտի շրջապտույտ, բարեկեցության գործոններ, Իսթերլինի պարադոքս, հասարակական արձագանք, բյուջետային սահմանափակումներ:*

ЭКОНОМИКА СЧАСТЬЯ: ФАКТОРЫ, ВЫХОДЯЩИЕ ЗА РАМКИ ТРАДИЦИОННОЙ ЭКОНОМИКИ

ГЮЛЬНАРА ДАНИЕЛЯН

*магистрант Академии государственного
управления Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

Цель экономики счастья состоит в том, чтобы с помощью комплекса методов, предложенных экономистами и психологами, представить результаты исследований, направленных на то, чтобы дать представление о благополучии людей на разных континентах и в разных странах. Стоит отметить, что проблемы, относящиеся к этой сфере, лишь частично выходят за рамки традиционной экономической науки, поскольку, помимо акцентирования факторов дохода, экономика счастья рассматривает совокупность факторов, влияющих на благополучие людей, но не имеющих физического воплощения.

Задачей статьи является на основе использования сравнительного и аналитического методов, сопоставить факторы экономики счастья и традиционной экономики, что, в отличие от Республики Армения, практикуется во многих странах.

Во всех странах, где существует вероятность инфляции и безработицы, экономического неравенства и другие негативные последствия процесса глобализации, у населения меняется представление о счастье. В статье рассматривается совокупность характеристик, которые, хотя и в ограниченной степени подвержены влиянию экономической среды, все же оказывают влияние на формирование качества жизни.

Ключевые слова: экономика счастья, традиционная экономика, эффекты благосостояния, круг доходов, парадокс Истерлина, общественная реакция, бюджетные ограничения.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԻ ԼԻԱՐԺԵՔ ԻՐԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՈՐՈՇ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՐԵՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ՅՏԴ 343.1

DOI: 10.52063/25792652-2022.1.12-294

ԼՈՒԻՍԻՆԵ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս,
«Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական գրասենյակի փաստաբան,
ք. Երևան, Չայաստանի Հանրապետություն
lusine.hovhannisyan46@gmail.com*

Արդար դատական քննության հիմնարար իրավունքի լիարժեք իրացման ոլորտում ծագող մարտահրավերների լուծման հարցը քննելիս անհրաժեշտ է կերպով անդրադառնալ այդ հիմնարար իրավունքի մաս կազմող բաղադրիչների համալիր վերլուծությանը, դատավարական այլ կառուցակարգերի հետ համադրմանը: Սույն հոդվածի նպատակը պաշտպանության իրավունքի լիարժեք ուսումնասիրությունն է օրենսդրության ու տեսական գրականության լույսի ներքո՝ որպես արդար դատական քննության հիմնարար իրավունքի բաղադրիչ: Հոդվածի խնդիրների ցանկում պաշտպանության իրավունքի համակարգում առկա խնդիրների վերհանումն է, դրանց վերլուծությունը, ինչպես նաև գործնական լուծումներ առաջարկելը:

Հոդվածը շարադրված է վերլուծության, իրավական համեմատության և դեդուկցիայի մեթոդների կիրառմամբ:

Սույն հոդվածի շրջանակում մեր կողմից ուսումնասիրության է ենթարկված պաշտպանության իրավունքը՝ որպես քրեական գործի շրջանակներում հանցավոր արարք կատարվելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի հիմնական միջոց:

Ուսումնասիրության առարկան պաշտպանության իրավունքի կառուցակարգն ու դրա վերաբերյալ ձևավորված որոշ տեսական մոտեցումներն են, ինչպես նաև գործող և նոր օրենսդրական կարգավորումները՝ առանձնացնելով որոշ տեսական ու գործնական հիմնախնդիրներ: Պաշտպանության իրավունքը հոդվածում քննվել է պաշտպանի մասնակցության շրջանակներում:

Կատարված հետազոտության արդյունքում փաստել ենք պաշտպանության իրավունքի կենտրոնական դերը ինչպես գործող, այնպես էլ նոր օրենսդրական կարգավորումների համատեքստում՝ առանձնացնելով պաշտպանի գործունեության ժամանակ ծագող որոշ հիմնահարցեր: Հոդվածում քննության առարկա ենք դարձրել նաև որոշ տարբերակներ, որոնք կարող են երաշխավորել պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը կամ առնվազն նպաստել դրան:

Հիմնաբառեր՝ *պաշտպանության իրավունք, քրեական դատավարություն, արդար դատական քննություն, պաշտպան, մեղադրյալ, արդարադատության իրականացում, պաշտպանի լիարժեք մասնակցություն:*

* Հոդվածը ներկայացվել է 15.03.2022 թ., գրախոսվել՝ 19.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Նախաբան

Մարդկության պատմության մեծագույն նվաճումներից են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր ճանաչումն ու պաշտպանությունը: Սրանք հենց այն իրավական գործիքներն են, որոնք հնարավորություն են ընձեռում անծին պաշտպանվելու հանրային իշխանությունների կողմից իրենց լիազորությունների հնարավոր վերազանցումներից: Միաժամանակ այդ գործիքակազմի անխափան աշխատանքը երաշխավորելը հենց հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունն է (Langford 37-52; Harris 352-378):

Արդար դատական քննության իրավունքը քրեական դատավարության անկյունաքարն է: Դատավարական տարբեր գործընթացներ, սահմանված երաշխիքներ, գործիքներ միտված են ամեն կերպ ապահովելու քրեական դատավարության թերևս կարևորագույն փուլի՝ դատական քննության արդար բնույթը: Թեպետ արդար դատական քննության իրավունքը ինքնին նոր երևույթ չէ, այնուամենայնիվ պարբերաբար առաջ են գալիս նոր մարտահրավերներ, որոնց համարժեք հակադարձելը ենթադրում է իրավունքի անընդհատ զարգացում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների (այդ թվում՝ պաշտպանության իրավունքի) ճանաչման ու պաշտպանության ժամանակակից մեխանիզմների սկզբնակետը կարելի է համարել 1948 թվականին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հրապարակումը (այսուհետ՝ Հռչակագիր): Հռչակագրի 11-րդ հոդվածն ուղղակիորեն ամրագրում է պաշտպանության իրավունքը:

Պաշտպանության իրավունքն ամրագրող մի այլ կարևոր միջազգային փաստաթուղթ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, որը արդար դատական քննության իրավունքի մյուս բաղադրիչների հետ միասին սահմանում է նաև պաշտպանության իրավունքը:

Պաշտպանության իրավունքի կարևորությունն ընդգծված է ոչ միայն միջազգային-իրավական փաստաթղթերում, այլև ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և ճյուղային օրենսդրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ևս սահմանում են այդ իրավունքը:

Բացի օրենսդրական ակտերից՝ պաշտպանության իրավունքը նաև բազմաթիվ տեսական ուսումնասիրությունների և աշխատությունների օբյեկտ է: Կարծում ենք՝ այս իրավունքի դերը չպետք է թերագնահատվի քրեական դատավարության համակարգում: Պաշտպանության իրավունքի լիարժեք իրացմանը վերաբերող հիմնահարցերի քննությունը սույն հոդվածի շրջանակներում նպատակադիր է իրականացնել պաշտպանի լիազորությունների ուսումնասիրման և այդ ոլորտում առաջ եկող խնդրահարույց դրվագների վերլուծության եղանակով:

Պաշտպանության իրավունքի ընդհանուր բնութագիրը քրեական դատավարությունում

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության կարևորագույն կառուցակարգերից մեկն է: Բավական է նշել միայն, որ առանց դրա անհնար կլինի քրեադատավարական գործընթացները համապատասխանեցնել ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված նշանողերին (Powell 34):

Պաշտպանության իրավունքի եռթյունը հասկանալու համար հարկ է անդրադառնալ այն հնարավորություններին, որոնք կարող են տրամադրվել միայն այդ իրավունքի շնորհիվ:

Ուսումնասիրելով ինչպես ակադեմիական գրականությունում, այնպես էլ գործնականում ընդունված որոշ մոտեցումներ՝ կարելի է համապարփակ ներկայացնել պաշտպանության իրավունքի հիմնական բնորոշիչները.

1. վարույթն իրականացնող մարմիններից առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ ամբողջական տեղեկությունների ստացում,

2. արդյունավետ պաշտպանության նախապատրաստում և իրականացում,

3. իրավունք՝ պաշտպանվելու ինքնուրույն կամ որակավորված մասնագետի օգնությամբ,

4. վկաներին հարցաքննելու իրավունք,

5. հանրային իշխանության ներկայացուցիչների հետ հնարավորինս հավասար դիրքերից հանդես գալու իրավունք,

6. վարույթն իրականացնող մարմնի հետ բանակցելու և համագործակցելու հնարավորություն:

Տեսության մեջ կարծիք է արտահայտվել առ այն, որ պաշտպանության իրավունքը միտված չէ ապահովելու միայն կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի իրավունքների իրացման ամբողջականությունը (Fenyvesi 543-566): Այն անխզելիորեն փոխկապակցված է առհասարակ դատական իշխանության, արդարադատության իրավաչափ շահերի հետ: Այսպես՝ հանրային և մասնավոր շահերը թեպետ հաճախ հակադիր բևեռներ են, և յուրաքանչյուր գործով առկա է դրանք հավասարակշռելու անհրաժեշտություն, այնուամենայնիվ այն պարագայում, երբ վարույթի հանրային մարմինների կողմից մասնավոր անձին պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման հնարավորություն չընձեռնելու պարագայում վերջինս կրում է բացասական իրավական հետևանքներ և ի վերջո ենթարկվում քրեական պատասխանատվության, ինքնաբերաբար տուժում է նաև հանրային շահը, քանի որ փաստացի ստացվում է, որ հանրային իշխանությունը կամ ի գորու չէ ապահովելու իր սահմանադրական և միջազգային-իրավական պարտավորությունների լիարժեք կատարումը, կամ կոնկրետ գործով չի ցուցաբերել պատշաճ ջանասիրություն:

Ընդ որում՝ հետաքրքրական է, որ պաշտպանության իրավունքի ոլորտում վարույթն իրականացնող մարմնի կողմից իր պարտականությունների ամբողջական կատարումը մեխանիկորեն ենթադրում է մի իրավիճակ, երբ պետությունը «զենք» է տրամադրում անձին, որի կիրառմամբ անհատը պետք է դիմակայի պետության կողմից առաջադրված մեղադրանքին: Չուզահեռաբար տրամադրվող «զենքի» որակը, գործնական կիրառելիությունը, արդյունավետությունը վերահսկելու պատասխանատվությունը ևս վերագրված են հանրային իշխանությանը: Ընդ որում՝ արդար դատական քննության իրավունքը ամբողջապես չապահովելու համար պետությունն ինքը կրում է որոշակի բացասական հետևանքներ (Behan 86-94, 733-796):

Պաշտպանության սկզբունքի դերը քրեական դատավարության համակարգում. օրենսդրական կարգավորումների համեմատական

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պաշտպանության իրավունքը նախատեսում է քրեական դատավարության և քրեական վարույթի սկզբունքները սահմանող գլուխներում՝ դրանով ընդգծելով պաշտպանության իրավունքի ղեկավար, ելակետային դրույթ լինելու հանգամանքը: Ինչպես գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պարագայում, այնպես էլ 2021 թ. հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (հետայսու՝ Նոր օրենսգիրք) օրենսդրի որդեգրած մոտեցումը սկզբունքների հարցում հանգում է արդար դատական քննության իրավունքի մաս կազմող բաղադրիչների անջատմանը, դրանց առանձին ամրագրմանը, ինչը արդարացված մարտավարություն է ճյուղային օրենսդրության կողիֆիկացիայի համար:

Առանձնակի կարևորություն ունի պաշտպանության իրավունքի իրացման կապակցությամբ դրա արդյունավետության ընդգծումը, ինչը թույլ է տալիս քննվող երաշխիքը դիտարկել ոչ վերացականորեն: Նման օրենսդրական ամրագրումը առավել համապարփակ է արտացոլում պաշտպանության իրավունքի էությունը:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ Նոր օրենսգիրքը առավել համակարգված տեսքով է ամրագրում պաշտպանության իրավունքը: Մասնավորապես Նոր օրենսգիրքը նախ ամրագրում է մեղադրյալի իրավունքը (Նոր օրենսգրքով կասկածյալի պաշտպանության իրավունքը չամրագրելը պայմանավորված է նրանով, որ այդ դատավարական կարգավիճակն առհասարակ նախատեսված չէ) և դրա իրացման հնարավոր տարբերակները (անձամբ, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով), ապա՝ թվարկում վարույթն իրականացնող մարմնի պարտականությունները: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը վարույթն իրականացնող մարմնին վերագրում է բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորության ապահովման պարտականություն: Մինչդեռ Նոր օրենսգիրքը սահմանում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ ապահովել անձի բոլոր միջոցներով պաշտպանվելու իրական հնարավորությունը:

Նոր օրենսգրքի 20-րդ հոդվածում առկա է ևս մեկ առաջադիմական և իրավագիտության զարգացման արդի միտումները գործնականում արտացոլող մոտեցում: Համաձայն դրա՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել վարույթին պաշտպանի ժամանակին և իրական մասնակցությունը: Նկատելի է, որ օրենսգիրքը անձի պաշտպանության իրավունքի երաշխավորման հարցում վարույթն իրականացնող մարմնին վերագրել է առավել ակտիվ դեր, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պարագայում է: Նոր օրենսգրքի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինը կրելու է պոզիտիվ պարտականություն՝ ապահովել անձի իրական հնարավորությունը պաշտպանվելու մեղադրանքից, ինչպես նաև ժամանակին ներգրավելու պաշտպանին և ապահովելու նրա իրական մասնակցությունը:

Նոր օրենսգիրքն ուսումնասիրելիս հարկ է նկատել, որ դրա ընդունման հիմնավորումները ևս պարունակում են բազմաթիվ նշումներ հենց պաշտպանության իրավունքի երաշխավորման վերաբերյալ: Հիմնավորմամբ, մասնավորապես, նշված է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն իր ժամանակին եղել է առաջադիմական փաստաթուղթ, այնուամենայնիվ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց հարկ է համապատասխանեցնել այն իրավունքի զարգացման միտումներին: Ըստ հիմնավորումների՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել այդ թվում պաշտպանի իրավունքների վերաբերող նորմեր: Նոր օրենսգրքի առջև ծառայած խնդիրների ցանկում են հանրային և մասնավոր շահերի հավասար պաշտպանության, արդար դատական քննության տարրերի իրականացման երաշխավորման, քրեական դատավարությունում մրցակցության գաղափարախոսության վերափոխման (այն սկզբունքից ռեժիմի վերածելու), քրեական դատավարությունում ներգրավված անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և այլ խնդիրներ: Հիմնավորումներով առանձնացված էր պաշտպանության իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը:

Վերոգրյալը քննելիս հարկ է նկատել, որ Նոր օրենսգիրքն իրավամբ որոշակիորեն ընդլայնում է պաշտպանության կողմի իրավունքները՝ առավել լայն հնարավորություն նախատեսելով պաշտպանին ներգրավվել ապացույցների հավաքագրման գործընթացում, ինչը թեև դեռևս չի վկայում իդեալական մրցակցության պայմաններում իրականացող նախաքննության մասին, սակայն մեծ առաջխաղացում է նախկին կարգավորումների համեմատ:

Պաշտպանության իրավունքի լիարժեք իրացմանը վերաբերող որոշ հիմնախնդիրներ

Չնայած ինչպես օրենսդրական, այնպես էլ նախադեպային ու տեսական կարգավորումների պարբերական զարգացմանը՝ գործնականում պաշտպանության իրավունքի իրացումը ևս առաջ է բերում գործնական հիմնախնդիրներ:

Պաշտպանների կողմից իրենց լիազորությունների իրականացման ոլորտում առկա մարտահրավերների մի մասը վերաբերում է պաշտպանների նկատմամբ կատարվող զննություններին, խուզարկություններին, կյուբերի տրամադրումից հրաժարվելուն, տեսակցությունների արգելմանը, ինչպես նաև պաշտպանների նկատմամբ իրականացվող գաղտնալուծումներին:

Պաշտպանների մտահոգությունների ստվար հատվածը վերաբերում է քրեակատարողական հիմնարկ, վարույթն իրականացնող մարմիններ, դատարաններ մուտք գործելու և իրենց վստահողներին ներկայացնելու գործընթացում ստեղծվող խոչընդոտներին, որոնք մրցակցության սկզբունքի իրացմանը խոչընդոտում են՝ սկսած քրեական դատավարության առաջին իսկ փուլերից՝ արդեն իսկ բացառելով դրա լրիվ իրացումը դատական քննության ընթացքում ևս (ՀՀ ՄԻՊ, «Փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքներ» 3, 10; ՀՀ ՄԻՊ, «Տարեկան հաղորդում, 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 298-301):

Վերոնշյալ գործողությունների ցանկում առաջնային դիրք է գրավում անձնական խուզարկության բնույթ կրող գործողությունների կատարումը պաշտպանների նկատմամբ, օրինակ՝ պայուսակը բացելու և այնտեղ առկա կյուբերին ծանոթանալու պահանջ ներկայացնելը: Մեքեքված այս խնդրի կապակցությամբ առանձնացվում է նաև խտրական վերաբերմունք ցուցաբերելու հիմնախնդիրը:

Այս և նմանատիպ հիմնախնդիրների անդրադարձել է նաև ՀՀ փաստաբանների պալատը, օրինակ՝ կապի և տեղեկատվության այլ միջոցների անվտանգությունը խախտող գործողություններին, որոնք կատարվել են 2019-2020 թվականների ընթացքում հինգ փաստաբանների նկատմամբ (ՀՀ փաստաբանների պալատ, «Փաստաբանների պալատի խորհուրդը դատապարտել է փաստաբանների կապի և տեղեկատվական այլ միջոցների անվտանգությունը խախտող գործողությունները»):

ՀՀ փաստաբանների պալատը քննության է ենթարկել նաև փաստաբանների համակարգիչների առգրավման խնդիրը՝ չնայած սահմանված օրենսդրական արգելքներին (ՀՀ փաստաբանների պալատ, «Փորձ է արվում առգրավել փաստաբանի համակարգիչը»):

Պաշտպանի լիազորությունների լիարժեք կենսագործման ապահովման շրջանակներում կարևորում ենք դատավարական այնպիսի կառուցակարգերի առկայությունը, որոնք թույլ կտան դատավարական հսկողություն իրականացնող դատախազին, ապա՝ դատարան բողոքարկել պաշտպանության իրավունքի էական խախտումներ բովանդակող գործողությունները կամ անգործությունը: Նմանօրինակ խախտումների օրինակներ կարող են դիտարկվել վերը թվարկված դեպքերը: Նշվածը կարևորվում է այնքանով, որ սահմանափակումներն ու խոչընդոտները կիրառվում են ոչ թե պաշտպանյալի, այլ հենց պաշտպանի նկատմամբ: Սակայն պաշտպանի գործունեությանն այդաստիճան միջամտությունը անխուսափելիորեն հանգեցնում է պաշտպանյալի իրավունքների և հիմնարար ազատությունների անհամաչափ սահմանափակման:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս մեկ անգամ ևս ընդգծել պաշտպանության իրավունքի կարևոր և հիմնաքարային բնույթը քրեական դատավարության համակարգում: Ինչպես վերը փաստեցինք, դրա նշանակությունն արտագծված է ոչ միայն ներպետական, այլև միջազգային կարգավորումներով:

Պաշտպանության իրավունքի երաշխավորման տեսանկյունից կարևորում ենք պաշտպանի անարգել, իրական և ժամանակին մասնակցությունը քրեական դատավարությանը: Այս գործընթացում խիստ կարևոր է վարույթն իրականացնող մարմնի հետ իրավական համագործակցությունը՝ միտված արդար դատական քննության իրավունքի երաշխավորմանը:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել և համեմատվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Նոր օրենսգրքի կարգավորումները՝ վեր հանելով Նոր օրենսգրքում առկա նորարարական մոտեցումները և պաշտպանության իրավունքի երաշխավորման համակարգի արտահայտող կարգավորումները: Նշված կարգավորումների շարքում առանձնակի կարևորություն ունեն դրույթները, որոնք ընդլայնում են պաշտպանի հնարավորությունները ապացուցողական գործընթացում:

Վերոգրյալին զուգահեռ, սակայն, պաշտպանության իրավունքի լիարժեք կենսագործման շրջանակներում շարունակում են առկա լինել որոշ հիմնախնդիրներ, որոնք քննության ենթարկվեցին առանձնաբար: Նշված խնդիրների լուծման առաջնային ճանապարհը, ըստ մեզ, օրենսդրական գործուն մեխանիզմների առկայությունն է վարույթն իրականացնող մարմնի կամ ցանկացած այլ անձի կողմից պաշտպանության իրավունքի ոտնձգություն թույլ տալու պարագայում խախտում հանդիսացող գործողության, անգործության կամ որոշման բողոքարկման համար: Հակառակ դեպքում պաշտպանության իրավունքի (անգամ եթե գործողությունը կատարվում է ոչ թե պաշտպանային, այլ պաշտպանի նկատմամբ) լայն սահմանափակումը կարող է հանգեցնել անդամային հետևանքների ողջ վարույթի համար:

Օգտագործված գրականություն

1. Powell, Richard. *Law Today*. Pearson English, London, 1993.
2. Եվրոպայի խորհուրդ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա». 04.11.1950, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>:
3. ՀՀ Ազգային ժողով, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը». 01.07.1998, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160548>:
4. ---. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը». 01.07.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154763>:
5. ՀՀ ՍԻՊ. «Տարեկան հաղորդում, 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին». 06.06.2019, http://www.parliament.am/draft_docs7/082_haghordum.pdf:
6. ---. «Փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքներ». 30.08.2017, <https://ombuds.am/am/site/ViewNews/247>:
7. ՀՀ Սահմանադրություն. 06.12.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>:
8. ՀՀ փաստաբանների պալատ. «Փաստաբանների պալատի խորհուրդը դատապարտել է փաստաբանների կապի և տեղեկատվական այլ միջոցների

- անվտանգությունը խախտող գործողությունները».
<https://www.advocates.am/news/view/2608.html>. հասանելի է՝ 20.02.2022:
9. ---. «Փորձ է արվում առգրավել փաստաբանի համակարգիչը».
<https://www.advocates.am/news/view/2552.html>. հասանելի է՝ 20.02.2022:
10. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման հիմնավորումներ.
<https://www.e-draft.am/projects/2085/justification>. հասանելի է՝ 20.02.2022:
11. Միավորված ազգերի կազմակերպություն, Գլխավոր ասամբլեա. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր».
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>: 10.12.1948,
12. Behan, Christopher. “When Turnabout is Fair Play, Character Evidence and Self-Defense in Homicide and Assault Cases”. *Oregon Law Review*, Vol. 86, No. 3, 2007, pp. 733–796.
13. Fenyvesi, Csaba. “Constitutional principles in the light of criminal defence”. *Zbornik Pravnog Fakulteta Sveucilista Rijeci*, No. 23 (2), 2002, pp. 543-566.
14. Harris, David. “The Right to a Fair Trial in Criminal Proceedings as a Human Right”. *International and Comparative Law Quarterly*, No.16 (2), 1967, pp. 352-378.
15. Langford, Ian. “Fair Trial: The History of an Idea, *Journal of Human Rights*”. *Journal of Human Rights*, issue 1, 2009, pp. 37-52.

WORKS CITED

1. Powell, Richard. *Law Today*. Pearson English, London, 1993.
2. Evropayi khorhurd. «*Mardu iravunqneri ev himnarar azatut'yunneri pashpanut'yan masin evropakan konventsia*».
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>. [“*Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms*”] 04.11.1950. (In Armenian)
3. HH Azgayin zhoghov. «*HH qreakan datavarut'yan o'rensgirq*».
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160548>. [“*Criminal Procedure Code of RA*”] 01.07.1998. (In Armenian)
4. ---. «*HH qreakan datavarut'yan o'rensgirq*».
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154763>. [“*Criminal Procedure Code of RA*”] 01.07.2022. (In Armenian)
5. HH MIP. «*Tarekan haghordum, 2018 t'vakani y'nt'acqum Hayastani Hanrapetut'yan mardu iravunqneri pashpani gorts'uneut'yan, mardu iravunqneri ev azatut'yunneri pashpanut'yan vitshaki masin*».
http://www.parliament.am/draft_docs7/082_haghordum.pdf. [“*Annual report. on the activities of the Human Rights Defender of the Republic of Armenia in 2018, the state of protection of human rights and freedoms*”] 06.07.2019. (In Armenian)
6. ---. «*P'astabani masnagitakan gorts'uneut'yan mi sharq erashkhiqner*».
<https://ombuds.am/am/site/ViewNews/247>. [“*Several guarantees of advocates*”] 27.08.2017. (In Armenian)
7. HH p'astabanneri palat. «*P'astabanneri palati khorhurdy' datapartel e' p'astabanneri kapi ev teghekatvakan ayl mijotsneri anvtangut'yuny' khakhtogh gorts'oghut'yunnery'*».
[Advocates.am, https://www.advocates.am/news/view/2608.html](https://www.advocates.am/news/view/2608.html). hasaneli e՝ 20.02.2022. [“The Board of the Chamber of Advocates condemned the actions violating the security of lawyers' communication and other media”. Access: 20.02.2022]. (In Armenian)
8. ---. «*P'ord'z e' arvum ar'gravel p'astabani hamakargichy'*».
[Advocates.am, https://www.advocates.am/news/view/2552.html](https://www.advocates.am/news/view/2552.html). [“An attempt is being made to confiscate the lawyer's computer”. Accessed: 20.02.2022]. (In Armenian)

9. *HH qreakan datavarut'yan nor o'rensgraqi y'ndunman himnavorumner*. <https://www.e-draft.am/projects/2085/justification>. hasaneli e` 20.02.2022. [*Grounds for the adoption of the new RA Criminal Procedure Code*. Accessed: 20.02.2022]. (In Armenian)
10. *HH Sahmanadrut'yun*. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>. [*Constitution of RA*] 06.12.2015. (In Armenian)
11. Miavorvat's azgeri kazmakerput'yun, Glkhavor asamblea. «*Mardu iravunqneri hamy'ndhanur hr'chakagir*». <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>. [“Universal Declaration of Human Rights”] 10.12.1948. (In Armenian)
12. Behan, Christopher. “When Turnabout is Fair Play, Character Evidence and Self-Defense in Homicide and Assault Cases”. *Oregon Law Review*, Vol. 86, No. 3, 2007, pp. 733-796.
13. Fenyvesi, Csaba. “Constitutional principles in the light of criminal defence”. *Zbornik Pravnog Fakulteta Sveucilista Rijeci*, No. 23 (2), 2002, pp. 543-566.
14. Harris, David. “The Right to a Fair Trial in Criminal Proceedings as a Human Right”. *International and Comparative Law Quarterly*, No.16 (2), 1967, pp. 352-378.
15. Langford, Ian. “Fair Trial: The History of an Idea, *Journal of Human Rights*”. *Journal of Human Rights*, issue 1, 2009, pp. 37-52.

ON SOME ISSUES OF FULL REALIZATION OF THE RIGHT TO DEFENSE IN CRIMINAL PROCEDURE

LUSINE HOVHANNISYAN

*Yerevan State University, Faculty of Law, Master of Laws;
«Concern Dialog» Law Firm, Attorney at Law,
Yerevan, the Republic of Armenia*

When discussing the challenges to the full realization of the fundamental right to a fair trial, it is necessary to address separately the comprehensive analysis of the components that make up that fundamental right and its comparison with other judicial structures. The purpose of the current article is a detailed study of the right to defense in the light of theoretical and legislative sources as a component of the fundamental right to a fair trial. The issues of the article include identification of existing problems in frames of the right to defense, their analysis, as well as offering practical solutions.

The article is written using legal comparison, analytical, deductive methods.

In the framework of this article, we have examined the right to defense as the main means of protection for person suspected or accused of committing a crime in the framework of a criminal case.

The article discusses the structure of the right to defense, some theoretical approaches based on it, as well as the current legislative regulations, highlighting some theoretical and practical issues. The right to defense is discussed within the framework of the Defender's participation.

As a result of the research, we have stated the central role of the right to defense in the context of both current and new legislative regulations, highlighting some issues that arise during the Defender's activity. The article also discusses some options that can guarantee the full realization of the right to protection or at least contribute to it.

Keywords: *Right to defense, criminal proceedings, fair trial, attorney, accused, administration of justice, full participation of the advocate.*

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПОЛНОЙ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА ЗАЩИТУ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

ЛУСИНЕ ОГАНЕСЯН

*магистр юридического факультета
Ереванского государственного университета,
адвокат адвокатской конторы «Концерн Диалог»,
г. Ереван, Республика Армения*

При обсуждении проблем, препятствующих полной реализации основного права на справедливое судебное разбирательство, необходимо отдельно рассмотреть всесторонний анализ компонентов, составляющих это основное право, и его сравнение с другими судебными структурами. Целью данной статьи является полное изучение права на защиту в свете законодательства и теоретической литературы как составной части основополагающего права на справедливое судебное разбирательство. В списке задач статьи – выявление проблем, имеющих в системе права на защиту, их анализ, а также предложение практических решений.

Статья написана с использованием методов юридического сравнения, а также аналитического, дедуктивного методов.

В рамках данной статьи мы рассмотрели право на защиту как основного средства для лица, подозреваемого или обвиняемого в совершении преступления.


В статье рассматривается структура права на защиту, некоторые теоретические подходы, основанные на ней, а также действующие законодательные нормы, освещаются некоторые теоретические и практические вопросы. Право на защиту обсуждается в рамках участия Защитника.

В результате исследования мы констатировали центральную роль права на защиту в контексте как действующих, так и новых законодательных норм, выделив некоторые проблемы, возникающие в ходе деятельности Защитника. В статье также обсуждаются некоторые варианты, которые могут гарантировать полную реализацию права на защиту или, по крайней мере, способствовать этому.

Ключевые слова: *право на защиту, уголовный процесс, справедливое судебное разбирательство, защитник, обвиняемый, осуществление правосудия, полноценное участие защитника.*

DOI: 10.52063/25792652-2022.1.12-303

Арзуманян Ашот Мартиросович. «Тайна булата», «Советакан грох», 1976г., 536 с. *



«Тяжёлый путь остался позади. Мальчик из Шуши с двумя сёстрами и маленьким братом оказался в Баку». Так начинается глава «Ованес из Шуши» из книги под названием «Тайна Булата», написанной Ашотом Арзуманяном. Он годами собирал ценные материалы, сведения, проводил встречи с современниками — с теми, кто дольше и ближе знал Ованеса Тевадросовича, которого на русский лад называли Иваном Фёдоровичом, с теми, кто работал с ним и в мирные дни, и в розовые военные годы в СССР и за рубежом.

Ованес Тевосян родился в 1902 году, в городе Шуши, в бедной армянской семье. Семья Тевосянов, спасаясь от шушинской резни («Թւնոյան Յոյհաննէս Թւաիրոյի») на этнической и религиозной почве, носившей периодический характер (Потто 1-5), была вынуждена переехать из Шуши в Баку, где Ованес получил начальное образование в православной школе. Он учился блестяще и по окончании школы уже сам, как репетитор, занимался с учениками. Параллельно он сам заочно учился в гимназии.



Памятник Тевосяна в городе Шуши Республики Арцах



Автор рецензии Анна Варданян в городе Электросталь

В июле 1918 года он вступил в партию большевиков, в 16 лет уже примкнул к коммунистическому движению, далее участвовал в забастовках, подавлениях мятежей в городе Кронштадте, зарекомендовал себя очень вдумчивым, стратегически очень подготовленным человеком. Как отличника его направили в Горную академию, на металлургический факультет. В студенческие годы Тевосян проходил практику на металлургическом заводе «Электросталь», на котором попросился остаться, чтобы досконально освоить процесс производства. Он начал работать с должности простого рабочего, помощника мастера и за четыре года стал главным инженером завода. В 1929 году Тевосяна в числе 200 самых талантливых молодых специалистов направляют на стажировку в Европу. Иван

* Հոդվածը ներկայացվել է 19.02.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

Фёдорович попадает на знаменитые заводы Круппа в Германии. Те навыки и знания, которые он получил во время стажировки, впоследствии были внедрены при его участии в отрасли чёрной металлургии Советского Союза, в результате чего она обогнала немецкую и по качеству, и по количеству производства стали во время Великой Отечественной войны. Вклад Тевосяна в металлургическую отрасль страны увековечен победой! В значительной мере благодаря его самоотверженной работе в тылу уже в 1943 году СССР стал производить стали больше, чем Германия. В том же году Тевосян был награждён медалью Социалистического труда («Иван Тевосян, биография»).

Уже в 1950-е годы, будучи министром чёрной металлургии, он, хотя и косвенно, но внёс большой вклад в развитие реактивной авиации страны. Под руководством Тевосяна разрабатывали новые виды сплавов стали для полёта в космос («Городские легенды – Иван Фёдорович Тевосян» 12:35:13:22).

Коренным образом жизнь Тевосяна изменилась после прихода к власти Никиты Хрущёва, который, как показала история, недолюбливал смельчаков и не принимал критику. При Хрущёве, на одном из заседаний ЦК, Тевосян позволил себе не согласиться с мнением руководителя и впоследствии был отстранён от занимаемых должностей. Позднее только ему доверили очень важную и трудную миссию: он был назначен послом СССР в Японии. Это было стратегически важным назначением для Советского Союза, так как Тевосян должен был налаживать дипломатические отношения после нескольких лет перерыва и напряженности в отношениях двух народов.

О Тевосяне можно говорить очень долго и писать целые тома, но, исходя из своего интереса как японоведа и в целях раскрытия темы роли армянских деятелей в истории Советского Союза, наряду с другими материалами, я проанализирую часть книги «Тайна булата», главу «Чрезвычайный посол».

После нормализации дипломатических отношений СССР с Японией, встал вопрос о создании посольства (в Японии тогда находились лишь остатки военной миссии). Когда было объявлено о назначении Тевосяна послом и были получены запрошенные на него данные, в МИДе начали рассуждать: во внешней политике до этого не работал, был заместителем председателя Совета Министров, вероятно, привык действовать с размахом, — можно ли с ним сработаться?

Иван Фёдорович основательно готовился к совершенно новой для него дипломатической деятельности. После перевода в МИД Тевосян серьезно засел за подготовку к новой работе, поручив своим сотрудникам Павлу Филатову и Николаю Андрианову собрать книги, которые были изданы на русском и немецком языках о Японии. Эти книги он читал ночи напролёт. Затем со всей Москвы собрали специалистов по Японии, и Тевосян провел с ними несколько встреч — отдельно с дипломатами, отдельно — с работниками внешней торговли, отдельно — с учёными, с литераторами и переводчиками. За короткое время, оставшееся до отъезда, он изучил массу материалов по русско-японским отношениям, перечитал большое количество литературы, не только технической, но и художественной, а также провел ряд бесед с работниками Дальневосточного отдела МИД, с сотрудниками Института международных отношений, Конъюнктурного института и специалистами-японоведами.

Он приехал в Японию уже достаточно подготовленным к этой высокой ответственной деятельности, детально изучив отношения страны Восходящего Солнца с другими странами. Тевосян проявил талант прирожденного дипломата, вызывая восхищение даже опытных работников МИДа своим тактом, умением заинтересовать и привлечь симпатии собеседников. Примечательно, что глубже и

шире всего изучил он вопросы экономического порядка, наряду с кругом внешнеполитических проблем бассейна Тихого океана.

